


ՌԱՖԱՅԷԼ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ



ՆԺՌԵՀ

8(47.925)  
7-20

ՌԱՖԱՅԷԼ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ

ՀՀ ԳԱՍԱ Արեւելահայաստանի  
Թեմի Կառավարություն  
Զրույցարանի

ՆՇՊԵՀ

Մ. Կ. Կ. Կ.

Հարցույթատախանի

28 XI 2012

55914

Բ հրատարակություն  
(յաւելումներով)



Երևան 2012

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66

Հ 205

## Հովանատր՝ գործարար Գագիկ Յարութինեան

Համբարձումեան Ռ.

Հ 205 Նժդեհ: Հարցուպատասխան / Ռ. Համբարձումեան. – Եր.:

Էդիթ Պրինտ, 2012.- 200 էջ:

*Հեղինակը Գարեգին Նժդեհի համառօտ վարքը, գործունէութեան այլ դրուագները եւ գաղափարախօսութիւնը հարցուպատասխանի ձեւով լուսաբանում է նրա աշխատութիւններից արուած մէջբերումներով: Ժողովածոյի մէջ, որպէս Գ. Նժդեհի պատկերատու անգուգաղիւր մտածողութեան նմուշներ, զետեղուած են նրա մօտ 450 ասոյթ եւ մտամասունք, որոնք քաղուած են հայ գրականութիւնն ու լեզուամշակոյթը զօրատրող նրա տարբեր գրուածքներից:*

*Գրքոյկը ամփոփում է նաեւ հայոց ազգային գաղափարաբանութեան էութիւնը դրսեւորող հեղինակի հիմնադրոյթները, որոնք նա կազմել է՝ հիմք ունենալով հայութեան ազգային աւելի քան 4500-ամեայ գաղափարաբանութիւնը կերտող մեծագործների մտքերը՝ Հայկ Նահապետից մինչեւ Գարեգին Նժդեհ:*


ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66

ISBN 978-9939-52-610-2

© Համբարձումեան Ռ-աֆայէլ, 2012

© Էդիթ Պրինտ, 2012



*ՀԱՐՑ: Դուք, իբրև Գ. Նժդեհի գիտական ամբողջական վարքի հեղինակ, գրում էք, որ Գարեգին Նժդեհի ծննդեան օրը ոչ թե յունուարի 1-ն է, այլ փետրուարի 1-ը: Ի՞նչ հիմքերով էք այդպես կարծում, երբ Նժդեհի ամբողջական առաջին կենսագրականի հեղինակ Առյի վրայ յենուելով, ամենուր նշում են յունուարի <sup>1</sup>:*

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Հիմնուել եմ մեզ հասած՝ Գարեգին Նժդեհի ծննդեան օրը նշող միակ փաստաթղթի վրայ, որը 1916 թ. իր ձեռքով ուսերէն լրացրած «ծառայողական ցուցակ»-ն է: Զինորական այդ փաստաթուղթը ստորագրել է զօրավար Սմբատ Բորոյեանը<sup>1</sup>: Փաստաթղթում նշուած է, որ Գարեգին Նժդեհը ծնուել է յուլեան տոմարով յունուարի 20-ին: Բանի որ ամբողջ 19-րդ դարում տեղի ունեցած իրադարձութիւնները այժմ գործող տոմարով արտայայտելու համար յուլեան տոմարով նշուած ամսաթիւին աւելացում է 12 օր (20-րդ դ. տեղի ունեցած դէպքերը ներկայիս տոմարով նշելու համար յուլեան տոմարով նշուած թուին յաւելում է ոչ թե 12, այլ 13 օր), ուստի գործող տոմարով Գարեգին Նժդեհի ծննդեան օրը դառնում է փետրուարի 1-ը:

*ՀԱՐՑ: Գարեգին Տէր-Յարութիւնեանը երբուանի՞ց սկսեց ստորագրել Գարեգին Նժդեհ:*

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Նժդեհ ազգանունն մեզ հասած առաջին ստորագրութիւնը գտնում ենք նրա՝ 1903 թ. օգոստոսի 5-ի մէկ փոքրիկ ոտանատրի մէջ:

*ՀԱՐՑ: Դուք բազմիցս նշել էք, որ Գարեգին Նժդեհի հիմնած Ազատ Միւնիքը վիժեցրեց Հայաստանի Հանրապետութիւնը մէջտեղից վերացնելու, իր բառով՝ թրքորոյշեիկ ծրագիրը:*

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Ոչ միայն դա: Գարեգին Նժդեհը.

1. վճռական դերակատարութիւն ունեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը հիմնելու մէջ՝ գլխաւորելով Ղարաբիլիսայի առանցքային նշանակութիւն ունեցած ճակատամարտը:

Արեւելահայութեանը եւս տեղահանելու-ոչնչացնելու՝ Թուրքիայի հետ կնքած գործարքից յետոյ հոկտեմբերեան աւագակային յեղաշրջումով իշխանութիւնը զարած բուշեիկեան ոճրախումբը 1917թ. դեկտեմբերին ռուսական զօրքերը դուրս բերեց Թուրքահայաստանից: Հայութիւնն իր սակաւաթիւ ուժերով մէն-մէնակ մնալով հայոց զօրքին բազմապատիկ գերագանցող թուրքական բանակի դիմաց, ստիպուած էր սեփական ուժերով պահել աւելի քան 300 կմ ձգող հայ-թուրքական ճակատը: Մեծ գոհերի գնով կոտորելով հայկական սակաւաթիւ ուժերի հերոսական դիմադրութիւնը, թուրքերը Էրզրումը գրաւելուց յետոյ երեք ամսուայ ընթացքում Սարիղամիշի, Կարսի եւ Գիւմրիի վրայով մայիսի 21-ին մօտեցան Ղարաբիլիսային(այսօր՝ Վանաձոր): Նշուած տարածութիւններից տեղահանուած աւելի քան կէս միլիոն գաղթական էր հաւաքուել Լոռիում:

Ղարաբիլիսայի ճակատամարտի հրամանատարների՝ զանազան ատեաններ յղած զեկուցագրերը եւ բազմապիսի այլ փաստաթղթերն անառարկելիօրէն վկայում են, որ հայ-թուրքական ճակատներից ամենախարխուլն ու բարոյալքուածը Ղարաբիլիսայի ճակատն էր: Հայոց զօրքը, գլխատր հրամանատար Թովմաս Նազարբեկեանից սկսած, դիրքերը եւ զօրանոցները համատարած լքող զինուորներով վերջացրած, կռուելը անիմաստ էր համարում, քանի որ բարձրագոյն հրամանատարութիւնը որպէս համակարգ եւ կառոյց քայքայուած էր, կազմալուծուած, ո՛չ ոք ո՛չ մէկին չէր ենթարկում, հրամանատարութիւնը ազդեցութիւն չուներ զօրքի վրայ, զօրքը գլուխն առած փախչում էր:

Հայոց բանակի բարձր հրամանատարութիւնը, նկատի ունենալով համատարած խուճապը եւ զօրքի բարոյալքուած վիճակը, տեղի տուեց պարտողական համատարած տրամադրութեանը եւ Դիլիջանում հրաւիրուած զինուորական ու քաղաքացիական ղեկավարների՝ 1918 թ. մայիսի 24-ի խորհրդակցութիւնում յայտարարեց, թէ կռիւլ շարունակելու հնարատրութիւն չի տեսնում եւ որոշում է նահանջել առանց կռուի: Այդ ճակատագրական պահին հրետանու մարտկոցի պետ, արցախցի երիտասարդ սպայ, քնդանոթաձիգ չորրորդ գումարտակի հրամանատար Գուրգէն Տէր-Մովսիսեանը յայտարարում է, թէ ինքը չի հնազանդում հրամանատարութեան նահանջի որոշումին, քանի որ նահանջը դաւաճանութիւն է, եւ իր զօրախմբով կռուելու է մինչեւ մահ: Գուրգէն Տէր-Մովսիսեանից յետոյ իր պատմական հրաշակերտ ելոյթն է ունե-

նում Գարեգին Նժդեհը, եւ իրադրութիւնը շեշտակի փոխում է: Ներկաները որոշում են կռուել մինչեւ վերջին փամփուշտը: Այնուհետեւ Գարեգին Նժդեհը Դիլիջանի Սբ Աստուածածին եկեղեցում հրաւիրած հաւաքում էլ աւելի ոգեշունչ ելոյթով աւելի է զօրաւորում ժողովրդին եւ հէնց այստեղից, մօտաւորապէս կէսօրուայ ժամը երեքին, մարտիկները նրա գլխատրութեամբ շարժում են Վանաձոր: Չլինէր Գարեգին Նժդեհը, զօրքն ու աշխարհագօրն այստեղ նոյնպէս չէին ենթարկուելու հրամանատարութեանը եւ թշնամու դէմ չէին կռուելու, ինչպէս չը կռուեցին Կարսում եւ Ալեքսանդրապոլում... Այսպիսով՝ թէեւ Վանաձորի ճակատը ղեկավարում էին մի քանի գեներալներ (Բէյ-Մամիկոնեան, Կ. Ղամազեան, Գ. Ղորղանեան) ու բազմաթիւ գնդապետներ, բայց ճակատամարտ տալու նախաձեռնութիւնը իր վրայ վերցնելով՝ Ղարաբիլիսայում զօրքին յաղթական կռուի է տարել կրտսեր սպայ Գարեգին Նժդեհը: Աննախադէպ երեսոյթ ռազմարուեստի ոչ միայն հայ, այլ նաեւ համաշխարհային պատմութեան մեջ<sup>2</sup>...

Մէջբերում են կեանքի վերջում գրած Գարեգին Նժդեհի աշխատութեան այն հատուածը, որը վերաբերում է Վանաձորի ճակատամարտին. «Ես տեսել եմ մեր ժողովրդին իր բիբերի մէջ, տեսել... ռազմի իր սուրբերին եւ գայլերին՝ Վարդաններին ու Վահաններին... Եւ ժողովրդի հզոր շունչով օծուած՝ երկու անգամ անհաւասար ճակատամարտերի եմ առաջնորդել նրա զաւակներին:— Ղարաբիլիսէի օրհասական օրերին, երբ թուրք հորդաների հետ մահը կանցներ Ախուրեանը, ու երկու տարի անց՝ Սիւնիքում, ուր պանթուրանականները կը նկրտէին լեռնահայութիւնը վերածել դիակների կամուրջի՝ թուրք եւ քաթար հայրենիքների միջեւ:

Եւ երկու դէպքում էլ հայ մարդը կատարել է ռազմի մեծագործութիւններ, քանզի մեզ հրամայել ու վարել է աչքը ժողովրդի»<sup>3</sup>:

2. 1919 թ. մայիս-յուլիսին Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը պահպանուեց Գարեգին Նժդեհի շնորհիւ: Այսպէս՝ Հայաստանի Հանրապետութեան գոյառումից անմիջապէս յետոյ Հայաստանի բնակչութեան թրքալեզու հատուածը (Կովկասի քաթարներ, որ այսօր կոչւում են ադրբեջանցի), որը կազմում էր երկրի ընդհանուր բնակչութեան մօտ 40 տոկոսը, հանրապետութիւնը ներսից պայթեցնելու նպատակով Թուրքիայի եւ Ադրբեջանի հրահրմամբ ու ղեկավարութե-

ամբ 1918 թ. հայ-թուրքական պատերազմի ընթացքում ձեռնարկում էր անջատական եւ խափանարար գործողություններ: Թուրքական զորքերի գրաված տարածքներում թուրքալեզուները ստեղծում էին «անկախ հանրապետություններ»՝ իրենց «կառավարություններով», որոնք յորջորջում էին «շուրա»: Երբ անգլիական զորքը Այսրկովկասից հեռացավ, Հայաստանի Հանրապետությունում բնակող թաթարները Օլթիից մինչեւ Կարս, Նախիջեւան ու Վեդի, Գեղարքունիքից մինչեւ Գողթան, վերսկսեցին ապստամբություններն ու խռովությունները: Հայաստանի նորաստեղծ Հանրապետության այդ ծայրայեղ վտանգատու օրերին, երբ ներքին խռովություններից բզկտուած մեր հայրենիքին միասնություն ու համերաշխություն էր պետք, հայանուն բոլշեիկները թուրքերի հետ զաղտնի համաձայնութեամբ կազմալուծում էին հայոց բանակը, յայտարարում, թէ թուրքերը նախկին թուրքերը չեն, դարձել են մեր յեղափոխական եղբայրները եւ գալիս են երկիրն ազատելու դաշնակցների լծից: ՀՀ հրամանատարութեան անվճռական գործողությունների հետեւանքով հայաստանաբնակ ապստամբ թուրքերը աշխուժացել-վերագրաւել էին բազմաթիւ գիւղեր՝ մեր ստորաբաժանումներին դնելով նահանջը շարունակելու պարտադրանքի առաջ: Դիւանական փաստաթղթերն ու վկայությունները հիմք են տալիս աներկբայ արձանագրելու, որ Գարեգին Նժդեհը 1918 թ. դեկտեմբերի կեսերից մինչեւ 1919 թ. յուլիսի վերջերը հանրապետական զորքերի կազմում սկզբում մասնակցել եւ ապա զլխատրել է հայաստանաբնակ թուրքերի զանգուածային խռովություններն ու ապստամբությունները ճնշելու գործողությունները: Իրօք՝ երկիւղելով այդ օրերին ընթացող հայ-վրացական պատերազմի ոչ հայանպաստ ելքի վտանգից եւ ներքին խռովությունների ծաւալումով նորանոր գիւղեր խռովարարներին անցնելու առկայ փաստերից, զօրամասերի հրամանատարներից ու պատասխանատուներից ոչ մէկը իր վրայ չէր վերցնում երկիրը ապստամբներից մաքրելու պատասխանատուությունը: Դա նպաստում էր հետզհետեւ ձեւաւորող պարտողական տրամադրությունների ծաւալումին: Ահա այդ բարոյալքուած վիճակում էր, որ Նժդեհը Երեւանի հիւանդանոցում մօտ 15 օր պառկելուց եւ ապաքինուելուց յետոյ վերադառնում է ճակատ, եւ նախաձեռնությունն ու պատասխանատուությունը վերցնելով ձեռքը, 140-150 կռողներով կարողանում է վերագրաւել թուրքերի ձեռքն ընկած

բազմաթիւ գիւղեր, հայ բնակչութեանը փրկել կոտորածներից ու յատկապէս կասեցնել Հայաստանի անկախութեանը սպառնացող անխուսափելի վտանգը<sup>1</sup>:

3. Գարեգին Նժդեհը 1920 թ. հոկտեմբերից մինչեւ 1921 թ. յուլիս 12-ը Չանգեզուրը պահպանելով ՀՀ կազմում, պահպանեց նաեւ Հայաստանի «Հանրապետություն» կարգավիճակը:

1920 թ. մայիսի վերջին Ռուսաստանի հարկադրանքով Հայաստանի Հանրապետությունը հայոց զօրամասերը դուրս բերեց Արցախից, իսկ օգոստոսի 10-ին Թիֆլիսի ռուս-հայկական պայմանագրով պարտաւորուեց զօրքերը դուրս բերել նաեւ Չանգեզուրից: Յիշենք, որ այդ նոյն օրը՝ օգոստոսի 10-ին, Երուսալան Սերի դաշնագրով Թուրքիային պարտադրեց Հայաստանին վերադարձնել Էրզրումի, Վանի, Տրապիզոնի եւ Բիթլիսի վիլայեթներից այնքան տարածք, որքան որ կարձանագրէր ԱՄՆ այն ժամանակուայ նախագահ Վուդրո Ուիլսոնի կազմելիք Իրաւարար վճիռ-քարտէզը... Եթէ Չանգեզուրը եւս բռնակցուէր Ադրբեջանին, ապա «Չէզոք գօտի» յայտարարուած Լոռին պիտի Չաւախքի օրինակով միացուէր Վրաստանին, որից յետոյ մօտաւորապէս 10 հազար քառ. կմ տարածք ունեցող Հայաստանը հանրապետութեան կարգավիճակ չպիտի ստանար, այլ, ինչպէս որոշել էր բոլշեիկեան դեկլարությունը, Հայաստանը իբրեւ ինքնավարութիւն պիտի միացուէր Վրաստանին: Երբ՝ ՀՀ կառավարությունը բոլշեիկեան Ռուսաստանի հարկադրանքով Չանգեզուրը յանձնեց Ադրբեջանին, Գարեգին Նժդեհը Հայաստանի վերջնական մասնատումը կանխելու համար բովանդակ Միւնիքի ինքնապաշտպանությունը վերցրեց իր ձեռքը: 1920 թ. հոկտեմբերի 9-ին Խուստուսի լերան լանջերից 25-30 հոգով վերսկսելով պայքարը ռուսերուրք գերակշիռ ուժերի դէմ, 45 օրուայ ընթացքում Չանգեզուրը մաքրեց թշնամուց: Թէ՛ իւրայինների եւ թէ՛ հակառակորդի համար առասպել դարձած Նժդեհը, այդ ընթացքում ունենալով հակառակորդից հարիւրապատիկ պակաս ռազմիկ, զէնք ու զինամթերք, ազատագրեց 200-ի չափ գիւղ, փաստօրէն շարքից հանեց Այսրկովկասը բոլշեիկացրած 11-րդ կարմիր բանակը: Նա 1919-1921 թթ. Գողթանում, Միւնիքում, Վայքում, նաեւ Արցախում թշնամուց խլել է մօտ 15000 զոհ ու 7000 գերի՝ տալով ընդամենը 22-ից 28 զոհ:

4. 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի առաջին համագումարը հռչակեց ինքնավար Միւնիքը, երկրորդ համագումարը (1921 թ. ապրիլի 26)՝ Լեռնահայաստանի Հանրապետութիւնը, որը ներառում էր Գողթանը, Միւնիքը, Չանգեզուրը եւ Արցախի մի մասը: Ընդամենը վեցուկէս ամիս (1920 թ. դեկտեմբերի 25-1921 թ. յուլիսի 13) գոյատեւած ազատ Լեռնահայաստանի տարածքը ստեղծման պահին արեւելի քան 6000 քառ. կմ էր, որը 1921 թ. յունիսի 17-ից Վայքի ազատագրումով (ներառեալ 1921 յունուարի կէսին ազատագրուած Արցախի Գիգակ եւ Վարանդա շրջանները եւ Գողթանի որոշ տարածքներ) իմ հաշումներով հասել է մօտ 15 հազար քառ. կմ-ի: Եւ ամենակարեւորը. մեր հայրենիք ներխուժած քջամու դէմ ապստամբած եւ իր անկախութիւնը վերականգնած Լեռնահայաստանը Մերձավոր ու Միջին Արեւելքի եւ Ռուսական կայսրութեան սահմաններում գործող ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ միակ ժողովրդապետութիւնն էր, որտեղ վառուում էր ժողովրդավարութեան, ազատութեան ու անկախութեան ջահը:

*ՀԱՐՑ: Ե՞րբ է Գարեգին Նժդեհը հեռացել Միւնիքից:*

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Խորհրդային Հայաստանի ղեկավար Ալ. Միասնիկեանի միջոցով սովետներից ստանալով Միւնիքը Հայաստանի կազմում քողնելու երաշխիքներ՝ Նժդեհը հայ մտատրականութեանն ու զինուորականութեանը կացնահարումից փրկելով - Պարսկաստան ուղարկելուց յետոյ, 1921 թ. յուլիսի 12-ի գիշերը ինքը եւս անցնում է Արաքսը: Նա յուլիսի 13-ին մի խումբ հեծեալներով հասնում է Իրանի Մուժամբար հայկական գիւղը, որտեղից 1923 թ. անցնում է Բուլղարիա:

*ՀԱՐՑ: Ազատ Միւնիքում Գարեգին Նժդեհը վրիպում ունեցե՞լ է:*

**ՊԱՏԱՍԽԱՆ:**

ա. 1921 թ. ապրիլի սկզբին բոլշեւիկները կրկին վերացրեցին 1921 թ. փետրուարի 18-ի ապստամբութեամբ վերականգնուած Հայաստանի անկախութիւնը եւ սկսեցին ազգային ուժերի եւ մտատրականութեան, յատկապէս զինուորականութեան համատարած կացնահարումը: 1921 թ. մայիսի 31-ին Հայաստանում ստեղծուած «Հայրենիքի փրկութեան կոմիտե»-ի եւ Լեռնահայաստանի Հանրապետութեան՝ Գորի-

սում սկսուած համատեղ նիստը յունիսի 1-ին Լեռնահայաստանը յայտարարում է Հայաստան, Միմոն Վրացեանը նշանակում է վարչապետ, Գարեգին Նժդեհը՝ զինուորական նախարար: Գ. Նժդեհի իսկ վկայութեամբ այդ օրերի միակ վրիպումը Լեռնահայաստանը Հայաստան ազդարարելն էր, որը կատարուեց նրա կամքին հակառակ: Իր հակառակորդները նրան հարուածելու համար ասում էին, թէ ամբողջ իշխանութիւնը ձեռքը վերցրած Գարեգին Նժդեհը ուզում է իշխել նաեւ հանրապետութեան ղեկավարութեանը: Գարեգին Նժդեհը Լեռնահայաստանը Հայաստան յայտարարելուն չընդդիմացաւ, որպէսզի նման լուրեր տարածողներին հիմքեր չտար խափանելու ինքնապաշտպանութիւնը:

բ. Այդ քայլից յետոյ ինչ որ ի գորու չէին անելու թուրքերն ու բոլշեւիկները, կատարեցին իւրային կոշուածները: Լեռնահայաստանում փրկութիւն ստացած Հանրապետական արեւելի քան 5000 ջլատուած զինուորականութիւնը եւ ապականուած պաշտօնագօրը կազմալուծեցին եւ զօրագրկեցին Լեռնահայաստանի ժողովրդավար իշխանութիւնն ու յաղթական բանակը: Ասածս հաստատում են Ռ. Տէր-Մինասեանին, Ս. Վրացեանին եւ այլոց այդ օրերին ուղղած նրա գրութիւնները, որոնք ցոյց են տալիս նաեւ, որ Գարեգին Նժդեհը սկզբից ի վեր դէմ էր Լեռնահայաստանի անուանափոխութեանը. «Միրելի Ռուբէն... Տաճկահայ ուժերը մի մեծ չարիք են, որոնք որքան շուտ հեռանան Լեռնահայաստանից, այնքան լաւ է մեզ համար... Տաճկահայ զօրամասի կատարած վերջին խայտառակութիւնը, այն է՝ մի ամբողջ խմբակի քջամու կողմն անցնելը, կիսով չափ կոտրել է իմ եւ Լեռնահայաստանի մէջքը: Այն, որ դու քիչ կարեւորութիւն ես տալիս այդ անչափելի դաւաճանութեանը՝ ինձ կատաղեցնում է...»<sup>5</sup>: ՀՀ կառավարութեան «փոխնախագահ» պ-րն Ա. Յովհաննիսեանին ուղղած նամակում Գ. Նժդեհը գրում է. «Երեւանի զօրամասը, որ Ձեր կառավարութեան կողմից դրուել էր մեր զօրահրամանատարութեան տրամադրութեան տակ, իրենց ղեկավարներով միասին, դարձել են մի գործիք քայքայման եւ դասալքութեան: Չօրամասի մէջ բացարձակապէս բացակայում է կարգապահութեան ու կռի տրամադրութիւնը: Ընդհակառակը, օրեցօր տարածւում է դասալքի հոգեբանութիւնը շնորհիւ երեւանեան հրամանատարութեան ընթացքին... Լեռնահայաստանի կործանումի ամբողջ պատասխանատուութիւնը ընկնելու է Հայաստանի կառավարութեան եւ երեւանեան զօրա-

մասի հրամանատարութեան վրայ»<sup>6</sup>: Սիմոն Վրացեանին գրում է. «Սիրելի ընկեր, մինչեւ հոգուս խորքը խոցուած եմ, վիրատրուած երեսանեան զօրքերի եւ հրամանատարութեան կատարած անլուր դաւանանութիւնից: Ես... հրաշագործութիւններ չէի սպասում երեսանեան զօրամասերից, որովհետեւ քաջ ծանօթ էի նրա հրամանատարների 90 տոկոսի պարտողական հոգեբանութեան հետ... Սեւ լիներ այն օրը, երբ այդ թունատրուած զօրամասերը յայտարարուեցին Դաւիթբեգեան ժողովրդական բանակի շարքերում: 3000-ի հասնող զօրամասը, Վայոց Ձորի մեր յաջողութիւնից յետոյ... թշնամու անցնան կոնտրայարձակումից ահաբեկուած, անցնում է կարմիրների կողմը...»<sup>7</sup>

...Ընկեր Սիմոն, ընդունիր, որ եթէ ես իմանայի, որ Լեռնահայաստանը Հայաստան յայտարարելով երկու կառավարութիւնները մեքենաբար կմխացուեն ... փոխվարչապետութիւնն էլ կտրուէր մէկ ուրիշին, կրկնում եմ, որ, եթէ այդ բոլորն անգամ ենթադրէի, ես կը խնդրէի քեզ եւ Հայաստանի կառավարութեան, թողնել Լեռնահայաստանը իր հին քաղաքական վիճակում: **Սիւնիքի Հայաստան յայտարարելը մի քաղաքական ոճիր էր...** (ընդգծումը իմն է: Ռ. Հ.): Դու, ինչպէս գիտես, միայն մի քանի ժամ մնացիր նորաստեղծ Հայաստանում եւ բախտատու էիր, որ, գտնուելով Թարիզում, չէիր լսում յանկարծակիի եկած ու զայրացած ժողովրդի կրիտիկան: Ընդամենը մի քանի օր առաջ այդ ժողովուրդը Տաթևի համագումարում իր Սպարապետին դիկտատոր էր յայտարարել եւ յանկարծ Լեռնահայաստանը՝ Հայաստան, կառավարութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւն, վեց նախարարների փոխարէն տասնեւմէկը, երկու տասնեակի հասնող պաշտօնէութեան փոխարէն միայն Գորիսում երկու հարիւրի չափ եւ այլն, եւ այլն...»:

«Այդ ո՞ր համագումարի միջոցով մեր երկիրը Հայաստան յայտարարուեց: Այդ ի՞նչ կառավարութիւն է, որի փոխվարչապետն, առանց Սպարապետի կարծիքն իմանալու, բանակցութիւններ է սկսում Միւրեանի 2000-ի հասնող զինուած բոչորների հետ եւ 50 000 000 ռ. հայկական չէկերով Միսիանի ամենակարեւոր ռազմագիտական կէտեր յանձնում թշնամուն եւ այդպիսով լայն հնարատրութիւն տալիս նրան մալականների վրայով կապելու Նախիջեւանի թրքութեան հետ, արագացնելու Դարալագեագի եւ Միսիանի անկումը եւ վտանգելու Լեռնա-

հայաստանի ընդհանուր ռազմական դրութիւնը: Ինչների՞ս է պէտք 200-ի հասնող պաշտօնէութիւնը, որի մի մասը սկսել է գողանալ, իւրացնել եւ անգործութիւնից ամբողջ օրը նարդիով ու թղթախաղով է զբաղուած: Ինչու Սպարապետի հրամանները չեն կատարում Արարատեան զօրամասի հրամանատարութեան կողմից... Եւ սպայութիւնը, եւ զինուորութիւնը... գողանում են, ծախում... որ տեղի են ունեցել անգամ մալական կանանց բռնաբարութեան դէպքեր եւ սրիկաները անսպաւտիժ են մնացել, չնայած Սպարապետի կողմից հրամայուած է եղել զնդակահարել մէկին, երկուսին: Ինչու՞ են... բարձր պաշտօնեաներ ներքին շուկայում սովետական թղթադրամ, որոշ տեղերում էլ ոսկի ծախսում, իսկ ստորին ծառայողներին որպէս ռոճիկ տալիս հայկական գրեթէ անարժէքացած չէկեր... Ինչու՞ եպիսկոպոսի (Մելիք-Թանգեանի, Ռ. Հ.) գնած 20 000 փութ ցորենը չի փոխադրուում: Այդ ո՞վ է մեզ ցորենի փոխարէն հող ու աւազ տալիս եւ անպատիժ մնում: Յապա ի՞նչ եղաւ 30 000 ռ. ոսկին, որի մասին Տաթևի համագումարում յայտարարեց Սպարապետը: Մեր երկիրը, Հայաստան յայտարարելով, Հայաստանի օրին կրնկնի: Պէտք է երկիրը վերստին յայտարարել Լեռնահայաստան, փոխել կառավարութիւնը, Սպարապետից բացատրութիւն պահանջել ժողովրդի վստահութիւնն ու հաւատը ի չարը գործ դնելու եւ այլն, եւ այլն»: Ահա թէ ինչ էին ասում-խօսում, թէ ինչպէս էին քննադատում եւ դառնութիւն ու դժգոհութիւն ստեղծում շատերը... Իմ դրութիւնն աւելի քան ծանր էր: Ես տեսնում էի, թէ ինչպէս էր երկիրը կործանում: Ես կանգնած էի երկընտրանքի առաջ՝ ժողովուրդ կամ կառավարութիւն: Ժողովրդի կողմն անցնելով, 90 շանս կունենայի, որ քանի դեռ երկրում չնչին քանակութեամբ ռազմամթերք կար, փրկել դրութիւնը... (ընդգծումը իմն է: Ռ. Հ.) Դու չկայիր, դու, որ Գորիսում երկու կառավարութիւնների խառը նիստում մարզարեացար. «Թողնենք Նժդեհին վարչապետ, նա ծանօթ է ժողովրդին, ժողովուրդը կապուած է նրան: Մենք պարտուած երկրի կառավարութիւն ենք: Ժողովուրդը մեզ չի ճանաչում, կարող ենք երկիրը վտանգել»:

Յ. Գ. Ընկեր Սիմոն, քո բարեկամական նամակի որոշ տեղերն ինձ անասելիօրէն դառնացրին: Այդ երբ եւ որտեղ է եղել, որ ես անկորեկտ վերաբերմունք եմ ցոյց տուել Հայաստանի կառավարութեան ամբողջ կազմին: Ինձ զրպարտող պարոնը եթէ քաղաքացիական քաջութիւն

ունի, թող հրապարակ գայ...Շնորհակալութիւն ...որ իմ անուան հետ որոշ յոյսեր եւ կապել եւ այլն եւ այլն: Բայց եւ այնպէս ընդունիր, որ որոշ խնդիրներում շատ եւ շտապել, առանց ինձ լսելու եւ լուրջ քննութեամբ որոշ բաներ լուսաբանելու: Յանիրաւի ինձ վիրատրանք եւ հասցրել եւ անարդար որոշում կայացրել: 2 VIII 1921:Նոյնը»<sup>8</sup>:

գ. Բոլշեիկները այնքան էին ահաբեկուած Գարեգին Նժդեհից, որ նոյնիսկ այսքանից յետոյ էլ, երբ Լեռնահայաստանում մեր բանակը գրեթէ ամբողջովին կազմալուծուած էր, դարձեալ ստիպուած էին զգուշանալ Նժդեհից եւ կատարել նրա պահանջների մի մասը...Այսպէս էր, քանի որ Գարեգին Նժդեհը կոմունիստական դիապետութեան դէմ ապստամբած միակ զօրավարն էր ամբողջ կայսրութիւնում, որից բոլշեիկները 1919-1921 թթ. ջախջախիչ պարտութիւն կրեցին եւ ստիպուած եղան հաշուի մատել նրա պահանջների հետ...Թէեւ Գ. Նժդեհի այդ յաղթանակները անբնական էին բոլոր առումներով, բայց յաղթանակը եղաւ, քանի որ յանձին իրեն, Սբ Ներսէս Մեծի նման մէկը «բարձրացել էր լեռը»: Մտաբերենք իր իսկ խօսքերը. «...Կռիւր կը սկսի Չիրաւի տափարակի վրայ... երբ Ներսէս Մեծը կը բարձրանա Նայատ լեռը, ձեռքերը կը բարձրացնէ դէպի երկինք եւ աղօթելով, կ'իջացնէ ձեռքերը, մինչեւ որ չեն յաղթի հայերը: Ահա՛ յաղթելու գաղտնիքը. Ներսէս Մեծը լեռան վրայ»:

Եթէ չ՛չ քաղաքական եւ զօրական պաշտօնեաների կազմալուծող արարքները չլինէին, Գարեգին Նժդեհը կարող էր պահպանել Լեռնահայաստանի անկախութիւնը նոյն յաջողութեամբ, ինչ յաջողութեամբ որ 1919 թ. սեպտեմբեր-նոյեմբերին կատարեց առաւել անհնարինը՝ 45 օրուայ ընթացքում հարիւրապատիկ փոքրաթիւ ուժերով սկսած ազատամարտով Չանգեզուրն ազատեց ռուսերուրք գերութիւնից... Վերոյիշեալ փաստերը ցոյց են տալիս, որ չ՛չ քաղաքական եւ զօրական ապաշնորհ պաշտօնեաները իրենց կազմաքանդիչ գործերով, որը կարծում եմ գաղտնի տնօրինում էր Ռ.Տէր-Մինասեանը, Գարեգին Նժդեհին թոյլ չտուեցին պահպանել Հայաստանի անկախութիւնը:

**ՀԱՐՅ:** Չանգեզուրի ազատամարտը տարածաշրջանային նշանակութիւն ունեցա՞ւ:

**ՊԱՏԱՍԽԱՆ:**

ա. Գարեգին Նժդեհի մեծագործութեամբ վիժեցուեց Թուրքիան Կով-

կասի միջոցով անմիջականօրէն Ռուսաստանին կապելու, իսկ ըստ էութեան՝ Ադրբեջանը Թուրքիային միացնելու պանթուրքական ծրագիրը, որն իրականանալու դէպքում Կովկասի, գուցէ եւ ամբողջ ռուսական կայսրութեան աշխարհաքաղաքական պատկերը բոլորովին այլ կլինէր:

բ. Չանգեզուրի ազատամարտի շնորհիւ Պարսկաստանը ազատուեց անխուսափելի բոլշեիկացումից, որով բոլշեիկ համաճարակից փրկուեց ամբողջ Առաջատր Ասիան ու Հնդկաստանը:

գ. Գարեգին Նժդեհի կազմակերպած ու գլխատրած Վանաձորի առիւծամարտը ոչ միայն առանցքային դեր ունեցաւ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու մէջ, այլեւ թուրքական անկասելի ռազմակալումից փրկեց Վրաստանը:

դ. 1918-1921 թթ. բոլշեիկեան ոճրապետութեան դէմ ապստամբել են մի քանի ազգեր՝ ռուսները, ուկրաինացիները եւ ուրիշներ: Սակայն կարմիր կոչուած բանակը դաժանօրէն ճնշել է բռնկուած ելոյթները: Այդ ահարկու կայսրութիւնը պարտութիւն կրեց միայն Գարեգին Նժդեհի Լեռնահայաստանում եւ Հայաստանի Հանրապետութիւնում: Բոլշեիկները դէմ ապստամբած ազգերից միայն հայութեանը յաջողուեց յաղթական ապստամբութեամբ աւելի քան հինգ ամսով վերականգնել իր անկախութիւնը... Ընդ որում՝ միայն Գարեգին Նժդեհը կարողացաւ Ռուսաստանին պարտադրել բանակցութիւնների մատել Լեռնահայաստանի հետ եւ ամենակարեւորը՝ զօնէ առերես հրաժարուել Չանգեզուրը, Արցախն ու Նախիջեւանը Ադրբեջանին յանձնելու նկրտումներից:

...«Առաջին գնդակը՝ կարմիր բանակի դէմ, արձակեց իմ զինուորը, - գրում է Գարեգին Նժդեհը, - եւ բովանդակ Ռուսաստանում, եւ Անդրկովկասում վերջինը լինելով՝ նա թողեց կուսակալը: Իմ ժողովրդական վաշտերն էին, որ ջարդեցին, զինաթափեցին եւ գերեցին XI կարմիր բանակի գրեթէ բոլոր զօրամասերը, եւ, հակառակ հանրապետական Հայաստանի կառավարութեան եւ Մոսկուայի միջեւ կնքուած պայմանագրին - որով Չանգեզուրը թողնուած է Ադրբեջանին - իմ ժողովրդական բանակը գէնքի ոյժով, խորհրդային իշխանութեան պարտադրեց իր կամքը - Սիւնիքի կցումը Հայաստանին»:



*ցեղապահ, ցեղապսակ, ցեղաստան, ցեղավար, ցեղել, ցեղիմաստո-  
թիւն, ցեղորաց, ցնորապաշտ, ուժապաշտ, ուղեհարթում, փառազար-  
դել, փարոսօրէն, փառատաճար, փառապսակ, փոխառիկ, փութավ-  
ճիռ, ուժաստեղծ, քաջայոյս եւ այլն:*

Նրա բառերը, ոճերը, պատկերաւոր անգուգադիր մտածողութիւնը եւ ընդհանրապէս գրաւոր խօսքը վսեմացնում, զօրացնում ու պերճացնում են մեր մայրենին ու նաեւ՝ հայոց գրականութիւնը:

**ՀԱՐՅ:** Ասել կուզէք՝ նրա գործերը գեղարուեստական գրականութիւն են:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Անպայման: Հարցի հետազօտութիւնը թողնելով մասնագէտ-գրականագէտներին, նշեմ մի քանի իրողութիւններ:

**ա.** Պէտք է վերջապէս արձանագրուի այն եղելութիւնը, որ **Գարեգին Նժդեհի գրաւոր խօսքը** պատմութիւն եւ իմաստասիրութիւն-գաղափար լեցնելուց զատ, **հայոց ոսկեդարեան պատմիչների երկերին արիւնակից գեղարուեստական գրականութիւն է նաեւ:** Մեր գրականագիտութիւնն ու լեզուաբանութիւնը այս բացարձակ չուսումնասիրուած խնդիրը պէտք է հիմնաւորապէս հետազօտեն եւ **Գարեգին Նժդեհի գեղարուեստական ստեղծագործութիւնն** ու լեզուամշակոյթը, որպէս 20-րդ դ. հայոց լեզուի եւ գրականութեան եզակի ու աննման երեւոյթ, մուծեն Հայոց գրականութեան դասագրքեր:

**բ.** Ինչպէս յայտնի է, հայոց ժողովրդական բանահիւստեան եւ գրաւոր քերթութեան առանձնայատկութիւնները ուսումնասիրելու համար գրականագիտութիւնը հայոց գրականութեան միաւորները բաժանում է «սիրոյ մասին», «հայրենիքի մասին», «մայրական սիրոյ մասին», «պանդխտութեան մասին» եւ այլ տեսակների: **Գարեգին Նժդեհի ամբողջ գրաւոր ժառանգութիւնը**, որի հիմնական մասը Հայաստանի

բռնագրաւուած տարածքները ազատագրելու եւ հայրենասիրութեան մասին են, անկասկած **հայ գրականութեան մէջ նոր ուղղութիւն բացող իւրօրինակ գեղարուեստական գրականութիւն է:** 20-րդ դարի հայոց գրականութեան մէջ առանձին ուղղութիւն այդ երեւոյթը իր իսկ ստեղծած բառով առաջարկում են կոչել «**հայրենատիրական**»:

**գ.** Իբրեւ հայոց գրականութեան մէջ գոյութիւն ունեցող առանձին տեսակ, **հայրենատիրական գրականութիւնը** պէտք է ունենար, եւ բարեխաւաքար ունի, ներկայացուցիչներ, որոնցից առաջինը **Գարեգի՛**

Նժդեհի ամենամօտ ընկեր եւ զինակից, 20-րդ դարի հայոց իմաստասիրութեան խոշորագոյն դէմք Հայկ Ասատրեանն է: Նրա գրուածքները նոյնպէս իրենց պատկերաւոր մտածողութեամբ եւ շնչով գեղարուեստական գրականութիւն են: **Գարեգին Նժդեհի հիմնադրած գրական «հայրենատիրութիւն» ուղղութեանը** մօտեցող գործեր կարելի է համարել նաեւ **Յովհաննէս Շիրազի մասիսերգութիւնը**, Պարոյր Սեակի «Եռաձայն Պատարագ»ից հատուածներ եւ «Եղիցի լոյս» ժողովածոյի քաղաքական առանձին քերթուածքներ, նաեւ **Յակոբ Օշականի, Մուշեղ Իշխանի, Ժակ Յակոբեանի, Չարեհ Մելքոնեանի եւ սփիւռքահայ մի քանի այլ գրողների որոշ գործեր:**

**դ.** Եւս մի յոյժ կարեւոր հանգամանք. **Գարեգին Նժդեհի գրաւոր ժառանգութիւնը**, որպէս գեղարուեստական արժէք եւ մտածողութիւն, լինելով նրա հանճարի զօրեղ փայլատակումներից մէկը, անկասկած հայոց Ոսկեդարեան տիեզերահունչ գրականութեան վերածնունդը, վերականգնումն ու շարունակութիւնն է 20-րդ դարում:

**ՀԱՐՅՈՒՄ:** *Գաղափարական ի՞նչ դրոյթների վրայ է Գարեգին Նժդեհը հիմնադրել «Յեղակրօն ուխտեր»-ը: Յակիրճ ներկայացրէ՞ք խնդրեմ ցեղակրօնութեան ծագումը, զարգացումն ու էութիւնը:*

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Յեղակրօնութիւնը նա «Դաւիթբեկեան ուխտեր» անունով փաստօրէն հիմնել էր 1919 թ. հոկտեմբերին Չանգեզուրում: Յեղակրօնութեան առաւել ամբողջական դրոյթները նա ամփոփ ներկադակրօնութեան առաւել ամբողջական դրոյթները նա ամփոփ ներկայացրել է 1927 թ. Սալոնիկում լոյս ընծայած «Որդիների պայքարը հայրերի դէմ» ծրագրային աշխատութիւնում, ապա Մոֆիայի «Խոռովք» ամսագրում 1932 թ. տպագրուած «Յեղակրօնութիւնն իբրեւ յաղթանակի գօրոյթ» յօդուածում, ինչպէս նաեւ՝ «Յեղի ոգու շարժը» գրքոյկում: Որքան էլ զարմանալի, բայց անժխտելի փաստ է, որ **Գարեգին Նժդեհի 80-90 տարի առաջ մշակած Յեղակրօնութիւն-Տարօնականութիւնը**, իբրեւ գաղափարախօսութիւն եւ Հայրենատիրութեան գործածելի ուղեցոյց, գերարդի ռազմավարութիւն է նաեւ այսօր՝ 90 տարի յետոյ... Այսպէս՝ խօսելով ցեղակրօն շարժումը սկզբնաւորելու անհրաժեշտութեան մասին, Գ. Նժդեհը գրում է, թէ ինչու է ստեղծել այդ կազմակերպութիւնը.

ա. Պարտադրականությանը տառապող գաղութահայության՝ յատկապես երիտասարդ հասուածին հոգեփոխելու, նրան ազգային գիտակցութիւն, ուժ ու վստահութիւն ներարկելու, «որով անհայրենիք հայութիւնը հոգետր զրահ կը հագնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցութիւններին յաջողապէս դէմ դնելու համար» («Յեղակրօնութեան Հաստատման» աշխատութիւնից):

բ. «Քէմալական իշխանութեան հաստատման առաջին իսկ օրերից... Թուրքիայում կատարուած ցեղասպանութիւնն արդարացնելու կամ ծայրայեղ դէպքում հասկանալի դարձնելու... թուրքերի հակահայկական քարոզչական արշալի» դէմն առնելու.

գ. «Հայկական սպանդին հետեւող բարոյական եղեռնի՝ հայերի վարկաբեկմանը» դիմակայելու՝ իբրեւ ինքնապաշտպանական քայլ.

դ. Հայկական հին կուսակցութիւնների կողմից Հայոց դատից հրաժարուելու եւ Թուրքիային մերձենալու մտայնութեանը «ոչ» ասելու եւ հայութեանը «Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին տէր դարձնելու» նպատակով:

Յեղակրօնութեան էութիւնը բացատրող ասոյթներից մէկում Գարեգին Նժդէհը գրում է. «ցեղի հետքերով-ահա՝ թէ ի՞նչ ասել է ցեղակրօնութիւն: Յեղը, ցեղային արիւնը, ցեղի կամքը աստուածաստեղծ-ահա՝ դա մի այլ բացատրութեամբ: Դ-ա ասել է՝ խանդավառ ծառայութիւն եւ հնազանդութիւն ցեղին. դա պաշտամունքն է ցեղի-իր ոյժի, հանճարի եւ բազուկի: Դ-ա մեր հաւատն է՝ դէպի մեր ցեղի կարողութիւնները»:

Վերջապէս նա իր «Ինքնակենսագրութեան» թիւ 12 կէտում շատ հակիրճ սահմանումով բանաձեւել է ցեղակրօնութեան բուն նպատակն ու էութիւնը՝ այն անուանելով **հայրենատիրական շարժում**. «Հայը Հայաստանից դուրս, ենթակայ է վատասերումի: Այդ չարիքի դէմ պայքարել հնարատր է միայն ցեղային արժէքների, առաքինութեանց եւ սրբութիւնների խոր ճանաչումով ու վերապրումով,- մի բան, որ հիմնադրեցի եւ անուանեցի Յեղակրօնութիւն: Դ-րա նպատակն է՝ անհայրենիք հայութեանը հոգետր ու քաղաքական անտուն-անտիրութիւնից փրկելով, դարձնել **հայրենատէր**: Դ-ա **հայրենատիրական շարժում** է, որի մէջ վերանորոգուելով միայն պիտի միանան հայութեան բոլոր հաստատւածները» (ընդգծումներն իմն են, Ռ. Հ.):

**ՀԱՐՑ: Ո՞րն է Յեղակրօնութեան տարբերութիւնը Տարօնականութիւնից:**

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Գարեգին Նժդէհը 1936 թ. նամակներից մէկում գրում է. «Տարօնականութիւնը- դա միեւնոյն ցեղակրօնութիւնն է հասկն առած սերունդի համար»<sup>9</sup>:

**ՀԱՐՑ: Ի՞նչ հիմքեր ունէին ոմանք, որ Գարեգին Նժդէհի ցեղակրօնութիւնը համեմատելով ֆաշիզմի հետ, հակադրում էին քրիստոնէութեանը:**

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Այդ անհեթեթութիւնը 1980-1990-ական թթ. տարածեցին մի քանիսը՝ նրա մտքերը ամբողջութիւնից կտրելու եւ կամայական կերպով մեկնաբանելու ճանապարհով:

Նժդէհի ցեղակրօնութիւնը ոմանց կողմից աղաւաղուել ու սխալ մեկնաբանութիւններով է քարոզուել դեռեւս ստեղծման փուլում՝ այն համարելով նաեւ հիթլերականութիւն: Յեղակրօնութեան առաջին ահանդը Ռուբէնի՝ իբր թէ ՀՅԴ Բիւրոյին ընդդիմութիւն սարքած (*Տես Գարեգին Նժդէհ, Նորայայտ նամակներ, Երևան, 2011 թ., էջ 35*) «Մարտկոցական» շարժման պառակտումից յետոյ 1933 թ. հոկտեմբերին ստեղծուած «Արեւմտահայ ազատագրական ուխտ» էր. որը Յեղակրօն ուխտերի գաղափարախօսութիւնը խեղափոխելով՝ դարձրեց հեթանոսութիւն եւ մօտեցրեց նիցշէական աստուածամերժութեանը<sup>10</sup>:

Այս յերիւրանքներին առաջինը պատասխանում է հէնց ինքը՝ գրելով. «Մեր մտատրականութեան հոգետր դեղնախտով տառապող մաւր... վատաբանեց. «Յեղակրօնութիւնը հիթլերականութիւն կհոտի»: Նա այսպէս չարամեկնեց. գիտենալով հանդերձ, որ ցեղակրօնութիւնը ծնունդ է առել մեր հայրենի լեռնաշխարհի գլխին կախուած մեծ ծնունդ է առել մեր հայրենի լեռնաշխարհի գլխին կախուած մավտանգի օրերին, երբ մարդկութիւնը լսած չէր հիթլերականութեան մաւրսին: Յանձին մեր դաւիթբեգեան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու յաղթեց ցեղակրօնութիւնը»<sup>11</sup>:

«Գերազանցապէս հայկական է ցեղակրօնութեան գաղափարը... Այդ շարժումը կաղապարուած է մեր ցեղի էութեան վրայ: Դեռ խօսք չկար ֆաշիզմի եւ հիթլերականութեան մասին, երբ ցեղակրօնութեան

գաղափարը 1919-ին ոտքի էր հանել մեր Դաւիթ Բէգեան ուխտերը Միւնեաց աշխարհում... Այն որեւէ հանգիստութիւն չունի այլ վարդապետութիւնների հետ...»<sup>12</sup>

«...Տարիներով իմ միտքը չարչրկել է մի հատիկ հարց—Հայաստանի ինքնապաշտպանութեան գործի իրականացումը: Յեղակրօնութիւնը չծնունդ գաղութներում, դա բերած է երկրէն, մեր Հայրենիքէն: Դա կեանքի կոչունց 1919-21 թուականներին, երբ վտանգներէն ամենէն ահաւորն էր կախուած Հայոց Լեւոնաշխարհի գլխին: Ոչ ֆաշիզմ, ոչ էլ հիթլերականութիւն կար աշխարհում այդ ժամանակ: Յեղի յաւիտենականութեամբ ապրելու եւ նրա համար մեռնելու ուխտն էր —Դաւիթ-Բէկեան Ուխտը, որ թուրքերաթար վտանգից ազատեց Լեւոնահայութիւնը զէնքի ուժով եւ մայր երկրին կցեց Ատրպէյճանին թողուած Միւնեաց աշխարհը...Յեղակրօնութիւնը, հայ կեանքի բարձրացող նոր ալիքն է՝ ուղղուած չորս գլխատր չարիքներու դէմ:

Ա. Պատուար կանգնիլ օտար միջավայրի այլասերիչ ազդեցութիւններու դէմ ու չէզոքացնել զանոնք:

Բ. Հաշուեյարդարի ենթարկել ներքին աղիտաբեր ճակատը, որմէ մեծապէս կօզուիին թուրքն ու բուլշեիկը ու փրկական միատրութեան մղել սփիւռքի հայութիւնը:

Գ. Հայ հոգին պահել անառիկ, ազգասպան լենինականութեան (ռուսական բուլշեիկների 1917-1924 թթ. գաղափարատու դիւապետը, Ռ.Հ.): յարձակումներու դէմ:

Դ. Յեղայնացումով ու նոր սերնդի ցեղակրօնացումով զինաթափել՝ մեզ սպառնացող գոյ եւ գալիք թրքական վտանգը: Յեղակրօնութիւնը քաղաքական միադաւանութիւն է, որ ունի իր սուրբ գիրքը—Հայոց Պատմութիւնը—ցեղի կեանքի գիրքը: Ան ինքնաճանաչութեան գլխատր ազդակն է: Ժողովուրդների անգօրութեան ու դժբախտութեան ամենագործօն պատճառը՝ իրենց սեփական էութեան մասին ունեցած տգիտանքն է, անինքնաճանաչութիւնը»<sup>13</sup>:

Մէկ այլ առիթով շարունակում է. «Քանի որ գաղութահայութեան ամենամեծ զանգուածն ապրում է ԱՄՆ-ում, որտեղ մեր սերնդին ամենամեծ վտանգն է սպառնում (ի դէմս ամերիկեան միջավայրի ամենակույ, ձուլող յատկութեան), ես ցեղակրօն շարժումը սկզբնաւորեցի Ամերիկայում: Յեղակրօն շարժումը ոչ մի ընդհանուր բան չունի եւ չէր կա-

րող ունենալ օտար վարդապետութիւնների հետ, քանզի այն, նախ եւ առաջ, բարեփոխիչ շարժում-վերածնունդ է, որ հնարատր է միայն սեփական, այլ ոչ փոխառուած արժէքներով»<sup>14</sup> (բոլոր ընդձուներն իմն են: Ռ. Հ.):

Քանի որ Նժդէիը տասնամեակներ շարունակ հայրենիքում փակի տակ եղած հեղինակ է եղել, նրա աշխատութիւններն ու մտքերը նենգափոխել-սխալ են ներկայացրել նաեւ մերօրեայ Հայաստանում: Խօսքը յատկապէս վերաբերում է ցեղակրօնութիւնը քրիստոնէութեանը հակադրելու անհեթեթութեանը, որին 1980-1990-ական թթ. հասան ունանք՝ նրա մտքերը ամբողջութիւնից կտրելու եւ կամայական մեկնամար բանելու ճանապարհով: Նշուած խեղափոխումների համար «հիմք» են ընդունել նրա երկու աշխատութիւնները՝ «Յեղակրօն ուխտեր եւ ցեղակրօնութեան հաւատամքը» (1933թ.) եւ «Մեր յեղափոխութեան արքիչը» դամբանականը, որ նա խօսել է Քրիստափոր Միքայէլեանի շիրիմին (1924 թ.): Այդ աշխատութիւններից արուած մէջբերումներով էլ բացայայտեմ թիրիմացութիւնն ու թիրըմբոնումը:

Առաջին աշխատութիւնից վկայակոչել են դրա՝ իրենց կողմից խմբագրուած ու մկրատուած տարբերակը (որ տպագրել են մի քանի անգամ) եւ յայտարարել, թէ Նժդէիը քրիստոնէութեան փոխարէն նոր կրօն է ստեղծել: Նախ՝ այդ մասին Նժդէիի բազում մտքերից մէկը ներկայացնելով ցոյց տամ, որ նա ոչ միայն եղածը անտեսել—նոր կրօն չի ստեղծել, այլէ՛ հանճարեղօրէն հիմնաւորել է կրօնի (իմա՝ քրիստոնէականի) դերը մարդու կեանքում եւ յայտարարել, որ հեռանալով կրօնից՝ մարդը «անձնասպանօրէն կտրում է իր հոգեւոր զարկերակը»: Այսպէս, «Ռազմիկ» թերթի թրքակցի հետ 1943 թ. հարցազրոյցում գրում է. «Կրօնականութեան պակաս, ասել է՝ աստուածութեան, սրբութեան զգացումի պակաս, որի պատճառով հոգեւոր շփոթի է մատնուած օրուայ մարդկութիւնը: Հակառակ իր ստեղծած մեծ քաղաքակրթութեան՝ մարդը այսօր էլ դեռ ատելի կաւ է, քան՝ ոգի: Այդ իսկ պատճառով նա յաճախ առհաւօրէն մղում է ընդվզելու այն բոլոր զայիչ արժէքների, ճշմարտութեանց եւ սրբութիւնների դէմ, որոնք կոչուած են սանձուած պահելու անասունն ու անասնականութիւնը նրա մէջ: Եւ միշտ էլ բարոյապէս տկարացած մարդը իր անկումն արդարացնելու հաշվով, քաղաքակրթութեան տկարացումը, մի դաւանանք, մի իմաստասիրութիւն: Մեր օփնտռել է մի տեսութիւն, մի դաւանանք, մի իմաստասիրութիւն: Մեր օրերի հակակրօն հովերը պիտի բացատրել մարդկային տիպի հոգեւոր



տուած չի ստեղծում— յօրինում, այլ՝ ցեղը բարձրացնելով հասցնում է Աստծուն՝ հռչակելով «Աստծոյ գործակիցը»: Պատկերաւոր մտածողութիւն, որով հայերս սովոր ենք շեշտել երեւոյթի գերկարեւորութիւնը, ինչը բնական է մեր լեզուամտածողութեան համար («քեզ Աստծոյ չափ սիրում են», «դու իմ Աստուածն ես», «կարօտից մեռնում են», «մեռա սպասելով», «հագար տարի չեն տեսել» եւ այլն): Աւելին՝ նա հայ երիտասարդութեանը յորդորում է հաւատոյ հանգանակ-հաւատամք հռչակել Աստուած—Ազգ-Հայրենիք եռամիասնութիւնը. «Մեր նորահասը պիտի իրացնէ հայ վերանորոգչականի դաւանանքը—Աստուած, ցեղ, հայրենիք»<sup>20</sup>: Մէկ այլ աշխատութեան մէջ էլ յատկում է. «Մեր երկրագնդի վրայ ուխտերից ամենասրբազանը մի՛շտ էլ կնքուած է եղել Աստուծոյ եւ հայրենիքի համար: Deo et Patria! Նմաններից էր Մամիկոնեից Ուխտը»: Ընդ որում՝ խիստ կարեւոր ու պերճախօս է այն հանգամանքը, որ Նժդեհն իր առաջադրած «Հաւատամք»-ի մէջ «Աստուած»-ը դնում է եռամիասնութեան գլուխը...

Այժմ քննենք «Մեր յեղափոխութեան արարիչը» յօդուածը: Քանի որ այն ընդամենը երեք էջ է, խաթարիչները չեն համարձակուել բնագիրը հրատարակել կրճատում-աղաւաղումներով, ուստի ամբողջ նախադասութիւնից անջատել են իրենց պէտք եկած մասը, ներկայացրել ու մեկնաբանել իրենց ուզած ձեւով՝ թէ իբր Գարեգին Նժդեհը հայ ժողովրդին ասում է. «Ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վտանգաւոր խօսքին: Դու խաբուած ես, ժողովուրդ, որ գոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար»:

Մինչդեռ Նժդեհի խօսքերը ամբողջովին մէջբերելու դէպքում ուրիշ բան է պարզում: Ահա այդ հատուածը՝ բովանդակութեան եւ մտքի վրայ էականօրէն չանդրադարձող որոշ կրճատումներով. «Գողգոթայէն՝ Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքավառ խաչեցեալի, — օգնութիւն, փրկութիւն ինձ: Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր, կը պատասխանէր. — Ծարա՛ւ ես, արք արցունքդ... — Կոտորտ՛ւմ ես, որովհետեւ թոյլ ես... Վաղուց է, ինչ եկեղեցիներիդ գանձերի քաղցր դողանքը չես յտում, առանց իտեալի եւ վեհութեան կը սողա՛ս միայն — ստրո՛ւկ ես՝ դո՛ւ ես մեղաւոր, դո՛ւ: Ի՞նչը մղեց քեզ մի-

ամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: Ո՞վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է... Դու խաբուած ես, ժողովուրդ, որ գոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար: Թուլութիւնը, ասում է աշխարհը, ծնուած է ժողովրդի հոգու համար: Թուլութիւնը, ասում է աշխարհը, ծնուած է սնուցանելու ուժը: Ուժն է ծնում իրատունքը... Այս էր աշխարհը հայկական Գողգոթայի հանդէպ... Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովրդին»<sup>21</sup>:

Նախ՝ այս խօսքերը քրիստոնէութիւնը մերժող, առաւել եւս «Նոր կրօն» ստեղծելու հիմք հանդիսացող մտքեր չեն, ինչպէս ճգնել են ներկայացնել: Այստեղ ասում է, որ աշխարհը մեզ համարում է քրիստոնէական բարոյախօսութեան գողը:

Երկրորդ՝ ամենակարեւորը, սրանք Նժդեհի խօսքերը չեն, այլ «աշխարհի» պատասխանը «մահուան դատապարտուած այս ժողովուրդին»: Դրանք ոչ միայն նրա խօսքերը չեն («մարդկութեան», «աշխարհի» խօսքերն են՝ ուղղում «ժաւաքավառ խաչեցեալին»)՝ հայ ժողովրդին, այլեւ իր համար անընդունելի, այպանելի են, քանի որ այդպէս ստղծելին նա յայտարարում է «յանցաւոր ու անտարբեր»:

Իրօք, եթէ քրիստոնէութեան մասին նրանց մէջբերած խօսքերը բառացի ընկալելով համարենք Նժդեհի կարծիքը, ապա նոյն տրամաբանութեամբ պիտի մէջբերենք նաեւ նրա «Ծարա՛ւ ես, արք արցունքդ» միտքը եւ ամբողջովին մերժենք «Մեր յեղափոխութեան արարիչը» դամբանա-յայտարարենք, որ Նժդեհը «Մեր յեղափոխութեան արարիչը» դամբանականում հայ ժողովրդին կոչ է անում՝ ծարաւելիս խմել սեփական արցունքը... Մինչդեռ թէ՛ այստեղ եւ թէ՛ ընդհանրապէս Գարեգին Նժդեհի գրեթէ բոլոր մտքերը ոչ թէ պիտի ընկալենք իբրեւ սովորական յօդուածի խօսքեր, լոր դրանք մեր ոսկեդարի պատմիչների մատեանների մնան պէտք է դիտարկենք որպէս գեղարուեստական պատկերաւոր մտածողութեան անգուզադիր կոթողումներ:

Կարծես նախազգալով, որ մի օր կարող են գտնուել մարդիկ, որ իր խօսքերը պիտի ընկալեն եւ մեկնաբանեն իրենց ուզածի պէս, Նժդեհն իր յիշեալ դամբանականի դիտարկող հատուածի սկզբում էլ, մէջտեղում էլ, վերջում էլ շեշտում է, որ «յանցաւոր ու անտարբեր» մարդկութիւնն էր մեզ այդպէս ասում, «պատասխանում»:

Նոյնը վերաբերում է նաեւ մէջբերուած հատուածում նրա օգտա-



րապետող գիտակցութիւնը հայու մէջ վաղուց է ինչ ազգայինն է, եւ ոչ կրօնականը, ...նա շատ վաղուց հայացրեց քրիստոնէութիւնը»<sup>34</sup>: «Մրբացնելով ու յաւերժացնելով Մամիկոնեանների ուխտը՝ եկեղեցին մեր ժողովրդին տուած է ինքնապաշտպանութեան զենքերից ամենահատուն ու յաղթականը՝ «մահ գիտեցնալ»-ը»<sup>35</sup>: Գ. Նժդեհը Դուրեան եւսիսկոպոսի՝ «Մխալ է ազգային շահերը նոյնացնել եկեղեցու շահերին» արտայայտութիւնը յայտարարելով յերիւրանք եւ նրան այդ ունման այլ մտքերի համար անուանելով «վեղարատը շառլատան», աններելի ապագայնութիւն է համարում ազգ-եկեղեցի նոյնականութիւնը ժխտող դրսեկ մտայնութիւնը՝ աւելացնելով. «Դուրեան եպիսկոպոսը բշնամի է Ներսէս Վարժապետեանի եւ Խրիմեան Հայրիկի, Իզմիրլեանի եւ Գեորգ Վշտակրի քաղաքականութեանը: Դուրեանը դէմ է Ներսէս Աշտարակեցուն, Ներսէս Շնորհալուն, Ղեւոնդ Երեցին, Յովսէփ կարողիկոսին, Սահակ Պարբեին, Մեծն Ներսէսին, որոնք սրբացան հայ հայրենիքի դատի համար մաքառելով, տքնելով: Դուրեանը չի հասկանում «հայ-քրիստոնէալ» դարձումի խորհուրդը: Նա չի ուզում գիտենալ, որ սկզբից ի վեր հայութիւնն ու իր քրիստոնէութիւնը ծուլուած են ի մի բնութիւն... Այս երկուսի ճակատագիրը նոյնացած է»<sup>36</sup>: Այս ամէնին անհրաժեշտ է յաւելել նաեւ այն իրողութիւնը, որ Գարեգին Նժդեհն իր ամբողջ կեանքում որեւէ կարեւոր գործ չի սկսել կամ ձեռնարկել՝ առանց Աստուծոյ անունը տալու: Նրա բոլոր արշաւանքները սկսուել են եկեղեցուց կամ աղօթքով: Նա եկեղեցիներում է անցկացրել նաեւ Սիւնիքի (1920 թ., դեկտեմբերի 25) եւ Լեռնահայաստանի (1921 թ., ապրիլի 26) հանրապետութիւնների հիմնադիր համագումարները: Իր զենքերը, նոյնիսկ սպարապետական գօտին օծուել են եկեղեցուն: Իր զինուորներին յղած գրեթէ բոլոր հրամաններն ու կանչերը աւարտում են Աստուած կանչելով. «Մեզ հետ Աստուած եւ Դաւիթ Բեգի վրիժակ հոգին», «Մեզ հետ Աստուած եւ մեր մեծ հայորդիների... անհանգիստ հոգիները», «Աստուած եւ իմ սերը բեզ հետ» եւ այլն<sup>37</sup>: 1943 թ. հայ ռազմագերիների հետ հանդիպումների ժամանակ նրանց ասում էր. «Մեր հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստուծու փէշից, դուք էլ բռնէք ինձանից»<sup>38</sup>:

«Ինքնակենսագրականում» (1944 թ.) գրում է. «Եղել եմ խորը հատաքի եւ էտիկայի մարդ... Հաւատքի եւ պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը յատկացուած են եղել Աստուծոյ եւ Հայրենի-

քիս: Հայաստանն է եղել երկրատը (յատուկ է շեշտում «երկրատը» բառը – Ռ. Հ.) սրբազնագոյնն ինձ համար»:

Վերոյիշեալ ու բազմաթիւ այլ իրողութիւնները նկատի առնելով, անժխտելի է, որ 20-րդ դարի հայոց մեծագոյն պատգամախօսի գաղափարախօսութեան մեկնակէտը հայոց քրիստոնէականն է, որով այն հիմնաւորապէս տարբերում է 1920-30-ական թթ. Իտալիայում ու Գերմանիայում, այնուհետեւ աշխարհի այլ երկրներում տարածում գտած ցեղամոլ ֆաշականութիւնից: Ֆաշերի գաղափարաբանութեան հիմքը Նիցշէի իմաստասիրութիւնն էր: Նիցշէի. «Ի՛ն մեծութեան արձանը պիտի ցցուի փլատակներից եւ դիակներից կազմուած մի լեռան վրայ» ասոյթի առիթով Գ. Նժդեհը նրան անուանում էր «հոգեհիւանդ»: Այսպիսով՝ անվիճելի իրողութիւն է, որ Գարեգին Նժդեհի սկզբնաւորած Յեղակոնութիւնն իբրեւ զուտ հայկական իրայատուկ գաղափարաբանութիւն, հիմնաւորապէս տարբերում է 1919 թ. վերջերին Իտալիայում եւ Գերմանիայում սկզբնաւորուած, իսկ 1922 թ. Իտալիայում (Մուսոլինի), ապա 1933 թ. Գերմանիայում (Հիթլեր) իշխանութեան եկած ֆաշականներից տարածում գտած ցեղամոլ յարձակողական-այլամերժութիւնից: Ֆաշերի համար քրիստոնէութիւնը ժխտելի ու անընդունելի էր, մինչդեռ 20-րդ դարի հայոց մեծագոյն պատգամախօսի գաղափարախօսութեան մեկնակէտը ցեղապաշտութիւնն էր, որը այլամերժ ֆաշականութիւնից յատկապէս տարբերում ու առանձնանում է հայոց քրիստոնէականի վրայ հիմնուած ինքնապաշտպանական էութեամբ: Այստեղ անմեայնի, Գարեգին Նժդեհի գաղափարախօսութեան եւ մեծագործութեան համայնացումը շարունակում է վտանգել հայութեան ազգային գաղափարախօսութիւնը այլասերող հակառակորդին ու նրա հայաստանցի ձեռնասուններից: Մեր համազգային սրբութիւններից մէկին վարկաբեկելու լուտանք էր 2011 թ. հոկտեմբերի սկզբի հանրահաւաքներից մէկում ՀՀ առաջին նախագահի ելոյթի մէկ հատուածը, ուր նա Գարեգին Նժդեհի «ցեղապաշտ» եւ «ցեղակրօնութիւն» բառերը հայտարարեց ռասիզմ բառի հայերէն համարժեքը՝ յաւելելով. «Ֆաշիզմի էութեան բոլոր տարրերը կարելի է գտնել Նժդեհի աշխատութիւններում...Սի բան է Նժդեհի երոսը, ազգափրկիչը, մի այլ բան՝ նրա ուսմունքը, որը ընդամենը եղել է ժամանակատար մոլորութիւն»: Յայտնի է, որ Գարեգին Նժդեհի ռազմական գործունէութիւնը Հայաստանում տեւել է 1914թ. հոկտեմբերից

(աւելի ստոյգ՝ 1915 թ. մայիսից) մինչեւ 1921 թ. յուլիսը: Մինչդեռ յետագայ իր ամբողջ կեանքում՝ 1921 թ. յուլիսից մինչեւ իր 1955 թ. նահատակութիւնն ու վկայաբանութիւնը բոլշեփեկեան բանտում, աւելի քան 34 տարի, նա բացառապէս զբաղուել է հայոց ազգային գաղափարաբանութեամբ, մնացել ցեղակրօնութեան ու տարօնականութեան գաղափարների կրողն ու մունետիկը՝ ներառեալ 1944-1955 թթ. բանտում գրած աշխատութիւնները, նամակներն ու հարցաքննութիւնների պատասխանները: Երբ նրա կեանքի վերջին աւելի քան 30 տարուայ գաղափարական աշխատանքը յայտարարում է «Ժամանակաւոր մոլորութիւն», կնշանակի նրա գործերի գործ հայոց 4500-ամեայ ազգային գաղափարաբանութեան յայտնաբերումը, վերականգնումը, զօրացումարդիացումը եւ Չանգեզուրում գործադրելը հաւասարեցում է գրոյի: Սրանից աւելի վարկաբեկիչ յերիւրանք որեւէ մէկը չի տարածել Հայոց ազգային գաղափարաբանութիւնը վերականգնած գաղափարատու սրբութեան հասցէին<sup>39</sup>:

**ՀԱՐՅ:** Գարեգին Նժդեհից բացի, Յեղակրօնութիւնը ուրիշ ի՞նչ դէմքեր են բնորոշել:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Յեղակրօնութեան մասին կարեւոր վկայութիւններից յատկապէս կառանձնացնէի մեծ արձակագիր Համաստեղի եւ ժամանակի յայտնի մտատրական Օննիկ Փանիկեանի (հանդէս է եկել Չարմունի, նաեւ՝ Նաւասարդունի, Արտաւազդ, Արամայիս ծածկանուններով) դատողութիւնները:

*«Նժդեհի համար ցեղը ընկերաբանական կազմութիւն չունէր, դասակարգեր չկային հոն, այլ կար կախարդական ուժ մը թէ հայ աղքատին եւ թէ հայ հարուստին մէջ...»* - գրում է Համաստեղը. - «Յեղ» բառը որպէս արմատ բազմազան բառակերտումներու ենթարկած էր, աւելի հիմնատրեքու համար իր հաւատքը - ցեղադրոշմ, ցեղական, ցեղայնօրէն: Եւ օր մըն ալ ձեռքը ուսիս դրաւ եւ խօսեցաւ նոր բառով մը երբ «Հայաստան» քեմփին մէջ հաւաքուած էր մօտ չորս հազար հայութիւն:

*«Այս ժողովուրդը պէտք է «ցեղենք»...»*

*Ինչպէս ըսինք, Նժդեհին համար շատ հեշտ էր «ցեղ» արմատով նոր բառեր կերտել: Նոր կազմուած նոր սերունդի միութեան անունը*

*մկրտեց «ցեղակրօն»:*

Օննիկ Փանիկեանը աւելի հիմնատր ու աւարտուն է բնորոշում երեւոյթը. *«Յեղակրօնութիւնը առաւելապէս ոգիի կազմակերպութիւն է: Յեղակրօնը ոգեպաշտ անհատ է: Հայ ժողովուրդը դարեր շարունակ տոկաց ու կանգուն մնաց շնորհիւ իր անյաղքահարելի ոգիին: Ծիշդ է, որ մեր նիւթեղէն շէնքերն ու հարստութիւնները հրդեհուեցան, քանդուեցան ու մոխրացան, բայց Հայու Ռզին անընկճելի մնաց: Յեղային այս շարժումը ոգեկոշումն էր Մամիկոնեան հայուն: Ան պէտք է ամէն հայու մէջ վերածնէր հին ու պատմական Մամիկոնեաններու տիպարով Հայը, պէտք է ամէն անհատ... նմանէր Մամիկոնեան Հայուն, որովհետեւ ցեղակրօնութեան ոգին ուրիշ բան չէր, եթէ ոչ Մամիկոնեան սպարապետներուն ոգիի ու ցեղային բարոյականի վերստեղծումը մեր օրերու հայ անհատին մէջ:*

*Մամիկոնեանները տակաւին Գ դարէն սկսեալ... Ի՞նչ հերոսական ոգի էին մշակեր անոնք ցեղին եւ հայրենիքին համար: Մարդ ուղղակի հիացումով ու պաշտամունքով կը լեցուի եւ ծունկի կուգէ գալ մշտավատ յիշատակին առաջ Մամիկոնեան սպարապետներու, որոնք ցեղակրօնութեան ներկայացուցիչները եղան աւելի քան 1600 տարի առաջ, մեր պատմութեան մէջ»<sup>40</sup>:*

**ՀԱՐՅ:** Գարեգին Նժդեհը կուսակիցների հետ գաղափարաբանական ի՞նչ տարաձայնութիւններ է ունեցել:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** 1921 թ. օգոստոսի 10-ին Չանգեզուրը քշնամուն յանձնած ՀՅԴ կուսակցութեան ջոջերը նրան առաջին անգամ հարուածեցին 1921 թ. յուլիսի 19-ին, երբ Ռ. Տէր-Մինասեանի գաղտնի հրահրումով Թարիզում նրան դատի տուեցին Լեռնահայաստանը քշնամուն յանձնելու մեղադրանքով: ՀՅԴ համագումարը, 1923 թ. դարձեալ լսելով կողմերին եւ հիմնատրապէս ուսումնասիրելով գործը, Գարեգին Նժդեհին վերականգնեց կուսակցութեան մէջ՝ ընդունելով հետեւեալ որոշումը. «Չանգեզուրի ապստամբական շարժումները ունեցած են արտակարգ նշանակութիւն: Չանգեզուրի ապստամբական շարժումների շնորհիւ Չանգեզուրի ամբողջ գաւառը միացուեց Հայաստանի Հանրապետութեանը»: Այսպիսով, ՀՅԴ Ընդհանուր ժողովը չե-

դեալ յայտարարեց Գ. Նժդեհին կուսակցութիւնից վտարելու ՀՅԴ քիւրոյի որոշումը: Դրանով ՀՅԴ քիւրոն Գարեգին Նժդեհից խայտառակ պարտութիւն կրեց, ինչը աննախադէպ էր այդ կուսակցութեան պատմութեան մէջ: Այսուամենայնիւ՝ Չանգեզուրը թշնամուն յանձնելու մէջ նրան մեղադրելը Գարեգին Նժդեհին հոգեկան անասելի տանջանքների մատնեց... 2011 թ. իմ ձեռքն անցած նորագոյն վաւերագրերը (Վեներտիկի Ս.Ղազար կղզում պահող նրա 17 բացառիկ արժէքատր նամակները) վկայում են, որ ՀՅԴ այդ նոյն պետերը Ռ. Տէր-Սիմասեանի գլխաւորութեամբ 1933-1938 թթ. եւս ոչ մի պղծութեան առաջ չկանգնեցին՝ Նժդեհին թոյլ չտալու համար **ՅԵՂԱԿՐՕՆՈՒԹԵԱՄԲ ու ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ** ազգայնացնելու-գորաւորելու Դաշնակցութիւնը, կուսակցութիւնը ազատագրելու թշնամու թակարդից, որի մէջ ՀՅԴ-ն զցել էին այդ ջոջերը: Գարեգին Նժդեհը գաղափարի անհատ էր, եւ նրա համար չկար աւելի մեծ հարուած, քան իր գաղափարի ասպատակումը: Իսկ երբ դա անում էին այսպէս կոչուած իւրայինները, դա նրանից ուժերի ահռելի լարում էր քանում՝ հոգեկան ահաւոր խոշտանգումների ենթարկելով նրան: Նշածս նամակներում, որոնց էութեանը հանրութիւնը տեղեակ եղաւ միայն 2011 թ., Գ. Նժդեհը տալիս է ՀՅԴ քիւրոյի մօտ 25 տարիների անդամներից մէկի՝ երկար տարիներ Բիւրոյի ղեկավար Ռ. Տէր-Սիմասեանի գործունէութեան իրական պատկերը: Այդ գործչին ղեկավարում էին օտար ուժերը՝ նրան մղելով բազմաթիւ հայրենադաւորութիւնների. Գետրգ Չաուշին սպանելը(գորավար Սմբատ Բորոյեանի, Շահան Նաթալի եւ այլոց վկայութիւնները), իր կեանքն ու կաշին փրկելու համար 1915 թ. հազարաւոր սասունցի-մշեցիներին թողնել-փախչելով՝ նրանց զոհաբերելը (դաշնակցութեան Բիւրոյի անդամ Վահան Փափագեանի յուշերը), ժողովրդի մէջ իրենց անբաղդատելի նուիրումով բացառիկ հեղինակութիւն ունեցողներին (Անդրանիկ, Եփրեմ Խան, Խէչօ եւ ուրիշներ) անընդհատ վարկաբեկելով հեղինակագրկել փորձելը, 1920 թ. հոկտեմբերի 30-ին առանց որեւէ կրակոցի Դարսի յանձնելը թշնամուն՝ **Հայաստանի անկախութիւնը վերացնող ՀԻՄՆԱԿԱՆ դաւադրութիւնը**, 1920 թ. օգոստոսի 10-ին բոլշեւիկների հետ Թիֆլիսում կնքած պայմանագրով Չանգեզուրի ու Արցախի յանձնումը, Դաշնակցութեան ազգայնացումը վիժեցնելու նպա-

տակով Յեղակրօնութիւն - Տարօնակաճութիւն ազգային գաղափարի դէմ 1930-ականների կազմաքանդիչ դաւերը եւ այլն, եւ այլն): Ռուբէնին այդ գործերին էին մղում սիոնական մատնները, որոնց զինուորն էր նրա հրէուսի կինը:

Նրանք հենց իրենց այդ գործակատարի միջոցով էին աւելի քան 30 տարի, յատկապէս Ռոստոմի ու Արամ Մանուկեանի մահուանից յետոյ՝ 1919թ. մինչեւ 1951 թ., ղեկավարում Դաշնակցութիւնը՝ Ռուբէնին անընդհատ պահելով իրենց հսկողութեան տակ՝ դրանից հրաժարուելու դէպքում սպառնալով հրապարակել նրա ոճիրները: Այդ ուժերը իրենց կամակատարի միջոցով դաշնակցութեան մէջ հայրենապաշտութեան փոխարէն արմատատրում են անհատապաշտութիւնը, ամէն ինչ անում, որպէսզի Նժդեհը աւարտին չհասցնի իր գերագոյն նպատակը՝ Դաշնակցութիւնը ցեղակրօնութեամբ-տարօնակաճութեամբ ազգայնացնելով՝ ազատագրի օտարի հսկողութիւնից:

«Քանզի Դաշնակցութիւնը որոշած է աստիճանական այլանդակումով ոչնչացնել այդ կազմակերպութիւնը (Յեղակրօնութիւնը- Ռ.Հ.) : Եղածը վատթարագոյն հարուածն է, որ տրում է

ցեղակրօնութեան... Արդէն սպանած է շարժումի հիմնական գաղափարը, նրա դաւանանքը, եւ շուտով հերթը կուգա անունին: Դաշնակցութիւնը բռնաւորող ծանօթ թայֆան (Բիւրոն- Ռ. Հ.) իրեն թշնամի է յայտարարում այն ամենը, ինչ որ բարոյական է, ինչը իրեն չէ նմանում: Հոգեւոր դիակի պէտք է վերածել նաեւ ցեղակրօնութիւնը, որ նման է իրենց»<sup>41</sup>: Ի դէպ՝ Գարեգին Նժդեհը թէւ Դաշնակցութեան ապագայնացում-արատարումը կանխելուն լծուած խոշորագոյն դէմքն էր, բայց չմիացաւ Կազմակցութիւնը 1930-ականների շարժումներին (**Արեւմտահայ ազատագրական ուխտ**, Ռուբէնի սարքած **մարտկոցականները**<sup>42</sup>): Նա պայքարում էր իւրովի: Նրա ձգտումն էր ոչ թէ ազատուել մի քանի ղեկավարներից, այլ կուսակցութիւնը գորաւորել ազգային այնպիսի գաղափարաբանութեամբ **ու գործելակերպով, որը ամբողջ կուսակցութիւնը հեռու պահէր թակարդից եւ բացառէր որեւէ ապագայնացում**: Այդ նպատակով իւրայատուկ երկայնամիտ ազատախոհութեամբ մշակեց հետեւեալ թէւ չափազանց դժուար, բայց ՄԻԱԿ ճՇԳԲԻՏ ռազմավարութիւնը. յարթանակ ապահովել ո՛չ թէ հակամարտ կողմերից որեւէ մէկին, այլ՝ բոլորին՝ «զայն ծառայեցնելու համար Հայաստանին ու հայու-

թեանը»: Եւ այդ անկարելին նրան ԱՄՆ-ում յաջողութեց կատարել ցեղակրօնութիւն-տարօնականութեամբ, որը ՀՅԴ-ի բիրտն արգիլեց համագաղութայնացնել...

*ՀԱՐՅ: Ինչու՞ Գարեգին Նժդեհին թոյլ չտրուեց ցեղակրօնութիւն-տարօնականութիւնը բովանդակ հայութեան ծրագիրը դարձնելու համար ԱՄՆ-ից բացի տարածի նաեւ այլ գաղթավայրերում,...*

ՊԱՏԱՍԽԱՆ: Գ. Նժդեհը Դաշնակցութեան ԱՄՆ կառոյցը թէ՛ գաղափարապէս եւ թէ՛ կազմակերպական առումով դարձրել էր աշխարհի նմանակերպ հզօրագոյն կառոյցներից մէկը, եթէ ոչ՝ հզօրագոյնը: ՀՅԴ-ն սկզբնաւորման օրուանից այդպիսի վերելք չէր տեսել: ՀՅԴ-ն վերահսկող ուժերը, տեսնելով կուսակցութեան ազգայնացում-անպարտելիութեան յաղթարշաւն ամբողջ աշխարհում, ՀՅԴ-ի բիրտի ձեռքով ամէն միջոց բանեցրին, որպէսզի Յեղակրօն շարժումը չտարածուի, այսինքն՝ չդառնա համագաղութային: Դա հնարատր էր միմիայն մէկ դէպքում. եթէ Գարեգին Նժդեհին մեկուսացնէին ՀՅԴ-ից: Այդ նպատակով նրանք ՀՅԴ-ը եկավար մարմինների, յատկապէս 1938 թ. Ընդհանուր ժողովի պատգամատրների ընտրութիւններին յառաջ էին մղում անարժան մարդկանց, իսկ կեանքը երկրի համար զոհաբերելու պատրաստ իրաւ հայրենապաշտներին ապականում-հեղինակագրկում-մէջտեղից վերացնում էին, կազմակերպութիւնը զրկում ուժի աղբիւրից, ՀՅԴ-ը եկավարութիւնը դարձնում անբարոյ արկածախնդիրների որջ, ինչի դէմ 1922 թ. ի վեր անընդմեջ պայքարում էր Գարեգին Նժդեհը: Ահա թէ ինչու էր նա իր զինակիցներին յրած, բայց մինչեւ 2011 թուականը չհրապարակուած 1936-1938 թթ. նամակներում Բիրտն համարում «հակադաշնակցական թայֆայ»: « Մութի մէջ գործի են դրած բոլոր ժանգոտ զէնքերը- կաշառում, խոստում, սպառնալիք եւ այլն: Այս ճամբով են ուզում շէֆութիւն ձեռք բերել նրանք, - գրում է Յ. Յովհաննիսեանին,- որոնք հայոց նորագոյն պատմութեան ամենավտանգալից եւ նեղ օրերին՝ տմարդօրէն լքած են ժողովուրդը: Այդ մեռնել չգիտցողներն են այսօր կուսակցութիւն վերածել մեր ներքին կեանքը: Ամեն գնով ընտրել՝ ահա՛ նրանց կեանքի միակ նպատակը: Իսկ ընտրելուց յետոյ՝ ամեն գնով արգիլել գործելու, ստեղծագործելու,

մեռնելու տրամադիր մարդկանց-ահա եւ նրանց միակ գործը: Վրացեանը վերադարձաւ Հարաւային Ամերիկայէն եւ անմիջապէս այդտեղ ուղարկեց մութ անցեալի տէր Աշոտ Արծրունուն: Այդ լակոտը գնացել էր երկիր, եւ երբ վերադարձաւ, այլեւս կասկածներ կային, որ կարմիրների հետ կապ ունի: Ընդի. ժողովը սրան ներս չառեց: Վրացեանը տէր կանգնեց (սրա տակտիկան է՝ տէր կանգնել բոլոր տեսակի վատերին եւ օգտագործել նրանց ընկաւածութիւնը) սրան եւ շահագործեց... Վերջին տարիները կաշառքը դարձրին զօրատր միջոց՝ նիւթապէս ու հոգեպէս աղքատ ընկերներ որսալու: Մարդկանց կաշառում և ուղարկում են իրենց թայֆայի համար պրոպագանդ, իսկ իրենց հակառակորդների դէմ բամբասանք անելու: Դա՛ է օրայ «յեղափոխական» ու «մարտական» գործը... Չերկարեմ այդ մասին: Էլի կրկնում եմ՝

ա. Ատամներով պաշտպանել Յեղակրօն անունը: Անունը փոխելով՝ դաւադիրներն ուզում են սրտից զարկել Յեղակրօն շարժումը:

բ. Պատգամատրական ժողովում ցաւ յայտնել, որ չօգտեց Յեղակրօն շարժումէն և չաշխատեց զայն դարձնելու համագաղութային:

գ. Չայրոյթ յայտնել այն «դաշնակցական» վրացեանական թերթերին, որոնք դէմ արտայայտեցան Յեղակրօն շարժման («Արագ», «Յառաջ»):

դ. Պահանջել Ընդի. ժողովէն, որ համագաղութայնացնէ Յեղակրօն շարժումը...

ե. Յ-ի կողմից Ամերիկայում նիւթած դաւը հնարատր դարձնող՝ Վրացեանի նամակը, խարդախած պատգամատրական ժողովը և Սաչաքլեանին հեռացնելը դարձնել խնդրի առարկայ Ընդի. ժողովում և պահանջել Դաւադիրների արտաքսումը Դաշնակցութիւնից:

Միայն, միմիայն այս ճամբով կարելի պիտի լինի փրկել Դաշնակցութիւնը իր դէմ գործող և զինքը շահագործող թայֆայից և զայն ծառայեցնել Հայաստանին»<sup>43</sup>:

*ՀԱՐՅ: Հայրենատիրութեան զարթօնքի համար Երկրորդ աշխարհամարտի նախօրէին Գարեգին Նժդեհը ի՞նչ քայլեր էր անում:*

ՊԱՏԱՍԽԱՆ: 1937 թ. Գ. Նժդեհն արդէն զգում էր պատերազմի անխոստափելիութիւնը եւ մտածում էր իր հիմնադրած Յեղակրօն ուխ-

տերից ստեղծել Հայաստանի անկախութիւնը վերականգնելու եւ հայութեան ինքնապաշտպանութիւնը վարելու համար լեզվոններ (այդ գաղափարը 1942 թ. վերջերից մինչեւ 1943 թ. նոյեմբերը, 10 տարուայ ուշացումով, բայց եութիւնը խեղափոխած իրագործեց Դաշնակցութեան բիրոն՝ թոյլ չտալով ծառայեցնելու բուն նպատակին): «Գիտէք, որ ցեղակրօնութիւնն էլ ունեցաւ իր ներքին թշնամիները: Հայկական հրէշային նախանձը եւ տգիտութիւնը,- գրում էր նա Յովհաննէս Յովհաննիսեանին յղած իր 1937 թ. յունուարի 7-ի նամակում,- որոնք պատճառ դարձան, որ ցեղակրօնութիւնը հնարատրութիւն չունենայ դուրս գալու իր ծննդավայրէն՝ Ամերիկայէն եւ տարածելու Հայոց սփիւռքի մէջ: Մեր նորագոյն պատմութեան մէջ եւ չգիտեմ աւելի մեծ դաւաճանութիւն՝ կատարած մեր ցեղի դէմ-քան այն, որ հայկական կոյր նախանձն ու տգիտութիւնը կատարեցին Յեղակրօն շարժման դէմ: Այդ շարժման մէջ մէկն իր Հոգեւոր մահը տեսաւ, երկրորդը՝ իր ազդեցութեան տկարացումը, երրորդը՝ մեր Ուխտերի մէջ ցեղի խռովքի փոխարէն, մատ ու քուէներ տեսաւ, սարսափեց, ապա սկսեց դատել նրա գոյութեան եւ ծաւալումի դէմ: Եւ այդ իսկ պատճառով մեր ստեղծած ջահել, ցեղանորոգ և փրկարար շարժման ճակատագիրն եղաւ այն, ինչ որ կուգէին թուրքն ու բոլշեւիզմը-մեր ցեղի օրայ երկու մահացու թշնամիները: Այսօր Յեղակրօնութիւնը հող գտած կլինէր մեր բոլոր գաղութներում, ամէն գաղութ ստեղծած կլինէր ուխտաւճմերի իր լեզվոնը, այսօր մեր թիւը հասած կլինէր տասնեակ հազարի, եթէ մեզ յաջողւէր ժամանակին զինաթափել ներքին չարութիւնը՝ տգէտ ու նախանձալի: Հայոց սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող երիտասարդական կազմակերպութիւնների մէջ կայ միայն մէկը, որ անսխալ կերպով թարգմանում է մեր ցեղի կամքը-լինել ուժեղ, էլի ուժեղ, միշտ ուժեղ՝ չկորչելու համար: Յեղակրօնութիւնը-դա ցեղային ոյժի, հպարտանքի ու հերոսականութեան կրօն է: Այդ իսկ պատճառով Յեղակրօն Ուխտերը կձգտեն դառնալ մի ուժաստեղծ գործօն սփիւռքի հայութեան մէջ. նաեւ՝ դառնալ միութեան եւ համերաշխութեան մի գիծ. որովհետեւ ոյժը միացուցիչ ազդակ է... Հայ մարզականին ցայսօր յանցապարտօրէն պակասում է երեք բան-Հայաստանին եւ Հայ Յեղին սպառնացող Մեծ վտանգի գիտակցութիւնը, Մեծ Նպատակը եւ Մեծ Նւիրումը-Ուխտը:

3. Նորահաս սերունդին վերաբերող ամէն կազմակերպութիւն-անկախ

իր քաղաքական դաւանանքէն-եթէ աշխարհ եկած չէ ցեղի անունով-անպէտք է հայրենիքի համար: Նա, որ Յեղակրօն չէ՝ ոյժի չի՝ վերածիր: Նա, որ Յեղակրօն չէ՝, կմնայ առանց մարտական խմորի, կմնայ անմարտունակ-ռազմիկ չի՝ դառնայ»<sup>44</sup>... Մէկ այլ անթուակիր նամակում յաւելում է. «Այժմ մենք տասնեակ հազարի հասնող Յեղակրօններ պէտք է ունենայինք Սփիւռքի մէջ, գաղութ գաղութ... Թուրքն իր կինը տղամարդ-զինուոր է դարձնում այսօր, իսկ մե՞նք...»:

Յամոզուելով, որ 1930-ական թթ. ՀՅԴ շարքերում եւ ընդհանրապէս ամբողջ սփիւռքում վիթխարի ու անվերապահ հեղինակութիւն ունեցող Գարեգին Նժդեհի ձեռքով Դաշնակցութեան անխուսափելի հայացում-ազգայնացումը իրականութիւն է դառնում եւ հնարատր չէ կանխել, ՀՅԴ ստուերային ղեկավարները Ռուբէնին մղում են զազրելի մի ստորութեան եւս. նա մարդիկ է ողարկում՝ սպանելու Նժդեհին...

Յանձին օտարների այդ սրբապիղծ ձեռնասունի, ազգի ու Դաշնակցութեան մէջ անբաղդատելի հեղինակութիւն եւ յարգանք վայելող անմահ մեծութեանը սպանել է ձգտում մի մարդ, որին ՀՅԴ բազմաթիւ գործիչների շարքում (Ս. Վրացեան, Հ. Օհանջանեան, Ա. Ահարոնեան, Վ. Նաւասարդեան, Յովհ. Տէլեճեան, Համբ. Տերտերեան եւ տասնեակ ուրիշներ, որոնց մէջ հինգ հազարից աւելի զինուորականներ) 1921 թ. բոլշեւիկների ձեռնարկած անխուսափելի կացնահարումից փրկել էր Գարեգին Նժդեհը... 1936 թ. յունիս 25-ի նամակում Գ. Նժդեհը գրում է. «Կեանքիս մէջ անձս, անձնականս պաշտպանելու վատութիւն չեմ ունեցել. կազմակերպւած դաւը միայն զուանքս է շարժել եւ խորապէս ցաւեցրել հոգիս այն պարզ պատճառով, որ Հայութեան, տարագիր Հայութեան հոգեւարքի օրերին իսկ ընկերոջ դէմ դաւելու փաստեր կան՝: Գուցէ կարեւորութիւն տայի, եթէ գիտակցութիւնս չ'ա-

\* Գ. Նժդեհը, նամակների սկզբում նշելով «ժստօրէն անձնական», ոչ ինքն է հրապարակել, ոչ էլ այլոց է թոյլ տուել հրապարակել նոյնիսկ բանաւոր (տես, օրինակ 1937 թ. ապրիլի 21-ի նամակը, Գարեգին Նժդեհ, Պատկերագիրք, Երեւան, 2011 թ., էջ 134): Ռ. Տէր Մինասեանի դաւերին նա 1920-ական թթ. յօդուածով էլ չի անդրադարձել, բէն ՀՅԴ Բիւրոյի ապօրինի քայլերի մասին միշտ էլ բանաւոր գզուշացրել էր դարձել անդամներից: Գ. Նժդեհը Ռուբէնի ապագային գործունէութիւնը առաջին Բիւրոյի անդամներից: Գ. Նժդեհը Ռուբէնի ապագային գործունէութիւնը առաջին անգամ մամուլով բացայայտեց 1938 թ. դեկտեմբերի 7-ի յօդուածում, երբ իր հիմնած գերագային կառոյցը վերացնելուն եւ իր անունն ու ծառայութիւնները մրտաբուն ի պատասխան, ստիպուած է լինում անդրադառնալ նրա լուտանքներին: («Չորրորդ տա-

սեր - «թրքորոշելիկ տապարեն քո սրի շնորհիւ փրկւած թշուառականին արժէ՞ պատասխանել...»: Մէկ այլ նամակում շարունակում է. «Այդ դաւադիրը՝ Յեղակրօն շարժումը տապալելու, նրա առջեւ խոչընդոտներ հանելու, ինձ եւ իմ գործը վտանգելու դիւային հաշիւներով..., այդ Հրէշը իր կաշին եւ ոսկորը թուրքէն եւ բոլշեփէն փրկած իր ընկերոջ կեանքի եւ գործի դէմ դաւելու համար էապէս ծառայեց թուրքին եւ բոլշեփիկին...»<sup>45</sup>: Տեսնելով, որ անհնար է մեկուսացնել Նժդեհին, որի հետեւորդների յաղթանակը 1938 թ. նշանակուած ՀՅԴ Ընդհանուր ժողովում **անկասկած էր**, Ռուբէնը ձեռնամուխ է լինում աննախադէպ կեղծիքներով, կաշառքով ու ահաբեկումներով Ընդհանուր ժողովի պատգամատրոներ ընտրել տալ իր մարդկանց: Գ. Նժդեհն այդ մասին վկայում է. «Ընդունելով, որ Ընդհանուր ժողովում ես կատաղօրէն պիտի դատապարտեմ ու պատժել տամ խեղկատակներին (նաեւ իրեն), նա Բալկանը սատանայական հաշով խառնշտկեց, որ զայն զրկէ պատգամատրունենալու իրաւունքից»: Կեղծիքն ու անբարոյականութիւնն այնքան ակնյայտ էր, որ **դրա դէմ դժգոհում են նոյնիսկ Դրօն ու Ս. Վրացեանը:**

րին է, ինչ լուծում են այն մասին, որ այդ մարդը անձնական հաշիւներով դաւեր է նիւթել իմ սկսած ցեղակրօն շարժման դէմ, այդ վերջինը Ամերիկայով սահմանափակելու եւ իր խանձարտրի մէջ խեղդելու նպատակով: Այդ եւ ուրիշ աւելի ծանր խնդիրների կապակցութեամբ՝ ես վաղուց նրան մեղադրել եմ որպէս դաւադիր եւ պահանջել մերկացումը նիւթուած դաւերի: Այդ կարելիութիւնը շատ հասկանալի պատճառով ինձ չարտեց, եւ ես ժամանակին նաեւ տֆիաբնակ երեք անձերի ձեռքով յղել եմ իմ հրաժարականը: Որից յետոյ մի գրութեամբ ինձնից խնդրել են ետ առնել հրաժարականս: Ես այդ խնդրանքն անգամ պատասխանի չեմ արժանացրել: Իսկ այժմ դուրս է գալիս, որ ոչ ես եմ հեռացել՝ ներքին դաւադրութեան մէջ մեղադրելով Տէր-Սիմասեանին, այլ որպէս թէ «հակակուսակցական» ընթացքի մէջ եմ գտնուել եւ հեռացել: Հասկանալի չի՞, որ իր ողջ կեանքը նման բանասարկութիւններով Դաշնակցութեան ներքին կեանքը բունատրոջ մէկի հետ կարելի չէ միեւնոյն հարկի տակ լինել: Վաղուց է, որ այս մարդու ներկայութիւնը դեկավարութեան մէջ՝ համարել եմ եւ համարում եմ կատարեալ աղէտ մամբաներով իրեն պարտադրել, իրական եւ կրող դեկավարութիւն չի ունենա Դաշնակցութիւնը: Չեմ ցաւում, որ դեռ 1921 թուականին Հայաստանի մտաւորականութեան հետ փրկել եմ եւ սրա կեանքը: Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 1, Երեսուն, 2002 թ., էջ 416): Ի դէպ այդ օրերին Ռուբէնը ձայնորոտած մահափորձ կազմակերպեց նաեւ Շահան Նաբալիի (1884-1983) դէմ (տես Նաբալիի նամակը ՀՅԴ քիւրդիին): ՀՅԴ քիւրդի անդամ Շահան Նաբալին սուրբանական դատարանի վճռով մահապատժի դատապարտուած, բայց Քեմալ Աթաթուրքի ձեռքով ազատ արձակուած եւ զանազան երկրներում ապաստանած հայասպաններին պատժելու-ոչնչացնելու նպատակով ՀՅԴ կուսակցութեան հիմնած «Նեմեսիս» կառոյցի յայտնի դեկավարն ու կազմակերպիչն էր...

Վերջինս, որ ընտրուել էր Ընդհանուր ժողովի պատգամատր, ի նշան բողոքի, հրաժարում է մասնակցել Ընդհանուր ժողովին...<sup>46</sup>: 1938 թ. ՀՅԴ կեղծընտիր Ընդհանուր ժողովը Գ. Նժդեհի հանդէպ իր «յաղթանակը» ի ցոյց դնելու համար, առանց նրա ներկայութեան, մի ողբալի որոշում էլ է կայացնում. Նժդեհին «հեռացնում է» կուսակցութիւնից այն դէպքում, երբ նա եօթ-ութ ամիս առաջ՝ 1937 թ. դեկտեմբերին էր հեռացել-«ինքնամեկուսացել»: Եզրակացութիւնը հետեւեալ անժխտելի իրողութիւնն է. համաշխարհային ռազմաքաղաքական մտքի գագաթ, գաղափարի անբաղդատելի նուիրեալ բացարձակ հանճարին 1933-1938 թթ. ազատութեան մէջ գաղափարական խոշտանգումներով մարտիրոսացրին Դաշնակցութեան յետամնաց ջոջերը՝ Ռ. Տէր Սիմասեանի գլխատրութեամբ, իսկ 1944 թ. հոկտեմբերի 10-ից մինչեւ 1955 թ. յունուարի 21-ը, 11 տարի Ստալինի հրահանգով մարմինը բանտերում խոշտանգելով, նահատակեցին դիւապաշտ բոլշեփիկները:

Բանտերում նահատակութիւն օտարների՝ ձեռքով, ազատութեան մէջ մարտիրոսացում՝ իւրայինների ձեռքով: Ահա՛ մեր ժողովրդի բոլոր ժամանակների մշտաբոյի մարգարէի կեանքը, երբ թշնամու դէմ կուսադաշտում չէր ...

*ՀԱՐՅ: Հայ եւ այլազգի ի՞նչ մեծութիւնների է առանձնացրել Գարեգին Նժդեհը:*

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Նժդեհի աշխատութիւններից ու նամակներից, նաեւ յուշագիրների վկայութիւններից պարզում է, որ նրա սիրելի հերոսներն էին՝ հներից Վահագն Վիշապաքաղը, Տիգրան Երուանդեանը, Սր. Վարդանն ու Մամիկոնեանները, Աշոտ Երկաթն ու Դաւիթ Բէկը, իր ժամանակակիցներից առանձնացնում էր Սեբաստացի Մուրատին, Քեռուն, Անդրանիկին, Եփրեմին, Խէչոյին եւ այլոց, օտարներից՝ Կլեմանտին, Դանտոնին:

Սիրելի երաժշտագիրները (կոմպոզիտոր)՝ Վագներ, Բեքովեն, կաթողիկոսները՝ Սր. Ներսէս Մեծ, Սր. Մահակ, Խրիմեան Հայրիկ, փիլիսոփաները՝ Մոկրատ, Պլատոն, գրողները՝ Խ. Աբովեան, Ալիշան, Բաֆֆի, Ա. Ահարոնեան, Համաստեղ,

բանաստեղծները՝ Գողթան երգեր, Սբ. Գրիգոր Նարեկացի, Սբ. Ներսես Շնորհալի, Դանիել Վարուժան, պատմագիրները՝ Մովսես Խորենացի, Եղիշէ, Հերոդոտոս, Ժիւլ Միշլէ,

կայսրը՝ Մարկոս Արելիոս, գորավարները՝ Սբ. Վարդան Մամիկոնեան, Հաննիբալ, Ալեքսանդր, Յուլիոս Կեսար, Նապոլեոն, օրէնսդիրը՝ Լիկուրգոս, ժողովուրդը՝ ճապոնացիներ:

Իրեն սրտամօտ ազգային ու պետական գործիչներից էին չէիս փիլիսոփայ, 1918-1935 թթ. Չեխոսլովակիայի նախագահ Տոմաշ Մասարիկը (1850-1937), ֆինն ազգային գործիչ Իոհան Վիլհելմ Սնելմանը (1806-1881), Մահաբնա Գանդին, Դանտոնը, լեհ պետական գործիչ Յուզէֆ Պիլսուցկին, խորվաթ ծովակալ Հորթին:

**ՀԱՐՑ:** Ի՞նչ տուեց մեզ 1991 թ. հռչակումը ՀՀ անկախութիւնը:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Հայոց պետականութեան 5000-ամեայ պատմութեան մէջ հնարաւոր չէ գտնել անկախութեան մէկ այլ ժամանակաշրջան, երբ ազատագրուած մեր հայրենիքը իր ղեկավարութեան ձեռամբ 20 տարուայ ընթացքում այս ծաւալի հոգեւոր, մշակութային, քարոզչական, քաղաքական, տնտեսական ու յատկապէս բնակչութեան բուքանակի այս չափերի կորուստներ ունեցած լինէր: Ասածիս վկայութիւնները են հետեւեալ իրողութիւնները:

1. Կորցրեցինք համայն հայութեան Արցախամարտով նուաճած մեր երկրի 1988-2001 թթ. պետական իրաւ անկախութիւնը՝ վերստին ընկնելով մեծապետական Ռուսաստանի տիրապետութեան տակ: ՀՀ նախագահը 1991 թ. Հայաստանը իբրեւ գաղութ ենթարկելով յառաջադիմութիւնն ու ժողովրդավարութիւնը մերժող, մարդու եւ ազգերի ազատութիւնը հարիւրամեակներ շարունակ խոշտանգող Ռուսաստանին՝ 1988 թ. փետրուարից ազատագրուած մեր երկիրն ու ժողովուրդը նորէն գամեց կոմունիստական կառավարչական վաչկատուն համակարգին: Դառնելով երոպականացումից, արդի քաղաքագիտութեան

մասին տարրկան պատկերացում չունեցող ՀՀ նոր իշխանութիւնները «պետութիւնն ու պետութեան բարձրագոյն ղեկավարը ազգային արժէք է» շահարկիչ քարոզութեամբ 1988 թ. ազատագրուած հայ մարդուն դարձեալ պարտադրեցին մարդու տարրական իրաւունքներից զուրկ կոմունիստական մեծապետութեան հակաժողովրդավար կադապարկները, որտեղ մարդու տարրական ազատութեան ու կենսական իրաւունքները կոխտուում էին կեղծ դեմոկրատիայի կոչերով: Այլ արժէքներից բացի նրանք արժեզրկեցին նաեւ համաժողովրդական սրբութիւններ Հայրենիքն ու Ազգը՝ դրանք հաւասարեցնելով պետական կառոյցին ու նրա ղեկավարին:

3. 1989 թ. դեկտեմբերի 1-ի դաշնագրով Հայաստանին վերամիատրուած Արցախի անունը Հայաստանի անկախութեան հռչակումից յետոյ դնելով Ղարաբաղի Հանրապետութիւն, ՀՀ նախագահը Արցախը իրաւաբանօրէն նորից անջատեց Հայաստանից:

4. Երբ 1994 թ. Արցախում պարտութիւն կրած Ադրբեջանը զինադադարի միջնորդութեամբ դիմեց Ռուսաստանին, զինադադարը ըստ էութեան պէտք է ստորագրէին հակամարտող կողմեր նկատող Արցախը եւ Ադրբեջանը: Բայց Ռուսաստանի հարկադրանքով փաստաբար տակ ստորագրեց նաեւ ՀՀ-ն, որով Հայաստանը պաշտօնապէս ազդարարուեց հակամարտութեան կողմ: Այսպիսով՝ Արցախի ինքնորոշման իրաւունքը, որի համար ոտքի էր ելել համայն հայութիւնը, դարձաւ Ադրբեջան-Հայաստան հակամարտութիւն, որով Արցախի փոխարէն միջազգայնօրէն բանակցող կողմ հռչակուեց ՀՀ-ը: Այս քայլով դրսի ուժերը իրենց դրածոյ ՀՀ նախագահի ձեռամբ մեր Այս քայլով դրսի ուժերը իրենց դրածոյ ՀՀ նախագահի ձեռամբ մեր երկիրը մատնեցին դիւանագիտութեան անվերականգնելի պարտութեան: Բացի այդ՝ պատերազմում 1994 թ. ջախջախիչ պարտութիւն կրած Ադրբեջանը փոխանակ ստորագրէր անձնատուութիւն-կապիկրած Ադրբեջանը պարտադրանքով մեր երկրի հետ կնքեց տուլացիա, Ռուսաստանի պարտադրանքով մեր երկրի հետ կնքեց խաղաղութեան պայմանագիր: Սա սովետ-ազէր զինակցութեան դէմ համայն հայութեան փառաւոր յաղթանակի արժեզրկում էր, այդ յաղթանակի համար 5000-ից ատելի զոհուած եւ նոյնքան վիրաւոր հայ նուիրեալ զինուորների յիշատակի անարգում:

5. Յաջորդ անհանդուրժելի ճախողումը. Հայաստանի ղեկավարութիւնը մեր երկիրը աշխարհի յառաջադէմ տէրութիւնների եւ քաղաքա-

ցիական արդիական համակարգ ունեցող ժողովուրդների հետ (ԱՄՆ, Ճապոնիա, Հարավային Կորեա, Չինաստան, Ֆրանսիա եւ այլն) կրթամշակութային, տնտեսական քաղաքական գործուն յարաբերութիւններ հաստատելու փոխարէն, հիմնականում կապեց Ասիայի ու Ափրիկէյի կիսաֆէոդալական երկրներին, որն էլ մեր երկրի յետամնացութեան հիմնական պատճառն է:

6. ՀՀ իշխանութիւնների կողմից Հայաստանի «նազնավարական դաշնակից» յորջորջուող ռուս կայսրութիւնը արցախեան խնդրի բոլոր առանցքային կետերում 1988 թուականից ի վեր շարունակում է մնալ Ադրբէջանի զինակիցը: Այդ երկիրը նոյնպէս Ադրբէջանի նման Հայաստանից պահանջում է «հայոց զօրքերի դուրսբերումը գրաւեալ տարածքներից», այսինքն՝ Արցախից, ազատագրուած տարածքների յանձնումը Ադրբէջանին (սկզբում 5, ապա՝ 7 շրջաններ), ազերի «փախստականների վերադարձ», ռուսական «խաղաղապահների» մուտքը Արցախ եւ վերջապէս՝ Արցախի անկախութեան մերժում՝ առաջարկելով Արցախի կարգավիճակի խնդիրը քննարկել «գրաւեալ տարածքները» Ադրբէջանին վերադարձնելուց 10-15 տարի յետոյ միայն...

7. 1991 թ. հռչակուած ՀՀ անկախութիւնից յետոյ արձանագրածս **այսօրուայ իրողութիւնը** հետեւեալն է: Ի **հակադրութիւն Եւրամիութեան, Ռուսաստանը 1991 թ.իւր ենթակայ երկրներից** (Ղազախստան, Բելառուս, Հայաստան) «Անկախ պետութիւնների համագործակցութիւն» (ԱՊՀ), իսկ 2002 թ. «Հաւաքական անվտանգութեան պայմանագիր» կոչուող տոպրակներ կարելով, 21-րդ դարասկզբին վերականգնեց կայսրութիւնը, որից Եւրոպան ազատուել էր ԺԸ դարում, իսկ մարդկութիւնը 1991 թ. ազատուել էր Արցախեան ազատամարտով... Իրեն քաղաքակրթութիւնից առնուազն 100 տարով յետ գլորող այդ արատաւոր փաստը քողարկելու համար Ռուսաստանը հիմա էլ ԱՊՀ-ն անուանադնելով «Արեւելքի ժողովուրդների եւրասիական միութիւն», յայտարարում է, թէ նոր միութիւն է հիմնում:

Նորութիւն չ'կայ, նպատակը նոյնն է. աշխարհակալութիւնը վերականգնելու համար նորից ռազմակալել Եւրասիան եւ Մերձատր Արեւելքը նուաճելու ռազմավարական կարեւորագոյն տարածք Այսրկովկասը, որը կորցնելու վտանգը օրեցօր մեծանում է... Այսրկովկասը վերագրաւելու

առաջին քայլը Եւրամիութեան ստեղծած «Հարավային Էներգետիկ միջանցք» տնտեսական ազատ կառոյցը Կովկասից հեռացնելն է: Կառոյց, որը ձգտում է վառելիքը Ասիայից փոխադրի Եւրոպա՝ արեւմտեան եւ ասիական շուկաների միջեւ գոյացնելով առետրի ցամաքային կապ, իսկ Չինաստանի արտադրական շուկան էլ ազուցելով Եւրոպայի սպառողական շուկային: ՀՀ ռուսամետ ուժերը հեռուստակայաններով, ձայնակայաններով ու մամուլով անընդհատ տարփողում են Կրեմլի սարքելի այդ կառոյցին Հայաստանի «քննարկումները»: Դրածոյ ուժերն ու գործիչները Հայաստանը յետադիմութեան կամակատարը պահելու իրենց շողոքորթութիւնը կեղծ չէզոքութեամբ քողարկելու, ասել է թէ՛ բնակչութեան մէջ իրենց հեղինակագրկումը կասեցնելու դիտատրութեամբ հայութեան վիզն են օղակում նշուած, իբր թէ մեզ համար **հաւասարապէտք** կառոյցներից օղակում էլ անդամակցելու «չէզոքութիւնը»: Այդ ճորտամիտ մարերկուսին էլ անդամակցելու «չէզոքութիւնը»: Այդ ճորտամիտ մարերկուսին էլ անդամակցելու «չէզոքութիւնը», բացարձակ անհեթեթութիւն, քանի որ տավարութիւնը խաբէութիւն է, բացարձակ անհեթեթութիւն, քանի որ անբողջ Այսրկովկասը ռազմակալելու, ինչպէս նաեւ վառելիքը վաճառելու խնդրում Եւրոպային անզիջում հակառակորդ տեսնող չքաւոր Ռուսաստանի համար «եւ այնտեղ-եւ այստեղ» չկայ:

Բռնապետութեան համար միշտ էլ գործել էւ գործում է «կամ-կամ»ը: Հետեւաբար՝ Հայաստանը Մոսկուայի ծուղակում պահելը այդ երկրի քաղաքական ռազմավարութեան հիմնախնդիրն է Կովկասում, քանի որ այս տարածքը իրենով անելու համար Հայաստանից բացի ուրիշ ոչ մի հենարան չունի... Այսուամենայնիւ, ՀՀ օտարամուլ ուժերը մեր ժողովրդի մտքից անկարող են քաղիանել յառաջադիմութեան եւ մեր բարբարոսութեան միջեւ առկայ ակնամուտ հակադրութիւնը: Դա բարբարոսութեան միջեւ առկայ ակնամուտ հակադրութիւնը, որ հայերս ահա անհնար է նախ եւ առաջ այն պարզ պատճառով, որ հայերս ահա անհնար է նախ եւ առաջ այն պարզ պատճառով, որ յառնուածքով ատելի քան երեք հարիւր տարի մեր մտածողութեամբ ու խառնուածքով հոգեբանօրէն յառաջադէմ ու ժողովրդավար Եւրոպայի հետ լինելով՝ պայքարել ենք բռնապետութիւնների դէմ, իսկ մարդկութեանը 70 տարի շարունակ սարսափի մէջ պահող միջնադարեան կոմունիստ աշխարհակալութիւնը մէջտեղից վերացրեց հենց համայն հայութիւնը՝ 1988-1991 թթ.կոթողած իր Արցախականով...

Այպէս որ ժողովրդի մէջ հակադիր կառոյցներից երկուսին էլ միանալու «չէզոք» բարոզութիւնը այս իմաստուն ժողովուրդին իր եւ

այլոց աչքին վայրենամիտ վաշխառու դարձնելու է: Ազգովին քրիստոնեայ դառնալուց յետոյ, Դ-Ջ դարերում քաղաքակրթութեան ջահակիրը դարձած, այնուհետեւ 1500 տարի շարունակ արդիականն ու յառաջադիմութիւնը կեցութեան խորհուրդ ունեցած հայութեան համար փտախտի ճարակ կայսերական բռնամիութիւնը մերժելի է:

Երկրորդ՝ Հայաստանը աշխարհագրական, տնտեսական եւ քաղաքական պայմաններով Եւրամիութեան հանգուցային տարածքներից է:

Երրորդ՝ Արեւմտեան կառոյցը մեզ համար ձեռընտու է նաեւ զուտ տնտեսական առումով. 20 տարի շարունակ Ռուսաստանի դրածօն լինելու հետեւանքով հոգեւոր, տնտեսական եւ քաղաքական աղէտի ենթարկուած Հայաստանը իր հոգեվարող տնտեսութիւնը, կազմալոյծ աշխատաշուկան ու յատկապէս անկախութեան հիմունքները վերականգնել կարող է միմիայն միջազգային ազատ եւ ժողովրդավար մարմիններին անդամակցելով:

Չորրորդ՝ ազատ, առողջ եւ առաջընթաց մրցակցութեան մէջ Կովկասում եւ այլուր ջախջախուելու եւ հեղինակագրկուելու անխուսափելիութիւնը Այսրկովկասը վերանուաճել երագող Ռուսաստանին մղում է զարտուղի ապակողմնորոշիչ գործողութիւնների: Յետագնաց այդ բռնատիրութեան համար արեւմտեան կառոյցները Կովկասից դուրս մղելու մէկ ճանապարհ կայ. Այսրկովկասում հրահրել պատերազմ: Եւ դա կայսրութիւնը անելու է ՀՀ-ն ռուսական բռնամիութեանը միացնել քարոզող վերոյիշեալ քաղաքական ուժերի եւ իր ձեռնասուն ՀՀ ղեկավարութեան միջոցով: Շահարկելով հայերիս համար առանցքային Արցախի հարցը եւ հայ թուրք-ազէր պատերազմը, նաեւ Ջաւախքի ինքնորոշման իրաւունքը, Կրեմլը, ինչպէս առաջին աշխարհամարտին, այնպէս էլ հիմա, հայութեանը վերստին պիտի դարձնի իր բութ տապարը, ոչ մի քայլի առաջ չի կանգնելու յանուն իր տնտեսական եւ ռազմաքաղաքական շահերի, դարձեալ զոհաբերել մեր ժողովրդին՝ ընդհուպ մինչեւ Հայաստանի վերջնական հայագրկումը եւ հայոց նոր ցեղասպանութիւնը...

Մերտելով պատմութեան դասերը, ՀՀ կուսակցութիւնները, մտաւորականութիւնը, յատկապէս երիտասարդութիւնը պէտք է միանան ազ-

գի ընտրանուն՝ միասնական ջանքերով հայութեանը փրկելու համար Ռուսաստանի հայակործան նոր ծուղակից...

7. Եւ վերջապէս անկախութիւնից յետոյ ՀՀ 1991-2011 թթ. ղեկավարութեան աններելի մեծագոյն ոճրագործութիւնը երկրից մէկ միլիոն մարդ գաղթեցնելն է, նաեւ՝ ՀՀ հողն ու տները օտարին վաճառելը, Հայաստանը այլազգի՝ մեծամասամբ յանցագործ տարրերով լցնելը, բնակչութեանն իր քաղաքացիական իրաւունքները ճանաչելու եւ ինքզինքը ապօրինութիւններից պաշտպանող օրէնքներին ծանօթանալու եւ դրանցից օգտուելու տարրական հնարատրութիւնից զրկելը:

8. ՀՀ հողն ու տները օտարին վաճառելը, Հայաստանը այլազգի՝ մեծամասամբ յանցագործ տարրերով լցնելը, բնակչութեանն իր քաղաքացիական իրաւունքները ճանաչելու եւ ինքզինքը ապօրինութիւններից պաշտպանող օրէնքներին ծանօթանալու եւ դրանցից օգտուելու տարրական հնարատրութիւնից զրկելը:

9. Եւ վերջապէս անկախութիւնից յետոյ ՀՀ 1991-2011 թթ. ղեկավարութեան աններելի մեծագոյն ոճրագործութիւնը երկրից մէկ միլիոն մարդ գաղթեցնելն է:

**ՀԱՐՑ: Պետութեան եւ քաղաքացի փոխյարաբերութիւնների մասին ինչ մօտեցումներ են յատնի աշխարհում:**

ՊԱՏԱՍԽԱՆ: Ժողովրդավար երկրներում, որոնց փորձն ու պետական մտածողութիւնն իբր թէ հիմք էր ընդունել նորանկախ Հայաստանի ղեկավարութիւնը, հասարակական-պետական կեանքում քաղաքացու եւ պետութեան փոխյարաբերութեան հիմք են դարձրել հետեւեալ սկզբունքը, որ գալիս է հին Յունաստանից, Հռոմից, ֆրանսական ու գերմանական լուսաւորիչներից եւ ԱՄՆ-հիմնադիր այրերից: Այդ տեսակէտը կոչում է Արեւմտեան տարբերակ, որը ձեւակերպել են Արիստոտելը, Ալեքսանդր Մակեդոնացին, Մարկոս Աւրելիոս կայսրը, Ժան-ժակ Ռուսսոն, Էմանուէլ Կանտը, Ջորջ Ուաշինգթընը, Թոմաս Ջեֆֆերսընը, Ալեքսանդր Համիլթընը եւ ուրիշներ: Պետութիւնն ըստ Արեւմտեան անուանող այդ տեսակէտի, ազատ հասարակութեան համար մի օժանդակ կառոյց է՝ մարդու հոգեւոր եւ կենսաբանական ապահով զարգացման համար: Բանի որ արեւմտեան ազատ հասարակութիւնը պարբերաբար տեղեկացում է, ուստի նրա

անդամը քաջատեղեակ է, որ պետութեան քաղաքացին պետական կառոյցն ու պաշտօնագօրին ընտրում է, որպէսզի ծառայեցնի իրեն՝ ինքզինքը գերծ պահելու համար իր աստուածատուր տարրական իրաւունքների եւ ազատութիւնների ասպատակումից: Իսկ Արեւելեան սկզբունքի էութիւնը հետեւեալն է. մարդը հասարակութիւնը գոյացնող հանրային կառոյցի մի մասն է, ուստի ինչպէս որ ցանկացած գոյացութիւն չի կարող գոյատեւել -բարգաւաճել առանց ամբողջութեան, այնպէս էլ երկրի քաղաքացին չի կարող գոյատեւել-բարգաւաճել առանց պետութեան, որը քաղաքացու համար բարձրագոյն արժէք է, ուստի քաղաքացու դերը պետութիւնը պահպանելու եւ հզօրացնելու մէջ է: 20-րդ դարի բռնապետներ Լենինը, Ստալինը, Մաո Չե Դունը եւ ուրիշներ, խեղափոխելով պետութեան եւ պետականութեան դերը, Արեւելեան այս սկզբունքը ծառայեցրեցին մարդու ստրկացմանը:

**ՀԱՐՑ: Հայերս այդ սկզբունքներից որի՞ն ենք աւելի շատ հետեւել:**

ՊԱՏԱՍԽԱՆ: Պետութիւն-հասարակութիւն յարաբերութեան մասին հայութիւնն ունեցել է իր առանձին մեկնակետը, որը իբրեւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցու կազմակերպական կառոյցը ձեւաորող հիմք, մեր մէջ գոյ է առնուազն 301 թուականից: Այդ պատճառով էլ 4-ից 18-րդ դարերում հայկականը հիմնուած չի եղել պետական կառուցումների արեւելեան կամ ասիական սկզբունքների վրայ, քանի որ դրանք դեռեւս գոյութիւն չունէին... Դա մեր մէջ սկսուեց 1918 թուականից, երբ վերականգնեցինք մեր պետականութիւնը: Հայաստանի 1918-20 թթ. Հանրապետութիւնը առաջնորդում էր պետականութեան ժողովրդավար կառոյցի Արեւմտեան սկզբունքով: Պետութիւն-հասարակութիւն ժողովրդավար յարաբերութիւնների Արեւմտեան սկզբունքների եւ հայկականութեան մի իւրայատուկ ամբողջութիւն էր 1920-21 թթ. Ռուսաստանի եւ բովանդակ արեւելքի ամենաժողովրդավար պետական կառոյցը հանդիսացող՝ Գարեգին Նժդեհի հիմնած Լեռնահայաստանը: Աւելի քան վեց ամիս գոյութիւն ունեցած այդ անկախ կառավարութիւնը գործում էր նրա իսկ հեղինակած Սահմանադրութեամբ, որը տարածաշրջանի առաջին եւ միակ գործող ժողովրդավար սահմանադրութիւնն էր:

**ՀԱՐՑ: Իսկ պետութիւն-հասարակութիւն յարաբերութիւնների հայկական տարբերակը որեւէ փաստաթղթում արձանագրուած կա՞:**

ՊԱՏԱՍԽԱՆ: Պետութեան եւ հասարակութեան փոխյարաբերութեան հայկական տարբերակը ամրագրուած է Հայաստանեայց Առաքելական եկեղեցու Դ-ԺԲ դարերի Կանոնագրքերում, ինչպէս նաեւ Յովհաննէս Օձնեցու, Դաւիթ Ալավկայ որդու, Մխիթար Գօշի, Սմբատ Սպարապետի իրաւագիտական Ե-ԺԳ դարերի աշխատութիւններում եւ Դատաստանագրքերում, աւելի մեզամօտ ժամանակներում՝ համաշխարհային սահմանադրական մտքի զագաթներից մէկի՝ աշխարհում առաջին Սահմանադրութեան հեղինակ Յակոբ Շահամիրեանի «Ռրոզայթ Փառաց» Սահմանադրութեան մէջ, որը նա աւարտել է 1773 թուականին: Ինչ որ բան ունենալով Արեւելեանից եւ բաւական լիցքեր՝ Արեւմտեանից, հայկականը, այդուամենայնիւ ինքնուրոյն եւ առանձնակի մի տարբերակ է, որը Հայաստանեայց եկեղեցու կառոյցներում, նաեւ հայոց զաղթավայրերում, օրինակ՝ Լեհաստան եւ այլուր, գործադրուել է երոպական երկրներում եւ ԱՄՆ-ում սահմանադրութիւնը գործադրուելուց դարեր առաջ:

Ներկայումս, երբ մարդը գրեթէ անսահմանափակ հնարաւորութիւն ունի որոշելու, թէ որտեղ բնակուի, ինչ մասնագիտութիւն ընտրի, ինչ կրօն դաւանի եւ այլն, երբ այսօրուայ քաղաքացին այլեւս վաղուց ի վեր բռնատիրական սկզբունքներով կապուած չէ իր պետութեանը, երբ ցանկացած երկրի սահմաններն արդէն գրեթէ ամենուր բաց են, երբ պայմաններում այլեւս անհնար է հասարակութիւնը կազմակերպել Արեւելեան-կոմունիստական սկզբունքներով, ինչ որ Ռուսաստանի հետեւութեամբ արում է մեզանում: Մեր ժամանակներում միջազգային անզիջում մրցակցութեանը դիմակայելու եւ երկիրը յետաճանցութեան ճահիճից դուրս բերելու մէկ ելք կայ. **զարգացման ճանապարհ ընտրել Սահմանադրութեամբ եւ օրէնքներով երաշխատրուած՝ ընտրութիւն կատարելու մարդու ազատութիւնը:** Այսինքն՝ ոչ մի պարագայում չը բռնանալ հաւատի, աշխատանքի, զաղափարի ու համոզմունքի ընտրութիւն կատարելու մարդու ազատութեան վրայ: Այս հիմնադրոյթը Յակոբ Շահամիրեանն իր «Ռրոզայթ Փառաց» Սահմանադրութեան թիւ 128 եւ այլ յօդուածներում ամրագրել է դեռեւս 1773 թ. «Իւրաքանչիւր օտարական, թէ ի Քրիստոս հաւատացեալ եւ թէ այլահաւատ, ազատօրէն կարող է մուտք գործել Հայոց աշխարհ,

հաստատուել եւ բնակուել Հայոց տան հովանու ներքոյ, ազատօրէն պաշտել իր աստծուն՝ ըստ իր սովորութեան»։ (Որոգայք Փառաց, Երեւան, 2002 թ., էջ 134: Պետութիւն-հասարակութիւն յարաբերութիւնների, մարդու իրաւունքների եւ այլ խնդիրների մասին տես նաեւ էջ 14, 21, 23, 25, 27, 34-36, 55-56, 69, Սահմանադրութեան յօդուածներ թիւ 3, 10, 14, 22, 370, 128, 426-440, 500):

**ՀԱՐՑ:** Այսօր ի՞նչ խորհուրդ կտար մեզ Գարեգին Նժդեհը:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Մէջբերեմ նրա յուշարար, յանրժազոյ ասոյթներից մի քանիսը, որոնցով անգուգադիր Պատգամախօսը երկիրը աղետից դուրս բերելու ճանապարհ է ցոյց տալիս մեզ նաեւ այսօր՝ յորդորելով փոխել ոչ թէ միայն երկրի օտարամոլ բարձրագոյն ղեկավարութեանը, այլ ԲՈԼՈՐ յանցագործ ու ապաշնորհ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԱՆԽՏԻՐ՝ գիւղապետից մինչեւ քաղաքապետ-մարզպետը: Միայն այդպէ՛ս է հնարատր դառնալ ինքնուրոյն, որպէսզի հնարատր լինի կատարել ԱՐՄԱՏԱԿԱՆ յեղաբեկում, ինչից այսօր ՀՀ քաղաքական ուժերն աւտում են «համակարգային փոփոխութիւն»։ Լսենք իրեն:

*Մի ժողովուրդ, որը չգիտէ իր ներքին սրիկաները պատժել, չպիտի կարողանայ պատժել իր գոյութեան արտաքին թշնամիներին<sup>47</sup>:*

*Երբ ժողովուրդը բարոյական քաջութիւն չէ ունենում պատժելու իր դժբախտութեան հեղինակներին, այդ միեւնոյն հեղինակների միջոցաւ պատմութիւնը պատժում է ժողովուրդին<sup>48</sup>:*

*Անէծք է առաջնորդի տգիտութիւնը, ետականութիւնը, նախանձը: Չի եղել աւելի զարհուրելի թոյն, քան վատ օրինակը առաջնորդի, որ միշտ էլ վարակիչ է:*

*Ետակա՞ն է՝ անասնանում են նրա հետ առնչողները: Ծո՞յլ է մտատրապէս՝ հոգեւոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները:*

*Անհայրենապա՞շտ է՝ հակահայրենիք հրէշներ են վխտում նրա շուրջը:*

*Ազգերը ամէնից շատ տառապել են ու կը տառապեն իրենց տակնքների երեսից:*

*Եւ ո՛չ մի ընչազուրկ՝ քո հողի վրայ: Խեղճերի արցունքից ու թոյլերի անարիտութիւնից են քանդում հայրենիքները: Բոլոր որդիներդ անկարօտ ու արի:*

*Թող հեռու մնա իր ժողովուրդի ղեկավարութիւնից նա, ով մեռնել չգիտէ իր հայրենիքի համար:*

*Ազգերը չեն ունեցել եւ պիտի չունենան աւելի մեծ թշնամի, քան նիւթապաշտ առաջնորդը:*

*Մի ժողովուրդ, որի որդիները հաւասար չեն օրէնքի եւ մահուան առաջ՝ յաղթական հայրենիք չի ունենա:*

*Մի ժողովուրդ, որն իր փիլիսոփայութիւնը, աշխարհայեցութիւնը, կրօնն անգամ չի յարմարեցնում իր ինքնապաշտպանութեան պահանջներին՝ անբարոյական է եւ անապագայ: Մի ժողովուրդ, որն իր զէնքերն ընտրելու ժամանակ հաշուի չի առնում իր թշնամիների զէնքերը-քաղաքականապէս տգէտ ու տհաս ժողովուրդ է<sup>49</sup>:*

**ՀԱՐՑ:** Իսկ ի՞նչ կառաջարկէր Գարեգին Նժդեհը ազգին՝ ՀՀ արտաքին քաղաքականութիւնը եւ ցեղասպանութեան խնդիրը արժարծելու հարցում:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Այդ հարցի պատասխանը նրա մէկ խօսքն է՝ **ՀԱՅ-ՐԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ:**

Հայութիւնը ցեղասպանութեան քարոզչութիւնը աւելի քան 90 տարի կատարում է միեւնոյն մեկնակէտերից: Այդ ընթացքում մեր ջանքերը քարոզչական ճակատում ուղղել ենք աշխարհին համոզելու, որ նախ՝ ընդունի, որ Թուրքիան 1915-1923 թթ. կատարել է հայերի ցեղասպանութիւն եւ ապա՝ դատապարտի այն: Դա գուցէ թէ հասկանալի էր, երբ անկախ պետութիւն չունենալու պատճառով ցեղասպանութեան քարոզչութեամբ զբաղում էր ոչ թէ պետութիւնը, այլ Հայաստանեայց Արքայական Սր եկեղեցին, կուսակցութիւններն ու հանրային այլ կա-

ռոյցները: Այժմ, երբ ՄԱԿ-ի անդամ անկախ պետութիւն ենք կոչուում, Հայոց ցեղասպանութեան քարոզչութեանը ու յատկապէս Հայկական հարցի հարիւրամեայ անփոփոխ բովանդակութեանը պէտք է տանք արդիական շունչ եւ եռփուն, որի առաջին քայլն ըստ իս հետեւեալն է. ցեղասպանութիւնն ու հայրենագրկումը մենք մեր քարոզչութեան մէջ պէտք է դարձնենք անանջատելի, որը ընդհանրանալով, խտանում է Գարեգին Նժդեհի մէկ պատգամ-ծրագրի՝ հայրենաստիքութիւն բառի մէջ:

Այսօր, Գարեգին Նժդեհի պատգամից աւելի քան 80 տարի յետո՛յ միայն, հայութիւնը վերջապէս սկսում է յստակօրէն ըմբռնել ճշգրիտ անելիքը. ո՛չ թէ պահանջատիրութիւն, այլ՝ Հայրենաստիքութիւն, այսինքն՝ հայերս Հայոց ցեղասպանութեան քարոզչութիւնը ճանաչման պահանջից արդէն մղում ենք դէպի ամբողջական հատուցումը՝ մեր բռնագաւթուած տարածքների ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ...

Մինչ ամբողջական Հայրենաստիքութիւնը, Հայկական հարցի եռփունն այսօր ազգովին պէտք է դարձնենք աշխարհի բազմաթիւ պետութիւնների հաստատած՝ Վոլտըր Թոմաս Ուիլսընի Իրաւարար վճիռ-քարտէզով Հայաստանի Հանրապետութեանը յատկացուած քառասուն հազար քառ. մղոն տարածքը Թուրքիայից Հայաստանին վերադարձնելու քարոզչութիւնն ու գործողութիւնները: Գործ, որը ինչպէս 1991 թ. սկսած նշել են բազմիցս, ՀՀ անկախութիւնը վերականգնելուց անմիջապէս յետոյ պիտի տնօրինէր ՄԱԿ լիիրաւ անդամ դարձած Հայաստանի Հանրապետութիւնը, որպէսզի մեր երկիրը նոյնը պահանջելու բարոյական իրաւունք ունենար նաեւ միջազգային բոլոր պատկանատեաններից եւ կառոյցներից: Մեր համազգային պահանջի եռփունը հետեւեալ սրբագրումն է. Հայաստանի Հանրապետութիւնն ու հայութիւնը Հայաստան-Թուրքիա պետական սահմանը այլեւս պաշտօնապէս չպէտք է շարունակեն համարել 1921 թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական ապօրինի գործարքով Հայաստանին պարտադրուած այսօրուայ 29 հազար քառ.կմ տարածք պարունակող սահմանագիծը: Հայաստան-Թուրքիա սահմանը 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրաւարար վճիռ-քարտէզն է, որը աշխարհի 12 պետութիւնների հետ միասին ստորագրել են նաեւ սուլթանական Թուրքիան եւ Հայաստանի Հանրապետու-

թիւնը: Հետեւաբար՝ Արցախի հարցում Ադրբեջանից 1994-2011 թթ. դիւանագիտական պարտութիւն կրող Հայաստանի Հանրապետութիւնը այդ պարտութիւնը չեզոքացնող լուրջ ու հիմնատր նախադրեալներ ունի: Հայաստանի Հանրապետութիւնը ազերի-թուրք դաշնութեան հետ դիւանագիտական կռուի մէջ պէտք է հասնի նրան, որ միջազգային կառոյցները եւ Մինսկի խումբը հայ-ադրբեջանական սահմանը որոշելու հիմք դարձնեն ո՛չ թէ ռուս-թուրքական 1921 թ. մարտի 16-ի ապօրինի գործարքով գծուած սահմանը, այլ՝ ուիլսընեան Իրաւարար վճիռ-քարտէզը: Մեր պայքարն այդ ճակատում կարողինատրուի, քանի որ հայ-ազերի դիւանագիտական պայքարում հայկական կողմը հիմնելու է աւելի քան 10 պետութիւնների ստորագրած միջազգային պատմական իրաւագօր փաստաթղթերի վրայ, իսկ աազերի-թուրք նկրտումներն իրաւագօր գործարքն է: Գործարք, որը առանց ՀՀ մասնակցութեան կնքուել են Սովետական Ռուսաստան եւ Թուրքիայի Հանրապետութիւն կոչուած պետութիւնները, որոնք 1921 թ. այդ երկրանուններով դեռեւս միջազգային ճանաչում չէին ստացել:

Ներկայացնենք քարոզչական ճակատում բուրք-ադրբեջան դաշինքից ՀՀ կրած դիւանագիտական պարտութիւնը չեզոքացնող միջազգային մի քանի այլ փաստաթղթեր եւս: ՀՀ-ն Արցախեան հարցը լուծելու բանակցութիւններում պէտք է առաջարկի կիրարկել իրաւարարութեան սկզբունքը, որը Եւրոպան ընդունել էր դեռեւս 1920 թ. փետրուարի 16-ին: Այսրկովկասի նորանկախ պետութիւնների սահմանները ճշտելու համար Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի մէկական ներկայացուցիչներից բաղկացած յատուկ յանձնախումբը Լոնդոնում կայացարած փետրուարի 24-ի նիստում ընդունուեց, իսկ փետրուարի 27-ին հրապարակեց «Հայաստանի սահմանները ճշտող յանձնախմբի զեկոյցն ու առաջարկները» պաշտօնական փաստաթուղթը: Նիստը վարող Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Լորդ Բըրզընը ի գիտութիւն իրազեկեց, որ վիճելի տարածքներ Արցախի, Նախիջեւանի եւ Զանգեզուրի բնակչութեան մեծամասնութիւնը հայեր են: Ընդունուած փաստաթուղթը ստորագրած Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան(որոնք այսօր ԱՄՆ-ի հետ միասին մտնում են Արցախի

խնդիրը լուծելու նպատակով հիմնուած Միմսկի խմբի մէջ), Իտալիան, Ճապոնիան ԱՄՆ համաձայնութեամբ վճռեցին Այսրկովկասի երկրների միջեւ սահմանազատումը կատարել՝ հիմնուելով ազգագրական տուեալների վրայ: Այդ ձեւակերպումը ներառուեց նաեւ Վուդրո Ռիլսընի Իրաւարար վճռի ամբողջական զեկոյցի 1-ին յաւելումում: Սակնշահակի՝ Արցախի հարցը իրաւարարութեամբ լուծելու համար նոյնպէս հարկ է հիմնուել 1919-1920 թթ. Միջազգային վերոյիշեալ փաստաթղթերի վրայ, քանի որ հակամարտութիւնը գալիս է այդ թուերից: Հայաստանի Հանրապետութիւնն իր պետական սահմանը պէտք է համարի Իրաւարար վճիռ-քարտէզով Հայաստանին տրուելիք հողամասը՝ գումարած 1920 թ. յուլիսի դրութեամբ Հայաստանի առաջին Հանրապետութեան զբաղեցրած 61 հազար քառ.կմ տարածքը, որով Հայաստանի Հանրապետութեան սահմանը կունենար աւելի քան 161 հազար քառ. կմ տարածք<sup>50</sup>:

**ՀԱՐՅ:** Չեր կարծիքով որո՞նք են Հայկական հարցի ռազմավարութիւնը արդիացնելու առաջին քայլերն այսօր:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Մեր արդի քարոզչութիւնն ու համազգային ռազմավարութիւնը անյապաղ արդիւնատրելու համար նախ հարկ է արձանագրենք գրեթէ չքննարկուող հետեւեալ իրողութիւնները:

**Ա. Այլեւս անհանդուրժելի է Հայոց մեծ եղեռնը ներկայացնել միակողմանի ու կիսատ, ինչպէս շարունակում ենք ասիա աւելի քան 80 տարի:** Անհրաժեշտ է վերջապէս ամրագրենք տարիներ շարունակ կոծկուող պատմական իրողութիւնն ու ճշմարտութիւնը, որը հետեւեալն է. մեր ազգային մեծագոյն ողբերգութիւնը իրականացրել են ցարական Ռուսաստանն ու սուլթանական Թուրքիան, իսկ 1921-1949 թթ. մեծ-մեծապէս յարաբերութիւնների պատմութեան այլ կոծկուած իրողութիւնները նոր սերնդին առնուազն հնարատրութիւն կտան ազատուելու քաղաքական այն թիրաբնութեան, որով մեր հանրային-քաղաքական առաջնորդների մեծ մասը եւ կուսակցութիւնները աւելի քան 80 տարի կազմալուծում են այս ժողովրդի ինքնապաշտպանութիւնը:

Այսպէս՝ հայութեանը իր բնօրրանից վտարելու-ցեղասպանութեամբ մէջտեղից վերացնելու ծրագիրն իբրեւ պետական քաղաքականութիւն եւ քարոզչութիւն, Մեծ եղեռնից 30-35 տարի առաջ՝ 1881 եւ 1884-1885 թթ. ու յատկապէս 1891 թուականից, առաջինը պետականօրէն Ռուսաստանը հրապարակեց՝ Հայաստանեայց եկեղեցու եւ հայոց դպրոցների դէմ սկսելով աննախադէպ հալածանքներ: Կայսրութիւնը 1881թ. հայ ժողովրդի ու եկեղեցու խնայած դրամով գործող դպրոցները առանց հատուցման պետականացրեց, իսկ 1896թ. կազմեց Հայաստանեայց եկեղեցու հողերը, շարժական ու անշարժ գոյքը բռնագրաւելու նախագիծ:

1891 թ. փետրուարի 12-ին Պետերբուրգում բազաութի գումարած «Հայկական գործերի բարձր մակարդակի ժողովրդ» հռչակեց ռուսահայութեան հալածանքները բազմապատկելու գլխաւոր ուղղութիւնները. «Հայ ազգութեանը հետզհետէ ձուլել կայսրութեան տիրապետող բնակչութեանը... Դպրոցական հարցում ձգտել եկեղեցական-ժխական ուսումնարանները... լրիւ կերպով ենթարկել ուսումնական վարչութեանը»: Օրէնքն ուներ հայ հոգեւորականութեանը վարչական կարգով արտօրելու յատուկ կէտ<sup>51</sup>: Այդ երկրում հայերէն խօսելը, գրելը, թերթ ստրելու յատուկ կէտ<sup>51</sup>: Այդ երկրում հայերէն խօսելը, գրելը, թերթ ստանալը, ճառելը եւ նոյնիսկ հայկական քատրոն գնալը համարում էր «հայկական նացիոնալիզմ»: Հայերին մեղադրում էին մինչեւ Դ-րնի Ռուստով Մեծ Հայաստան ստեղծելու ցանկութեան մէջ<sup>52</sup>: Ռուսաստանը հայոց դպրոցները, նաեւ բարեգործական ու ազգային այլ կառոյցները փակելու՝ 1881 թ. սկսած բռնութիւնները բազմապատկեց հէնց 1985-896 թթ., երբ Թուրքիան կոտորում էր հայերին... 1897թ. յունուարի 2-ին, երբ հրապարակուեց հայոց դպրոցները փակելու ցարի պաշտօնական հրամանը, Գետրգեան ճեմարանից բացի, Ռուսաստանում այլեւ ոչ մի հայկական դպրոց չէր մնացել (1896թ. Ռուսաստանում կար մօտ 280 հայկական դպրոց, 16000 աշակերտ, Թուրքիայում՝ մօտ 1500 դպրոց՝ 250 000 աշակերտներով, իսկ 1913-1914 թթ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի տուեալներով արեւմտահայերն ունէին 2538 գործող եկեղեցի, 451 վանք, մօտ 2000 դպրոց՝ շիշուած Օսմանեան կայսրութեան հայ կաթողիկոսների ու աւետարանականների, ինչպէս նաեւ այդ ժամանակ Թուրքիային անցած

Ռուսահայաստանի Կարսի, Սուրմալուի գաւառների հայոց դպրոցները): Այդ եւ 1898 թ. մարտի 26-ի կառավարութեան հրամանները թելադրում էին յարթունիս խել դպրոցական շէնքերն ու գոյքը եւ դրանք վերածել «երկրի բոլոր հայատակ ազգերի համար» ռուսական դպրոցների:

Ժամանակի գործիչները փաստերով արձանագրում են, որ թուրքահայերի կոտորածն այնքան բաղձալի էր Ռուսաստանին, որ այդ երկիրը Պոլսում իր դեսպանի միջոցով արեւմտահայութեանը կոտորող սուլթանին յորդորում էր. «Massacrez, Majeste', massacrez, Majeste» ( Կոտորեցէ՛ք, ձերդ մեծութիւն, կոտորեցէ՛ք), իսկ իր արտգործնախարար Լոբանով-Ռոստովսկու միջոցով «**Հայաստանը մեզ պէտք է առանց հայերի**» յայտարարութեամբ քաջալերում եւ օժանդակում էր նրան, Կովկասի կառավարչապետ Գոլիցինի բերանով էլ հաւաստիացնում, որ Ռուսաստանն էլ ունի ռուսահայութեանը բնաջնջելու ի՛ր ծրագիրը. «**Ես կհանգստանամ այն ժամանակ միայն, երբ Թիֆլիսի թանգարանում ցուցադրեն հայի խրտվիչակը՝ ի հաստատումն այն փաստի, որ Կովկասում ինչ որ ժամանակ ապրելիս են եղել նաեւ հայեր**»: Կայսրութեան հայատեաց քայլերը հասան այնպիսի դաժանութեան, որ Սբ Էջմիածնում եւ բոլոր միւս եկեղեցիներում ոստիկանութիւնը հայ եկեղեցականներին արգիլեց կատարել 1985-1896 թթ. Թուրքիայում կոտորուած անմեղ զոհերի հոգեհանգիստները՝ սպառնալով պատասխանատուութեան կանչել այն հոգետրականներին, ովքեր որեւէ եկեղեցում կփորձէին հոգեհանգիստներ կատարել հայ անմեղ սպանուածների յիշատակին, ինչը Ամենայն Հայոց կաթողիկոսը տնօրինել էր անցկացնել հայոց բոլոր եկեղեցիներում: Այս փաստերը ապացուցում են, որ ռուս կայսրութիւնը հայութեանը խոշտանգելու իր ծրագիրը պետականօրէն հրապարակում եւ իրականացնում էր առնուազն 1891 թ. սկսած<sup>53</sup>: Մեծ Բրիտանիայի այդ օրերի վարչապետ Գլադստոնն իր ճառերից մէկում ռուս ցարին համարելով հայ ժողովրդի արեամբ արատաւորուած մէկը, յայտարարում էր, որ երբ 1895 թ. Թուրքահայաստանում հայերի կոտորածներ էին, Կովկասի ռուսական բանտերը լցնում էին հայ ձերբակալուած մտաւորականներով: 1881-1884 թթ. սանձազերծուած ռուսահայերի կրթամշակութային ու քաղաքական-տնտեսական ահաւոր հալածանքն ու բռնաձուլումը շարունակուեց մինչեւ 1915 թուականը:

Բ. Պետերբուրգը 1897-1898 թթ. սկսեց վճռական քայլերով յարթու-

նիս գրաւել Հայաստանեայց եկեղեցու կալուածքներն ու դրամագլուխները: Սակայն 1901 թ. յուլիսի 26-ին թագաւորի հիմնած յատուկ յանձնախումբը Հայաստանեայց եկեղեցին լիովին զօրագրկելու, ըստ էութեան՝ հայ հոգետրականութեանը պետութիւնից նպաստ ստացող հնազանդ պաշտօնագօր դարձնելու անյապաղ գործադրումը վաղաժամ համարեց, քանի որ Հայաստանեայց եկեղեցու ինքնավարութիւնը լիովին վերացնելն ու եկեղեցու բոլոր հողերի եւ դրամագլուխների անխտիր բռնագրաւումը աշխարհի հայութեան մէջ կառաջացնէր վտանգաւոր համատարած դժգոհութիւն: Առաջարկուեց որոշումը իրականացնել ոչ թէ միանգամից, այլ փուլ առ փուլ՝ գործը սկսելով հայոց եկեղեցու «չափազանց մեծ ինքնավարութիւն»ը մեծապէս սահմանափակելուց:

Կայսրութեան հակահայ գործողութիւնների բարձրակէտը 1903 թ. յունիսի 12-ից Նիկոլայ Բ ցարի հրամանագրով սկսուած՝ Հայաստանեայց եկեղեցիների գոյքի եւ ունեցուածքի բռնագրաւումն էր: Փաստաբար կոչում էր «Հայ եկեղեցապատկան գոյքի եւ կալուածքների բռնագրաւման ու պետականացման մասին օրէնք»: Ապօրինի բռնագրաւուեցին Հայաստանեայց եկեղեցու բոլոր կալուածքները, եկեղեցաբաւուեցին Հայաստանեայց եկեղեցու բոլոր կալուածքները, եկեղեցապատկան այգիները, վարելահողերը, անտառները, ջրաղացները, առետրական կրպակները եւ այլն: Այդ երկիրը զուգահեռաբար սկսեց բռնագրաւել նաեւ **աշխարհի բոլոր հայերի նուիրատուութիւններով** Հայաստանեայց եկեղեցու ստացած ոսկեայ, արծաթեայ խաչերն ու սպասքը, նաեւ բռնագանձել եկեղեցու դրամատնային հաշիւներում կուտակուած համազգային դրամագլուխները: Զանի որ Հայաստանեայց եկեղեցու ունեցուածքն էր, ոչ թէ միայն եկեղեցունը, ուստի դա անկասկած Հայաստանեայց եկեղեցու եւ համայն հայութեան ծրագրուած **պետական կողոպուտ** էր: Ամենայն Հայոց երջանկայիշատակ կաթողիկոս Խրիմեան Հայրիկի գլխատրութեամբ համայն հայութիւնը Հայաստանեայց եկեղեցու դէմ սանձազերծուած կողոպուտի դէմ դուրս եկաւ համազգային ինքնապաշտօնապանութեան՝ ԱՄՆ-ից մինչեւ Բուլղարիա, Եգիպտոսից, Պարսկաստանից ու Հնդկաստանից մինչեւ Եւրոպա<sup>54</sup>: Խրիմեան Հայրիկ վեհափառն իր 1903 թ. օգոստոսի 21-ի կոնդակով քեմերին յորդորեց Հայաստանեայց եկեղեցու ունեցուածքը յանձնել պետական քաղաքացիական



Գ. Երբ Այսրկովկասում բացուեց Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ճակատը, Ռուսաստանը հայութեան, յատկապէս արեւմտահայութեան մէջ դարձեալ սկսեց բոբրոքել հակաթուրքական տրամադրութիւններ: Նպատակը մէկն էր. պատերազմի ընթացքում իր սաղաթանքներով եւ քարոզութեամբ Թուրքիայում սաղորելով հայերի հալածանքներ եւ կոտորածներ, արեւմտահայերի բնական ինքնապաշտպանութիւնը ուզում էր վերածէր Թուրքիանին ներսից հարուածելու գործօնի: Կայսրութիւնը միաժամանակ ըստ ամենայնի ձգտում էր, որպէսզի հայերի հակաթուրքական տրամադրութիւնները ոչ մի կերպ չխանգարէին, որպէսզի հայերի հոգեւոր, քաղաքական եւ կենսաբանական նախնիքը դաշնակէր տաճկահայոց ջարդերին: Այդ նպատակով այդ երկիրը աշխարհամարտի սկզբին հայութեանը դարձեալ յուսադրեց, որ Արեւմտահայաստանը գրաւելով, «լուծելու է Թուրքահայաստանի հարցը»: Դրա փոխարէն հայերը կայսրութեանը ռազմական օգնութիւն ցուցաբերելու համար պէտք է ստեղծէին կամաւորական ջոկատներ՝ թէն ցանկութեան դէպքում նա Թուրքիայի վրայ կարող էր տանել իր բանակում ծառայող մօտ 250 հազար ռուսահայ զինուոր, որին քշել էր Արեւմտեան ճակատ...

1912 թ. վերջին Թիֆլիսում հիմնուած «Հայկական ազգային բիւրօն» 1914 թ. սեպտեմբերի կէսից ցարի տնօրինութեամբ եւ ՀՅԴ գլխատրութեամբ կազմակերպեց կամաւորական շորս ջոկատ, որոնց զինուորագրուել էին ոչ միայն Կովկասի՝ հիմնականում մեծահասակ հայերը, այլեւ Բուլղարիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից եւ աշխարհի այլ հայաշատ վայրերից եկած բազմաթիւ երիտասարդ կամաւորներ: Ռուս-թուրքական ճակատում թուրքերի դէմ կոռուղ կամաւորական ջոկատների նշանաբանն էր. «Ինքնավարութիւն՝ վեց վիլայէթներում եւ անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ»: Կամաւորական խմբերից ամենախոշորը Անդրանիկի հազար հոգիանոց Առաջին ջոկատն էր: Միւս ջոկատները գլխատրում էին Քեռին, Դրօն եւ Համազասպը: Քիչ աւելի ուշ հիմնուեցին նաեւ գնդապետ Ջանփոլադեանի եւ այլոց ջոկատները, որոնց քանակը դարձաւ եօթ: 1915 թ. գարնանը Քեռու, Դրոյի եւ Համազասպի ջոկատների 2500 կամաւորները միացան Արարատեան գնդի մէջ՝ Վարդանի ընդհանուր հրամանատարութեամբ<sup>57</sup>: Ռուսաստանի ռազ-

մական քարոզանին հայ կամաւորների օգնութեամբ «Թուրքահայաստանի ազատագրում»-ը յատկապէս քարձրածայնում էր թուրքերի համար՝ նրանց մէջ անընդհատ տարածելով այն լուրերը, որ արեւմտահայերը, օգտուելով ռուս-թուրքական պատերազմից, դաւադրաբար անցել են Ռուսաստանի կողմը, թուրքական զօրքի քիկունքում ստեղծել են կամաւորական զօրամասեր, որոնք ներսից կոռուելով թուրքական զօրքի դէմ, ռուսական զօրքին պիտի օգնէին գրաւելու Արեւմտահայաստանը: Հակառակորդի մարտունակութիւնը քայքայելուն միտուած Ռուսաստանի այս ռազմավարութիւնը Թուրքիային տալիս էր հայերին կոտորելու բաղձալի հիմքեր, որով Ռուսաստանը նպատակ ուներ թուրքահայերի մէջ յառաջ բերել թուրքերի հանդէպ յաւելեալ թշնամութիւն՝ հայերին վերածելով իր զօրքին Թուրքիայի քիկունքում զօրակցող զանգուածի: Կայսրութիւնը, ինչպէս Ռուս-թուրքական 1853-1856 թթ. ու յատկապէս 1877-1878 թթ. պատերազմի ընթացքում, այնպէս էլ այդ օրերին, հայերին օրօրելով հայոց ինքնուրոյնութիւնը վերականգնելու պատրանքներով, Թուրքիայի հայաբնակ տարածքները հայերի շնորհիւ գրաւելուց յետոյ, կեղծ նահանջներով հայազրկում էր այդ տարածքները...

Կրկնում եմ՝ Ռուսաստանին բացարձակապէս ձեռնադրու չէր, որ գրաւեալ տարածքներում հայեր, այն էլ՝ զինուած ջոկատներ ունեցող հայեր մնային, քանի որ գիտէր, որ հայերը վաղ թէ ուշ պիտի ձգտէին ինքնավարութեան, ինչը անվերապահօրէն հակասում էր այդ երկրի մեծապետական շահերին:

**ՀԱՐՑ: Չէր այդ կարծիքը հիմնաւորող ուրիշ ի՞նչ փաստեր ունէր...**

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Գրաւեալ հայոց հողերում բնիկների փոխարէն ռուսներ բնակեցնելու քաղաքականութիւնը այդ երկիրը սկսել էր դեռեւս 1828 թուականից, երբ Պարսկաստանից գրաւած հայաշատ տարածքներում խոստացաւ հիմնել «Հայկական մարզ», որը իբր թէ պիտի դառնար «բուֆերային պետութիւն»: Նոյնիսկ Մովսէս Հայաստանի պատմաբաններն են շեշտել, որ ցարական կառավարութիւնն այդ խաբուսիկ խոստումը տալու ժամանակ ցանկութիւն չունէր հիմնելու ո՛չ «ինքնավար Հայաստան» եւ ո՛չ էլ «բուֆերային պետութիւն»: Կայսրու-



արեւմտահայերը ոչ միայն միացել են իր դէմ կռուող թշնամուն, այլև Թուրքիային պարտութեան մատնելու համար այդ երկրի սրտում կազմակերպում են խռովութիւններ եւ ապստամբութիւններ, ուստի հայերին պէտք է տեղահանել եւ ուղարկել պետութեան այլ տարածքներ... Ասել է թէ՛ մինչև երիտթուրքերի կողմից պոլսահայ բովանդակ մտատրականութեան 1915 թ. ապրիլի 24-ի ձերբակալումն ու ոչնչացումը, որով պատմագիտութիւնը սկսում է Հայոց մեծ եղեռնը, Ռուսաստանն արդէն հայերի ապստամբութեան քարոզութեամբ թուրքերին հայոց ցեղասպանութիւն-տեղահանութիւնը շարունակելու զօրատր հիմքեր էր տուել: Այդ պատճառով, երբ ռուսական զօրքը մօտենում էր Արեւմտահայաստանի որեւէ բնակավայրի, նրանց գալուստին սպասող հայ բնակչութիւնը տեսնում էր, որ խաբուած է, քանի որ իրենց տարածք էր մտնում ոչ թէ ռուսական, այլ թուրքական բանակը եւ պատերազմի մէջ գտնուող պետութեան դէմ դաւադրութեան մեղադրանքով, թուրք եւ թուրք քաղաքացիական ռճրախմբերի հետ կոտորում էր հայութեանը: Ռուսաստանը երկիւղում էր, որ հայկական կամաւորական ջոկատները պիտի շարունակեն Արեւմտահայաստանի ազատագրումը: Ուստի հայութեան այդ ձգտումը վիժեցնելու եւ վերը յիշատակածս գաղտնի ծրագիրը գործադրելու համար հայ կամաւորների ու բնակչութեան շնորհիւ ռուս-թուրքական ճակատում յաղթանակած Ռուսաստանն իր զօրքի պարբերական կեղծ նահանջներով<sup>61</sup> թուրք եւ թուրք խուժանի հետ կատարեց հայերի աննախադէպ հայրենագրկում եւ կոտորածներ: Կայսրութիւնն իր ռազմաքաղաքական վերոյիշեալ նպատակներն իրագործելու, այն է՝ գրաւեալ տարածքները հայագրկելով վստահաբար իրեն պահելու համար, ամէն ջանք թափեց, որպէսզի ռուս-թուրքական կռիւների վայրերում բնակուող արեւմտահայերը չզինուեն: Այդ տեղերում հայ կռուող զինուժի գոյութիւնը կնշանակէր կայսրութեան մեծապետականութեան վիժեցում, քանի որ տեսնում էր, թէ իր զօրամասերի առաջապահ դիրքերում կռուող հայ կամաւորները Անդրանիկի, Քեռու, Դրոյի, Վարդանի, Խէչոյի, Նժդեհի եւ այլ նմանների հրամանատարութեամբ ինչ բացառիկ քաջութիւն եւ ռազմական ո-

լոր արեւմտահայ առողջ տղամարդկանց զօրահաւաքի անուան տակ թշեց բանակ՝ յետագայում բոլորին հետզհետէ ոչնչացնելով<sup>60</sup>:

զի էին դրսեւորում: Չինուած նորանոր հայերի ինքնապաշտպանութիւնը կայսրութեան համար գրաւեալ տարածքների կորուստ էր: Ահա թէ ինչու Ռուսաստանն իր քաղաքական նպատակն իրականացնելու ճանապարհին Արեւմտահայաստանը հայաթափելու ոչ մի քայլի առաջ չկանգնեց: Եւ այդ տարիներին Կովկասի կառավարչապետ-փոխարքայ նշանակուած մեր ժողովրդի երդուեալ թշնամիներից՝ Նիկոլայ Նիկոլաւիչն իր ամբողջ ջանքերը բեւեռել էր կատարելու «Գրաւեալ տարածքները ռուս գաղթականներին յանձնելու» ցարի հրամանը: Գործի իրականացման պատասխանատուն արեւմտահայերի կոտորածների կազմակերպիչներից մէկը՝ նորահիմն «Գրաւեալ տարածքներ» նահանգի նահանգապետ նշանակուած, հայատեաց զօրավար Պեշկովն էր<sup>62</sup>: Ռուսաստանն այսպիսով 1914 թ. հայերին տուած «Ինքնավար Թուրքահայաստան» խոստումի փոխարէն 1916 թ. յուլիսի 6-ին հիմնեց «Գրաւեալ տարածքների նահանգապետութիւն», որի ծրագրում արձանագրուած էր. «Հայերին կարելի է տալ դպրոցական եւ եկեղեցական ինքնավարութիւն»:

Անհիմն է նաեւ որոշ պատմաբանների այն դժգոհութիւնը, թէ արեւմտահայերը շատ քիչ վայրերում դիմեցին ինքնապաշտպանութեան: Ռուսաստանը բոլոր միջոցներով՝ թէ՛ քարոզութեամբ, թէ՛ հայոց բնակավայրերին մօտեցող զօրքին միտումնաւոր թոյլ չտալով ժամանակին մտնել հայահոծ քաղաքները եւ թէ՛ կեղծ նահանջներով հայրենագրկեց Արեւմտահայաստանը, խափանեց հայութեան զանգուածային ինքնապաշտպանութիւնը, քանի որ հայերի ինքնապաշտպանութեան վիժեցումը նրա ռազմավարութեան գերագոյն խնդիրներից մէկն էր: Բերեմ ելած Արեւմտահայաստանի չորս խոշոր բնակավայրերից (Վան, Շապին-Գարահիսար, Մուսալեռ, Ուրֆա) միայն Վանում եւ Մուսալեռում հայերը յաղթանակ տարան: Ինքնապաշտպանութեան ելած տարօնցիները թուրքերին թոյլ չտուեցին Վանի շրջակայքի գիւղերում դաւաճանութեան մեղադրանքով արդէն կոտորուած 40 հազար հայերից բացի կոտորեն նաեւ մնացածներին: Վանի շրջանում թուրքերը չկարողացան լիովին ոչնչացնել հայ բնակչութեանը, քանի որ ռուսական զօրքը միայն Վանում ի՛ զօրու չեղաւ յետ պահել հայ կամաւորական խմբերին մտնելու Վան եւ փրկելու մնացածներին... Իսկ Մուսալեռան հերոսա-

մարտին ողջ մնացած մօտ 5000 հայերին փրկեցին ֆրանսիական նաւերը: Նշածս չորս մեծ, նաեւ տասնից անելի փոքր բնակավայրերում (Շատախ, Լիւն կղզի, Վարազայ լեռ, Սասուն, Բիթլիս) ինքնապաշտպանութեան ելած հայերը չկարողացան հարիւր հազարատրներին փրկել կոտորածից: Ուստի լիովին ճիշտ էին ՀՅԴ-այն արեւմտահայ, նաեւ ոչ քիչ արեւելահայ յայտնի գործիչները (օրնակ՝ Ռոստոմը, Արամը, Նիկոլ Դումանը), Հայաստանեայց եկեղեցու շատ քահանաներ եւ բարձրաստիճան սպասաւորներ, եւ ընդհանրապէս անկուսակցական մտաւորականներ, որոնք ռուս-թուրքական պատերազմի թէժ պահին ՀՅԴ-ի կողմից կամաւորական զօրամասեր կազմելը համարելով կայսրութեան կործանարար թակարդ, կտրականապէս դէմ էին դրան:

**ՀԱՐՑ:** Ի՞նչ հիմունքով է պատմագիտութիւնը Հայոց ցեղասպանութեան տեսողութիւնը համարում 1915 թուականից մինչեւ 1923 թիւը: **ՊԱՏԱՍԽԱՆ:** Հայ պատմաբանների մեծ մասը Հայոց ցեղասպանութիւնը երեք փուլի է բաժանում: Առաջին փուլը 1894-1896 թթ. սուլթան Համիդի իրականացրած 300 հազար հայերի կոտորածն էր:

Երկրորդ եւ հիմնական փուլը համարում են 1915 թ. ապրիլի 24-ից (հին տոմարով՝ ապրիլի 11) սկսուող 1915-1918 թթ. կոտորածները, որի ընթացքում, ընդունուած կարծիքով գոհ գնաց անելի քան մէկ միլիոն (թուրքական որոշ աղբիւրներ հայոց զոհերի թիւը 1919 թ. նշում էին 800 հազար): Երրորդ փուլը նշում է 1919-21 թթ., երբ երիտթուրքերը հայազրկեցին Կիլիկիան, Չմիւռնիան եւ այլ տարածքներ, իսկ 1920 թ. սեպտեմբերի 22-ին յարձակուելով Հայաստանի Հանրապետութեան վրայ, բոլշեիկների հետ միասին հայաթափեցին Կարսը, Իգդիրը, Ալեքսանդրապոլ-Գիւմրին եւ Շիրակի դաշտը<sup>63</sup>: Իրողութիւնը, սակայն, ըստ հաւաստի բազմաթիւ փաստերի ու տուեալների, հետեւեալն է. արմէնցիդը 1891 թ. պետականօրէն հրապարակեց ու սկսեց Ռուսաստանը, որին Թուրքիան միացաւ 1894-1896 թթ.: Ռուսաստանը հայերի բնաջնջումը շարունակեց 1905 թ. Կովկասում, որտեղ, ըստ 1897 թ. ցարական մարդահամարի, բնակուած էր մէկ միլիոն 218 634 հայ: Թուրքերի կողմից 1909 թ. Ադանայի 30 հազար հայերի՝ մեծ եղեռնի բարբարոսութիւնները գերազանցող դաժանութեամբ կոտորածից յետոյ<sup>64</sup>, 1915-1923 թթ. իրականացուեց Հայոց մեծ եղեռնը, որի ընթացքում ընդունուած կարծիքի համաձայն, կոտորուեց անելի քան մէկուկէս միլիոն

հայ: Զեմալական Թուրքիան հայոց ցեղասպանութիւնը 1919-1922 թթ. շարունակեց Կիլիկիայում, Չմիւռնիայում եւ այլ վայրերում:

Հայոց մեծ եղեռնը, 1921 թ. մինչեւ 1949 թ. համատարած բռնագաղթը Ալթայ եւ Սիբիր, միայնակ շարունակեց բոլշեիկեան Ռուսաստանը: Այսպիսով՝ անհերքելի փաստերը ինձ թոյլ են տալիս պնդելու, որ Հայոց ցեղասպանութիւնը տեսել է 1891 թ.-ից մինչեւ 1949 թ., մօտ 60 տարի: .

Արձանագրեմ նաեւ հետեւեալ կարծիքս, որը նոյնպէս հիմնուած է անհերքելի փաստերի վրայ: Մարդկութեան պատմութեան մեջ որեւէ ժողովրդի դէմ երբեւէ իրագործուած ամենասահաւոր բնաջնջում-հայրենագրկումը՝ 1915-1921 թթ. Հայոց մեծ եղեռն-ԱՐՄԵՆՆՈՅԻԴԸ Ռուսաստանում եւ Թուրքիայում կազմակերպեցին Յիսուսին խաչողների կենսաբանական շտաբիդ եւ նրանց հետետրդ սիոնականները՝ նշուած երկրների իրենց արիւնակից ղեկավարներ Լենինի, Թալաթի, Արաթուրքի եւ նմանների գլխաւորութեամբ...

**ՀԱՐՑ:** Թուրքիային բոլշեիկեան Ռուսաստանի տուած բազմակողմանի օժանդակութիւնը արձանագրող եւ Հայոց ցեղասպանութիւնը բոլշեիկների կողմից շարունակելու ի՞նչ փաստեր են յայտնի:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ անկախութիւնը վերացրեց Թուրքիայի դաշնակից բոլշեիկեան Ռուսաստանը: «Անկախ Հայաստանը ողջակիզուեց քեմալական Թուրքիայի եւ լենինեան Ռուսաստանի զոհասեղանի վրայ»<sup>65</sup>: Բացի այդ՝ դեռեւս 1920 թ. օգոստոսի 24-ին Թուրքիայի հետ կնքած գաղտնի պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային 1920-1921 թթ. տուել էր 17 հազար զինուոր եւ 200,6 կգ ոսկու ձուլակտորներով անյատոյց օգնութիւն: Բոլշեիկները 1920-1921 թթ. Թուրքիային գէնք, զինամթերք, ոսկի, զինուոր ու հրամանատարներ տալով՝ ըստ էութեան օգնեցին, որպէսզի Առաջին աշխարհամարտում պարտուած Թուրքիան մասնատող Մերի միջազգային դաշնակցի իրագործուի նուազագոյնս, եւ Թուրքիան ոչ միայն փրկուի մասնատումից, այլեւ Հայաստանի տարածքների հաշուին դառնա տարածաշրջանի ազդեցիկ տէրութիւններից մէկը... 1920 թ. նոյեմբերի 22-ին երոպական անելի քան 10 պետութիւնների եւ Ճապոնիայի ստորագրութեամբ ընդունուեց Թուրքիայից 40 հազար քառ. մղոն հայկական տարածք յետ վերցնելու- Հայաստանի Հանրապետութեանը վերա-

դարձնելու՝ **Վ. Ուիլյամի Իրաւարար վճիռ-քարտէզը**: Միջազգային այդ անբեկանելի վաւերագիրը հրապարակուելուց **տասն օր յետոյ**, 1920 թ. դեկտեմբերի 2-ին, բոլշեիկեան Ռուսաստանը, ներխուժելով մեր երկիր, **վերացրեց Հայաստանի անկախ Հանրապետութիւնը**: 4 ամիս անց՝ 1921 թ. մարտի 16-ին կնքուած ռուս-թուրքական «Բարեկամութեան եւ եղբայրութեան» գործարքով Մոսկուան Հայաստանի Նախիջւեան եւ Արցախ տարածքները Հայաստանից կողոպտելով՝ յանձնեց Ադրբեջանին, իսկ Արարատ լեռը, Ղարսը, Սուրմալուն եւ այլ տարածքներ՝ Թուրքիային: 1920 թ. օգոստոսի 10-ին Ռուսաստանը Կովկասի Թաթարստանին էր տուել Չանգեզուրը, յետոյ Վրաստանին էր յանձնել Չաւախքը: Իմ հաշուումներով 1920-1922 թթ. Մոսկուան Թուրքիային տուել է մօտ 140 հազար քառ. կմ տարածք (Ուիլյամեան Հայաստանը, Ղարսը, Սուրմալուն, Արդահանը) եւ արելի քան մէկ տոննա ոսկի: Այսպէս՝ ռուս-թուրքական 1921 թ. կոնֆերանսում Մոսկուան պարտաւորուել էր Թուրքիային անհատոյց տալ 10 մլն ռուբլի ոսկի եւ ռազմամթերք: 1920 թ. ընթացքում բոլշեիկապետ Լենինը Թուրքիային յանձնեց 33 275 հրացան, 5 978 600 փամփուշտ, 327 գնդացիք, 54 թնդանոթ, հրանոթի 122 497 արկ, 1500 սուր, 20 հազար հակազագ, 1921 թ. հոկտեմբերի 3-ին՝ նաեւ երկու ծովային կործանիչ, 6,5 մլն ոսկու ձուլակտորներ, 1922 թ. մայիսին՝ եւս 3,5 մլն ոսկով ռուբլի<sup>67</sup>:

Ինչպէս նշեցի, **բոլշեիկեան Ռուսաստանը 1921 թ. Հայոց մեծ եղեռնը շարունակեց միայնակ**. նախ կացնահարեց եւ կոտորեց բոլշեիկեան Հայաստանից փախչել չհասցրած հայ բովանդար մտաւորականութեանը եւ ամբողջ զինուժը՝ արելի քան 1400 կրտսեր եւ բարձրագոյն սպայի, ապա՝ 1937 թ. դարձեալ կոտորեց ազգի ընտրանուն, այնուհետեւ

\* ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլյամին ուղղուած ՀՀ վարչապետ Յովի. Քաջագնումու՝ 1919 թ. հոկտեմբերի պաշտօնական նամակի տուեալներով 1919 թ. հոկտեմբերի դրութեամբ ՀՀ տարածքը 67 հազար 500 քառ. կմ էր՝ ներառեալ նախկինում Թիֆլիսի նահանգի մէջ մտած Ախալքալաքի գաւառը ամբողջովին եւ Բորչալուի գաւառի հարահայերը մէկ միլիոն 293 000 էին (մօտ 60 տոկոս), ՀՀ խորհրդարանն ունէր 80 պատգամատր, կառավարութիւնը՝ ութ նախարարութիւն, իսկ զօրքերի թիւը 18 հազար էր: Նիթուրքահայ գաղթականները, ոչ պակաս է քան երկուսուկէս միլիոն, արելի քան 200 000 հայեր բնակուած են Կոստանդնուպոլսում, ոչ պակաս, քան 100 000 հայեր են բնակուած Սիրիայում եւ Կիլիկիայում, արելի քան 100 հազարն էլ՝ ԱՄՆ-ում<sup>66</sup>:

տեւ Ալթայ անմարդաբնակ սառցաստանում նոր Հայաստան հիմնելու պետական համատարած քարոզչութեամբ 1949 թ. Ալթայ եւ Սիբիր արտրեց եւս արելի քան 40 հազար հայի՝:

Այսպիսով՝ Մոսկուան 1921-1949-ական թթ., մասամբ դրանից յետոյ, բնաջնջեց Հայաստանի եւ կովկասեան սփիւռքի ամբողջ հայ ընտրանուն՝ Վահան Տերեանից, Եղիշէ Չարեանից ու Ակսել Բակունցից սկսած՝ Ամենայն հայոց Խորէն Մուրադբեգեան կաթողիկոսով, Գարեգին Նժդեհով, յետագայում՝ Պարոյր Մեակով, Մինաս Աւետիսեանով եւ նշանաւոր քանդակագործ Արա Սարգսեանով վերջացրած: Պաշտօնական ոչ ամբողջական տուեալներով 1921-ից մինչեւ 1949 թիւը Հայաստանի տարածքից քաղաքական մեղադրանքներով բռնադատուել է մօտ 40 հազար մարդ, որոնցից 13 հազարը 1949 թ. Ալթայի երկրամաս արտրեւալներն են: Ինչպէս ասացի, պատմագիտութիւնը Հայոց մեծ եղեռնի սկիզբը համարում է 1915 թ. ապրիլի 24-ը, երբ մէկ գիշերուայ մէջ թուրքերը ձերբակալեցին 235 անուանի հայ մտաւորականի, գրողի ու արուեստագետի, որոնց թիւը կարճ ժամանակ անց հասաւ արելի քան 500-ի: Նոյնը, բայց բազմապատիկ արելի մեծ քանասաւ արելի քան 500-ի: Նոյնը, բայց բազմապատիկ արելի մեծ քանակով ու դաժանութեամբ, 1949 թ. յունիսի 13-ի գիշերը իրականացրին բոլշեիկները: Ոչ լրիւ տուեալներով 1949 թ. յունիսի 13-ին Հայկական ԽՍՀ-ից, Ադրբեջանական ԽՍՀ-ից, Վրացական ԽՍՀ-ից ու Սեւ ծովի առափնեայ շրջաններից անմարդաբնակ սառցադաշտ Ալթայ արտրուեց 15 հազար 500 հայ, որից 13 հազար մարդ (2935 ընտանիք) Հայաստանից, 2500-ը՝ վերը նշուած տարածքներից: Իսկ 1920-1930 թթ. 18 արտրուել է 2640, 1940-1953 թթ.՝ 21 հազար հայ, 1930-1940 ական թթ.՝ 18 հազար, 1936 թ.-կէսերից մինչեւ 1938 թ.-ի կէսերը՝ Հայաստանում բռնադատուել է 7500 մարդ, որից 4600-ը գնդակահարուել է, 2900-ը ուղարկուել է Սիբիրի արտրավայրեր եւ ճամբարներ<sup>68</sup>:

Այսպիսով՝ անվերապահօրէն հայոց ցեղասպանութիւն են նաեւ 1921-1940 թթ. ահասարտու կոտորածներն ու պատիժները եւ Ստալին

\* Հայերի գաղթը Հայաստանից դէպի Սիբիր եւ այլուր, իր դեպքանութեան միջոցով եւ այլ խողովակներով այսօր պետականօրէն իրագործուած է նաեւ Հայաստանի նորոտամիտ ղեկավարների կողմից «Հայաստանի ռազմավարական դաշնակից» յայտարարուած արդի Ռուսաստանը: Ըստ իս, 1992-2011 թթ. ընթացքում Հայաստանից Սիբիրի հողամասեր եւ Ռուսաստանի այլ վայրեր է գաղթել մօտ կէս միլիոն հայ:

նի հրամանով 1949 թ. զանգուածային արտորը Ալթայ: Ըստ իս, 1895-1949 թթ. ընթացքում բնաջնջուել է անելի քան երեք միլիոն հայ, որից անելի քան մէկ միլիոնը, ներառեալ արեւելահայութեան ընտրանին եւ բիրատր ուրիշներ, կոտորել են ցարական եւ բոլշեիկեան Ռուսաստանները...

Հայերը իրենց բուի համեմատ վիթխարի զոհեր են տուել նաեւ Երկրորդ աշխարհամարտի՝ գերմանա-ռուս ճակատներում, որտեղ հայ զինուորին Թամանեան քերակղզի եւ այլուր կոտորելու էր թշուա Սովետ Միութիւնը: Կոմունիստ կայսրութիւնում բնակւող երկու միլիոն 152 860 հազար հայերից Երկրորդ աշխարհամարտին Հայաստանից մասնակցել է անելի քան 500 հազարը, իսկ 200 հազար հայորդիներ էլ բանակ են գնացել այլ վայրերից, հիմնականում՝ Կովկասից: Այդ 700 հազարից զոհուել են անելի քան 300 հազարը: Կայսրութիւնը մարտերին մասնակից իր տասնեակ հազարաւոր զինուորների, գերի ընկած լինելու եւ այլ մեղադրանքներով, պատերազմից յետոյ բանտարկեց եւ թշուա Սիբիր:

Այստեղ խիստ անհրաժեշտ է ընդծել ու արծանագրել հետեւեալ իրողութիւնը: 1918-1955 թթ., յատկապէս 1937-1949 թթ. բոլշեիկեան դիւապետութիւնը միայն հայերին չէր կոտորում: Կոտորածը համընդհանուր էր ամբողջ կայսրութիւնով մէկ՝ ռուսներից, ուկրաինացիներից սկսած, մերձբալթեան ազգերով եւ Դրիմի թաթարներով վերջացրած: 1941 թ. սովետները լեհական սպայակոյտից գնդակահարեցին մօտ 2600-ին, իսկ 19330-ական թթ. ոչնչացրեցին Սովետ Միութեան հազարաւոր լեհ քաղաքացիների<sup>69</sup>: Կայսրութիւնը սեփական բազմազգ բնակչութեան մարդայնութիւնը զուգակցում էր զիտամշակութային հոգեւոր անօրինակ նախճիրով: Այսպէս, բոլշեիկները մէջտեղից վերացրեցին կայսրութեան 50-ի չափ ազգ-ազգութիւնների բովանդակ մտաւորականութեանը՝ 1917-1955 թթ. ընթացքում բնաջնջելով կայսրութեան անելի քան 45 միլիոն քաղաքացու: Սեփական քաղաքացիների այդ չափերի նախճիր մարդկութեան պատմութիւնը չի տեսել: Ընդ որում՝ այդ 45 միլիոնի մէջ չի մտնում Երկրորդ աշխարհամարտին զոհուած 27 միլիոնը (կայսրութեան պաշտօնական տուեալներով Բ աշխարհամարտին զոհուել է 20 միլիոն սեփական քաղաքացի, մինչդեռ արդի ռուսական զիտնականները այդ թիւը համարելով կեղծուած՝

նշում են 27 միլիոն):

ՀԱՐՑ: Կայսրութիւնը Բ աշխարհամարտին քարոզչական ի՞նչ միջոցներով էր զինուորին մղում անճնուրաց ճակատումի:

ՊԱՏԱՍԽԱՆ: Քանի որ Խորհրդային Միութեան բնակչութիւնը ստրուկ էր, Երկրորդ աշխարհամարտում այդ բռնապետութեան ղեկավարութիւնը իր բնակչութեանը կռուի էր տանում սպանելու սպառնալիքով: Բանակ գնալուց հրաժարուելու դէպքերը բացառում էին, քանի որ բոլշեիկները բնակչութեանը ռազմաճակատ թշուա համար իբրեւ ազդակ, բանակը կազմալուծելու մեղադրանքով տասնեակ հազարաւոր մարդ գնդակահարեցին միայն այն բանի համար, որ գնդակահարուածներն իբր թէ թշուամուն ջախջախելու պետական քարոզչութեանը անհրաժեշտ եռանդով չէին միացել: Այնպէս որ նոյնիսկ անբուժելի հիւանդութեան պատճառով բանակից ազատուելու փորձը ստոյգ գնդակահարութիւն էր ոչ միայն մեղադրողի, այլեւ նրա ամբողջ գերդաստանի համար: Իսկ կռուի դաշտերում զինուորին կռուելու էին թշուա ախպէս. յատուկ ջոկատները գնում էին կռուող զօրքի հետեւից, եւ եթէ ախպէս. յատուկ ջոկատները գնում էին կռուող զօրքի հետեւից, եւ եթէ մէկը փորձէր յետ ընկնել, անմիջապէս գնդակահարում էին: Այսպիսով՝ զինուորի մէջ մուծում էին գնդակահարուելու սարսափը, որ եթէ կռուի ժամանակ զինուորը թշուամու քանակութիւնը կամ ռազմական գերազանցութիւնը զգալով հանկարծ յետ նահանջէր, անպայման պիտի գնդակահարուէր: Ասել է թէ այդ պատերազմը հայրենական յայտագնդակահարուէր: Ասել է թէ այդ պատերազմը հայրենական յայտագնդակահարուէր իր զինուորի հետ վարում էր իբրեւ անասունի՝ բացարձակապէս չմտածելով զինուորի կեանքը խնայելու մասին: Ընդհակառակը՝ սովետները զինուորին կռուի դաշտ թշուա քարոզչութիւն, խթան եւ լծակ էին դարձրել գնդակահարուելու սարսափը: Դա վերաբերում է նաեւ բարձրագոյն հրամանատարութեանը, որին պատերազմի նախօրէին Ստալինը գրեթէ իսպառ ոչնչացրեց: Այսպէս, 1937 թ. հունուարից մինչեւ 1938 թ. հոկտեմբերը, Երկրորդ աշխարհամարտի սկզբից վեց ամիս առաջ, երկու տարուց էլ պակաս ժամանակում, սովետական զօրքերի՝ միայն բարձրագոյն հրամանատարութիւնից բանտարկուեց-մեծամասամբ գնդակահարուեց 40 հազար հրամանատար՝ մարաջախտ-մարշալից մինչեւ գնդապետ (1937-1938 թթ. սովետի զօրքերի թիւը մօտ հինգ միլիոն էր): Մարդկութեան պատմութեան մէջ սեփական զինուորականութեան չտեսնուած նախճիր... Արձանագրուած

փաստերը անհաւատալիօրէն սարսփելի են. Սովետ Միութեան ընդամենը 5 մարաջախտից(մարշալ)1937-1938 թթ. գնդակահարեցին երեքին: Սովետական բանակի ունեցած առաջին կարգի ընդամենը 5 հրամանատարներից գնդակահարուեց չորսը: Բանակում եղած ռազմածովային ուժերի երկրորդ կարգի 7 բարձրագոյն հրամանատարներից գնդակահարուեցին վեցը: Բանակի երկրորդ կարգի 10 բարձրագոյն հրամանատարներից գնդակահարուեցին բոլոր տասը: Բանակում ծառայող կորպուսի 67 հրամանատարներից գնդակահարուեցին եւ բանտարկուեցին 60-ը: Բանակային 15 կոմիսարներից(գաղափարական գծով հրամանատարներ)գնդակահարեցին բոլորին: Կորպուսների եւ դիւիզիաների 92 կոմիսարներից բանտարկուեցին եւ գնդակահարուեցին 83-ը: Դիւիզիայի 186 հրամանատարներից բանտարկուեցին եւ գնդակահարուեցին 154-ը: Բրիգադի 397 հրամանատարներից բանտարկուեցին եւ գնդակահարեցին 221-ին: Սովետական բանակում առկայ 656 գնդապետներից բանտարկուեցին եւ գնդակահարեցին 401-ին եւ այլն<sup>70</sup>:

Թէեւ սովետները 1939 թ. օգոստոսի 23-ին Գերմանիայի հետ կնքեցին չարձակման 10-ամեայ պայմանագիր, բայց 1939-1940 թթ. կայսրութիւնը Լեհաստանից զաւթեց աւելի քան 190 հազ.քառ.կմ տարածք՝ 12 միլիոն բնակչութեամբ<sup>71</sup>: Սովետները այդ տարիներին գրաւեցին նաեւ Մերձբալթիկան, Ռումինիայից Հիւսիսային Բուկովինան եւ Բեսարաբիան, Ֆինլանդիայից ահագին տարածք, նաեւ Երոպայի այլ տարածքներ, որով կոմունիստ կայսրութիւնը իրեն բռնակցեց եւս 51 հազար քառ.կմ տարածք՝ մօտ 4 միլիոն բնակչութեամբ: Այսպիսով, սովետները 1939-1940 թթ. բռնագրաւեցին աւելի քան 250 հազար քառ. կմ տարածք՝ 16 միլիոն բնակչութեամբ: Հետեւաբար բացարձակ սուտ է այն պնդումը, թէ Գերմանիան, խախտելով սովետագերման դաշնագիրը, այդ երկրի վրայ յարձակուեց առանց որեւէ հիմքի: Սովետների կողմից իրենց պատմաբաններին պարտադրուած բացարձակ կեղծիք է նաեւ այն պնդումը, թէ իբր Երկրորդ աշխարհամարտում դաշնակիցների յաղթանակը ապահովել է բացառապէս Սովետ Միութիւնը: Իրականութիւնը, սակայն, հետեւեալ իրողութիւնն է. Երկրորդ աշխարհամարտի առանցքային ճակատը սովետ-գերմանականն էր: Այդ ճակատում Մեծ Բրիտանիան ու յատկապէս ԱՄՆ-ը Գերմանիային յաղթեցին ճակատամարտեր քառ սովետ զինուորներով: Սովետ Միութիւնը Գերմանիա-սովետ ճակատին մատակարարում էր մահապարտ զինուոր ու զինամթերք, իսկ ԱՄՆ-ը՝ կերակուր, հագուստ, ռազմական սարքեր ու զինամթերք: Այս նկատառումներից մեկնելով՝ անհրաժեշտ է քաղաքակրթութեան սեփականութիւնը դարձնել այն անժխտելի իրողութիւնը, որ բոլշեիկեան Ռուսաստանը 1917-1955 թթ. Գարեգին Նժդեհի բառով՝ դիւապետութիւն էր, որն իրականացրեց այդ երկրի 50-ի չափ բանտեալ ժողովուրդների, այն է՝ սեփական բնակչութեան ցեղասպանութիւն:

Դ-ա, կրկնելով 1914-1918 թթ. Թուրքիայի իրականացրածը երկրի յոյն, ասորի, եզդի ու յատկապէս հայ քաղաքացիների հանդէպ, իր ծաւալներով ու դաժանութեամբ աննախադէպ է մարդկութեան պատմութեան մէջ: Հետեւաբար՝ բոլշեիկեան Ռուսաստանի՝ 1918-1955 թթ. իրականացրած 50-ի չափ ազգ-ազգութիւնների ցեղասպանութիւնը հարկ է կանգնաբար մարդկութեան պատմութեան ամենաստուկալի մարդաբան յայտարարուի մարդկութեան պատմութեան ամենաստուկալի մարդաբանութիւնը, եւ այդ երկիրը միջազգայնօրէն դատի տրուի ու հատուցի պատճառած վնասները<sup>72</sup>:

Դ. Ինչպէս նշեցի, Հայոց ցեղասպանութեան քարոզչութիւնը ՃԱՆԱՉՍԱՆ պահանջից պէտք է մղենք դէպի անբողջական ՀԱՏՈՒՅՈՒՆՆԱՉՍԱՆ պահանջից պէտք է մղենք դէպի անբողջական ՀԱՏՈՒՅՈՒՆՆԱՉՍԱՆ: Միջազգային հանրութիւնը դեռեւս 1918 թ. սկսեց պահանջել Հայոց ցեղասպանութիւնն իրականացրած թուրք ղեկավարութեան դատարարութիւնը: Այսպէս, Մեծ Բրիտանիայի համայնքների պալատի տավարութիւնը: Այսպէս, Մեծ Բրիտանիայի համայնքների պալատի պէտք է մղենք դէպի անբողջական Հայոց ցեղասպանութեան պայմանագրի մէջ յատուկ կանգ առնեն հայերի կոտորածները կազմակերպած անձանց դատական պատասխանատուութեան ենթարկելու վրայ: Որքան զարմանալի, բայց փաստ է, որ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող, հատուցում պահանջող ու դատապարտող առաջին պետութիւնը սուրբանական Թուրքիան էր, որի մեծ վեզիր Թեֆիկ փաշայի գլխաւորութեամբ կազմուած նոր դահլիճը որոշեց. «Օսմանեան կայսրութեանը Առաջին աշխարհամարտի մէջ ներքաշելու եւ հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատուութեան

ենթարկուեն երիտթուրքական կառավարութեան ղեկավարները եւ «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամները»: 1918 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով կազմուեալ են հարցաքննիչ յանձնախմբեր, որոնք սկսում են հաւաքել արեւմտահայերի կոտորածներին վերաբերող հրամանագրեր, ծածկագրեր, հեռագրեր եւ փաստացի այլ ասպացոյցներ: Օսմանեան կայսրութեան նահանգները բաժանուեալ են 10 դատարանիչ շրջանների, 1919 թ. յունուարի 8-ին Կ. Պոլսում հիմնուեալ են Առաջին, Երկրորդ եւ Երրորդ ռազմական արտակարգ ատեաններ: 1919 թ. մարտի 8-ին սուլթան Մահմեդ 6-րդ Վահիդէդդի յատուկ հրամանագրով երիտթուրքական կառավարութեան պարագլուխներն ու նախարարները յանձնուեալ են Կ. Պոլսոյ Ռազմական արտակարգ ատեանի քննութեանը: Դատավարութիւնը սկսուեալ է 1919 թ. ապրիլի 28-ին, ընդհատուեալով շարունակուեալ մինչեւ 1920 թ. յունուարի 13-ը: Հայերին բնաջնջելու եւ տեղահանելու մեղադրանքով դատեցին աւելի քան 70 հոգու, որոնցից զլիսատը ջարդարարների գաղափարական առաջնորդներ դոկտոր Նազըմը, Բեհաէդդին Շաքիրը, նաեւ իրագործողներ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Զեմալ բէյը, Ջեմալ Ազմի բէյը, Նայիմ բէյը դատապարտուեցին մահապատժի, 2-ը (Յոզղաթի ոստիկանապետ Թէֆիկ բէյը, կուսակցութեան Խարբերդի պետերից՝ Նազիմ բէյը)՝ 15 տարուայ բանտարկութեան: Երիտթուրքական կառավարութիւնը մահուան դատապարտուածներից միայն մի քանիսի մահապատժին իրականացրեց, մնացածներին ուզում էր երկրից դուրս հանելով ազատէր պատժից, բայց տարբեր երկրներում դրանց դատավճիռը իրականացրեցին հայ վրիժառուները<sup>73</sup>:

Թուրքիայից յետոյ Հայոց ցեղասպանութիւնը հաստատեցին, արձանագրեցին ու նաեւ հատուցելու պահանջով հանդէս եկան միջազգային չորս համաժողովներ՝ Փարիզի (1919 թ. յունուար - 1920 թ. յունուար), Սան Ռէմոյի (1920 թ. ապրիլի 19-26) խորհրդաժողովները, Սեւրի դաշնագիրը (1920 թ. օգոստոսի 10) եւ ԱՄՆ 1913-21 թթ. նախա-

<sup>73</sup> Պօղոս Նուբարը 1918 թ. նոյեմբերի 30-ին հրատարեց արեւմտահայերի ժողով, որը հայ ժողովրդի անունից հռչակեց հայկական բոլոր պատմական տարածքների միատրոնում:

գահ Վուդրո Ուիլսոնի 1920 թ. նոյեմբեր 22-ի Իրաւարար վճիռ-քարտեզը, որով Թուրքիան քաղաքակիրք աշխարհի պահանջով Հայաստանի Հանրապետութեանը պէտք է վերադարձնէր բռնագաւաթուած տարածքների մի մասը: Այս վաւերագիր-փաստաթուղթը Հայոց ցեղասպանութիւն-արմէնոցիդը միջազգայնօրէն հաստատող եւ ոճրագործութեան հետեւանքները վերացնելու մասին աշխարհի 14 պետութիւնների ստորագրութեամբ հաստատուած իրաւագոր պահանջագիր է Թուրքիայից<sup>74</sup>:

Հայաստանից բռնագաւաթուած եւ հարեւաններին տրուած տարածքները միջազգայնօրէն ամրագրուած տիտղոս չունէին եւ չէին կարող ունենալ: Մինչդեռ Սեւրի դաշնագիրը ու յատկապէս ուիլսոնեան Իրաւարար վճիռ-քարտեզը միջազգային իրաւունքի վաւերական փաստաթղթեր են, որոնք նախանշում էին նաեւ Հայաստան-Ադրբեջան եւ Հայաստան-Վրաստան սահմանների որոշման սկզբունքները: Թէեւ Սեւրի դաշնագիրը վաւերացուած չէ, բայց քանի որ ստորագրուել է «Բարձր պայմանաւորող կողմերի» միջեւ, Թուրքիայի համար գործադրուելու պարտադիր փաստաթուղթ էր: Սեւրի պայմանագրի 89-րդ յօդուածն արձանագրում է. «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպէս նաեւ Բարձր պայմանաւորող կողմերը, համաձայնուեալ են ԱՄՆ նախագահի իրաւարարութեանը թողնել ինչպէս Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայէթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանը որոշելու հարցը, այնպէս էլ անմիջապէս ընդունել այն բոլոր միջոցառումները, որոնք նա կառաջարկի Հայաստանին դէպի ծով ելք տալու եւ նշուած սահմանագծին հարող օսմանեան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերեալ»: Փաստօրէն 89-րդ յօդուածը արտօճում է նաեւ անհրաժեշտութեան դէպքում, Հայաստանին դէպի ծով ելք ապահովելուն ի խնդիր, ապառազմականացնել նշուած սահմանագծին հարակից թուրքական տարածքի ցանկացած մաս: Այսպիսով, Սեւրի դաշնագիրը ամրագրում է, որ «Բարձր պայմանաւորող կողմերը» համաձայնուեալ են «անմիջապէս» ընդունել ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնի կայացրած Իրաւարար վճիռ-քարտեզը: Իսկ դաշնագրի 90-րդ յօդուածն էլ արձանագրում է. «Եթէ 89-րդ յօդուածով սահմանագիծը որոշելիս նշուած վիլայէթների տարածքը ամբողջովին կամ մի

մասը յանձնուի Հայաստանին, ապա Թուրքիան այսօր արդէն յայտուարարում է, որ այդ որոշումը ընդունելու օրուանից սկսած ինքը հրաժարում է Հայաստանին փոխանցող տարածքների նկատմամբ իր բոլոր իրաւունքներից ու իրաւահիմունք- տիտղոսներից»<sup>75</sup>:

1950-1980-ական թթ. Հայոց ցեղասպանութիւնը ընդունեցին եւ դատապարտեցին նաեւ առանձին պետութիւններ եւ միջազգային կառոյցներ\*:

1. Մեծ եղեռնը աշխարհում առաջինը 1951 թ. ընդունեց եւ դատապարտեց ԱՄՆ-ը՝ հրապարակուած փաստաթղթերում յայտարարելով, որ հայերի դէմ 1915 թ. Թուրքիայի իրագործած սպանողը, ըստ ՄԱԿ-ի Գլխատըր անասմբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունած «Յեղասպանութեան գործողութիւնները կանխելու եւ դրա համար պատժի մասին» կոնվէնցիայի, ցեղասպանութիւն է: Ամերիկահայ հանրային գործիչ, **Քալիֆոռնիա Քուրիեր** անգլերէն թերթի խմբագիր Հարութ Սասունեանը իր յօդուածներից մէկում գրում է. «ԱՄՆ կառավարութեան բոլոր երեք մարմիններն էլ՝ նախագահը, օրէնսդիր մարմինը, Ներկայացուցիչների պալատը եւ դատական իշխանութիւնները պաշտօնապէս

հաստատել են, որ Հայոց եղեռնը իսկապէս գեոցիդ է: ԱՄՆ Գործադիր մարմինը առաջին անգամ Հայոց ցեղասպանութեանը անդրադարձաւ 1951 թ.՝ Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ Արդարադատութեան միջազգային դատարան ներկայացուած առանցքային փաստաթուղթերով: Հոն կը նշուի. Յեղասպանութեան համաձայնապարտութեան միջազգային դատարան գործողութիւններու կիրառումի հետեւանք է, որ կատարուած է որոշ երկրներու մէջ մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը, եւ անոր ընթացքին, կրօնական, ցեղային եւ ազգային փոքրամասնութիւններու հետեւորդ խմբեր ենթարկուած են կանխամտածուած ոչնչացման սպառնալիքի եւ ոչնչացման: Յեղասպանութիւն երեւոյթը գոյութիւն ունեցած է մարդկային ամբողջ պատմութեան ընթացքին: Հոռմէացիներու կողմէ քրիստոնեաներու հալածանքը, թուրքերու կողմէ հայերու ջարդը, նացիներու կողմէ միլիոնաւոր հրէաներու եւ լեհերու կոտորածը ցեղասպանութեան վառ օրինակներ են»:

2. Մեծ եղեռնը ընդունած աշխարհի երկրորդ պետութիւնը Ուրուգուայն էր 1965 թուին:

3. Հ. Սասունեանը նշում յօդուածում շարունակում է. «Գործադիր մարմինին կողմէ Հայոց ցեղասպանութեանը երկրորդ անդրադարձը կատարած է նախագահ Ռանըլտ Ռիկընը՝ 1981 թ. 22 ապրիլին, թիւ 4838 նախագահական հռչակագիրով, ուր կը նշուի. «Ասկէ առաջ պատահած հայերու ցեղասպանութեան նման, ու անոր հետեւած քամայտջիացիներու ցեղասպանութեան, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ ազգերու դէմ հալածանքներուն նման, ողջակիզումի դասերը պէտք չէ երբեւէ մոռացուին»: Իսկ Միացեալ Նահանգներու կառավարութեան օրէնսդիր մարմինը ընդունած է երկու որոշումներ, որոնք կը հաստատեն Հայոց ցեղասպանութեան, եւ անոր հետեւած քամբոջիացիներու ցեղասպանութեան, ինչպէս պատմական փաստեր: Առաջին որոշումով, որ հաստատուած էր 8 ապրիլ 1945-ին՝ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան կողմէ, 24 ապրիլ 1975 թուականը նշուեցաւ իբրեւ «Յիշատակման օր՝ ցեղասպանութեան բոլոր զոհերու, յատկապէս՝ հայկական ծագումով անհատներու, որոնք 1915 թ. ցեղասպանութեան զոհ դարձան»: Երկրորդ որոշումով, որ հաստատուած էր 10 սեպտեմբեր 1984-ին՝ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան

\* Հայոց ցեղասպանութեան խոշորագոյն մասնագէտ, «Կահագն Տատրեանի կարծիքով Մեծ եղեռնի գլխատըր կազմակերպիչները եղան ցեղասպանութեան ծրագիրը կազմած Թուրքիայի Իրքիհատ կուսակցութեան 1911-1919 թթ. կեդրոնական կոմիտէի երեք անդամները՝ դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, բժիշկ Նազըմը եւ «Թուրք ջարդարարներու գաղափարախօսը՝ Չիւս Կէրալիը»:

Այս երեքը կեդրոնական կոմիտէին մէջ թիւր մը կազմեցին եւ ես մինչեւ հիմա համոզուած եմ, որ նոյնիսկ ամենագործ նկատող էնվեր եւ Թալատը ստիպուեցան ենթարկուիլ այս երեք անձներու հեռու յիշող մեծ դեր կատարեցին ցեղասպանութեան կազմակերպութեան մէջ»: Եղեռն-կոտորածում իսլայտական պարտութեամբ Ստամբուլ փախած տասնեակ յատկապէս 1912 թ. բաղկանեան պատերազմային դիրքները: Մէկ այլ առիթով «Կահագն Տատրեանը գրում է. «1912 թ. աշնան տեղի ունեցող Պալատում է Հայկական Հարցին ուղեկցող տագնապներուն հետ. նոյնիսկ կարելի է ըսել, որ այդ պատեմէջ... Առաջին անգամ ըլլալով մոլեռանդօրէն հայատեաց Իրքիհարականներ, բժիշկներ Նազըմ եւ Բաքիր, տիրական դիրք մը գրաւեցան Կեդրոնական կոմիտէին մէջ: Այս դիրքը այլ տեղի գորացաւ եւ ամրացաւ շնորհիւ բոլոր ազգայնասպաշտ... նոյն գաղափարախօսութեան ուսիլիոյ՝ Չիւս Կէօրազեմը» գաղափարին, որ Էշր-Էշիփի շրջանին Իրքիհատի բարուն կերպով որդեգրած կուսակցութեան ծրագրին հիմնական կէտերէն մին դարձաւ»<sup>76</sup>:

կողմէ, 24 ապրիլ 1985 թ. ճշդունցաւ «Յիշատակման օր՝ ցեղասպանութեան բոլոր զոհերուն, յատկապէս 1915-1923 թուականներուն թուրքիոյ մէջ կատարուած մէկուկէս միլիոն հայ բնակչութեան ցեղասպանութեան զոհերուն»: Ներկայացուցիչներու տունը նաեւ ընդունեց Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ երկու յատուած՝ 1996 եւ 2004 թուականներուն, արտաքին գործառնութիւններու յատկացման վճիռներով: Միացեալ Նահանգներու կառավարութեան երրորդ մարմինը՝ դատական իշխանութիւնը, առնուան երեք դաշնակցային դատարաններու կողմէ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ վճիռ կայացուցած է: Տէյվիտ Սաութըրը Դատական իշխանութեան կողմէ Հայոց ցեղասպանութեան վերաբերող առաջին անդրադարձը՝ 11 օգոստոսի 2010 -ին առաջին շրջանի վերաքննիչ դատարանի երեք դատարանի կազմով միաձայնութեամբ ընդունուած վճիռն էր: Միացեալ Նահանգներու գերագոյն դատարանի նախկին դատաւոր Տէյվիտ Սաութըրի կողմէ գրուած որոշումին մէջ դատարանը մերժեց ամերիկեան-թրքական խումբի պահանջը այն մասին, որ Մետեչուսեցի կրթութեան հարցերով յանձնաժողովին կողմէ հրապարակուած ուսումնական ուղեցոյցին մէջ, որ բացայայտօրէն կը վերաբերի Հայոց ցեղասպանութեան, պետք է ներառուէր «Ցեղասպանութեան հակադրուող» յղումներ: Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ երկրորդ դատական գործը 26 յունուար 2011 -ին դաշնակցային դատաւոր Քոլին-Քոթելիի՝ Ուաշինկթընի մէջ Հայոց ցեղասպանութեան քանգարանի եւ յուշարձանի գործով վճիռն էր: Իր որոշման ներածական պարբերութեան մէջ դատաւոր Քոլըր-Քոթելի մէջբերեց Ատուֆ Հիթլըրի սոսկալի բառերը. «Ո՞վ, ի վերջոյ, այսօր կը խօսի հայերու ոչնչացման մասին»: Ան բացատրեց, որ Հիթլըր նկատուի ունէր Համաշխարհային Ա պատերազմի ժամանակ իրենց պատմական հողերուն վրայ ապրող հայկական բնակչութիւնը ոչնչացնելու նպատակով Օսմանեան թուրքիոյ կառավարութեան ի գործ դրած բաւական յաջող ջանքերը, որոնք այսօր յայտնի են որպէս «Հայոց ցեղասպանութիւն»: Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ դատական երրորդ Քոլին-Քոթելի յղումը կատարուած է 3 մայիս 2012 -ին, երեք դատարանի կազմով հանդէս եկող ութերորդ շրջանի վերաքննիչ դատարանի կողմէ, երբ անիկա մերժեց Ամերիկայի թրքական համախմբման հայցը՝ ընդդէմ Մինըսոթա նահանգին: Դատաւորները,

միաձայնութեամբ, ուղղակի եւ առանց որակումներու անդրադարձան Հայոց ցեղասպանութեան՝ զայն նկարագրելով որպէս «Համաշխարհային Ա պատերազմի ժամանակ թուրքերուն կողմէ կատարուած հայերու ցեղասպանութիւն»: Միացեալ նահանգներու կառավարութեան երեք անկախ մարմիններն ալ, վերահաստատելով Հայոց ցեղասպանութեան փաստը՝ Միացեալ Նահանգները կը դնեն իր արդարացի տեղը՝ շարքին մէջ այն առաքինի ազգերուն, որոնք ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը: Փաստօրէն բազմաթիւ առումներով, Միացեալ Նահանգները Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու հարցին մէջ ունի շատ աւելի համապարփակ դիրքորոշում, քան բազմաթիւ այլ երկրներ, որոնք այս հարցն վերաբերեալ օրէնսդրական որոշում ընդունած են պարզապէս<sup>77</sup>:

4. 1915 թ. Հայոց ցեղասպանութիւնը 1965 թ. միաձայնութեամբ ընդունեց, ճանաչեց եւ դատապարտեց նաեւ Հելսինքիում կայացած՝ Խաղաղութեան համաշխարհային վեհաժողովի եզրափակիչ նիստը:

5. 1985 թ. օգոստոսի 29-ին ՄԱԿ-ի մարդու իրաւունքների յանձնաժողովի՝ Խտրականութեան կանխարգելման եւ փոքրամասնութիւնների պաշտպանութեան ենթախանձնաժողովի «Ցեղասպանութիւնը կանխելու եւ պատժելու մասին» զեկոյցում թուրքիայի կողմից 1915 թ. հայոց սպանող որակեց ցեղասպանութիւն:

6. 1978 թ. յունիսի 18-ին Եւրախորհրդարանի ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեռի 2-րդ կէտը արձանագրում է. «Օսմանեան կայսրութեան մէջ հայ բնակչութեան հանդէպ 1915-1917 թթ. գործադրած ողբերգական իրադարձութիւնները, համաձայն ՄԱԿ-ի Գլխատր ասամբլէայի 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Ցեղասպանութեան գործողութիւնները կանխելու եւ դրա համար պատժի մասին» կոնվենցիայի, հանդիսանում է ցեղասպանութիւն»:

7. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 1983 եւ 1989 թթ. մայիսին կայացած խորհրդաժողովներում հայերի ցեղասպանութեան մասին ընդունուեց որոշում, որով ճանաչուած է նաեւ սփիւռքահայերի հայրենիք վերադառնալու իրաւունքը: Այսպիսով, Հայոց ցեղասպանութիւնը ներկայումս ճանաչել է ՄԱԿ անդամ աշխարհի 20-ից աւելի պե-

տութիւն: Միջազգային իրաւունքի արդի մի քանի դրոյթներ պատասխանատուութիւն են նախատեսում ոչ միայն ցեղասպանութիւն իրականացնելու, այլ նաեւ հերքելու համար: 1995 թ. յունիսի 21-ին Փարիզի առաջին ատեանի դատարանը, լսելով «Հակասեմիտիզմի եւ ռասիզմի դէմ միջազգային կառոյց»ի (International League against Racism and Anti-semitism) եւ «Ֆրանսիայում հայկական ընկերակցութիւնների համախմբում»-ի (Forum of Armenian Association in France) միացեալ հայցն ընդդէմ Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը վիճարկած Բերնարդ Լիլիսի, իր կայացրած վճռով դատապարտեալին պարտաւորեցրեց հայցորներից իւրաքանչիւրին որպէս բարոյական վնաս վճարել մէկական ֆրանկ եւ «Լը Մոնդ» քերթում հերքում տպագրել Հայոց ցեղասպանութիւնը հերքող յայտարարութեան համար: 8.Յեղասպանութեան հերքումը նախ 1987 թ., ապա՝ 2008 թ. նոյեմբերի 28-ին ամրագրեց նաեւ Եւրամիութեան «Արդարադատութեան ու Ներքին գործերի խորհուրդ»-ը՝ իր ընդունած «Ռասիզմի եւ այլատեսացութեան որոշ դրսետրումների դէմ պայքարի մասին» որոշման մէջ: Եւրամիութեան բոլոր անդամ պետութիւնները պէտք է այդ որոշումը համապատասխանեցնեն իրենց ազգային օրէնսդրութիւններին եւ ցեղասպանութիւնը հերքող անձինք պէտք է ենթարկուեն քրեական պատասխանատուութեան: Օրինակ, նշուած դրոյթների վրայ հիմնուելով, մի քանի երկրներ (Շվեյցարիա, Ուրուգայ, Արգենտինա) արդէն Հայոց ցեղասպանութեան հերքումը ճանաչել են ցեղասպանութեան անբաժանելի մաս՝ համարելով քրեական յանցագործութիւն: Այսպէս՝ 2001 թ. յունուարի 29-ին Ֆրանսիայի նախագահը օրէնքով հաստատեց 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի, իսկ 2000 թ. նոյեմբերի 7-ին Ծերակոյտի ընդունած Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու որոշումները: Դրանից յետոյ Ֆրանսիայի հայ համայնքը յատուկ խնդրագրով կառավարութիւնից պահանջեց հրեաների ողջակիզումը ժխտողների համար սահմանուած քրեական օրէնքի նման Հայոց ցեղասպանութիւնը ժխտողների համար Ֆրանսիայում նոյնպէս սահմանել դատական պատիժ՝ 45,6 հազար եւրոյի տուգանք եւ 5 տարուայ ազատազրկում: Ֆրանսիայի Ազգային ժողովը 2006 թ. հոկտեմբերի 12-ին վաւերացրեց Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծը եւ հաստատելու համար ուղարկեց Ծերակոյտ: Սակայն

Սէնատը երկարատեւ քննարկումներից յետոյ Թուրքիայի ճնշմամբ օրէնքի հաստատումը սառեցրեց:

9.2008 թ. նոյեմբերի 28-ին Եւրոպական միութեան Արդարադատութեան եւ ներքին գործոց խորհուրդը ընդունել է «Ռասիզմի եւ այլատեսացութեան որոշ դրսետրումների դէմ պայքարի մասին» որոշում, որը Եւրախորհրդի բոլոր անդամ պետութիւններին յորդորում է իրենց ազգային օրէնսդրութիւնները համապատասխանեցնեն նշուած որոշմանը, որի դրոյթների համաձայն, ցեղասպանութիւնը հերքողները ենթակայ են քրեական պատասխանատուութեան: Շվեյցարիան դեռեւս 2007-2008 թթ. Թուրքիայի Աշխատատրական կուսակցութեան նախագահին եւ երեք այլ անդամների պատժեց Հայոց ցեղասպանութիւնը հերքելու մեղադրանքով:

Ֆրանսիայի Ազգային ժողովը 2011 թ. դեկտեմբերի 22-ին ձայների մեծամասնութեամբ ցեղասպանութիւնը ժխտելու համար սահմանեց մէկ տարուայ կալանք եւ 45 հազար եւրո տուգանք: Օրինագիծը 2012 թ. հաստատեց նաեւ Ծերակոյտը (Սէնատ), որը օրէնքի ուժ պիտի ստանար Ֆրանսիայի նախագահի ստորագրութիւնից յետոյ: Սակայն 2012 թ. փետրուարի 28-ին գումարուած Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը Ֆրանսիայի Ազգային ժողովի եւ Սէնատի հաստատած՝ «Յեղասպանութեան մերժումը քրեականացնող» օրինագիծը յայտարարեց հակասահմանադրական:<sup>78</sup> 2012 թ. գարնանը կայացած Ֆրանսիայի նախագահի ընտրութեանը մասնակցած երկու թեկնածուներն էլ իրենց նախընտրական ծրագրի մէջ մուծել էին Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրէնքի ընդունումը:

Հայոց ցեղասպանութեան համահայկական քարոզարշարը 2011 թուականից մտել է նոր փուլ: Հայաստանի Հանրապետութիւնը եւ Սփիւռքը արդէն սկսել են առաջնորդուել այն ուղիով, որ տարիներ շարունակ յորդորում էր ազգի սերուցքը. մեր քարոզարշարի հիմնական նպատակը Հայոց ցեղասպանութեան հերքումը պատժելի դարձնելն է Եւրամիութեան, ՄԱԿ-ի ու այլ կառոյցների, նաեւ պետութիւնների համար: Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս ՄԱԿ-ի լիիրաւ անդամ, բոլոր հիմքերն ունի Միջազգային դատարանի կանոնադրութեան 36-րդ յօդուածի 2-րդ կէտի եւ այլ օրինագծերի հիման վրայ ՄԱԿ-ի եւ այլ

դատարաններով դատ բանալ Թուրքիայի դեմ, քանի որ Թուրքիան Հայաստանի Հանրապետության տարածքների բռնագրաւումը շարունակում է, իսկ հայերից բռնագրաւումած գոյքի վրայ որեւէ ժամանակային սահմանափակում չկայ: Հետեւաբար՝ ՀՀ-ն կարող է դիմել միջազգային դատարաններ՝ հայերին իրենց հայրենիքում բնաջնջելու եւ բռնի տեղահանելու, մեր տարածքները զաւթելու, ցեղասպանում եւ գաղթեցում հայ բնակչութեան ամբողջ հողը եւ ունեցումները կողոպտելու, մեր տասնեակ հազարատը աղօթատները, խաչքարերն ու ձեռագիր մատեանները ոչնչացնելու, նաեւ՝ մօտ 100 տարի շարունակ Հայոց ցեղասպանութիւնն ուրացող, ժխտող ու հերքող բացայայտ քարոզչութիւն ծաւալելու, ուիլսընեան Հայաստանի Վան, Բիթլիս, Էրզրում եւ Տրապիզոն նահանգները 90 տարի բռնագաւթած պահելու, այդ 40 հազար քառ. մղոն բռնագրաւեալ տարածքների օգտագործման վարձավճարները վճարելուց հրաժարուելու, օսմանեան եւ այլ դրամատներում եղած հայերի դրամը, նրանցից բռնագաւթած ոսկու, քանկազին քարերի եւ այլ ունեցումների արժէքը չհատուցելու, ինչպէս նաեւ հայերի ցեղասպանութեանն անդրադարձող իր քաղաքացիներին պատժելու եւ այլ ոճիրների համար Թուրքիային պատասխանատուութեան կանչելու, պատժելու եւ վնասները հատուցելու հայցերով: Հիմնուելով 1954 թ. ընդունուած «Զինուած հակամարտութիւնների դէպքերում մշակութային արժէքների պաշտպանութեան մասին», 1972 թ. «Համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգութիւնը պահպանելու մասին», ինչպէս նաեւ «Յեղասպանութիւնը կանխարգիլելու եւ պատժելու մասին» եւ այլ միջազգային կոնվենցիաների վրայ, Թուրքիային դատի տալ կարող է նաեւ Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցին՝ **հայոց տասնեակ հազարատը եկեղեցիները, վանքերը, աղօթատները, խաչքարերն ու ձեռագիր մատեանները ոչնչացնելու անժխտելի ամբաստանութեամբ**<sup>79</sup>:

Գոհունակութեամբ արձանագրում եմ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ նորին ս. Օծութիւն Արամ Ա կաթողիկոսն իր 2012 թ. մի քանի ելոյթներով ու պաշտօնական Յայտարարութիւններով փաստօրէն սկսել է Թուրքիային պատասխանատուութեան կանչելու գործընթացը...

**ՀԱՐՑ - ՀՀ տնտեսական անկումն ու ապագայնացումը կասեցնելու գործածելի ճանապարհ կա՞յ այսօր:**

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Դարեր շարունակ ու յատկապէս այս 20 տարուայ տնտեսական, դաւանական, գաղափարական, կրթական, հոգեւոր-մշակութային զօրագրկումից եւ բարոյախեղումից ազատագրուելու ամենափորձուած միջոցը հազարամեակներ շարունակ մեզ համար եղել եւ մնում է մեր հոգեմշակութային մեծագոյն զօրութիւնը՝ հայոց ազգային գաղափարաբանութիւնը: Երկրի տնտեսական, ընկերային, քաղաքական եւ հոգեմշակութային աղէտը կասեցնելու հրամայականը մեզ պարտադրում է համախմբուել հայոց ազգային ուժերի ընտրանու հինգհազարամեայ գաղափարաբանութեան վրայ ձեւաւորուած հետեւեալ հիմնադրոյթների շուրջ:

### **1. Պետական կառոյց, հանրային սեփականութիւն, տնտեսութիւն**

ա. Հայաստանի Հանրապետութիւնը համայն հայութեանը պատկանող քաղաքական, բարոյական ու տնտեսական շահագործումներից զերծ ԸՆԿԵՐԱՅԻՆ պետութիւն է, որը պարտաւոր է ապահովել բնակչութեան արժանապատիւ ապրուստն ու ազատութիւնը:

բ. Հայաստանի Հանրապետութեան տէրը ՀՀ բնակչութիւնն է, ուստի **ՀՀ ռազմավարական ունեցումները** (հող, ջուր, վառելիք, էլեկտրականութիւն եւ այլն) **պէտք է ՀԱՆՐԱՅԻՆԱՅՈՒԻ, ՊԵՏԱԿԱՆԱՅՈՒԻ:**

գ. Առանց ազատականացման, տնտեսութեան զարգացումը բացառում է: Մարդիկ աներկիւղ որեւէ արժէք են ստեղծում այն դէպքում միայն, երբ վստահ են, որ այն իրենցից չի խլուի: Մինչդէռ ՀՀ ամբողջ տնտեսութիւնը կեդրոնացած է դրսի ելեւմտից եւ այլ կառոյցների կամակատար մի քանի ընտանիքի ձեռքը:

Մէկ օրինակ միայն. ՀՀ տնտեսութեան եւ հանքերի աւելի քան 80 տոկոսի տէրը Ռուսաստանն է, մնացածը տնօրինում են Եւրոպայի մի քանի պետութիւններ: Մինչդէռ ՀՀ քաղաքացիները բացարձակապէս զրկուած են տնտեսական-առեւտրային ինքնուրոյն-անվտանգ գործունեութիւն ծաւալելու հնարաւորութիւնից՝ էլ չեմ ասում ահարկու շահագործումների դեմ ինքնապաշտպանութեան տարրական հնարաւորութիւն ընձեռող անկախ արհմիութիւնների չը գոյութիւնը: Օտարներին

վաճառուած երկրի հանքավայրերը եւ բնական ամբողջ հարստութիւնը պէտք է վերադարձուի պետութեանը, որի դերն այստեղ հիմնականում պէտք է լինի մրցակցային ազատ տնտեսական միջավայրի արմատաւորումը, երկրի հողատարածքի եւ հանրային այլ սեփականութեան տնօրինումը եւ քաղաքացիների՝ տնտեսութեամբ զբաղուելու ազատութեան եւ մտատր սեփականութեան ու համոզմունքների պաշտպանութիւնը:

## 2. Արտաքին քաղաքականութիւն

ա. Համայն հայութեան եւ ՀՀ արտաքին քաղաքականութեան առանցքը հայրենատիրութիւնն է, որի պատմաիրաւական հիմքը 1920 թ. օգոստոսի 10-ի Սեւրի միջազգային դաշնագրի՝ Հայաստանին վերաբերող յօդուածները եւ Վուդրո Ուիլսոնի նոյեմբերի 22-ի Իրաւարար վճիռ-քարտէզը ի կատար ածելու հայցով Թուրքիայի դէմ միջազգային դատավարութիւն սկսելն է: Բ. Հայաստանի պետական անկախութեան վերականգնումը, որի շարժիչ ուժը պատմական հետեւեալ իրողութիւնն է. աւելի քան չորսեկէս հազար տարի հայութեան արտաքին քաղաքականութիւնը եւ մեր ազգի պատմական ճակատագիրը եղել եւ մնում է արեւելքի եւ արեւմուտքի տնտեսութիւնը եւ մշակոյթը հաւասարակշռող հայկական ինքնուրոյն անշփոթելի քաղաքակրթութիւնը: Այդ երկու քաղաքակրթութիւնները հաւասարապէս հարստացնող չեզոքութիւնը որեւէ երկրի հանդէպ հայութիւնը խմբագրել կարող է միայն հայոց Հայրենատիրութեան հանդէպ որեւէ երկրի դրսեւորած ժխտական քայլերի դէպքում...

## 3. Կրթութիւն, գիտութիւն

ա. Մեր երկրի մեծագոյն հարստութիւնը հայոց գիտամշակոյթն է, որը առաւելագոյնս զարգացնելով պէտք է հասցնենք միջազգային այնպիսի մրցակցային մակարդակի, որպէսզի ՀՀ գիտարտադրանքը դառնա երկրի ազգային եկամտի եւ շահոյթի աղբիւրներից մէկը:

բ. Հայոց դպրոցն ու հայոց լեզուն եղել են, կան ու պիտի լինեն համայն հայութեանը միաբանող-պահպանող անզուգադիւր պարգեւը: Իսկ հայոց մայր լեզուն արդի աշխարհաբարի գոյգ տարբերակների եւ մեր բարբառների ու խօսուածքների հիմք գրաբարն է: Հայոց գրական լեզուների եւ բարբառների ՄԱՅՐ լեզու եւ մեր լեզուամշակոյթի անբաղ-

դատելի գանձանակ գրաբարը մոռացումից փրկելն ու տիրոջը վերադարձնելը պէտք է դառնա հայոց պետականութեան գերագոյն խնդիրներից մէկը: Հետեւաբար՝ հայոց բոլոր դպրոցներում եւ ուսումնական այլ հաստատութիւններում արդի հայերէնի գոյգ տարբերակների հետ միասին, իբրեւ հայոց մայր լեզու, պէտք է պարտադիր դասաւանդուի գրաբարը: Ոչ մէկ կասկած, որ գրաբարի յարութիւնը դա հայութեանը վերաքրիստոնէացնելու-վերամկրտելու, այն է՝ հայ ազգի հոգեւորգոյնը վերսկսելու մի նոր հոգեշարժ է, որն իր էութեամբ, տարողութեամբ եւ նշանակութեամբ հաւասարագօրում է 301 թ. ազգովին քրիստոնէայ դառնալու եւ Ե դարում հայոց ոսկեդարը հրաշակերտելու հայ ազգի տիեզերահունչ ոգորումին:

Հայութիւնը 301 թ. ազգովին առաջինը վերականգնելով միաստուածութիւնը եւ քրիստոնէութիւնը դարձնելով ազգային-պետական դասնութիւն, մարդկութեանը ազատագրեց կռապաշտութիւն-բազմաստուածութիւնից՝ Դ-Ե դարերում դառնալով քաղաքակրթութեան առանցքն ու փարոսն աշխարհում:

գ. ՀՀ ամեն մի աշակերտ, առաջին դասարանից սկսած՝ պէտք է մշտակայ պարտադիր դասաժամերով ըստ ամենայնի տիրապետի արդի համացանց-ինտերնէտին:

դ. ՀՀ դպրոցներում հարկ է իրականացուեն կիրառական անգլերէնի այնպիսի խորացում դասընթացներ, որպէսզի դպրոցն աւարտած ամեն ոք կարողանա ազատօրէն հաղորդակցուել անգլերէնով եւ օգտուել անգլիալեզու գրականութիւնից:

## 4. Կռաավարման համակարգ, Մահմանադրութիւն եւ օրէնսդրութիւն

ՀՀ կռաավարական համակարգը հիմնատրապէս բարեփոխելու իրական քայլերը հետեւեալներն են.

1. ՀՀ-ն պէտք է ունենա երկրի բոլոր քաղաքացիների ԱՁԱՏՈՒ-ԹԻԻՆՆ

ապահովող, ամենքի համար հաւասարագօր ու անխտիր օրէնքներով եւ վճիռներով անկախ դատարան:

2. Երկիրը պատուհասի մէջ գլորած 1991-2012 թթ.

բարձրագոյն բոլոր ղեկավարները պէտք է դատի տրուեն:

3. ՀՀ նորընտիր Ազգային Ժողովը պէտք է ընդունի հետեւեալ որոշումները.

ա. Երկրում սահմանել 85 տոկոսանոց համամասնական ընտրակարգ.

բ. Պատգամատրների քանակը կրճատել կիսով չափ, իսկ ՀՀ նախարարութիւնները առնուազն մէկ երրորդով.

գ. ՀՀ-ում վերացնել Նախագահական վարչաձեւը.

դ. Ազգային Սահմանադրութիւն կազմելու համար հրաւիրել Սահմանադիր ժողով.

ե. 1991-2012 թթ. ընթացքում անարդար ու կեղծ դատավճիռներ կայացրած, հազարաւոր անիրատւած քաղաքացիներին անտեղի քանտարկած, նոյնիսկ ցկեանս դատապարտած բոլոր աչառու դատատրների գործերը դատաքննել եւ մեղաւորներին ենթարկել խստագոյն պատասխանատուութեան:

4. ՀՀ Սահմանադրութիւնը պէտք է կազմուի հայոց սահմանադրական մտքի աւելի քան 1700-ամեայ կոթողների հիման վրայ՝ Յովհաննէս Օձնեցու, Մխիթար Գօշի, Սմբատ Սպարապետի եւ այլոց հեղինակած իրաւական յուշարձաններից սկսած՝ Յակոբ Շահամիրեանի «Ռոբզայթ փառաց» Սահմանադրութեամբ վերջացրած:

Հայոց Սահմանադրութիւնը անպայման պէտք է ներառի հայերիս ինքնութեան եւ ազգային գաղափարաբանութեան հիմքերը կազմող՝ «Հանգանակ հայ ինքնութեան» Հայ, Հայ ժողովուրդ, Հայաստան, հայոց լեզու եւ այլ հետեւեալ սահմանումները:

Ա. ՀԱՅԸ ազգային ինքնատիպ նկարագիր, հոգեկան կերտուածք ու անշփոթելի խառնուածք ունեցող, ընտանիքը սրբութիւն դաւանող, հայերէն մտածող, հայախօս, մարդաբանական արմէնոյդ տեսակը բնորոշող, բարին, յառաջադիմութիւնն ու նորարարութիւնը ի ծնէ բնագոյորէն իր մէջ ազուցած անհատների ՄՇՏԱՐԴԻ հաւաքականութիւն է, որը Հայկական լեռնաշխարհում բնակուել կամ բնակուում է նախամարդ Արամի եւ Նոյ նահապետի շառաւիղ Թորգոմի որդի Հաբէթեան Հայկ Նահապետի ժամանակներից: Հայ են նաեւ ազգային լեզուից, դաւանանքից, մշակոյթից, իրենց հայրենիքից հեռացած բոլոր այն հայկազունները, ովքեր չեն ժխտում իրենց հայկական ծագումն ու հայկական քաղաքա-կրթութեան ժառանգորդ լինելը, Հայաստանը հայրում են իրենց հայրենիքը, հայերէնը՝ մայրենի լեզուն, Հայադաւա-

նութիւնը՝ ազգային կրօնը եւ բարենպաստ պայմանների առկայութեան դէպքում բնական են համարում հայութեան համախմբումը իր պատմական հայրենիքում՝ հայութեան կենսաբանական եւ բնախօսական բուն միջավայրում:

Բ. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ (համայն հայութիւնը) մեր անցեալ, ներկայ ու ապագայ սերունդների միացեալ, համագոյ ու անզատելի անբողջութիւնն է: Իսկ մեր ժողովրդի յանրժական առաջնորդը նրա չորսնկէսհազարամեայ սերուցք-ընտրանին է:

Գ. ՀԱՅԵՐԻՍ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԵՇ ՀԱՅՔՆ Է՝ իր տասնհինգ աշխարհներով (Բարձր Հայք, Ծովք, Աղձնիք, Տարսերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Այրարատ, Գուգարք, Տայք)՝ ներառեալ Փոքր Հայքը, Միջագետք Հայոցը՝ Մծքին կենտրոնով ու Կիլիկեան Հայաստանը՝ 1198-1219 թթ. տարածքներով:

Դ. ՀԱՅԵՐԻՍ խոսակցական լեզուն հայերէնի բարբառներն ու խօսուածքներն են, ՄԱՅՐԵՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ՝ լեզուների հիմք ԳՐԱԲԱՐԸ եւ արդի հայերէնի ԱՐԵԻՄՏԱՀԱՅԵՐԵՆ ու ԱՐԵԻԵԼԱՀԱՅԵՐԵՆ տարբերակները, որոնք Գրաբարի հետ միասին ՀԱԻԱՍԱՐԱԶՕՐ ԳՐԱԿԱՆ լեզուներ են:

Ե. Հայերիս ազգային կրօնը, որը մեր ժողովրդի համար Դ-Ե դարերից ի վեր եղել եւ մնում է ազգային գաղափարաբանութիւն, ս. Գրիգոր Լուսատրիչի հաստատած Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցու դաւանութիւնն է՝ Նոյ նահապետից եկող քրիստոնէական ճշգրիտ ու անբիծ վարդապետութիւնը՝ ՀԱՅԱԳԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ:

Հայադաւանութեան պատմահոգեբանական հիմքը Հայկ Նահապետի մեծագործութիւնն է, որով հայութիւնը մեզանից 4500 տարի առաջ սկզբնատրեց կոապաշտութեան դէմ մարդկութեան հոգեմարտը: Ասել է թէ՛ հայերս ոչ միայն սկզբից ի վեր եղել ենք ՄԻԱՍՏՈՒԱԾ, այլեւ սկզբնատրել ենք քա-

դաքակրթութեան պայքարը կռապաշտութեան ու բազմաստուածութեան դէմ, որը միաժամանակ նաեւ խղճի ազատութեան համար առաջին ազատամարտն էր մարդկութեան պատմութեան մէջ:

Ուստի այն իրողութիւնը, որ ս. Գրիգորի ձեռքով 301 թուականին հարիւր հազարաւոր հայեր միասնաբար մկրտուեցին, եւ որ քրիստոնէութիւնը առաջինը ԱԶԳՈՎԻՆ ու պետականօրէն հայերս ընդունեցինք, պատահական չէր, քանզի հայութեան համար «քրիստոնէութիւնը ոչ թէ հնգուստ էր», այլ «մարմնի գոյն»(ս. Վարդան): Եւ որ իբրեւ հայ ժողովրդի անշփոթելի իւրայատկութիւն, մեր ազգային ինքնութիւնն ու դաւանութիւնը նոյնական են: Հետեաբար՝ հայերս 301 թուականին, ազատագրուելով եկամտաւ բազմաստուածութիւնից, ոչ թէ հեթանոսութիւնից հրաժարուեցինք, այլ վերականգնեցինք մեր ազգային ճշմարիտ դաւանանքը, որի մշակն ու պահապանը 301 թ. ի վեր Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցին է:

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ** արեւմտեան եւ արեւելեան քաղաքակրթութիւնների խաչմերուկներում հազարամեակներ շարունակ մարտնչող **ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ՈՒ ԱՆՇՓՈԹԵԼԻ ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ** խտարանն է, համայն հայութեան հոգեւոր միասնութեան վեճը, հայ ազգի **ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻԶԸ**, որը հայոց պետականութեան հետ **ՄԷԿ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ԱՄԲՈՂՁՈՒԹԻՒՆ ՊԻՏԻԿԱԶՄԻ**, ինչպէս հոգին ու մարմինը:

Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցու դաւանութեան մէջ քաղաքացիութեան են հայ ժողովրդի պատմութիւնը, խառնուածքը, լեզուամտածոթութիւնը, աշխարհայեացքն ու բնատրութիւնը, ծեսերը, ասանդութիւնները, բարոյական, իրաւագիտական, իմաստագիտական ու գեղագիտական ըմբռնումները, բանահիւսութիւնն ու երգահիւսութիւնը, գրականութիւնը, արուեստները, մշակոյթն ու ՊԱՏՄԱԿԱՆ հոգեբանութիւնը: Այն մշակել եւ բիրտեղացրել են մեր ազգային սրբերը, հայոց մշակոյթի, գիտութեան, արուեստի ու գրականութեան երեւելի դէմքերը, մեր պետական, քաղաքական, իրաւական ու ռազմական մտքի մեծերը՝ Հայկ Նահապետից մինչեւ ս. Մահակ-ս. Մեսրոպ, հայոց Ոսկեդարն ու Արծաթադարը հրաշակերտած այրերից մինչեւ նոր ժամանակների հեղինակութիւնները:

**Չ. Հայադաւանութեանը ներհիւսուած է Հայկ Նահապետի հիմնած, Հայոց Ոսկեդարում ս. Թարգմանիչների, ս. Վարդանի եւ Մամիկոնեանների**

համակարգած-յետագայ դարերում լրացուած եւ Ի դարի առաջին կէտին Գարեգին Նժդեհի ու իր գաղափարակիցների վերականգնած, ամբողջացրած, զօրացրած ու նաեւ **ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ** անուանած հայոց ինքնապաշտպանական համակարգը՝ **ՈՒՆՏ ՄԱՄԻԿՈՆԵՒՅԸ**:

**Է. ՀԱՍԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ** երկրի բոլոր քաղաքացիների ազատախոհութեան, այսինքն՝ գաղափարախօսութեան, դաւանանքի եւ համոզմունքի ընտրութեան ազատութիւնը ապահովող սեփական արդար, **անխտիր** ու հաւասարազօր օրէնքներով գաղափարաքաղաքական, բարոյական ու տնտեսական շահագործումներից զերծ պետութեան մէջ իր ազգային դաւանանքի եւ մշակոյթի միջավայրում արժանապատիւ ու բարեկեցիկ կեանքով ազատօրէն բարգաւաճելն է ի կատարումն եւ ի խնդիր հայ ժողովրդի գերագոյն բաղձանքի՝ **ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ**:

**Ը. Հայութեան համազգային նպատակներին հասնելու ճանապարհը** հայոց Մասնա Ծոեր դիւցազնապատումի ռազմահոգեբանութիւնն է եւ Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցույ նուիրագործած՝ **ս. Օգոստինոսի** հետեւեալ բանաձեւը.

**ՄԻՈՒԹԻՒՆ՝ Ի ԿԱՐԵՒՈՐՍ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ՝ ՅԵՐԿԲԱՅԱԿԱՆՍ, ՍԷՐ՝ ՅԱՄԵՆԱՅՆԻ** (արեւոր խնդիրներում՝ միութիւն, վիճելի-թեական հարցերում՝ ազատութիւն, ամեն ինչում՝ սէր):

**Թ. Մամիկոնէից Տարօնականների ԱՂՕԹԸԸ**

**ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ, ՓՐԿԵԱ՝ ԶԱԶԳՍ ՀԱՅՈՅ  
ԵՒ ԺՈՂՈՎԵԱ Ի ՀԱՅՐԵՆԻՍ ՄԷՐ:  
ԱՐԺԱՆԱՅՈ՝ ԶՄԵՁ ԼԻՆԵԼ ՏԷՐ  
ԱՂՕԹԱՏԱՆՑ ՄԵՐՈՅ, ԳԵՐԵՉՄԱՆԱՅ ՍՐԲՈՅ  
ՄԵՐՈՅ ԵՒ ՇԻՐՄԱՅ ՆԱԽՆԵԱՅ ՄԵՐՈՅ:**

(Տէր Աստուած, փրկի՛ր հայ ազգը եւ հաւաքի՛ր մեր հայրենիքում, մեզ արժանի արա տէր կանգնելու մեր աղօթատներին, սրբերի գերեզմաններին ու նախնիների շիրիմներին<sup>80</sup>.)





Նժդեհ, Պատկերագիրք, Երևան, 2011 թ., էջ 131:

45. Գարեգին Նժդեհ, Նորայայտ նամակներ, Երևան, 2011 թ., էջ 15, 34:
46. Գարեգին Նժդեհ, Նորայայտ նամակներ, Երևան, 2011 թ., էջ 40:
47. Գ. Նժդեհ, Նորայայտ նամակներ, Երևան, 2011 թ., էջ 32:
48. Գ. Նժդեհ, Նորայայտ նամակներ, Երևան, 2011 թ., էջ 42:
49. Գ. Նժդեհ, Նորայայտ նամակներ, Երևան, 2011 թ., էջ 10-11:
50. Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ դատը, Երևան, 1991 թ., էջ 213-214; Ռ. Համբարձումեան, Սեւրի դաշնագիրն ու Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռը Հայկական հարցը հետապնդելու նոր ռազմավարութեան հիմք, Պատմութիւն եւ մշակոյթ հայագիտական հանդէս, հտ. Ա, Երևան, 2011 թ., էջ 117-143; Ռ. Համբարձումեան, Հանգամակ հայ ինքնութեան, Երևան, 2012 թ., էջ 25-32:
51. Հայ ժողովրդի պատմութիւն, Գիտ. ակադ. հրատարակ., հտ VI, Երևան, 1981 թ., էջ 967; Երկանեան Վ., Պայքար հայկական նոր դարոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970 թ., էջ 187, 260; Ալկունի Է., Կովկասեան վերքեր, 1903 թ., ժրնն, էջ 42-43, 284
52. Борян Б.А., Армения, международная дипломатия и СССР, часть I, Москва-Ленинград, 1928, стр.268.
53. Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. VI, Երևան, 1981 թ., էջ 284; Լազեան Գ. Հայաստան եւ Հայ դատ, Երևան, 1991 թ., էջ 88-95; Իշխանեան Բ. Տաճկահայ խնդիրը եւ միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1906 թ., էջ 44-48; Ռուսաստանը եւ Հայոց ցեղասպանութիւնը, Փաստաթղթեր, Երևան, 2004 թ., էջ 32, 192; Борян Б.А. Армения, международная дипломатия и СССР, часть I, Москва-Ленинград, 1928, стр. 267-268; Գր.Чалхушьян, Армянский вопрос и армянские погромы в России, Ростов-на Дону, 1905, էջ 44-53, 74-77; Չալխուշեան Գ., Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին, 1923 թ., էջ 6; Լեռ, Անցեալից, Թիֆլիս, 1921 թ., էջ 111, 133, 301-302, 320; Համբարձումեան Ռ., Թուրք ընդհանրական, Երևան, 1990 թ., էջ 15-22; Դրօշակ ամսագիր, 1898 թ., ապրիլի 30, 1905 թ. բի 2; Միմոնեան Հրաչիկ, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003 թ., էջ 41-42, 39-49, 51-60, 80-83, գիրք II, էջ 7-8, 77-78, 88-93, 99, 349:
54. Ալկունի Է., Բողոքի ձայն, Պոսքըն, 1911 թ., էջ 15-24; Ալկունի Է., Կովկասեան վերքեր, ժրնն, 1903 թ., էջ 344; Ալկունի Է., Դէպի կոի(Հայկական վշտագրութեան մէկ էջ), ժրնն, 1904 թ., էջ 9-18, 42-78:
55. Մխիթար Վարդապետ, Հայերը Ռուսաստանում, ս. Էջմիածին, 1906 թ., էջ 75-76, 37 եւն; Գէորգ Մեսրոպ, Հայաստան, աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետներով, Կ. Պոլիս, 1919 թ., էջ 67, 71-72, 72:
56. Հայ ժողովրդի պատմութիւն, հտ VI, Երևան, 1981 թ., էջ 350-352, 354-ս355, 412); 9-18; Ալկունի Է., Բողոքի ձայն, Պոսքըն, 1911 թ., էջ 15-24; Ալկունի Է., Կովկասեան վերքեր, 1904 թ., էջ 201-250, 252-268; Հրաչիկ Միմոնեան, նշ. աշխատ., գիրք I, էջ 787-788:

57. Ալկունի Է., Հայաստանը եւ Հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942 թ., էջ 81; Հ Ղազարեան Հայկ, Սեւրի պայմանագիրը եւ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաքաժանման վերաբերեալ, հտ. Ա, Երևան, 2012 թ., 553-554:

58. Պարսամեան Վ., Յարիզմի գաղութային քաղաքականութիւնը Հայաստանում, Երևան, 1940 թ., էջ 113-115:

59. Պարսամեան Վ., Յարիզմի գաղութային քաղաքականութիւնը Հայաստանում, Երևան, 1940 թ., էջ 111-114; Պարսամեան Վ., Գրիբոյեդովը եւ հայ-ռուսական յարաբերութիւնները, Երևան, 1974 թ., էջ 138-139, 102-104, 138-139; Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ դատը հայ հայեւոս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991 թ., էջ 3-4, 184-185:

60. Վահագն Տատրեան, Հայոց ցեղասպանութեան ժխտման բուրբական հիմնական փաստարկները, Երևան, 2005 թ., էջ 10-23, 18-20; Vahakn N. Dadrian, The Historical and Legal Interconnections Between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice, yale Journal of International Law 23, no 2(Summer 1998): 504; Journal of Law and Public Policy-ի 5-րդ հատորի Ա բիւիւն մէջ լոյս տեսաւ փրոֆ. Վահագն Տատրեանի նոր ուսումնասիրութիւնը historical, political and Legal Aspects; «Նոր օր» շաբաթաթերթ, 2011 թ. սեպտեմբերի 8, էջ 5:

61. Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ դատը հայեւոս յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 3-4, 181-185; Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ, 1914-1918 թթ., էջ 78.:

62. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Երևան, 1993 թ., էջ 15-16:

63. Ղազարեան Հայկ, Սեւրի պայմանագիրը եւ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաքաժանման վերաբերեալ, հտ. Ա, Երևան, 2012 թ., էջ 9-10, 120-123:

64. Վահագն Տատրեան, Ալկունի հայկական ցեղասպանութեան մասին, Պուէնոս Այրէս, 2004 թ., էջ 13-15:

65. Ղազարեան Հայկ, Սեւրի պայմանագիրը եւ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաքաժանման վերաբերեալ, հտ. Ա, Երևան, 2012 թ., էջ 411-560:

66. Հ. Ղազարեան Հայկ, Սեւրի պայմանագիրը եւ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաքաժանման վերաբերեալ, հտ. երկրորդ, Երևան, էջ 301-309; Ադոնց Նիկողայոս, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989 թ., էջ 29:

67. M. J. Somakian, Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920, London, 1995, p. 229; [www.turkey.mid.ru](http://www.turkey.mid.ru):

68. Ա.Մանուկեան, Զաղարական բռնածնումները Հայաստանում 1920-1953 թթ., էջ 33, 114-129, 218-241 եւն; Վիրապեան Ա. Հայաստանը Ստալինից մինչեւ Խրուշչով, Երևան, 2001 թ., էջ 155-197; Հրք բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների համար, Երևան, 2012 թ., էջ 685; [www.turkey.mid.ru](http://www.turkey.mid.ru) :

69. Timothy Snyder, Bloodlands. Europe between Hitler and Stalin, 2010:

70. Иванов С. П. Армейский Штаб фронтовой, Москва, 1990 г., стр. 14, 20, 26-29:

Арутюнян Кл., *Участия армянского народа в великой отечественной войне Советского Союза*, Երևան, 2004 թ., էջ 14-15:

71. Арутюнян Кл., *Армянский народ в Великой отечественной войне Советского Союза*, րևան, 2012 թ., էջ 12-13:

72. Համբարձումեան Ռ., Սերի դաշնագիրն ու Վ. Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայկական հարցը հետապնդելու նոր ռազմավարութեան հիմք, Երեւանի պետհամալսարանի «Պատմութիւն եւ մշակոյթ» Հայագիտական հանդէս, քիւ Ա, Երեւան, 2011 թ., էջ 135-136:

73. Ա. Փափազեան, Հայոց ցեղասպանութիւնը ըստ երիտրորքերի ղեկավարութեան փաստաթղթերի, Լոս Անջելէս, 2005 թ., էջ 22-23, 24-39: Վահագն Տատրեան, Հայոց ցեղասպանութեան շխտման բուրբական հիմնական փաստարկները, Երեւան, 2005 թ., էջ 26-28, 31, 34 ; Vahakn N. Dadrian, *Genocideas a Problem of National and International Law; The World War I Armenian Case and Ist Comtemporary Legal Ramifications, Yale Journal of international Law 14, no 2. (Summer 1989), 297; Vahakn N. Dadrian, The Hiatorical and Legal Interconnections Between hhe Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Jostice, yale Journal of International Law 23, no 32 (Summer 1998), p. 551, 297, 304-307, 563:*

74. Իրաւարար վճիռը 2011 թ. բնագրով Երեւանում հրատարակել է քաղաքագէտ Ա. Պապեանը. *Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia, Washington, November 22, 1920, (prepared by Ara Papiian). Yerevan, 2011, pp. 98-112; Ջոն Կիրակոսեան, Ռ. Խահակեան, Սան Ռէնոյի կոնֆերանսը եւ Հայաստանը, փաստաթղթերի անգլերէնից հայերէն թարգմանեց Վ. Դիլոյեանը, Բանբեր Երեւանի արխիւների, 1972 թ., քիւ 2, էջ 19-66; Ղազարեան Հայկ, Սերի պայմանագիրը եւ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերեալ, հտ. Ա, Երեւան, 2012 թ., էջ 298-310, 345-368, 716-727, հտ. Բ, Երեւան, 2012 թ., էջ 145-177, 239-246, 367-374:*

75. Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում, խմբագիր՝ պրոֆ. Ջոն Կիրակոսեան, Երեւան, 1972 թ., էջ 676-677:

76. Վահագն Տատրեան, Ալկարկներ հայկական ցեղասպանութեան մասին, Պուէնոս Այրէս, 2004 թ., էջ 17-18 ; Վահագն Տատրեան, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական բննարկումներով, Պայքար, 1995 թ., էջ 119:

77. *The California Courier, Hounis 7, 2012; Երեք մարմինները ճանչել են Հայոց ցեղասպանութիւնը, «Հայոց աշխարհ» օրաթերթ, 2012 թ. յունիսի 13, էջ 6; Միացեալ Նահանգներու կառավարութեան երեք մարմիններն ալ կը ճանչնան Հայոց ցեղասպանութիւնը Ramgavar Mamoul July 23, 2012: Ամբողջական տեղեկատուութիւնների մի եզակի հաւաքածոյ հանդիսացող Հարութ Սասունեանի նշածս յօդուածը Միջազգային դատարանը 2012 թ. յունիսի 7-ին զետեղել է իր պաշտօնական կայքում, որով Միջազգային դատարանը փաստօրէն առաջին անգամ ուշադրութիւն է սեւեռում Արմէնոցի մասին հայկական պաշտօնական տեսակէտի վրայ...*

78. «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, 2011 թ. հոկտեմբերի 8, էջ Նոյն օրաթերթի՝ 2011 թ. դեկտեմբերի 23-ի քիւր, էջ 1; Նոյն օրաթերթի՝ 2012 թ. փետրուարի 29-ի քիւր:

79. Ռ. Համբարձումեան, Թուրքիայի հետ ՀՀ միջպետական յարաբերութիւնների հիմքը Սերի պայմանագիրն է, «Հայոց աշխարհ»թերթ , 2009 թ. յունուարի 29, էջ 7; Նոյն յօդուածը՝ «Նոր հայաստան». Գլենդէլ, 2009 թ., փետրուարի 7, քիւ 22, էջ 1, 3-5; Նոյնը՝ «Նոր կեանք» շաբաթաթերթ, ԱՄՆ, 2009 թ. հոկտեմբերի 29 , էջ 12, 29; ՀՀ-ն Նոյնը՝ «Նոր կեանք» շաբաթաթերթ, 2009 թ. ապրիլի 3; պէտք է դիմի ՄԱԿ միջազգային դատարան, «Գրական բերք», 2009 թ. ապրիլի 3; Նօրին ու Օծութիւնը ...կարողիկոսաց, ՀՀ նախագահին, համայն հայութեանը, «Նոր կեանք», 2010 թ. փետրուարի 25, էջ 16; Յորդորակ Ազգին, Վիլսոնեան Իրաւարար վճիռի մասին, «Նոր կեանք, 2010 թ. սեպտեմբերի 30; Սերի դաշնագիրը եւ Վ. Ուիլսոնի Իրաւարար վճիռը՝ Հայկական հարցը հետապնդելու նոր ռազմավարութեան հիմք, «Նոր կեանք », ԱՄՆ , 2010 թ. դեկտեմբերի 30; Սերի դաշնագիրն ու Վ. Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայկական հարցը հետապնդելու նոր ռազմավարութեան հիմք, Երեւանի պետհամալսարանի « Պատմութիւն եւ մշակոյթ »հայագիտական հանդէս, քիւ Ա, Երեւան, 2011 թ., էջ 117-143: Հանգանակ հայ ինքնութեան, գիրք, Բ հրատարակութիւն, Երեւան, 2012 թ., էջ 16-27, 102 :

80. Ռ. Համբարձումեան, Հանգանակ հայ ինքնութեան, Երեւան, 2012 թ., էջ 3-6:

**ԿԵՆՍԱՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՀԻ**

- 1886 թ. յունուարի 20 (նոր տոմարով փետրուարի 1) *ծնունդ Նախիջեանի գաւառի Կզնուտ գիւղում:*
- մօտ 1894 -1895 թթ. *ուսումնառութիւն Կզնուտի ծխական դպրոցում:*
- 1896 թ. *հայկական դպրոցները փակուելու պատճառով սովորել է նորաբաց պետական (ռուսական) ծխական դպրոցում:*
- մօտ 1896-1902 թթ. *սովորել է Նախիջեանի «քարձրագոյն տարրական» կոչող եօթնամեայ ռուսական դպրոցում:*
- մօտ 1902-1903 թթ. *սովորել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում:*
- 1903 թ. *Նժդեհ ծածկանուան անդրանիկ յիշատակութիւնը:*
- 1906-1907 թթ. *սովորել է նախ ՀՅԴ հիմնած՝ Սոֆիայի պահեստի սպայից Կնեաժետյի, ապա Սոֆիայի ռազմական վարժարաններում:*
- 1907 թ. *վերադարձել է Կովկաս՝ Մերաստացի «Մուրատի հայդուկային խմբի հետ Հայաստան անցնելու համար»:*
- 1907թ. նոյեմբեր *Ընդունուել է ՀՅԴ շարքերը:*
- 1908 թ. օգոստոս *որպէս սպայ ուղարկուել է Պարսկաստան՝ պարսկական յեղափոխութեանը մասնակցելու համար:*

- 1908 թ. օգոստոսի վերջ *վերադարձել է հայրենի գիւղ, տեղում կազմակերպել ՀՅԴ խումբ:*
- 1908 թ. սեպտեմբերի 6 *Վերին Ազա գիւղում ձերբակալում, արգելափակում է Ջուղայում:*
- 1909թ. ապրիլ -1910 թ. *եղել է Նախիջեանի բանտում:*
- 1909 թ. *իրեն ձօնում է «Արագի ափին ծնած ընկեր» տողով սկսուող երգը:*
- 1910 թ. հոկտեմբերի կէսից մինչև առնուազն հոկտեմբերի 22-ը *հարցաքննուել է Նովոչերկասկի բանտում, այնուհետև կարճ ժամանակով՝ նաև Պետերբուրգի բանտում:*
- 1912թ. փետրուարի 23-25 *Պետերբուրգում լսում է ՀՅԴ գործի՝ Նժդեհին վերաբերող մասը:*
- մօտ 1912 թ. մարտ *ազատում է բանտից, անցնում Բուրլարիա:*
- 1912 թ. սեպտեմբերի 23 *անդամագրում է բուրլար կամաւորական բանակին:*
- 1912 թ. հոկտեմբերի 2 *բուրլար բանակի կամաւորական միաւորման հրամանատարից հրաման է ստանում հայ կամաւորներից կազմել հայկական վաշտ:*
- 1912 թ. հոկտեմբերի 8 *կազմում է հայ կամաւորների 229 հոգիանոց վաշտը, որը յետագայում համալրում է եւս 42 կամաւորներով:(ներառեալ Գ. Նժդեհն ու Անդրանիկը):*
- 1912 թ. հոկտեմբերի 8 *Սոֆիայի հայոց եկեղեցում հայ կամաւորների դրօշը օծելու արարողութեան ժամանակ ճառ է արտասանում, որը*

- վերջացնում է հետևեալ խօսքերով.  
«Մեր դրօշակի առաջին օծումը կատարուեց այստեղ, եկեղեցական արարողութեամբ, իսկ երկրորդ եւ իսկական օծումը կը կատարուի կուի դաշտում, բնդանօրների եւ հրացանների նուազի տակ»:
- 1912 թ. հոկտեմբերի 20  
պաշտօնական հրամանով նշանակում է «Երկրորդ (հայկական)» վաշտի հրամանատար:
- 1912 թ. նոյեմբերի 4  
հայկական վաշտի հետ հերոսանում է Ռոզուն Համիդլերի կռուին, ուր արտասանում է իր հրաշունչ ճառերից մէկը:
- 1912 թ. նոյեմբերի 15, Մեհրամլի գիւղ  
Անդրանիկի ու հայ կամատրական վաշտի հետ կատարում է մեծ սխրագործութիւն՝ վճռելով ճակատամարտի յաղթական ելքը: Բուլղարական կամատրական բանակը թուրքերից գերի է վերցնում 10 հազար զինուոր, 242 սպայ, երեք գնդապետ, մէկ փաշայ:
- 1912 թ., հաւանաբար նոյեմբերի 16  
Մեհրամլի յաղթանակի առթիւ Ռոտոսթօ բաղաթի հայոց եկեղեցում կազմակերպուած արարողութեան ժամանակ պարգևատրում է «Սպայական քաջութեան խաչ»-ով, արտասանում հոգեցունց մի ճառ:
- 1912 թ., հաւանաբար դեկտեմբեր ամսի վերջից  
կարգում է մակեդոնացիներից բաղկացած կամատրական վաշտի հրամանատար:
- 1913 թ. հաւանաբար ամառ  
Սոֆիայում նշանում է Էփիմէ Սուրիասեանի հետ:

1913 թ. հաւանաբար աշուն

մեկնում է Ռումինիա:

1914 թ. հոկտեմբերի սկիզբ

Անդրանիկի եւ բազմաթիւ կամատրների հետ Բուլղարիայից ժամանում է Թիֆլիս:

1914 թ. հոկտեմբերի 13

գորագնդի հրամանատարի օգնականի պաշտօնով անդամագրում է հայկական կամատրութեանը:

1915 թ. սկիզբ

ռուսական հրամանատարութիւնը շեշտում է Նժդեհի քաջութիւնն ու հրամանատարական բացառիկ ունակութիւնները:

1915 թ. ապրիլի 15

300 հոգիանոց ջոկատով միացել է կամատրական 2-րդ խմբին, նշանակուել հրամանատար Դրօշի օգնական: Այնուհետեւ նոյն պաշտօնով ընդգրկուել է Վարդանի գլխաւորաժ Արարատեան գորաջոկատ:

1915 թ. մայիսի 2

Բերկրիի կիրճում ցուցաբերած արտասովոր խիզախութեան ու քաջութեան համար ներկայացուել է սր. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանի:

1915 թ. մայիսի 5

Շէյխ-Կարայի ճակատամարտում դրսեւորած անօրինակ քաջութեան համար ներկայացում է Աննայի 4-րդ աստիճանի շքանշանի:

1915 թ. մայիսի 6

կամատրական 2-րդ խմբի հետ մտնում է Վան:

1915 թ. ապրիլի 2 - 1915 թ. յունիսի 8

մասնակցել է Վանի նահանգի Գեալարաշի, Բերկրիի, Շատախի, Մոկսի, Սպարկերտի եւ այլ վայրերի արշաւանքներին ու ճակատամարտերին:

1915 թ. յուլիսի 19

ռուսական հրամանատարութիւնը պորթպորտիկ Նժդեհին շնորհում է պորտուգիկի աստիճան:

1916 թ. մարտ

հայ կամատրական զնդերը ցրելու ռուսական ցարի հրամանագրի հրապարակման պահին եղել է Վարդանի գլխատրած 5-րդ կամատրական զնդի կազմում:

1916 թ. մայիսի 14

որպէս հրամանատարի օգնական, տեղափոխուել է հայկական կամատրական 1-ին խումբ. որի ժամանակատր հրամանատարն այդ ժամանակ Սմբատն էր:

1916 թ. յուլիսի 23 - յուլիսի 25

զօրավար Նազարբէկեանի ջոկատի կազմում մասնակցել է մարտերին, Մագրեադի կիրճում ցուցաբերած «առանձնայատուկ հերոսութեան» եւ «անօրինակ սառնասրտութեան ու անվեհերութեան համար» ներկայացուել Գեորգիեւեան 3-րդ եւ 2-րդ աստիճանի խաչերի:

1917 թ. մայիսի 12-ի դրութեամբ

եղել է Ալեքսանդրապոլի (Գիւմրի) գործադիր կոմիտէի անդամ եւ քաղաքային կոմիսար:

1917 թ. վերջ

երբ Ռուսաստան նահանջող ռուսական զօրքը թալանում էր Գիւմրի բերդի զէնքն ու զինամթերքը, իր շուրջ հաւաքելով մօտ 60 ուսանողների, ռուսներից գրաւում է բերդը, զինամթերքը յանձնում հայոց զօրքերին:

1917 թ.

Գիւմրիում հրատարակում է ազատամարտի հերոսներին նուիրած իր արձակ գեղօսների հաւաքածուն՝ «Դաշնակցութեան պանթէոն» վերնագրով:

1917 թ. մայիսի 14

ընտրուել է Հ.Յ. Դաշնակցութեան Գիւմրիի Կեդրոնական կոմիտէի անդամ:

1917 թ. յունիսի 1

Գիւմրիի գուսանների համար դասախօսութիւն է կարդացել, որից յետոյ ամբողջ դասիծը անդամագրուել է Հ.Յ. Դաշնակցութեանը, եւ հենց դասիծում էլ հիմնուել է Հ.Յ. Դաշնակցութեան Գիւմրիի «Աշուղ» կառոյցը, որի մէջ մտել են բազմաթիւ նշանատր գուսաններ:

1917 թ. յունիսի 9

Գողթանի Վերին Ազա գիւղում վարել է Վերին Ազայի, Ներքին Ազայի ու Դեր գիւղերի ընդհանուր ժողովը՝ բնակչութեանը կոչ անելով կազմակերպուել ու պատրաստուել ինքնապաշտպանութեան:

1917 թ. յունիսի 19

նոյնանման ժողով է անցկացրել Ազայի ծխական դպրոցում:

1917 թ. յունիսի 29

նոյնանման ժողով է գումարել Ջուղայում:

1917 թ. հաւանաքար ամառ

Ախալքալարում կազմատրել է կամատրական ջոկատ:

1917 թ. աշուն

ընտրուել է 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում կայացած Հայոց ազգային համախորհրդակցութեան 228 պատգամատրներից մէկը, ապա՝ Անդրանիկի, Աբրահամ Գիւլիսանդանեանի, Արսէն Շահմազեանի, Դրօյի, Ռուբէն Տէր-Մինասեանի եւ այլոց հետ ընդգրկուել «Ճակատի պահպանութեան եւ վտանգուած վայրերի ապահովութեան» ՀՅԴ 15-հոգիանոց յանձնաժողովում:

1917 թ. Սակաւաթի ուժերով օգնութեան է փութացել պաշարուած Կողբին, կոտորածից փրկել այդ շրջանի հայութեանը:

1918 թ. յունուարի 30 ելոյթ է ունեցել Երեւանի քաղաքային դահլիճում նախիջեւանցիների ու գող-բանցիների գումարած ժողովում:

1918 թ. Շերամի համահեղինակութեամբ Երեւանում տպագրում է «Զօրաշարժային կանոնադրութիւն» գրքոյկը՝ նուիրուած «ժայ քաջարի զինուորներին»:

1917-1918 թթ. շրջելով հայկական բազմաթիւ զիւղեր ու բնակավայրեր, ժողովրդին հաւաքում էր եկեղեցիների բակերում, ազդեցիկ ու սրտարոխ ճառերով կոչ անում ինքնապաշտպանութեան:

1918 թ. մայիս Հայաստանի անկախութեան նախօրեակին վարել է Ալաջայի կռիւները, որոնցով կարելիութիւն է ընձեռել «Էրզրում-Մարիդամիշ-Ղարսէն նահանջող հայկական զօրամասերին՝ անկորուստ անցնելու Գիւմրի»:

1918 թ. մայիսի 24 ճակատ յարդարելու նախաձեռնութիւնը վերցնելով ձեռքը՝ ոգեշնչել ու վարել է Ղարաքիլիսայի ճակատամարտը, վիրատրուել, ներկայացուել ամենաբարձր քաջութեան շքանշանի:

1918 թ. նոյեմբերի 30 ՀՀ կառավարութեան որոշումով նշանակուած է Նախիջեւանի «գաւառական կոմիսար»:

1918 թ. դեկտեմբերի 20 օգնութեան է հասնում մինչեւ Արարատ (Դաւալու) նահանջած հայկական զօրքին,

կռուի ամբողջ նախաձեռնութիւնը վերցնում է ձեռքը, փրկում հայոց բանակի չորրորդ գունդը, ճնշում Վեդիի թրքութեան ասպտամբութիւնները, անօրինակ խիզախութեան համար պարգեատրուած Վաղիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով:

1919 թ. փետրուար - օգոստոս

Ժառայել է հայոց բանակում, մասնակցել տարբեր կռիւների, ճնշել է թաթալագան խռովութիւնները:

1919 թ. առնուազն մարտի 30 - օգոստոսի 5

եղել է Գառնիի գումարտակի հրամանատար:

1919 թ. օգոստոսի 5

ՀՀ զինուորական նախարարը թիվ 2 հրամանով Նժդեհին շնորհում է կապիտանի կոչում:

1919 թ. սեպտեմբերի 4

ՀՅԴ Բիւրոյի միջնորդութեամբ եւ իր խնդրանքով ՀՀ կառավարութիւնը նրան Ղազար Քոչարեանի (Քաչալ Ղազար) հետ ուղարկում է Չանգեզուր՝ Գողթան անցնելու առաջադրանքով: Նժդեհը Չանգեզուր է մտնում 180 սուիմով:

1919 թ. սեպտեմբերի առաջին կէս

Չանգեզուրի տեղական իշխանութիւնների խնդրանքով կապիտան Նժդեհը ստանձնում է Կապանի, Արեւիքի (Գեւնուազ, Մեղրի) եւ Գողթանի (բոլորը միասին անուանում էին Կապարգողթ) ընդհանուր եւ Միւնեաց հարաւարեւելեան ռազմաճակատի հրամանատարութիւնը:

1919 թ. հոկտեմբեր

վերացնում է Գողթանը Գեւնուազին (Մեղրու շրջան) կապող թաթալական սէպը: Հիմնում է «Դաւիթբէկեան ուխտերը», որոնց ռազմակոչն էր՝ «Յանուն հայրենիքի՝ դաւիթբէկաբար»:

1919 թ. նոյեմբերի 15

առանց բաւարար ռազմամթերքի, փամփուշտի ու թնդանոթի, զիշերային յանդուզն գրոհով գրատում է Օխչի ձորի թրքաբնակ գիւղերը՝ տալով ընդամենը մէկ վիրատու: Առաջին անգամ այստեղ է գործի դնում պայթուցիկ տակառներով թշնամուն ահաբեկելու ռազմավարութիւնը:

1919 թ. դեկտեմբեր 1-8

Գեղուածորում վնասագերծում է թաթարական 33 գիւղեր, որոնք պատուհաս էին դարձել Գենուազի, Ղափանի ու Գողթանի համար:

1920 թ. յունուարի 19

Թէև դէմ էր Շուտնուխի գործողութեանը, բայց ենթարկուելով ընդհանուր հրամանատարութեան պահանջին՝ զանգեզուրեան զօրքերի՝ Շարուրի գործողութեան ժամանակ անձամբ առաջնորդելով վաշտերը՝ գրոհում է թուրքերի գրաւած բարձունքները եւ նպաստում ընդհանուր յաջողութիւններին, որի շնորհիւ մարտագրով նախատեսուած 6 գիւղի փոխարէն վնասագերծում են աւելի քան 30 թաթարական գիւղեր, բացում է Գորիս-Ղափան խճուղին:

1920 թ. փետրուարի 14

այս անօրինակ սխրագործութիւնների համար զանգեզուրեան ուժերի գերագոյն գլխատուր հրամանատար, զօրավար Ղազարովը Նժդեհին շնորհում է փոխզնդապետի աստիճան՝ ՀՀ կառավարութեանը միջնորդելով նրան շնորհել գնդապետի աստիճան:

1920 թ. մարտի 9-21

սկսում եւ յաջողութեամբ աւարտում է Գողթանին օգնելու երկրորդ («Պատա-

նակրաց») արշաւանքը, որի ընթացքում ազատագրում է Գողթանի հայկական գիւղերը, գրատում Գողթանի բոլոր թաթարական բնակավայրերը՝ բացի Եայջից եւ Դաստակից:

1920 թ. մարտի 25

գուժկանները երկու նամակ են բերում Գողթան՝ խնդրելով օգնութեան փութա՝ Կապարգողթը թուրք-թաթար-բուլշեիկ գրատմից փրկելու համար: Յետաձգելով Ագուլխաների եւ Օրդուբադի (Ռորուար) գրատմը՝ շտապ վերադառնում է Ղափան:

1920 թ. ապրիլի 1-13

սկսում է հակայարձակումը: Ջէյվայից (այժմ՝ Դալիթ Բէկ) սկսած՝ թշնամուն յետ է շարտում Հարթիզի եւ Մուսանի բարձունքներից, մաքրում Ռորտանի թաթարաբնակ գիւղերը, գրատում 80-ից աւելի գիւղեր:

1920 թ. ապրիլի 6

վարում է Ասկիլումի ճակատամարտը, գրատում գիւղը եւ շրջակայ բարձունքները:

1920 թ. ապրիլի 13

ջախջախելով Ջերբայիլի թաթարներից ու Ղարաղադի պարսիկներից օգնութիւն ստացած թշնամու գերակշռող ուժերը՝ մաքրում է նաեւ Չանդուրի (Զարթաղ) շրջանը:

1920 թ. ապրիլի մօտ 15 – ապրիլի 26

Բարգուշատ-Հաբեառուի (Չանգեզուրի եւ Արցախի միջեւ ընկած թուրքական սեպ) շրջանում մօտ մէկ ամիս յաղթական կռիւներ մղելուց յետոյ Ղափանի իր վաշտերով մտնում է Արցախ, ստանձնում Դիզակի պաշտպանութիւնը, չէզոքացնում Դրօյի զօրքերի աջ թելին սպառնացող վտանգը:

1919 թ. դեկտեմբեր -  
1920 թ. ապրիլ

կազմակերպում է Օխչիի, Գեղուածորի, Շուտնուխի, Ասկիլումի, Չաւնդուրի եւ այլ վայրերի փառահեղ յաղթանակները մեծ մասամբ անձամբ ղեկավարելով կռիւները:

1920 թ. մայիսի վերջ -  
օգոստոսի 10

Երբ Հայաստանի Հանրապետութեան զօրամասերը լքում են Արցախն ու Չանգեզուրը, տարածքները հարկադրաբար յանձնում Ադրբեջանին, ստանձնում է բովանդակ Սիւնիքի ինքնապաշտպանութեան գործը:

1920 թ. մօտատրապէս  
յունիս-յուլիս

ՀՀ կառավարութիւնը նրան շնորհում է գնդապետի աստիճան:

1920 թ. օգոստոսի 25

Ղափանի Կաւարտ գիւղի եկեղեցում օժտում է «Ղափանի, Գենուագի, Գողթանի ու Բաղաբերդի ռազմական ուժերի դիկտատոր-հրամանատար, 45 օրում ազատում Սիւնիքը»:

1920 թ. հոկտեմբերի 10

հոկտեմբերի 9-ի գիշերը 7 ձիատրներով Խուստուսիից իջնելով Ղափան, Գիւտկում գիւղից իրեն միացած եւս 40 հոգիանոց ջոկատով, առանց որեւէ զոհ տալու վերագրաւում է Ղափանը՝ գերելով աւելի քան 650 ռուս զինուոր:

1920 թ. սեպտեմբերի 6-ից -  
1920 թ. նոյեմբերի 21

Ղափանի Կալեր գիւղից վերսկսելով Չանգեզուրի ազատամարտը՝ երկրամասը մաքրում է ռուսերուրք զաւթիչներից, ըստ էութեան շարքից հանում ռուսական 11-րդ կարմիր բանակը՝ ոչնչացնելով մօտ 12 հազար, գերելարելով չորս հազարից աւելի բոլշեփկ զինուոր ու սպայ:

1920 թ. նոյեմբերի 21-22

վերագրաւում է Գորիսը:

1920 թ. դեկտեմբերի 25

Տարեւի 1-ին համագումարում հռչակում է «Ինքնավար Սիւնիքը», Չանգեզուրը ժամանակատրապէս յայտարարում է ինքնավար: Համագումարը Նժդեհին «երաւիրում է որպէս «Սիւնեաց սպարապետ», ինքնապաշտպանութեան ամբողջ ղեկավարութիւնը յանձնում նրան:

1921 թ. յունուարի 25

11-րդ բանակի հրամանատարին ուղղած «բաց նամակում» սովետներից պահանջում է Հայաստանի բանտերից ազատել կուսակցական ու ազգային գործիչներին, քեմալականների կողմից գրաւուած հայկական տարածքները մաքրել, հրաժարուել Չանգեզուրի հայութեան մէջ քայքայիչ գործունէութիւն կատարելուց:

1921 թ. յունուարի 26

Շուշիի մօտ գտնուող Քարինտակ (թուրքերէն՝ Դաշալտը) գիւղում հանդիպում է Թեւան Ստեփանեանին, նրա հետ կազմում Արցախի ազատագրութեան պլանը:

1921 թ. փետրուարի 2-5

խորհրդային իշխանութիւնները Նժդեհին առաջարկում են Սիւնիքը յայտարարել խորհրդային, ստանձնել 11-րդ բանակի հրամանատարութիւնը:

1921 թ. փետրուարի 15-17

չանգեզուրեան ուժերի հրամանատար Եապոնի միջոցով բոլշեփկներից ազատագրում, Սիւնիքին է միացնում Վայոց ձորը, ջարդում է Արեւիքի վրայ յարձակուած բշնամուն, հպատակեցնում է Բարգուշատի քաթարներին:

1921 թ. փետրուարի 21

Գորիսի սբ. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցում օժտում են Նժդեհի սպարապետական գօտին եւ եռագոյնը: «Սիւնիքի կա-

ռավարութիւնը ժողովրդի անունով յանձնեց սպարապետին Ազատ Մինիքի եռագոյն դրօշակը. անոր հետ իրեն յանձնեց եւ [Զանգեզուր-Կապարգողթի] քաղաքական բախտը»:

1921 թ. փետրուարի 28 - մարտի 8

Թեւանին օգնութեան ուղարկուած Գորիսի հրամանատար Տէր-Պետրոսեանի աջակցութեամբ ազատագրում է Դիզակը եւ Արցախի մեծ մասը, միացնում Լեռնահայաստանին:

1921 թ. ապրիլի 26

Տաթևի 2-րդ համագումարը հռչակեց Լեռնահայաստանի Հանրապետութիւնը, Նժդեհին շնորհեց գորավարի աստիճան, պարգևատրեց «Նուստուփեան արծիւ» երկաթ շքանշանով եւ ընտրեց Լեռնահայաստանի վարչապետ, արտգործնախարար ու զինուորական նախարար:

1921 թ.

Գորիսում հրատարակում է իր զինուորներին յղած «Նուստուփեան կանչեր» հրամանների ժողովածուն:

1921 թ. մայիսի 31 - յունիսի 1

Գորիսում կայացած՝ «Հայրենիքի փրկութեան կոմիտէի» եւ Լեռնահայաստանի ղեկավարութեան համատեղ նիստը յունիսի 1-ին Լեռնահայաստանը յայտարարեց Հայաստան, Ս. Վրացեանն ընտրուեց վարչապետ, Գ. Նժդեհը՝ «զինուորական նախարար»:

1921 թ. յունիսի 7

Նամակ է յղում Խորհրդային Հայաստանի ղեկավարութեանը՝ Մինիքը պարպելու դիմաց պահանջելով Լեռնահայաստանի (Զանգեզուր, Լեռնային Դարաբաղ, Գողթան, Վայոց ձոր) միացումը

Խորհրդային Հայաստանին (Գ. Նժդեհն իր ԱԶԱՏ ՄԻՒՆԻԶ աշխատութեան մէջ գրում է, որ այդ նամակը ուղարկել է յուլիսի 9-ին):

1921 թ. յունիսի 15-17

Եսայունի (Յովհաննէս զանգեզուրցի Պարոնեան) եւ Կոտոյի (Մուրէն շուշեցի Թարխանեան) միջոցով յետ է գրատւմ Վայոց ձորը. վերցնում մօտ 900 գերի. հարուստ ռազմաւար:

1921 թ. յուլիսի 12

Հայաստանի Յեղկոմի (1921 թ. մայիս 21-ին Յեղկոմը վերանուանուել է Ժողկոմխորի) կողմից Լեռնահայաստանը Հայաստանի կազմում թողնելու պաշտօնական յայտարարութիւնը մամուլում հրապարակուելուց յետոյ, համոզուելով, որ Զանգեզուրը մնալու է Խորհրդային Հայաստանի կազմում, Մեղրիից անցնում է Արաքսը, 1921 թ. յուլիսի 13-ին պատասխարում նախ՝ Մուժամբար զիւղում, ապա՝ Թարիզում:

1921 թ. յուլիսի 24 - սեպտեմբերի 28

Թարիզում կանգնում է ՀՅԴ Գերագոյն դատական ատեանի առաջ՝ մեղադրուելով Մինիքը բոլշեւիկներին յանձնելու եւ այլ անհեթեթ մեղքերի մէջ:

1921 թ. սեպտեմբերի 29

Դատական ատեանի դատավճռով առաջարկում է Նժդեհին հեռացնել Դաշնակցութիւնից՝ «ներկայացնելով նրա գործը կուսակցութեան 10-րդ ընդհանուր ժողովին»:

1922 թ. մարտի վերջ

Կոստանդնուպոլսի վրայով ժամանում է Մոֆիա, մշտական բնակութիւն հաստատում Յար Բորիսի փ. թիւ 92 տանը:

- 1923 թ. ապրիլի 7 - մայիսի 19, 1924 թ. նոյեմբերի 17 - 1925 թ. յունուարի 17
- 1923 թ. ՀՅ Դաշնակցութեան Վիեննայի խորհրդաժողովը, ապա ՀՅԴ 10-րդ ընդհանուր ժողովը, չեղեալ յայտարարելով ամբաստանութիւնները, Նժդեհին վերականգնում են Դաշնակցութեան մէջ:
- 1923 թ. Բոսքընի «Հայրենիք» ամսագրում (հոկտեմբեր-նոյեմբեր) հրատարակում է «Հայ-բոլշեիկեան կոիւները», «Ինչո՞ւ պայքարեց Լեոնահայաստանը», «Լեոնահայաստանի գոյամարտը» յօդուածաշարերը:
- 1924 թ. Կահիրէում լոյս է ընծայում «Էջեր իմ օրագրէն» աշխատութիւնը:
- 1924 թ. մայիս ժամանել է Թարիզ:
- 1925 թ. ընտրում է ՀՅԴ Բալկանեան Կեդրոնական կոմիտէի անդամ:
- 1925 թ. Բոսքընի «Հայրենիք» ամսագրում տպագրում է «Ազատ Միւնիք» յօդուածաշարը:
- 1926 թ. Բուլղարիայի Դաշնակցական կազմակերպութիւնը բաժանում է Նժդեհի եւ Բիւրոյի կողմնակիցների միջեւ:
- 1926, 1941, 1943 թ. այցելել է Ռումինիա:
- 1927 թ. Մալմիկում լոյս է տեսնում «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութիւնը:
- 1929 թ. Բէյրութում լոյս է տեսնում «Բաց մականեր հայ մտաւորականութեան» աշխատութիւնը:

- 1932 թ. վերջ ԱՄՆ մեկնելուց առաջ երկու ամիս գտնուել է Փարիզում, մասնակցել ՀՅԴ ընդհանուր ժողովին:
- 1932 թ. Սոֆիայում հրատարակում է «Ցեղի ոգու շարժը» աշխատութիւնը:
- 1933 թ. սկզբից մինչեւ 1934 թ. սեպտեմբեր եղել է ԱՄՆ-ում: 1933 թ. յունուարի 14-ին հիմնել է ՀՅԴ Ցեղակրօն ուխտերը, յուլիսի 16-ին նախագահել Բոսքընում գումարուած Ցեղակրօն ուխտերի առաջին համագումարը: Ոգեշնչել ու ամրացրել է ԱՄՆ ՀՅԴ թոյլ գործող կոմիտէները, հիմնել նորերը, վերակազմատրել խարխալուած մասնաճիւղերը, աշխատել «Կարմիր խաչի» կառոյցներում:
- 1933 թ. հոկտեմբերի 17 այցելում է ԱՄՆ Սէյսին քաղաք՝ ցեղակրօնների հրաւիրելիք ժողովին բանախօսելու համար. սակայն տեղի հայ կոմունիստների մատնութիւններով ու խաղաղամտների դակիլիճը չի տրամադրում ժողովականներին: Արքիւրը «Բանտը» բերք. Նիւ-Եորք. 1933 թ. հոկտեմբերի 21, էջ 3:
- 1934 թ. յունիսի 1-3 նախագահել է Ցեղակրօն ուխտերի Բ համագումարին (Բոսքըն):
- 1934 թ. օգոստոս մասնակցել է ՀՅԴ Ամերիկայի շրջանի 41-րդ պատգամատրական ժողովին:
- 1934 թ. սեպտեմբերի 29 վերադառնում է Սոֆիա:
- 1935 թ. ամուսնանում է իր նշանածի՝ Էփիմէ Սուրիասեանի հետ:
- 1935 թ. Սոֆիայում լոյս է տեսնում «Ամերիկա-

հայտնությունը-Յեղը եւ իր տականքը» աշխատությունը:

1935-1937 թթ.

աշխատել է Սոֆիայի «Արարս» թերթում:

1937 թ.

Ռուբենի հետ հաշտեցնելու նպատակով ՀՅԴ Բիւրոն նրան հրաւիրում է Կահիրէ, ուր մնում է մօտ երկու ամիս:

1937 թ.

Սոֆիայում լոյս է ընծայում «Իմ պատասխանը» աշխատությունը:

1937 թ.

իր բուլղարացի բարեկամների միջոցով կապ է հաստատում գերմանացիների հետ՝ այդ երկրի ռազմական ու հետախուզական մարմիններին ներշնչելով պատերազմի բռնկման դէպքում յարձակուել Թուրքիայի վրայ:

1937 թ. դեկտեմբեր

հեռանում է ՀՅԴ շարքերից:

1937 թ.

Հայկ Ասատրեանի հետ Սոֆիայում հիմնում է «Ռ-ազմիկ» թերթը:

1937 թ. դեկտեմբերի սկիզբ

Ֆիլիպետում մասնակցում եւ ելոյթ է ունենում Բալկանեան պատերազմին մասնակցած հայ կամաւորների կազմակերպած հանդիպմանը Բուլղարիայի Մակեդոնո-օղորինեան կամաւորական կազմակերպութեան փոխնախագահի եւ այլ անդամների հետ: Նոյն օրը Մակեդոնո-օղորինեան կամաւորական կազմակերպութեան Ֆիլիպէի մասնաճիւղի նախագահի հրաւերով հիւրընկալում է այդ կազմակերպութեան գրասենեակում եւ «Մակեդոնո-օղորինեան մարտիկներու անունէն» պարգեատրում այդ կազմա-



Մայրը բռնուիու՝ Գարեգին Նժդեհի եղբոր աղջիկ Օլեայի հետ (1930-ական թ.թ.)



Նժդեհի տիկին Եփիմէն եւ որդեգրած զաւակ Վրէժը

XIII

« Ի՞նչ վայրի Դաշակ Բաշու-  
 « Են տեսնուաւ արք. չոր ու շաւր՝  
 « որքէ ընդ-ձր. Կուսն իջ ցնակապէր ... »

Անպատն Կատր, անպատն Կատր  
 Աստի որդե Թոյն Կանկէ  
 « արջուր ծաւր, ուրէր. Էրէր  
 Խի եր քաղաւ խոր Վրայրի ... »

Տ. Թքաւ. 1903 թ. Նաճիկ

Նժդեհի ստորագրութեան առաջին գործածութիւնը 1903 թ. գրած իր ոտանատրի մէջ




Նժդեհը մակերոնական հայրուկի զգեստով, 1906 թ.



Նժդեհ, 1919 թ.



Գարեգին Նժդեհը բուլղարական սպայի համազգեստով



Հայկական գունդը բալկանեան պատերազմի սկզբին, 1912 թ. հոկտեմբերի վերջ,  
առջեւում Նժդեհն ու Անդրանիկը



Գարեգին Նժդեհ




Անդրանիկ



Հայկական գեղի հրամանատար Նժդեհը բալկանեան պատերազմում, 1913 թ., Բուլղարիա



Գարեգին Նժդեհի կամաւորական ջոկատը, 1915 թ.



Նժդեհը գրող Համաստեղի հետ



Հ.Յ.Դ. ցեղակրոնների առաջին համագումարը, 1933 թ.



Տաթևի վանքը. Այստեղ 1920 թ. դեկտեմբերի 25-ին կայացավ Միսիսի առաջին, իսկ 1921 թ. ապրիլի 26-ին՝ երկրորդ համազումարները



Յեղակոսների զինանշանը, 1933թ.






Կոռո Թարխանեան, Պուլկարացի Յարութիւն, Ալեքսան Շարաֆեան, Զօր-  
Գարեգին Նժդէհ, Լեւոն Բէնշիեան, Նիկոլ Օտապաշեան (նստած)





Դերասան Յովի.  
Չարիֆեան, Գ. Նժդէհ,  
Հացիկեան, Վ. Մխսեան,  
հինգերորդի անունը՝  
անհայտ, 1934 թ.





Ղարաբիխա - Վանաձոր



Գարեգին Նժդեհի տպագրած գրքերից երկուսի շապիկները



Ֆեդակրոն Ուխտերի հիմնադիր Գարեգին Նժդեհը, իր ետևում՝ Տիգրան Մուրադեան, մնացած երկուսը՝ Ֆեդակրոն Ուխտի անդամներ՝ հայկական եւ ամերիկյան դրոշակներով

կերպութեան շրանշանով: Աղբիւր՝ «Դազմիկ» եռօրեայ բերր. Աօֆիա. 1937 թ., դեկտեմբերի 4:

1938 թ.

ՀՅԴ 13-րդ ընդհանուր ժողովը նրան արտարսում է կուսակցութիւնից:

1938 թ. յունուարի 19, Սլիվէն

Հայ մարմնամարզական ընդհանուր միութեան (ՀՄԸՄ) 20-ամեակի առթիւ տեղի ունեցած հանդիսութեան մասնակիցների եւ բուրգասցի ՀՄԸՄ-ականների հետ լուսանկարում է Սլիվէնի «Անդրանիկ» ընթերցարանի մուտքի առջեւ:

1938 թ. ապրիլ

Հ. Ասատրեանի ու Ն. Աստուածատուրեանի հետ հիմնում է «Տարօնի Արծիւ» շաբաթաթերթը, որով պաշտօնապէս սկսում է տարօնական շարժումը:

1938 թ. սեպտեմբերի 3-5

ԱՄՆ Օհայոյի նահանգի Էքքըն քաղաքում կայացած Տարօն-Տուրուբերան հայրենակցական միութեան համագումարը վաւերացնում ու հաստատում է տարօնական շարժումը:

1939 թ.

Երկրորդ աշխարհամարտը բռնկուելուց յետոյ նամակ է յղում ՀՅԴ Գերագոյն մարմին՝ իր կարողութիւնները Դաշնակցութեան տրամադրութեան տակ դնելու առաջարկով:

1941 թ.

Վիեննայում հանդիպել է քանաստեղծուհի Ադրիեն Տատրեանի հետ: Աղբիւր՝ ՀՀ կառավարութ. ԱԱԾ դիւան, ԿԳՅ, 12997, հտ. 1, էջ 87:

1942 թ.

կազմակերպում է գիտական յօդուածների՝ «Հայաստանը եւ Հայերը» գերմաներէն ժողովածոյի լոյս ընծայումը, որով հակահարուած է տրւում հայե-

րին ոչ արիական ժողովուրդների շարքը դասող քարոզութեանը:

1942 թ.

հիմնում է «Բուլղարա-հայկական կոմիտեն», ընտրում կոմիտեի համանախագահ:

1942 թ. դեկտեմբերի 15

Բեռլինում մասնակցում է Հայոց Ազգային խորհրդի հիմնադիր նիստին (նախագահ՝ Արտաշէս Աբեղեան, փոխնախագահ՝ Ա. Գիւլխանդանեան, քարտուղար՝ Յ. Բաղդասարեան, անդամներ՝ Գ. Նժդեհ, Դաւիթ Դաւիթխանեան, Ալֆրէդ Մուրադեան): Աղբիւր՝ «Ռազմիկ», Սօֆիա, 1943 թ. յունուարի 23, էջ 2:

1943 թ.

Սոֆիայում հիմնում է գլխատրում է «Ռուսահայերի բարեգործական եղբայրութիւն» հասարակական կազմակերպութիւնը:

1942-43 թթ.

Հայաստանի ազատութիւնն ու անկախութիւնը վերականգնելու խնդրի շուրջ համագործակցում է գերման ռազմական իշխանութիւնների եւ հետախուզական կառոյցների հետ:

1943 թ. յունուարի 7

Բեռլինի հայոց գաղութի ղեկավարութիւնը նամակով Նժդեհին խնդրում է ստանձնել «Գաղութս առաջնորդելու պարտականութիւնը՝ նշանակելով գաղութային վարչութեան նոր կազմ»: Աղբիւր՝ ՀՀ կառավարութ. ԱԱԾ դիւան, ԿԳՖ, 12997, բրազայանակ թիւ 4:

1943 թ. յունուարի 9, Բեռլին

խորհրդային բանակից գերմանացիների մօտ գերի ընկած 60-70 հայ ռազմիկների ու Բեռլինի գաղութի ներկայացուցիչներ:

րի համար բանախօսում է մօտ երկու ժամ: Աղբիւր՝ «Ռազմիկ», 1943 թ. յունուարի 23, թիւ 57, էջ 2-3:

1943 թ. յունուարի 10

Բեռլինի եկեղեցում Հայկ Ասատրեանի հետ ներկայ է լինում հայ ռազմագերիների համար տրուած պատարագին (պատարագիչ՝ Շահմալեան վարդապետ): Պատարագից յետոյ տրուած ճաշկերոյթին արտասանում է իր «խաղորդող» ճաներից հերթականը, ուր դիմելով ռազմագերիներին, ասում է. «Փառք ձեզ եւ այն բռնորին, որոնց մէջ ցեղի բարոյականն ու ոգին աւելի զօրատր գտնուեցին, քան ասիական բոլշեւիզմը: Իզուր չէր, որ երկու տասնեակ տարիներ հայրենիքից դուրս, Հայոց Սփիւռքի մէջ գոռում էի ես, որ հայ մարդը էաբանօրէն չի կարող բոլշեւիզմը հարազատել, նա չի կարող լենինահաղորդ լինել, որ Հայաստանում եկտր բոլշեւիկներ կան, բայց բոլշեւիզմ չկայ»: Աղբիւր՝ «Ռազմիկ», 1943 թ. յունուարի 21, թիւ 56, էջ 3:

1943 թ. յունուարի սկիզբ

Դրօյի նախածեռնութեամբ եւ դոկտոր Էնգելիաուպտի միջնորդութեամբ Բեռլինի «Էդէն» հյուրանոցում 2 անգամ հանդիպում է Դրօյի հետ: Աղբիւր՝ ՀՀ կառավարութ. ԱԱԾ դիւան, ԿԳՖ, 12997, հտ. 2, էջ 245-248:

1943 թ. յունուարի 16

Արտաշէս Աբեղեանի ուղեկցութեամբ վեց օրով ժամանում է Վիեննա, ուր Հայաստանեայց եկեղեցու Ս. Փրկիչ մատուռում եւ Միսիբարեան միաբանութեան սրահի մէջ 500-ից աւելի ներկաների առաջ մի զօրացնող ճառ է արտասանում Բեռլինում Հայոց ազգային խորհրդի հիմնադրման առթիւ: Աղբիւր՝ «Ռազմիկ» երկօրեայ, 1943 թ. յունուարի 21, հինգշաբթի, թիւ 56, էջ 2:

1943 թ. փետրուարի 14

բանախօսում է Բեռլինի «Մետրոպոլիս» սրահի մէջ կազմակերպուած ժողովում. ուր ասում է. «Չէկան մահուան պար է բռնած Հայաստանի մէջ»: Աղբիւր՝ «Ռազմիկ». 1943 թ. յունուարի 16. երեքշաբթի. էջ 2-3:

1943 թ. փետրուարի 18

Արտաշէս Արեղեանի հետ միասին բանախօսում է նախ՝ Բեռլինի հայկական մատուռում. ապա՝ Մխիթարեան միաբանութեան մեծ սրահում: «Զօր. Նժդեհ չէր խօսիր. այլ կը հաղորդէր». գրում է ներկան՝ աւելացնելով. որ Նժդեհը խօսում էր «պոռթկացող հրաբուխի մը պէս»: Աղբիւր՝ «Ռազմիկ». 1943 թ. յունուարի 21. թիւ 56. էջ 2:

1943 թ. մայիսի 30, կիրակի

Պլովդիվի զինտրական ակումբի լեփ-լեցուն սրահի մէջ Հայաստանի անկախութեան 25-ամեակի առթիւ ելոյթ են ունեցել «Ռազմիկ» թերթի խմբագիր Կարոյ Գեղորգեանը եւ Գարեգին Նժդեհը: Աղբիւր՝ «Ռազմիկ». յունիսի 2. յորեքշաբթի. թիւ 108. էջ 3:

1943 թ. յունիսի 6

Վառնայի «Ծովային կազմնոյի» լեփ-լեցուն ընդարձակ սրահում Հայաստանի անկախութեան 25-ամեակի առթիւ մէկուկէս ժամ ճառ է արտասանել: Դրանից առաջ. կէսօրին. երիտասարդ ցեղակրօնների խնդրանքով մէկ ժամանոց ճառ է արտասանել նաեւ Վառնայի Յեղակրօն ուխտերի հաւարատեղիում: Աղբիւր՝ «Ռազմիկ» 1943 թ. յունիսի 12. շաբաթ. թիւ 112. էջ 3:

1943 թ. յունիսի 12

Առաւօտեան Սօֆիայից օդանաւով մեկնում է Բեռլին: Աղբիւր՝ «Ռազմիկ». 1943 թ. յունիսի 15. թիւ 113. էջ 2:

1943 թ. օգոստոսի 6

Իր զինուորներին գերմանա-ռուս ճակատում օգտագործելը կանխելու, այն է՝

Բեռլինի զինուորական դպրոցի Ղրիմ ուղարկուած հայ ուսանողների նամակին ընթացք տալու համար մեկնում է Եալթայի Սիմէզ քաղաքը:

1943 թ. հոկտեմբեր-նոյեմբեր

Հայոց Ազգային խորհրդի յանձնարարութեամբ մեկնել է Վիեննա: Աղբիւր՝ ՀՀ կառավարութ. ԱԱԾ դիւան, ԿԳՖ, 12997, հտ. 1, էջ 66:

1943 թ.

Մակեդոնիայի քաղաքական կազմակերպութեան հիմնադրման 50-ամեակի առթիւ, այդ կազմակերպութեան հրաւերով մեկնել է Խորվաթիա: Աղբիւր՝ ՀՀ կառավարութ. ԱԱԾ դիւան, ԿԳՖ, 12997, հտ. 1; Վ. Յովսէփեան, 624. աշխ., էջ 129-130:

1944 թ.

եղել է Վիեննայում: Աղբիւր՝ ՀՀ կառավարութ. ԱԱԾ դիւան, ԿԳՖ, 12997, հտ. 1, էջ 66:

1944 թ. սեպտեմբերի 9

նամակ է յղում Բուլղարիա մտած 3-րդ ուկրաինական ռազմաճակատի հրամանատարին՝ Թուրքիայի դէմ սովետների ձեռնարկելիք ռազմական գործողութիւններին իր օժանդակութիւնը մատուցելու առաջարկով:

1944 թ. հոկտեմբերի 10

Յայտարարելով, թէ իբր Նժդեհը իր առաջարկները ԽՍՀՄ բարձրագոյն ղեկավարութեանը պէտք է ներկայացնի անձամբ, խորհրդային հետախուզական ՍՄԵԲԸ կառոյցի կողմից օդանաւով Բուխարեստի վրայով հասցում է Մոսկուա, նետում Լիւբեանկա բանտը:

1944 թ. հոկտեմբերի 11-ից մինչեւ 1946թ. նոյեմբերի 6 1944 թ. հոկտեմբերից մինչեւ 1954 թ. մայիս

Պահուել է Մոսկուայի բանտերում

«Ողջ-ողջ քաղուած, պատի մէջ շարուած-զնդանուած» մնացել է բանտում, ո՛ր

մի հարազատի նամակ չեն բողել գրի կամ ստանա:

1944 թ. հոկտեմբերի 11

նրա հետ գրուցում է ԽՍՀՄ պետանվտանգութեան ժողկոմը (նախարար):

1944 թ. հոկտեմբերի 12

բանտում կատարում է Նժդեհի առաջին հարցաքննութիւնը:

1945 թ.

Սոֆիայից Պալիկէնի (այժմ՝ Պլովդի) են արտորում ընտանիքին՝ տիկին Էփիմէին, ութնամեայ որդեգիր զաւակին՝ Վրէժ-Սուքիասին եւ գոթանշին:

1946 թ. նոյեմբերի 6

Մոսկուայի բանտից տեղափոխում են Երեւանի բանտ:

1946 թ. նոյեմբերի 14-ից

մինչեւ 1948 թ. մարտ ամիսը

Գտնուել է Երեւանի բանտում:

1946 թ. նոյեմբերի 15

Երեւանում կայանում է նրա առաջին հարցաքննութիւնը:

1946 թ. նոյեմբեր

հարցաքննութեան ընթացքում եւ հետաքննութեանն ուղղած յատուկ դիմումներում Նժդեհին իր ծառայություններն է առաջարկում Թուրքահայաստանը Հայաստանին վերամիատրելու գործողութիւններում՝ պատրաստակամութիւն յայտնելով ներկայացնելու ռազմական գործողութիւնների մանրամասն ծրագիր:

1946-1947 թթ. ձմեռ

Խորհրդային անվտանգութեան մարմինների առաջարկով պատրաստում է Թուրքիայի դէմ ռազմական գործողութիւնների մի քանի նախագիծ, առաջարկում է սփիւրջում ստեղծել համազարու-

թային ռազմաքաղաքական կազմակերպութիւն՝ իռեդենտա:

1947 թ. յունուար

Երեւանի բանտում գրում է «Դաշնակցութեան առաջացման պատմական պայմանները եւ նրա բնութագիրը» եւ «Դաշնակցութիւնը Բուլղարիայում» աշխատութիւնները:

1947 թ. դեկտեմբերի 20

հարցաքննում է վերջին անգամ:

1948 թ. յունուարի 10

Ստալինին յղած նամակում առաջարկում է իր մասնակցութիւնը Թուրքիայի դէմ սովետների ձեռնարկելիք արշաւանքին:

1948 թ. ապրիլի 24

դատապարտում է 25 տարուայ բանտարկութեան:

1948 թ. օգոստոսի սկզբից –  
1952 թ. մարտի 6  
1952 թ. մարտի 12

գտնուել է Վլադիմիրի բանտում:

Խորհրդային պետանվտանգութեան կոմիտէի դեկավարութեան գիտութեամբ Յովհաննէս Տէվէճեանի հետ Երեւանի բանտից նամակ է գրում Սիմոն Վրացեանին, որը պետանվտանգութեան մարմինները, թէեւ ձեռք բերուած պայմանաւորութեամբ պիտի ուղարկէին, բայց չեն ուղարկում հասցէատիրոջը:

1952 թ. մարտի 16-ից-1953 թ. ամառ

1952 թ. մարտի 25

գտնուել է Երեւանի բանտում:

Խ. Հայաստանի պետանվտանգութեան կոմիտէի հրապարակած բժշկական եզրակացութեան մէջ նշում է, որ նա տառապում է հիպերտոնիայով, ընդհանուր արտեսկլերոզով, միոկարդիսկլերոզով,

փայծաղի ու լեղապարկի քրոնիկական  
ռեւմատիզմով ու կոլիտով:

1952 թ. դեկտեմբերի 25

ՀԽՍՀ պետանվտանգութեան նախարարին յղած նամակում սովետներին առաջարկում է Արեւմտահայաստանը ազատագրելու խնդրում իր ծառայութիւնները՝ ըստ փաղօրօք ներկայացրած իր ծրագրի:

1953 թ. սեպտեմբերի  
առաջին կէս

Վլադիմիր տանելուց առաջ Մոնումենտի բարձունքից (ուր այսօր գտնուում է Խ. Հայաստանի 50-ամեակի կոթողը) ժամը մօտատրապէս 14-ին Նժդեհին ցոյց են տալիս Երեւանը, յետոյ՝ քաղաքի գլխաւոր փողոցները:

1954 թ. մայիսի 5

Այդ օրուանից թոյլատրում են նամակներ յղել հարազատներին:

1953 թ. ամառ -1954 թ.  
սեպտեմբեր

դարձեալ գտնուել է Վլադիմիրի բանտում:

1954 թ.

Բանտային հիւանդանոցում որոշում է կայացում նրան, որպէս առողջութիւնը քայքայուած հիւանդի, բանտից վաղաժամկէտ ազատելու մասին:

1954 թ. սեպտեմբեր –  
1955 թ. սեպտեմբեր

գտնուել է Տաշքենդի բանտում, ապա՝ բանտային հիւանդանոցում:

1955 թ. մայիս

աւարտում է խորհրդածութիւնների «Անձնավկայութիւն» աշխատութիւնը:

1955 թ. մայիսի 19-ից  
մայիսի 25-ը

Տաշքենդում հանդիպում է այստեղ իր հետ տեսակցութեան եկած Լեւոն եղբորը:

1955 թ. օգոստոսի 24-ի  
դրութեամբ

տառապել է երկրորդ կարգի հիպերտոնիայով, երկրորդ կարգի սկլերոզով, թոքերի էնֆիզեմայով ու սրտի միոկարդով:

1955 թ. սեպտեմբերի 12

վերադարձուել է Վլադիմիրի բանտ:

1955 թ. նոյեմբերի 30

բանտախցից շատ ծանր վիճակում տեղափոխուում է Վլադիմիրի բանտային հիւանդանոց:

1955 թ. դեկտեմբերի 1

հարազատներին գրում է մեզ հասած իր վերջին նամակը:

1955 թ. դեկտեմբերի 21

վախճանում է Վլադիմիրի բանտում:

1955 թ. դեկտեմբերի մօտ 25

եղբայրը՝ Լեւոն Տէր-Յարութիւնեանը, Վլադիմիրի բանտին կից գերեզմանատանը կատարում է Նժդեհի յուղարկատրութիւնը, գերեզմանը ցանկապատել է տալիս:

1957 թ. յունիսի սկիզբ

Նժդեհի Լեւոն եղբոր որդի Հրանտ Տէր-Յարութիւնեանը իր քրոջ ամուսին Էդիկ Չաքարեանի հետ գնում են Վլադիմիր, հետները Երեւանից տարած տախտակի վրայ ռուսերէն գրել են տալիս «Տէր-Յարութիւնեան Գարեգին Եղիշեիչ (1886-1955), Նժդեհ, N 825»:

1958 թ. փետրուարի 24

1945 թ. գարնանը Մոֆիայից Բուլղարիայի Պապիկէնի (Պլովդիւ) քաղաք արքութուած տիկին Էփիմէն թոքախտից մահանում է, իրենց Մուքիաս-Վրէժ որդին մնում է որբ:

1983 թ. օգոստոսի 31

հայ մի խումբ մտատրականների նախաձեռնութեամբ Նժդեհի աճիւնը Վլադիմիրից գաղտնի փոխադրում է Երեւան:

1983 թ. հոկտեմբերի 7

նոյն անձինք աճիւնից մի մասունք (պարանոցի առաջին ողը) ամփոփում են Խուստուփ լերան լանջին՝ «Կոզնի» կոչւող աղբիւրի մօտ:

1987 թ. մայիսի 8

աճիւնը ամփոփում է Վայոց ձորի մարզի «Մք. Աստուածածին» (Սպիտակատր) վանքի պատի տակ:

1989 թ. յունիսի 17

Նժդեհի շիրմին դրում է տապանաքար:

1989 թ. նոյեմբերի 25

աճիւնին կանգնեցում է նաեւ խաչքար (հեղինակ՝ Գեղամ Սահակեան):

2000 թ. սեպտեմբերի 29

Ազգային միասնութեան ուխտի գործադիր մարմնի եւ Նախիջեւանահայոց Ազգային խորհրդի միացեալ նիստը Ռաֆայէլ Համբարձումեանի նախաձեռնութեամբ կազմում է Նժդեհի ծննդեան 115 եւ Լեռնահայաստանի Հանրապետութեան հռչակման 80-ամեակները տօնելու հասարակական յանձնաժողով:

2000 թ. դեկտեմբերի 21

յանձնաժողովը Հայաստանում առաջին անգամ նշում է Գ. Նժդեհի մահուան տարեւոյցը, անցկացնում նրա կեանքին ու գործունէութեանը վերաբերող առաջին գիտաժողովը հայրենիքում: Մտատրականութիւնը նոյն օրը Ռաֆայէլ Համբարձումեանի նախագահութեամբ հիմնում է Նժդեհի ծննդեան 115 եւ Լեռնահայաստանի Հանրապետութեան հռչակման 80-ամեայ յրելեանները նշելու համահայկական հասարակական յանձնաժողով:

2001 թ. փետրուարի վերջ

ՀՀ կառավարութիւնը կազմում է Գ. Նժդեհի ծննդեան 115 եւ Լեռնահայաստա-

նի հռչակման 80-ամեակները նշելու կառավարական յանձնաժողով:

2001 թ. ապրիլի 28

ՀՀ կառավարութիւնը առաջին անգամ նշում է Գ. Նժդեհի 115 եւ Լեռնահայաստանի 80-ամեակները:

2005 թ. ապրիլ

ՀՀ կառավարութեան գիտութեամբ Սպիտակատրում ամփոփուած Գ. Նժդեհի աճիւնից մի քանի մասունք վերցնում, ապրիլի 26-ին քաղում են Ղափանում կառուցուած նրա յուշահամալիրում:

2005 թ. դեկտեմբեր-2006 թ. յուլիս

Հայաստանի Հանրապետութիւնում եւ Արցախում ստորագրահաւաքներ են կատարուած Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներին ուղղուած նամակների տակ, որոնցով առաջարկում է Գարեգին Նժդեհին դասել Հայաստանեայց եկեղեցու սրբերի շարքը:



համր (մուկ)	յամր (դանդաղ)
հանգել (մարել)	յանգել (հասնել)
հար (զարկ)	յար (միշտ)
հարել (զարմել, ծեծել)	յարել (խօսքին խօսք առելացնել, կցել)
հարկ (պետք, տուրք, անհրաժեշտություն, կարիք)	յարկ (բնակարանի յարկեր)
հեղ (հեղուկ, անգամ)	յեղ (վիճակի փոփոխություն (յեղափոխություն))
հետ (միասին)	յետ (յաջորդը, հետևից եկողը)
հետագայ (հետը եկող)	յետագայ (յաջորդ, յետոյ եկող)
հողով (զլորուել)	յողով (շատ)
հոյլ (խումբ)	յոյլ (ծոյլ)
հօտ (ոչխարի խումբ, հաւատացեալների խումբ)	հոտ (բոյր)
հոռի (հին հայկական ամիսներից)	յոռի (վատ, գէշ)
հօր (հայրիկին)	հոր (փոս, փորուածք)

**Դասական ուղղագրութեամբ ընթերցելու կարեւորագոյն կանոնները:**

1. Բառասկզբում յ-ն հայերենի բոլոր ձայնաւորներից առաջ միշտ **հ** է կարդացուում (գրում ենք յառաջ-կարդում ենք հառաջ, յայտնի-հայտնի, յանուն-հանուն, յերկրի-հերկրի, Յիսուս- Հիսուս, Յակոբ- Հակոբ, յօրում- հօրում եւն):
2. **Ջ**-ն բաղաձայնից առաջ կարդացուում է **ըզ** (գրում ենք զբնակություն-կարդում ենք ըբնակություն, գրում ենք զխորհուրդ- կարդում ենք ըզխորհուրդ, գտէր-ըգտէր եւն):
3. Բառավերջին **ա** եւ **ո** տառերից յետոյ գրում է **յ**, բայց չի արտասանուում (գրում ենք ապագայ, կարդում ենք ապագա՝ առանց յ-ն արտասանելու, նոյնը՝ երեկոյ-երեկո): Բացառութիւն են միայն **Նոյ, խոյ, բայ, ճայ, վայ, հայ, գոյ** միավանկ 7 բառերը, որոնց վերջում գրուած յ-ն արտասանուում է:
4. **Ոյ** -ը միշտ կարդացուում է **ոյ** (գրում ենք լոյս, կարդում ենք լոյս, գոյն-գոյն, բոյս-բոյս):
5. **Ե**-ն գրում ենք **եա**, կարդում ենք **յա** (մատեան-մատյան, Դուրեան-Դուրյան, սենեակ- սենյակ), իսկ **եօ**-ն՝ գրում ենք **եո**, կարդում ենք **յո** (գրում ենք եօր-կարդում ենք յոր, գրում ենք արդեօք- կարդում ենք արդյօք եւն):

**Բացառութիւն չունեցող 20 կանոն, որ կարելի է իրացնել շատ արագ եւ մօտ 80 տոկոսով տիրապետել դասական ուղղագրութեանը:**

- ա.** Վ հնչիւնի համար հայերենն ունի երկու տառ՝ **ւ** եւ **վ**: **Ի**-ն արտասանուում է **վ**, բայց բառասկզբում երբեք **ւ** չի գրուում, այլ միշտ՝ **վ**(վարդ, վահան, վերջ, վիզ, վկայ, Վռամ):
- բ.** Մեր լեզուում **ու, ո, օ**, եւ է ձայնաւորներից յետոյ **վ** լսուելիս երբեք **ւ** չի գրուում, այլ միշտ գրուում է **վ**, որպէսզի **ու**-ն չդառնա **ու**, իսկ **ու**-ն աւելորդ **ւ** չստանա:
- գ.** Բառավերջում լսուող **վ** -ն (*վեի*) գրուում է **ւ** տառով (անիւ, արծիւ, հովիւ, շնորհիւ, պատիւ, սեւ, արեւ, հարաւ, քեթեւ):
- դ.** Բառամիջում եւ բառավերջում **ու** լսուելիս **ու** էլ գրում ենք (խոստում, ուսում, ուտելիք, կատու, քթու, մեղու):
- ե.** Բառամիջում եւ բառավերջում **ա, ե, ի** ձայնաւորներից յետոյ **վ** լսուելիս միշտ գրուում է **ւ** (աւարտ, բաւական, խաւար, անձրեւ, Երեւան, Սեւան, նաւեւ, տերեւ, հիւանդ, շիւ, թիւ):
- զ.** Բաղաձայնից յետոյ **վ** լսելիս գրում ենք **ու** (Աստուած, զուարթ, բուական, Նուարդ), իսկ ձայնաւորների միջեւ **վ** լսելիս, գրում ենք **ւ** (սաւան, հիւանդ, օրեւան, առաւօտ): Բացառութիւն է միայն **հովիւ** բառը, որտեղ **ու** եւ **ի** ձայնաւորների միջեւ գրուում է ոչ թէ **ւ**, այլ՝ **վ**, որպէսզի տառը չդառնա **ու**:
- է.** Բառի սկզբում երբ լսուում է **վո**, երբեք **վ** չի գրուում, այլ միշտ գրում ենք **ո** (որսորդ, որպէս, ոսկի, որովհետեւ): Բացառութիւն է միայն **վոհմակ** բառը, երբ բառասկզբում **վո** լսուելիս գրուում է ոչ թէ **ո**, այլ **վ**:
- ը.** Բառասկզբում **վ** լսուելիս միշտ **վ** ենք գրում (վէպ, վերջ, վարորդ, վսեմ եւ այլն): Այդ բառերը բարդացուելիս գրում են նոյնութեամբ (պատմավէպ, ամենավերջ, ամենավսեմ, անվաւեր եւն):
- թ.** Վ լսուելիս միշտ **վ** ենք գրում նաեւ գրաբարից չփոխանցուած օտար բառերում (Մալվադոր, Կալվին, Դեվրիկ):
- ժ.** Ս տառից առաջ **հ** լսող բոլոր բառերը գրում ենք **հ**-ով (հսկայ եւն): Բացառութիւն է միայն մէկ բառ՝ **յստակ**:
- ժա.** Բառավերջում է լսելիս, երբեք **ե** չի գրուում, միշտ եւ ամենուր գրում ենք այնպէս, ինչպէս լսում ենք՝ է (թէ, գրեթէ, նախօրէ, որեւիցէ, երբեւէ, օրըստօրէ, միջօրէ եւն):
- ժբ.** Բառասկզբում **ե** (յէ) լսելիս միշտ գրում ենք **ե** (երբ, եթէ, եղբայր)՝
- ժգ.** Բառամիջում ձայնաւորներից առաջ **ե** լսելիս միշտ գրում ենք **է** (բո՛ւ, Բառամիջում ձայնաւորներից առաջ **ե** լսուելիս է ենք գրում պէական, գործունէութիւն, հոգեորդի): Բառամիջում **ե** լսուելիս է ենք գրում

նաև այն բառերում, որոնց մեջ է-ի փոխարեն կարող ենք գործածել նաև այ (հէր-հայր, գէլ-գայլ, ծէր-ծայր):

ժդ. Բառամիջում է ենք գրում բոլոր այն դէպքերում, երբ բառերը վերջանում են **աւետ, եղէն, օրէն, էն, էք** անանցներով (արդիւնաւետ, ոսկեղէն, յամա-նօրէն, անգլերէն, երկուստէք):

ժե. Միշտ է-ով է գրում բայերի հրամայական եղանակի յոգնակի 2-րդ դէմքի **էք** վերջաւորութիւնը (բերէք, նայէք, վերցրէք):

ժգ. Ամէն արմատն ունեցող բառերից միայն **ամէն** եւ **ընդամէն** բառերն ենք գրում է-ով: Ամենա-ով կազմուած մնացած բոլոր միւս բառերը գրում ենք **ե-ով** ամենայն, ամենալաւ, ամենամեծ ելն:

ժը. Բառասկզբում **օ** լսելիս **օ** էլ գրում ենք (օր, օրհնել, օդ, օրինակ): Բացառութիւն են միայն **չորս բառ՝ ով-ովքեր, ովկիանոս, Ովսաննա** եւ **ովագիս**, երբ թէև **օ** ենք լսում, բայց գրում ենք ոչ թէ **օ**, այլ՝ **ո**:

ժթ. Բառավերջում երբ լսում ենք **օ**, գրում ենք **ոյ** (երեկոյ, ներքոյ, յետոյ, պահածոյ): Բացառութիւն են միայն **այո** եւ **քո** բառերը, որոնք **յ-ով** չեն վերջանում:

## Իւրացնելի 7 հիմնական կանոններ եւ երկու բառացանկեր

### Վ, Ի-ի ուղղագրութիւնը

1. Պէտք է վերականգնուի հայոց այբուբենից 1922 թ. վտարուած **ւ** (հիւն) տառը, նաև **իւ** երկհնչիւնը: Մերոպեան այբուբենից դուրս նետուած **ւ-ի** վերականգնումով վերականգնում է նրա թւանիշը՝ 7000-ը:

2. Ի-ի վերականգնումով վերականգնում է **իւ**-երկհնչիւնը. բառասկզբում եւ **բաղաձայների** միջեւ **իյու** լսուելիս գրում եւ արտասանում ենք ոչ թէ օտարաբան **յու**, այլ՝ հայերէն **իւ** (ծիւն, հիւր, արիւն, իւրային, հիւսել, սփիւռք, միութիւն, հարիւր, հնչիւն, իմաստութիւն, իւլ եւն): Օտար բառերում **յու** հնչիւնը ձայնաւորից առաջ գրում է **իու** (նիուանս, ստիուարտ):

3. Ինչպէս նշեցի, Վ հնչիւնի համար հայերէնն ունի երկու տառ՝ **ւ** եւ **վ**: Դասական ուղղագրութեամբ Վ հնչիւնի համար գործածուած է նաև **ու-ն**: Որոշակի յստակ կանոնները թելադրում են, թէ Վ լսուելիս որ դէպքում ինչ տառ պիտի գործածուի: Այսպէս.

ա Հայերէնում **ւ-ով** սկսող ոչ մի բառ չունենք: Այսինքն՝ բառասկզբում արտասանող Վ-ն երբեք **ւ** չի գրում, այլ միշտ գրում է Վ (վարդ, վահան, վերջ, վիզ, վկայ, վարդան, Վռամ): Այս բառերը բարդացուելիս, այսինքն՝ բարդ եւ անանցաւոր դառնալիս, Վ-ի գրութիւնը պահպանում է (գաղթավայր, պատմավէպ, անվճար, ինքնավստահ եւն):

բ. Ի(ւ) տառն արտասանում է Վ, բայց երկու ձայնաւորների միջեւ, նաև բառավերջում ձայնաւորից յետոյ Վ լսուելիս, գրում է **ւ** (սաւան, անիւ, Երեւան, աւելի, գտաւ, հիւանդ, առատու): գ. Վ լսուելիս **ու** ենք գրում բաղաձայնից յետոյ (Աստուած, գուարթ, թուական, Նուարդ), իսկ ձայնաւորների միջեւ գրում ենք **ւ** (սաւան, հիւանդ, օրեւան, առատու):

դ. Բառամիջում **ո**, **ու**, **օ** տառերից յետոյ Վ լսող տառը երբեք **ւ** կամ **ու** չի գրում, այլ միշտ գրում է Վ, որպէսզի **ո-ն** չդառնա **ու**, իսկ **ու-ն** աւելորդ **ւ** չունեցրու (սով, գով, ծով, գովել, որովհետեւ, հովանոց): Միայն **հովիւ** բառն է, որն աւել **ո** եւ **ի** (ինի) ձայնաւորների միջեւ գրում է ոչ թէ **ւ**, այլ՝ Վ, որպէսզի բառը չխաթարուի-չդառնա **հուիւ**:

ե. Բառամիջին եւ բառավերջին **ա**, **ե**, **ը**, **եւ**, **ի** ձայնաւորներից յետոյ երբեք Վ չի գրում, այլ միշտ գրում է **ւ** (նաթ, կարետր, ծրայ, Երոպա, հիւանդ, թիւ): գ. Ի տառը **ի-ին** միանալով կազմում է **իւ** բաղադրեալ ձայնաւորը, որը մի բանի բառերի սկզբում հնչում է **յու**, (իւլ, իւրացնել, իւրաներկ):

է. Բառավերջում լսող Վ-ն գրում է **ւ** տառով (անիւ, արծիւ, հովիւ, շնորհիւ, պատիւ, սեւ, արեւ, հարաւ, թեթեւ):

ը. Կրատրական ձեւերում լսող Վ հնչիւնը գրում է **ւ** (բացում է, գրում է, նշում է եւն):

թ. Վ հնչող **ու-ն** տողադարձի ժամանակ վերածում է **ւ-ի** (Աստ-ուած կամ Աստ-ւած, նը-ւածել, տեղատը-ու-թիւն եւն):

4. Վերականգնել **ոյ** երկհնչիւնը եւ հայերէնին պարտադրուած օտարաբան **ույ-ի** փոխարեն ամենուր գրել **ոյ** (գոյն, սոյն, նոյն, բոյս):

5. Վերականգնել **եօ** երկհնչիւնը եւ յո-ի փոխարեն գրել **եօ՝** արդէօք, ընտանէօք, եօթ ելն:

6. Վերականգնել **եա-ն** եւ բաղաձայնից առաջ **յա-ի** փոխարեն ամենուր գրել **եա** (Դուրեան, մատեան, եարոս, ամեակ):

### Ե, Է

#### Վերականգնել բառավերջի է-ի գրութիւնը:

ա. Բառավերջում է լսելիս, երբեք **ե** չի գրում, միշտ եւ ամենուր գրում ենք այնպէս, ինչպէս լսում ենք՝ է (թէ, գրեթէ, նախօրէ, որեիցէ, երբեւէ, օրըստօրէ, միջօրէ եւն):

բ. Բառասկզբում **ե-ով** սկսող բառերը եօթն անգամ աւելի են, քան է-ով սկսողները: Դրա համար պիտի յիշենք: *Ածանցական յետադաս եան, եայ, եակ, եղէն, երէն, ենի, գեր, եցիկ, եցի, երորդ, եր-ներ, ելի-ելիք, ենք-ենց, ենա-եան, եան* - ստեան, յախտեան, կան մասնիկներ ունեցող բառերը գրում ենք **եչ-ով**. *եան* - ստեան, յախտեան,

ամերիկեան, Յակոբեան (ազգանուններ), **եայ** - բրդեայ, միօրեայ, գործու-  
նեայ, ոսկեայ, արծաթեայ,

**եակ** - քառեակ, հնգամեակ, 50-ամեակ, 100-ամեակ, սենեակ,

**եղէն** - հրեղէն, բոցեղէն, լուսեղէն,

**երէն** - հայերէն, ֆրանսերէն, անգլերէն,

**ենի** - ծիրանենի, խնձորենի, սալորենի,

**զեր** - գերադաս, գերիվեր, գերագոյն,

**եցիկ** - ազդեցիկ, գեղեցիկ, ընկեցիկ,

**եցի** - դրսեցի, կարսեցի, մշեցի, հայեցի

**երորդ** - տասներորդ, հինգերորդ,

**եր-ներ** - (յոզմակերտ մասնիկներ) տեղեր - պատուհաններ

**ելի-ելիք** - ունելի, տեսանելի, զգալի, պակելիք, գրելիք

**ենք-ենց** - Պետրոսենք-Պետրոսենց, Երուանդենք -Երուանդենց,

**ենական** - հայրենական, հօրենական, մօրենական

գ. Բառամիջում ձայնաւորներից առաջ է լուսելիս, միշտ գրում ենք է (յո-  
պէական, գործունէութիւն, հոգեորդի): Բառամիջում **ե** լուսելիս է ենք գրում  
նաեւ այն բառերում, որոնց մէջ է-ի փոխարէն կարող ենք գործածել նաեւ այ  
(հէր-հայր, գէլ-գայլ, ծէր-ծայր):

դ. Բառամիջում է ենք գրում բոլոր այն դէպքերում, երբ բառերը վերջանում  
են **աւետ, եղէն, օրէն, էն, էք, օրէն** ածանցներով (արդիւնաւետ, ոսկեղէն, աղետ,  
անգլերէն, այժմէն, տնօրէն):

ե. Ի-ով վերջացող բառերը ածանցման կամ բարդացման դէպքերում **ե-ով**  
ենք գրում(ապակի-ապակեգործ, գինի-գինեգործ, ոսկի-ոսկեջուր)

զ. Բառամիջում բաղաձայնից առաջ **ե** լսելիս (բայց ոչ վերջին վանկում)  
միշտ **ե** ենք գրում (ամեհի, ամենեւին, անհեթեթ, աւետիս, աւերակ, բերան,  
թզենի, ճենարան, ճերմակ, փերեզակ եւն):

է. Միշտ **ե** ենք գրում նաեւ երկու բաղաձայնից առաջ (բերդ, խեղդել, հրա-  
ժեշտ): Մոյն կանոնը գրաբարեան յոզմակերտ ք մասնիկին չի վերաբերում(օ-  
րինակ՝ անէծք, այսինքն՝ անէծքներ):

ը. Չայնաւորից առաջ է լսելիս, գրում ենք է (քրեական, անէական եւն):

թ. Է-ով ենք գրում այն յատուկ անունների վերջաւորութիւնները, որոնց մէջ  
լուսւմ է ոչ թէ յե, այլ՝ է (Յովհաննէս, Միքայէլ, Ներսէս, Արմէն, Յովսէփ): Բա-  
ցառութիւն են **պետ** վերջաւորութիւնն ունեցող յատուկ անունները (Հայրա-  
պետ, Կարապետ, Հագարապետ):

ժ. Է-ով է գրում բայերի հրամայական եղանակի յոզմակի 2-րդ դէմքի էր  
վերջաւորութիւնը (բերէք, նայէք, վերցրէք):

ժա. Եթէ հոլովելիս (հիմնականում՝ սեռական հոլով) կամ բարդացման  
դէպքում բառամիջի է-ն հնչիւնափոխում-դառնում է ի, այդ բառը՝ մօտ 15 բա-  
ցառութիւններով (աշխտ, հէն-աւագակ, իլէզ, կրկէս, հելլէն, պարէն, պարէտ,  
տէզ, քարտէզ եւն), միշտ գրում է է-ով (սէր-սիրո, տէր-տիրոջ, գէտ-գիտու-  
թիւն): Եթէ սեռականում է-ն ի չի դառնում, գրում է **ե** (կաթի սեր-սերի, Արաքս  
գետ-գետի եւն): Ժք. Է-ով ենք գրում նաեւ **աւետ, ապէս, օրէն, էրէն, եղէն** ածա-  
կաններով վերջացող բառերը(արդիւնաւետ, սեծապէս, նրբօրէն, հայերէն, ոս-  
կեղէն եւն):

7. Բառավերջում **ա-ից** եւ **ո-ից** յետոյ մեծամասամբ գրում է **յ**, որը թէւ չի  
արտասանւում, բայց բառը բարդացնելուց եւ ածանցելուց յետոյ այդ **յ-ն**  
գրում եւ արտասանւում է (արքայ-արքայութիւն, ծառայ-ծառայի-ծառայու-  
թիւն, Մարօ-Մարոյի, հանածոյ-հանածոյի): Դ-ա ճշտում է այսպէս. եթէ տղայ  
կամ հանածոյ բառը գրում ենք առանց **յ-ի**, բայց հոլովելիս կարողւմ եւ գրում  
ենք տղայի, հանածոյի, այդ դէպքում **յ-ն** որտեղի՞ց եկաւ...

### Բացառութիւններ.

ձայնաւորից յետոյ **յ** չի գրում հետեւեալ դէպքերում.

ա. Հրամայական բայեր՝ խաղա՛, գնա՛, մի՛ գնա: Բայց նոյն բառերի հար-  
կադրականը կամ ժխտական դերբայը գրում է **յ-ով** (կը գնայ, չեն գայ):  
բ. Սա, դա, նա, քո դերանունները, նաեւ՝ ահա, ապա, հապա, հիմա, այո,  
հա:

գ. Յատուկ անուններ՝ Աննա (բայց՝ Աննայի), Սիրիա, Սեբաստիա, Մա-  
րօ(բայց՝ Մարոյի):

դ. Բառավերջում **յ** չեն յաւելում նաեւ **ա-ով** վերջացող օտար բառերը՝ զիմ-  
նագիւս, լամպա եւն:

### Ո, Օ

Մեսրոպեան այբուբենում **օ** տառ չկար, **օ-ն** գրում էին **աւ-ով** (աւր- օր,  
կաւշիկ-կօշիկ, ծնատ-ծնօտ): **Օ** տառը այբուբեն մտաւ Ժ-ԺԱ դարերում, երբ  
կաւշիկ-կօշիկ, ծնատ-ծնօտ): **Օ** տառը այբուբեն մտաւ Ժ-ԺԱ դարերում, երբ  
աւ երկբարբառը վերածուեց **օ** հնչիւնի: Այդ ժամանակ մեսրոպեան **վո** հնչիւնի  
**ո** տառը գործածւում էր բառակազմի (ոչ, ոսկի, որակ, որոշ):

ա. Բառակազմում **օ** լսելիս միշտ **օ** ենք գրում (օր, օրհնել, օդ, օրինակ):  
Բացառութիւն են միայն չորս բառ՝ **ով-ովքեր, ովկիանոս, Ովսաննա** եւ **ովա-  
սիս:**

բ. Բառասկզբում **ռ** (վո) լսելիս, **ռ** էլ գրում ենք(որդի, ոսկի, որ, ոգի եւն): Բացառութիւն է միայն **վռհմակ** բառը, որը թէւ հնչում է **վռ**, բայց գրում ենք ոչ թէ **ռ**-ով, այլ՝ **վռ**-ով:

գ. Բառամիջում **օ** լսելիս մեծամասամբ գրում ենք **ո** (գործ, բոլոր, մոլորակ, անորոշ): Բառամիջում քչաթիւ բառերում է, որ **օ** լսելիս **օ** էլ գրում ենք՝ կարօտ, խօսք, առաօտ:

դ. Բառամիջում **օ**-ով են գրում նաեւ **օն** եւ **օնք** ածանցներ ունեցող բառերը(գործօն, կտրօն, զարթօնք):

ե. Այն բառերը, որոնք վերջանում են **օ** հնչիւնով (երեկո, անհաճո, մեծարգո), բառի վերջին աւելացնում ենք **յ**(երեկոյ, անհաճոյ, մեծարգոյ): Բացառութիւն են միայն **այո** եւ **քո** բառերը, որոնք թէւ **օ** հնչիւնով են վերջանում եւ պիտի վերջում յաւելիինք **յ**, բայց գրում ենք առանց **յ** -ի յաւելումի:

զ. Հայերէն ոչ մի պարզ բառ ձայնաւորից առաջ **օ**-տառով չի գրում:

**Յ-Հ ուղղագրութիւնը**

**Յ**-ն բառասկզբում պէտք է կարդալ **հ**, քանի որ **հ** տառի նման է հնչում:

ա. **Հ** լսուող բառերի մեծ մասը գրում ենք **հ**-ով, փոքր մասը, մօտաւորապէս 100 բառ, գրում է **յ**-ով:

բ. Եթէ գրական լեզուի **հ**-ով սկսուող բառասկզբի **հ**-ն Վանի, Խոյի, Բայագետի եւ այլ բարբառներում հնչում է **խ**, այդ բառերը գրականում գրում ենք ոչ թէ **յ**, այլ **հ** (խաց-հաց- խայ- հայ, խա- հա):

գ. Եթէ բառասկզբի **հ**-ն հանելուց բառի իմաստը չի փոխւում, այլ մնում է նոյնը, այդպիսի բառերի բացարձակ մեծամասնութիւնը գրում ենք **յ**-ով (աջող-յաջող, օնք-յօնք, առաջ-յառաջ, արձակուել-յարձակուել: Նոյնը վերաբերում է նաեւ բոլոր այն յատուկ անուններին, որոնք խոսակցականում գործածւում են նաեւ առանց **յ** տառի: Այդ անունները գրում ենք **յ**-ով: Օրինակ՝ Յակոբ-Ակոբ, Յարութիւն- Արութիւն, Յովհաննէս- Օվանէս, Յովսէփ-Օսէփ, Յովակիմ-Օվակիմ եւ այլն: Կան **Յ**-ով սկսող եւս մի քանի յատուկ անուններ, որոնք գրում ենք **Յ**-ով. Յիսուս, Յոր, Յովհան, Յուդա, Յուսիկ, Յասմիկ:

դ. Բաղաձայներից առաջ **հ** լսելիս միշտ գրում ենք **հ**, ոչ թէ **յ** (հրաշք, հրուանդան, հմուտ, հսկայ, հնագանդ, հպարտ, հոշակ, հօր եւլն): Բացառութիւններ են միայն **դ**-ից առաջ գրող ընդամենը 4 բառերը (**յղի, յղել, յղել եւ յղվանալ**), երբ բաղաձայնից առաջ **հ** լսուելիս ոչ թէ **հ** է գրում, այլ՝ **յ**:

ե. **Ս** տառից առաջ **հ** լսող բոլոր բառերը նոյնպէս գրում են **հ**-ով (հսկայ եւ այլն): Բացառութիւն է միայն մէկ բառ՝ **յստակ**:

զ. Աւանդական ուղղագրութեամբ բառավերջի **ա** եւ **ո** տառերից յետոյ միշտ գրում ենք չարտասանուող **յ** տառը (ծառայ, երեկոյ, գուլպայ, փեսայ

եւլն): Այստեղ անհրաժեշտ է յիշել մէկ բացառութիւն: Քանի որ մեր լեզուում **յ** է գրում միայն **ա** եւ **ո** տառերից յետոյ, ուստի **օ** հնչիւնով վերջացող որոշ յատուկ անուններ(Դրօ, Խէչօ, Մարօ, Վանօ եւն) ուղղական հոլովում **յ** չեն ստանում, քանի որ ուղղականում վերջանում են ոչ թէ **ո** տառով, այլ **օ** տառով: Այդ նոյն բառերը սակայն երբ հոլովում ենք, հոլովուելիս **օ**-ն դառնում է **ո**: Այդ պատճառով, ուղղականում **օ**-ով վերջացող յատուկ անունները հոլովուելիս իւրեւր **օ**-երը դառնում են **ո**, ուստի այդ **յ**-ն ստանում են: Այսպէս՝ Դրօ-ն ուղղական հոլովում գրում ենք առանց **յ**-ն յաւելելու՝ Դրօ, քանի որ բառը վերջացել է ոչ թէ **ո** տառով, այլ **օ** տառով: Բայց սեռական կամ ցանկացած այլ հոլովում Դրօ-ն ոչ թէ **օ**-ով ենք գրում(Դրօյի), այլ՝ **ո**-ով՝ Դրոյի-Դրոյից, նոյնը նաեւ Խէչօ- Խէչոյի- Խէչոյով- Խէչոյից, Մարօ-Մարոյի-Մարոյից եւլն:

**Հայոց այբուբենը, տառանունները եւ տառերի բուային արժեքները**

Ա-այբ -1	Ժ-ժե - 10	Ճ-ճէ - 100	Ռ-ռա - 100	Օ-օ
Բ-բեն - 2	Ի -ինի - 20	Մ-մեն - 200	Ս-սէ - 2000	Ֆ-ֆէ
Գ-գին - 3	Լ-լին - 30	Յ-յի - 300	Վ-վէ - 3000	
Դ-դա - 4	Խ-խէ - 40	Ն-նու - 400	Տ-տին - 4000	
Ե-եչ - 5	Ծ-ծա - 50	Շ-շա - 500	Ր-րէ - 5000	
Զ-զա - 6	Կ-կեն - 60	Ո-ո - 600	Ց-ցո - 6000	
Է-է - 7	Հ-հո - 70	Չ-չա - 700	Ի-իին - 7000	
Ը-ըբ - 8	Ձ-ձա - 80	Պ-պէ - 800	Փ-փիւր - 8000	
Թ-թոյ -9	Ղ-ղատ - 90	Ջ-ջէ - 900	Ք-քէ - 9000	

ԱՄՓՈՓԻՉ ԲԱՆԱՅԱՆԿԵՐ

- Օ**  
**օդ** զօդել, յօդ, յօդուած, վառօդ  
**օբ** աղօթք, ամօթ, անօթ, եօթ, թօթափել, թօթուել (բայց՝ թոթովել), ծանօթ, տօթ  
**օղ** դողանջ, Պօղոս, ցօղ, ցօղուն, քօղ  
**օն** արտօնել, գործօն, զարթօնք, զգօն, թափօն, կտրօն, կրօն, ձօն, յօնք, տօն  
**օշ** դրօշ (բայց՝ դրոշմ), լօշիկ, կօշիկ, յօշոտել, շօշափել  
**օս** ակօս, զբօսնել, խօսք-խօսել (բայց՝ խոստում, խոստովանել), Սօս, սօսի,  
**օտ** աղօտ, առաւօտ, արօտ, գօտի, կարօտ, համառօտ, հետազօտել, հօտ (ոչխարի հօտ, բայց բուրմունքի հոմանիշը գրուած է ո-ով՝ հոտ), ծղօտ, ծնօտ, մօտ (բայց՝ մրոտ, կեղտոտ)  
**օր** եղբօր, հօր, մօր, գօր (ք), թափօր (բայց՝ Թաքոր լեռ), հզօր, Մեծամօր, մօրուք, յօրանջել, յօրինել  
**օրէն** լրջօրէն, մեղմօրէն  
**օք** արդէօք, իրօք, խելօք, օրօք, ցաւօք, առօք-փառօք

Հ հետ- հետք, հետելել, որովհետեւ, հետազիծ, հետամուտ, հե-տա-գօ-տել, հետախոյզ, հետապնդել, հետաքննել:

**Յ** յանիրաի, յանձն, յանձնել, յանձնաժողով, յանպատրաստից, յանուն, յասմիկ, յարծակուել, յարատեւ, յարգելի, յարդ (դարման), յիրաի, յի, յղել, յօգուտ, յօդ ցնդել, յտակայս:

**յ** յագենալ (բայց՝ հագնել, հագագ), յախճապակի, յախտուն, յաղթել, յաճախ, յամառ, յայտ, յայտնի, անյայտ, բացայայտ, ակնյայտ, արտա-յայ-տել, յանգ, յանգել (յանգել ինչ որ բանի, բայց՝ հանգիստ, հանգչել, հանգանակ), յանդիման, յանդուգն, յանկարծ, յանցանք, յապաղել, յապատել, յաջող, յա-ջորդ, յառել, յասմիկ, յատակ, յատուկ, յարաբերութիւն, յարգանք, յար-դարել, յարել (միանալ, բայց՝ հարել- հարուածել-խփել), յարիւր, յարկ շէնքի (բայց՝ հարկ-պարտաւորութիւն), յարմար, յարութիւն-Յարութիւն, յաւակնել, յաւելում, յաւերժ, յաւէտ, յախտեան, յափշտակել, յարաբերութիւն-փոխարաբերութիւն:

**յար** (միշտ) յարատեւ, յարակայ (բայց՝ հարել-հարուածել-խփել):

**յարա** յարաբերութիւն, յարակատար (բայց՝ հարեան):

**յարկ** յարկաբաժին

**յեա** երեկոյեան, ախոյեան, հայեացք, կայեան, դայեակ, Հմայեակ, Աղայեան, Սարոյեան (բայց՝ Գայիանէ):

յեղ յեղափոխական, յեղաշրջում, ծայրայեղ, խելայեղ, յեղյեղուկ (բայց՝ հեղել, հեղինակ, հեղուկ):

**յեն** յենուել, յենարան (բայց՝ ծովահեն, հենք):

**յետ** (դէպի յետ, բայց՝ հետ-միասին) :

**յետ-յետա** յետ, յետպատերազմեան, յետգրութիւն, յետայսու, յետոյ, յետ-տեից, յետիւն, յետնորդ, յետոյք, յետածգել, յետադարձ, յետ-տա-մնաց, յետադաս:

**յի** յիմար, յիսուն (բայց՝ հինգ):

**յղ** յղի, յղել, յղկել, յղփանալ:

**յո** յոբելեան, յոգնած, յոգնակի (բայց՝ հոգի, հոգալ, հոգս), յոխորտալ,

**յո-ռետես**, յովագ, յորդ, յորդոր, յորձանք:

**յոյ** յոյս, յոյն-Յունաստան, յոյգ, յոյժ (բայց՝ հուժկու):

**յու** յուզել, յուղարկատրել, յուշել, Յունան, Յուսիկ, յստակ:

**յօ** յօդ, յօդուած, յօժար, յօնք, յօշոտել, յօրանջել, յօրինել:

**Է**

**Էլ** Միքայել, Սամուէլ եւ աստուածաշնչեան այլ անունները, բացի Աբելից, գրուած են էլ-ով (բայց՝ Առաքել, Գնել, Արիստոտել, Մարսել):

**Էն** Արմէն, Արսէն, Շահէն եւն (բայց՝ Աղէն):

**Էն/կէն** արդէն, ծուէն, նորէն, հելլէն, ծակոտկէն, հիսկէն:

**Էս-Էաս** Վաղէս, Յովհաննէս, Անդրէաս (բայց՝ Գալիլիա, Հերակլէս):

**Էռ** լեզոն, պանթոն, նեպալատոնիզմ, Գէորգ-Գետրոգ, Գեղէոն, Թէոդոս,

Թաղէոս, Բարթոլոմէոս:

**Էք** արժէք, կողպէք, նշանդէք, ջրօրհնէք, կաղանդէք (բայց՝ ամենուրեք,

երկուստէք) :

**Է-ակիր** այն բաները, որոնց մէջ հնչող **ե-ն** սեռականում փոխում է ի-ի (սէր-սիրոյ, գէտ-գիտութիւն, գէր-գիրութիւն, մէգ-միզել եւն), գրում են է-ով. օրի-նակ՝ անէժք, ապաւեն, գրագէտ, հայագէտ (բայց՝ Արաքս գետ, գետին), գէր (մսեղ, բայց՝ գերագոյն, գերբնական), դէգ, դէմ, դէմք, ընդդէմ, դէպի, դէպք, հազուադէպ, զէնք, անգէն, ծէս, անկէգ, ողջակէգ, կէս, հանդէպ, հրաւեր, ձէք, մէգ, մէգ-միզել (բայց՝ մեգ մօտ), մէջ, մէջք, յաւէտ (յախտեան), նուէր, շէկ, շէն, մէգ, հրշէջ (շիջել-շիջանել), անշէջ, պատուէր, պարտէգ, պէս-պէս, ինչպէս, այսպէս, պէտք-պիտոյ (բայց՝ պէտ, Հայրապետ), սէր-սիրել (բայց՝ սերել, սերունդ եւն), ջրվէժ, գահավէժ, վէճ, վէմ (վիմակառոյց), վէպ, վէրք, վրէժ, սերունդ եւն), ժամանակավրէպ, տէր, փոխարէն, քէն-քիցօտ, օրէնք, տնօրէն: անվրէպ, ժամանակավրէպ, տէր, փոխարէն, քէն-քիցօտ, օրէնք, տնօրէն:

**Է--ալլուիա**, աղէտ, աղուէս, ամեն, ամենքը, ընդամենը(բայց՝ ամենալաւ, ամենայն, ամենուրեք), առնէտ, ասպարէգ, բզէգ, գահրնկէց, երէց, գէք, գոմէշ, եղէգ, երէկ (բայց՝ երեկոյ), Երուսաղէմ, քէս, քէկուգ, քէպէտ, ժապաւեն, խէժ, եղէգ, երէկ (բայց՝ երեկոյ), Երուսաղէմ, քէս, քէկուգ, քէպէտ, ժապաւեն, խէժ, կէտ (եւ նշանք, եւ կենդանին), կրկէս, հէնց, հրէշ (բայց՝ հրեշտակ), մէկ (բայց՝ կէտ (եւ նշանք, եւ կենդանին), կրկէս, հէնց, հրէշ (բայց՝ հրեշտակ), մէկ (բայց՝ մեկին, մեկուսի, մեկնել), մէն-մի, մողէս, պատմէշ, պատճէն, պարէն, պարէտ, պեպէն, տարեցտարի (բայց՝ տարեց), բարտէգ, քրէական:



**Հայ երիտասարդութեանն ուղղած  
Գարեգին Նժդեհի պատգամներից**

Հոգեպէս ծոյլերն են ստեղծած *դժուարին ու անկարելի* խօսքերը: Բոյր ու եղբայր են *չկարենալն ու չկարողանալը*: Հազարամղոն ճամբորդութիւնն սկսում է մի հատիկ քայլով: Չկայ անկարելին, երբ կայ զօրեղ ու վճռական կամքը: Գիտցի՛ր, եղել են կամքի հսկաներ, որոնք առաջարկել են Աղեքսանդր Մակեդոնացուն՝ իր արձանը կերտել Աթոս լեռը տաշելով:

Թագաւորը նա՛ է, ով կարող է:

Ես ուզում եմ, որ դու լինես թագաւոր սերունդ:

Քանի դեռ գետափին ես — տկար ես: Անցա՞ր — կեսար ես:

Անցի՛ր հայ երիտասարդութիւն, անցի՛ր Ռուբիկոնը, որի հանդիպակաց ափին քեզ յաղթութեան դափնին է սպասում:

Յաղթութեան ու պարտութեան միջեւ ամբողջ պետութիւններ կան, ասել է Բոնապարտը:

Քո վաղուան յաղթանակի եւ պարտութեան միջեւ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը կայ, հա՛յ երիտասարդութիւն:

Ահա՛ թէ ինչու քեզ պէտք է յաղթել, քեզ պէտք է յաղթանակի լուսապսակ ստեղծել քո ժողովրդի անուան ու ճակատի շուրջը:

Իսկ դրա համար քեզ պէտք է լինել աւելի քան հայ եւ Մարդ:

**ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵՀԻ ՄՏԱՄԱՍՈՒՆՔՆԵՐԻՑ**

Անցի՛ր հայ երիտասարդութիւն, անցի՛ր Ռուբիկոնը, որի հանդիպակաց ափին քեզ յաղթութեան դափնին է սպասում:

Հոգեպէս ծոյլերն են ստեղծած *դժուարին ու անկարելի* խօսքերը: Բոյր ու եղբայր են *չկամենալն ու չկարողանալը*: Հազարամղոն ճամբորդութիւնն սկսում է մի հատիկ քայլով: Չկայ անկարելին, երբ կայ զօրեղ ու վճռական կամքը: Գիտցի՛ր, եղել են կամքի հսկաներ, որոնք առաջարկել են Աղեքսանդր Մակեդոնացուն՝ իր արձանը կերտել Աթոս լեռը տաշելով:

Թագաւորը նա՛ է, ով կարող է:

Ես ուզում եմ, որ դու լինես թագաւոր սերունդ:

Քանի դեռ գետափին ես — տկար ես: Անցա՞ր — կեսար ես:

Յաղթութեան ու պարտութեան միջեւ ամբողջ պետութիւններ կան, ասել է Բոնապարտը:

Քո վաղուան յաղթանակի եւ պարտութեան միջեւ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը կայ, հա՛յ երիտասարդութիւն:

Ահա՛ թէ ինչու քեզ պէտք է յաղթել, քեզ պէտք է յաղթանակի լուսապսակ ստեղծել քո ժողովրդի անուան ու ճակատի շուրջը:

Իսկ դրա համար քեզ պէտք է լինել աւելի քան հայ եւ Մարդ:

*Կուսողաշտում եղի՛ր անխնայ, բայց ոչ վայրագ:*

*Կռուի նպատակը յաղթութիւնն է:*

*Յաղթանակը տարւում է դեռ կռիւը չսկսւած՝ նախ բարոյապէս, նախ հոգիների մէջ:*

Մահ չկայ, մեռնում է փոքրոգին, վախկոտը, մեռածն է մեռնում:

Ղեկավարները կամ նշանակում են, կամ յայտարարում: Մէկը կատարում է այն, ինչ որ հնարատր է համարում: Միւրը՝ իրեն հետետող գործին թէ ժողովրդին ներշնչում է անկարելին կարելի դարձնելու հզոր եւ հրաշագործ հաստը:

Առանց գորատր խօսքի՝ չկայ իշխանութիւն հոգիների վրայ, իսկ առանց այդ իշխանութեան՝ չկայ յաղթութիւն:

Սպաննուածների, վիրատրների, գերուածների, ինչպէս եւ պատերազմական ասարի քանակը եղել է եւ շարունակում է մնալ պարտութեան երկրորդական ազդակը: Էականը այն բարոյական ազդեցութիւնն է, որը ունենում է կռուող կողմերից մէկը միսի վրայ:

Ես նիւթական հնարատրութիւնը չունէի եւ չպիտի ունենայի հաւասար ուժերով դիմադրելու թշնամու: Վաշտը՝ լաւագոյն դէպքում մօտ 100 հրացանածիգ, ահա՛ իմ մարտական ուժերի այն միատորը, որը պիտի ճակատէր թշնամու գումարտակի, գնդի, երբեմն էլ աւելի մեծ գորամասի դէմ:

Իմ ռազմավարութիւնը՝ բարոյական գերակշռութիւն ստեղծել եւ ապա հարուածել՝ ինձ հնարատրութիւն էր տալիս.

Ա. Թշնամուն խուճապի մատնել եւ ապա ծեծել

Բ. Թշնամու ուժերը ամբողջովին կամ մասամբ առնել տաքտիքական արցանի մէջ եւ ապա ջարդել

Գ. Յաճախ նրան շեղել իր գործողութեան ուղղութիւնից եւ օգտուել նրա սխալներից

Դ. Միշտ էլ հարկատր կէտերի վրայ լինել գործօն, ակտիւ

Ե. Ուժեղ լինել հարկատր վայրկեանում

Զ. Գամել թշնամուն իրեն համար տեղագրական անյաջող պայմանների մէջ եւ պարտադրել կռիւր

Է. Խուսափել դիրքային ձգձգուող կռիւներից

Ը. Ամենանուագագոյն չափերի հասցնել զոհերի թիւը եւ ռազմաթերքի ծախսը եւն...

Լեռնահայաստանի երկամեայ կռիւների ընթացքում, թշնամուն՝ մուսավաթական Ադրբեջանին թէ Խորհրդային Ռուսաստանին՝ չյաջողունց զինու ուժով տէր դառնալ մեր զիւղերից անգամ մէկին:

Թշնամին – թաթար, ռուս եւ թուրք – թուապէս եւ տեքնիկապէս անելի քան հարիւր անգամ գերազանցելով Միւնիքի ուժերը, տուաւ մեզնից անելի քան հարիւր անգամ զոհեր, մի քանի հազար գերիներ, պատերազմական մեծաքանակ ասար: Մենք ունեցանք սպաննուած միայն եւ միմիայն 28 հոգի, եւ չտուինք ոչ մէկ գերի, ոչ մէկ ասար:

1920 թ. յուլիսին Միւնիքում գործող բոլոր հակաբոլշեիկեան կուսակցութիւնները՝ Ազգային խորհուրդը, Հայաստանի Հանրապետական կուսակարութեան ներկայացուցչութիւնը եւ իր կանոնատր գորամասերը, ինչ-որ նկատառումներով դիմադրութիւնը անհնարին համարելով, լքեցին այդ երկրամասը եւ քաշուեցին Արարատեան Հայաստան:

Ապստամբ ժողովրդին միայն Աստուած կարող է յաղթել:

Կոյր եւ բարբարոս կուսակցամուրթիւնը – մի զարհուրելի ախտ, որ պիտ թուլանայ, որ ուժեղանանք ազգովին:

Իր ընտիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը՝ ապերախտ ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ նահատակների սրբազան ածիւնից կը բարձրանայ:

Ազգերին, որպէս իրենց ստուերը, հետետում է իրենց արժանի բախտը:

Հայրենապաշտպան դաստիարակութիւն – ահա մեր փրկութեան խարիսխը:

Աւարայրը կը մնա մարդկութեան պատմութեան ամենավեհափառ գործերից մէկը: Իր յաղթական նահատակների աստուածային խիզախումով ու դիցազնական խոյանքներով նա աւելի վեհ է ու զեղեցիկ, քան մեր դարի ամենամեծ ճակատամարտերը:

Ռազմավարութիւն ասելով աւելի կռուեցնելու, քան կռուելու արուեստ պիտի հասկանալ: Կռուեցնել կարողանալ՝ ահա՛ յաջողութեան գաղտնիքներից մէկը:

1920-ի վերջերին քեմալական զօրքը, զինւած ու զգեստաւորուած Մոսկուայի միջոցներով, բուշեիկեան բարձր հրամանատարութեան ցանկութեամբ Հայաստանի Հանրապետութեան զինուորական բովանդակ ուժերը քաշում է եւ գրադեցնում Սարիղամիշ-Կարս ռազմաճակատի վրայ: Խորհրդային մի աննշան զօրամաս առանց կռուի եւ դիմադրութեան մտնում է Երեւան: 1920 թ. դեկտ. 2-ին Հայաստանը, կրճատուած մինչեւ Արփաշայ, յայտարարում է խորհրդային:

Բարբարոս համիալամականութեան հետ դաշնակցող ռուսական բուշեիկմին պէտք էր շահել մուսուլման մասսաների համակրանքը. ահա՛ թէ ինչու պէտք էր Մոսկուայի եւ Անգորայի մերձարեւելեան նպատակների ճանապարհին ընկած Հայաստան երկիրը վերածել դիակների կամուրջի սեւ ու կարմիր զինակիցների միջեւ...

Այո՛, ռուսական «յեղափոխութիւնը» մահմեդականութեան աչքին քաղցրացնելու նպատակով տաճիկներին նուիրաբերեցին մեր արիւնաներկ երկրի մեծագոյն մասը:

Տաճիկներին Հայաստան մտցրեց Մոսկուան, - ահա՛ ճշմարտութիւնը, որը չպիտի կարողանայ սպաննել խորհրդային կացիւնը:

Տգիտութիւն, եսականութիւն եւ աշխարհաքաղաքացիութիւն - ահա երեքը հայրենասիրութեան անհաշտ թշնամիներից:

Բացարձակապէս հաշտելի են հայրենասիրութիւնն ու մարդասիրութիւնը:

Միայն ազգասէրը կարող է սիրել եւ մարդկութիւնը:

Եւ ո՛չ մի ընչազուրկ՝ քո հողի վրայ: Խեղճերի արցունքից ու թուլերի անարիտութիւնից են քանդում հայրենիքները: Բոլոր որդիներդ անկաբօտ եւ արի:

Մայիսի 28-ը-դա ո՛չ սովորական նուէր է մեծ ազգերի կողմից տրուած մեր ժողովուրդին, ոչ ողորմութիւն՝ աշխարհի խղճի կողմից մարդասիրաբար տրուած մեզ, ոչ էլ հին հարստութիւն՝ թողնուած մեզ մեր պապերից:

Դա արժէքն է մեր վարած այն մեծ, այն եզակի ազատամարտի, որի նմանը չունի ազգերի տարեգրութիւնը: Դա արժէքն է մեր հոյակապ, մեր աշխարհացունց մարտիրոսագրութեան:

Վերանորոգուելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամէն ժամ, ամէն վայրկեան:

Հոգեկան ցնցումների ընդունակ ժողովուրդները միայն կարող են վերանորոգուել:

Դաստիարակութիւն, որ ազգային հզօր զգացումով եւ արթուն գիտակցութեամբ զինէր հայութեանը, որ արիացնէր եւ դառնար մայրը բարձր ժողովրդասիրութեան եւ գաղափարապաշտութեան... Դաստիարակութիւն... որ մղէր հայ մարդուն մեռնել ապրելու եւ ապրեցնելու հարականացներ սոցիալական մար եւ ոչ թէ ապրել մեռնելու համար, որ իրականացնէր սոցիալական հնարատր արդարութիւնը մեր ժողովրդի մէջ:

Հոգու հիւանդութիւն ունեն ժողովուրդները, երբ դժգոհում են իրենց հայրենիքից:

Հիւանդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչեւ այժմ երկու առաքինութիւն է ունեցել՝ իր դժբախտութիւնները վերագրել արտաքին պատճառների եւ փրկութիւնը յուսալ արտաքին ոյժերից:

Պարտուեցինք, որովհետեւ մեր ցեղի ոգու բովանդակ ուժերն օգտագործելու փոխարէն հովանատրներ փնտրեցինք:

Ուժ է ճշմարտութիւնը: Չկայ ուժ առանց ճշմարտութեան: Չկայ փրկութիւն առանց ուժի:

Ճշմարտութիւնը – դա աստուածային այն լոյսն ու ջերմութիւնն է, որով կը սնուի ու կը հզօրանա հոգին՝ անհատի եւ ժողովրդի:

Պարտութիւն, ստրկութիւն, տառապանք – ահա կեղծիքին հարկատու ժողովուրդների ճակատագիրը:

Ճշմարտութեան մէջ ապրող անհատի եւ հասարականութեան հիմքը դրուած է լինում ժայռի, կեղծիքի մէջ խարխափողների՝ աւազի վրայ:

Հայ երիտասարդ... դու պիտի սպանես կեղծիք հրէշը, որ սպառնում է մեր ազգի նիւթական եւ բարոյական գոյութեան: Վաղուց է, ինչ այդ եռագլխանի հրէշը, յենուած մեր հասարակական կեանքի գռեհկութեան, չաստուածաբար պաշտում է եւ իշխում մեր ժողովրդի որոշ տարրերի հոգու եւ մտքի վրայ: Նա մեհեաններ ունի ցցուած ամէն տեղ, ուր կը տղայ տկար, անարի, անանձ հայր: Նա անտուրբ բազիններ ունի, որոնք դու, Ավարայրի հերոսի սրբազան կատարութեամբ պիտի խորտակես:

Պիտ պարտի, պիտ մեռնի կեղծիքը մեր կեանքում, որ ապրի մեր ժողովուրդը:

Նազովրեցին կ'ուսուցանէր, թէ մարդու մէջ ապրող հոգին աւելի արժի, քան ողջ աշխարհը:

Նախ մարդ: Դա նշանակում է զգալ իր հոգու մէջ ներկայութիւնը որեւէ բարձր բարոյականի իդէալ: Դա նշանակում է իր էութեան մէջ զգալ անվերջ բոցավառումն այդ իդէալի սրբազան կրակի:

Իդէալ եւ աննուաղ ձգտում դէպ այդ վերջինը – ահա՛ թէ ինչն է մեզ

իրաւունք տալիս մարդ կոչուելու:

Ինչո՞ւ կը տառապի մարդկային ցեղը:

– Որովհետեւ միամիտ մարդը իրենից, իր հոգուց դո՛ւրս փնտռեց եւ կը փնտռէ երջանկութիւնը:

Որովհետեւ նիւթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը եւ իր կեանքը վերածեց դժոխքի:

Քո վաղայ յաղթանակի եւ պարտութեան միջեւ հայ ժողովրդի լինել – չլինելու հարցը կայ – հայ երիտասարդութիւն:

Կուսակցականի նշանաբանը կը դառնայ – կուսակցութեանս հետ, քայց ազգիս համար:

Ստեղծագործող, ոչ նմանող: Անճանաչանութիւն է նմանուելը:

Կ'ուզէի, որ դու, հայ երիտասարդ, որ դու իրացնէիր ինքնաճանաչութիւնը՝ որպէս ուժի, յաղթանակի եւ բարձր երջանկութեան ամենակարճ եւ ամենաստոյգ ճամբան:

Անյուսօրէն տգէտները միայն չգիտեն այսօր, որ չօգտագործող ոյժերի մի հսկայական պահեստ է մարդս, որից դժբախտաբար կարողանում են օգտուել քչերը միայն:

Մի նախանձիր, քանզի աշխարհը ոչինչ չունի, որ չունենա քո հոգին:

Թուլութիւն է չարութիւնը:

Ասպետ եղիր նախ անձիդ նկատմամբ:

Կրքերն ու կարիքները ծառաներ պիտ լինեն, ոչ թէ տէր ու բռնակալ:

Թոյլ մի տուր, որ վատերը իրենց բոյնը հիստեն ուղեղիդ մէջ:

Այն օրից, ընթերցող, երբ հայը վախենալ սկսեց մահից, այն օրից օտարը քազատրեց Հայաստանում:

Ես տեսայ մեր վարած ճակատամարտերում, տեսա ամենաընտիրը հայու – մեռնելու մտքի հետ հաշտուած, ամէն գնով յաղթելու անտեղիտալի վճռականութեամբ դէպ թշնամին խոյացող հայ զինուորը:

Հանգիստ սրտով պիտի մեռնիմ, երիտասարդ հայ, եթէ քո սերնդի օրով «հայօրէն» բառը մեր ժողովրդի բարեկամների եւ թշնամիների կողմից գործածուի «քաջօրէն» բառի իմաստով:

Քանի դեռ իր ամբողջութեան մէջ քաջ եւ քաջանուն չէ հայութիւնը, նրա համար անցած չէ դեռ աշխարհի քարտէսից ազգովին անհետանալու վտանգը:

Արի է նա, ով իր մէջ սպանել է իր կաշտի համար դողացող անասունը:

Հայ երիտասարդութիւն, պիտի կարողանա՞ս արտաքին վտանգի ժամանակ ձեռքդ խղճիդ գոչել.

– Ես քո կենդանի սուրն եմ, հայրենիք, որ քեզ յաղթութիւն պիտի բերի:

Նախ հերոսների եւ նահատակների գերեզմանատուն, ապա՝ ազատ ու երջանիկ հայրենիք:

Երբ որ մեր սիրտը եւ ուղեղը լցնողը ապառաժահիմն ու յաղթական հայրենիքի գաղափարն է՝ վաղուայ Հայաստանը չի կարող աւազահիմն, ապազօր եւ դժբախտ լինել:

Ազգերն ունեցել են, ունեն ու պիտի ունենան իրենց արժանի ճակատագիրը:

Երբէք եւ ոչ մի տեղ՝ առանց հոգեւոր հայրենիքի:

Հայրենիք: Երկիւղած սէր եւ յարգանք դէպ մեր նախահայրերի յիշատակը, դէպ մեր կրօնը, որ ցեղի սիրտն է, դէպ մայրենի լեզուն, որ հայրենասիրութեան թխմորն է, դէպ տոհմիկ գրականութիւնը եւ արուեստները, որ ցեղի մտքի եւ հոգու կեանքն են, ազգային պատմութիւնը, որ «ցեղի հոգին ամրացնելու ճիգերի պատմութիւնն է», իրար յանդիմանող սերունդների՝ հայրենի հողի վրայ թափած քրտինքն ու արիւնը, զորդող սերունդներին՝ հայրենի հողի վրայ թափած քրտինքն ու արիւնը, որակներն ու Հայկայ եռաթեւ աղեղը, դէպ մեր հեթանոս աստուածներն ու փառատաճարները, անասան հաւատը դէպ մեր մեծ Յոյսը: Գու՞ ու մարի՛ր, ընթերցող, գումարի՛ր այդ բոլորը, եւ կը ստացի հոգեւոր հայրենիքը:

Չկան մեծ եւ փոքր ազգեր: Կան հաւասար իրաւունքով անդամները մարդկութեան ընտանիքի: Եւրոպական դիւանագիտութեան կեղծ լեզուն է ստեղծել «մեծ» եւ «փոքր» անունները: Եւրոպիտ մեծութիւն չէ թուական գերազանցութիւնը:

Հայրենիքը պիտի սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից, ինչպէս եւ անկախ մեր քաղաքական համոզմունքներից:

Ամէն անգամ, երբ կը մտածեմ չարաբաստ հայանունների մասին, կը պատկերացնեմ այն տեսարանը, որ տեղի է ունեցած հրէական ամբոխի եւ Հրէաստանի փոխարքայի միջեւ:

Ամբոխը – Եթէ ազատ արձակես սրան, – մատնանշելով Նազովրեցուն, – կնշանակի կեսարի բարեկամը չես:

Պիղատոսը – Չեր թագաւորի՞ն խաչ հանել տալ:

Ամբոխը – Մենք ուրիշ թագաւոր չունենք կեսարից գաւտ:

Հայուհին, որ կարող է փոխարինել խաչափայտի առջեւ իր աստուածաման որդու վերքերը սգացող Տիրամօրը – հայ կինը աւելի հերոսուհի, քան թախծութեան մայր պիտի լինի:

Երբեւ տեսնուած չէ, որ ժողովուրդն աւելին չտար, քան կարող են

պահանջել իր առաջնորդները:

Ուր մարդիկ խոստովանում են իրենց տկարությունը, բայց չեն ամաչում տկար լինելուց – հոգետր ստրկություն է տիրում այնտեղ:

Ծիծաղելի է տկարի ներումը, ինչպես եւ նրա հաշտարար ոգին: Ներե՞լ էք ուզում – արիացէ՞ք, հզօրացէ՞ք, յաղթէ՞ք նախ:

Մի օր հայությունը պիտի ների բոլորքեան, բայց ո՛չ ծունկի եկած նրա առջեւ, պարտուելուց յետոյ, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց յետոյ:

...Կռիւր կը սկսի Չիրաւի տափարակի վրայ... երբ Ներսէս Մեծը կը բարձրանա Նայատ լեռը, ձեռքերը կը բարձրացնէ դէպի երկինք եւ աղօթելով, կ'իջացնէ ձեռքերը, մինչեւ որ չեն յաղթի հայերը:

Ահա՛ յաղթելու գաղթնիքը:

Ներսէս Մեծը լեռան վրայ!

Ինչպիսի՞ վեհ պատկեր:

Ինչպիսի՞ վսեմական ճիւղ հանճարեղ վրձնի եւ մտահայեցութեան համար:

Ես գտել եմ, որ այն բոլոր դէպքերում, երբ Ներսէս Մեծի նման մէկը «բարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ոյժերը եւ չի տկարացել հոգով, մինչեւ որ տեղի կը տար թշնամին – միշտ էլ յաղթութեան դիցուհին իր ոսկէ մատներով պսակադրել է հայ զինուորի ճակատը:

Արգասատր չէ թոյլի սերը: Բծնանք է թոյլի ներումը:

Քրիստոսը սիրում էր, որովհետեւ ուժեղ էր. նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզօր էր: Նրա անձնական կեանքը պիտի դառնա եկեղեցուն ուղեցոյց, Նրա մահուան խորհուրդը – հերոսական զոհաբերութիւն:

Պարզել անցեալի իրենց պարտութեանց պատճառները. նորէն մոռացութեան տալ պատմութեան խրատականը եւ ապա, նոր աղէտներից զարնուած՝ վերստին սերտել պատմութեան դասերը – ահա՛ անհեռատես ազգերի ճակատագիրը:

Արիութիւն:

Միակ ճշմարիտ կրօնը. առանց որի ոչինչ արժեն կրօնները:

Դատապարտելի է ամեն մի դպրոց, եկեղեցի, կուսակցութիւն, որը արհադաւան եւ արի չէ դարձնում մարդը որպէս անհատ եւ հաւաքականութիւն:

Արիութիւն - միակ ճշմարիտ բարոյականը:

Անարիութիւն, ասել է՝ հոգետր սնանկութիւն:

Յանձին Ալեքսանդր Մեծի՝ արիութիւնն էր որ յունական մշակոյթը Ասիա մտցրեց: Դա էր – նախապատմութիւնը յաղթական արիութիւնը, որ Նազովրեցու վարդապետութիւնը պարտադրեց բարբարոսներին: Դա էր, որ նոր հորիզոնների տէր դարձրեց մարդկութիւնը, սանձելով ծովերի ամեհութիւնը, մեղմելով դաժանութիւնն անապատների եւ նուաճելով օդը:

Արին է անձնագոհը, մարդասէրը:

Մեծ սիրտ, ազնիւ նկարագիր, վսեմ մտածում – արիութեան հարազատներն են այդ բոլորը, ճառագայթները միեւնոյն արեւի:

Հայութիւնը չզիտէ իր պատմութիւնը, ասել է թէ չզիտէ օգտուել իր պատմութիւնից – ահա իր դժբախտութեան ակն ու աղբիւրը: Նա ծանօթ չէ իր արիական անցեալին, իր հաւաքական դիցազնականին եւ դրա համար էլ - յուրախութիւն իր գոյութեան թշնամիներին - նա հաւատում է ամեն ինչի, միայն ո՛չ իր սեփական բազկի ոյժին, դրա համար էլ իր ամբողջութեան մէջ նա պարտադրական է: Նրա համար Աւարայրի Մամիկոնեանը աւելի նահատակ է, սուրբ, քան ռազմիկ եւ



կոխ առաջնորդել անոր զաւակները: Նմանը, անկարող հոգեպէս ցնցելու իր ժողովուրդը, դէպի ստոյգ պարտութիւն եւ սպանդանոց կը մղէ զայն:

Վանի Հերոսամարտ: Երկուստեք կը ստանան իրենց անկարող հոգեպէս ցնցելու իր ժողովուրդը, դէպի ստոյգ պարտութիւն եւ սպանդանոց կը մղէ զայն:

Ազգային գրականութիւն – դա մեր հոգեւոր ծովն է, ուր զայիս թափուում են ցեղի ոգու վարար գետերը:

Ամէն մէկ «ես» յանցաւոր ապստամբ մը, ամէն մէկ «ես»–ականութիւն բարոյական մահափորձ մըն է այն Մեծ Ամբողջին դէմ, որ ազգ կը կոչենք:

Իր սրբազան պահն ունի իմ ամէն մի օրը, երբ մտովին անհուն կարօտով կը սկսեմ իմ պրպտումները Հայոց Պատմութիւնը կերտող դարերի մէջ, քաղցրութեամբ կ'ոգեկոչեմ հայ զինուորին ու զօրավարին, որոնք հոգեկան-գեղեցկութեան անդիմազրաւելի արիւթեան ու մեծագործ վեհութեան համբուրելի հետքն են թողել Հայոց աշխարհում: Եվ կ'ոգեխառնուիմ նրանց հետ, կը վերապրեմ նրանց գոռ յաղթանակները եւ կարօտով կը բաժանուիմ նրանցից, մի օր անց՝ նրանց ազնուացուցիչ ընկերութիւնը վերստին վայելելու ցանկութեամբ: Այսպէս կը սնուցանեմ ազգային հայարտանքի իմ զգացումը: Չը տկարանալու համար կը կատարեմ իմ ամէնօրեայ խորհրդաւոր զօրահաւաքը մեր պատմութիւնը զարդարող հոգիների, եւ կը խօսեցնեմ ու կը լսեմ նրանց:

Աստուած իմ, որքան մեծ է արիների համաստեղութիւնը մեր պատմութեան երկնակամարի վրայ: Եւ որքան շլացուցիչ է նրանց փայլը:

Պսակատր են, եօթնվէրք են բոլորը, փառքի սպիներ ունին բոլորը: Պարթեւ են, խայտակն, քաջագանգուր: Բիբերի մէջ շանթեր ունին, ցասում, դառնութիւն:

Չմնաց, աշխարհում գրեթէ չմնաց ցեղ, որ մեր բազկի ուժը չզգար:

Մարդկային ցեղերի պատմութիւնը արձանագրած չէ մի հատիկ իրողութիւն, որ իր անարգութեամբ զուգահեռիլ կարողանար հայութեան դէմ թրքո-բուլղերիկ զինակցութեան փաստի հետ:

Իր զգուելիութեան մէջ այնքան կատարեալ այդ սեւ զինակցութեան երեսէն այսօր իրար զարնող երկու աշխարհների – հինի եւ նորի – միջեւ իր զլուխը դնելու տեղ չունի հայ ժողովրդի կէտը:

Խեղճ է ժողովուրդը, երբ նրա առաջնորդն աւելի փառասէր է, քան հանճարեղ, երբ նրա առաջնորդին պակասում է մշակոյթը՝ սրտի եւ մտքի, երբ բռնուած նախանձի չար դետով նա տառապում է բարոյական դեղնութեամբ, երբ նա դաւանում է անձնական երջանկութիւն խոստադող այս կամ այն գահավիժեցնող վարդապետութիւնը, երբ տկարութիւն ունի մեծ բուալու փանաքի գործերի մէջ, եւ փոքրիկ հանդիսանալու մեծ գործերում:

Անէծք է առաջնորդի տգիտութիւնը, եսականութիւնը, նախանձը: Չի եղել աւելի զարհուրելի թոյն, քան վատ օրինակը առաջնորդի, որ միշտ էլ վարակիչ է:

Եսակա՞ն է անասնանում են նրա հետ առնչողները: Ծո՞յլ է մտաւորապէս հոգեւոր հնապաճառներ են դառնում նրան շրջապատողները:

Անհայրենապա՞շտ է՝ հակահայրենիք հրէշներ են վխտում նրա շուրջը:

Իսկ երբ անարի է՝ զգալիօրէն երկչոտ են դառնում նրա իշխանութիւնը վայելողները:

Վայ, սակայն, եւ կատարեալ առաջնորդը: Ահա՛ նրա հոգեւոր դիմաստուերը մի քանի խոշոր գծերով.

– Նախ կրո՞ղը եւ ուսուցիչն է նա ցեղային բարոյականի:  
– Գործել՝ նրա համար նշանակում է փարատել իր շրջապատի մտաւոր խաւարը, թմրութիւնը, տկարութիւնները:

Դա նշանակում է ոչինչ չթողնել իր շուրջը անթուրծ եւ խոտան, ծոյլ եւ մեռեալ վիճակի մէջ:

Ուժեղ իմացականութիւն, մեծ սիրտ եւ բոլորանուէր ծառայութիւն – ահա՛ նա:

Նրա մէջ եթէ դեռ չի մեռել, ապա հոգեւարում է «ես»-ը:

Պարզատես է, վշտակիր, հերոս:

Յայտնուելով այս կամ այն միջավայրում՝ նա հոգեբանօրէն փոխում է այդ վերջինը:

Նրա ներկայութիւնը ազնուացնում է հոգիները, թեւտորում, գօտեպնդում:

Նրա շնորհիւ անկարելի համարուածը դառնում է դժուարին, դժուարինը՝ կարելի:

Նրան յաջողում է փոխել իր ժողովրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը, պատմութիւնը:

Մահման չէ դրուած նրա սիրելու եւ զոհաբերելու կարողութեան:

Նա ծիծաղել գիտէ մարդկային մեռեալ օրէնքների վրայ:

Սիրում է ամբողջը, բայց գիտէ յետ մղել նրա օրէնադրութիւնը:

Իմաստուն է եւ գիտէ, որ «կան պատմական մոմենտներ, երբ ժողովրդին ծառայելու լուսագոյն ձեւը հանդիսանում է նրա հայացքներին վճռապէս հակադրուելու մէջ»...

Առաքեալի սիրտ, իմաստասէրի գլուխ, ադամանդէ ճակատ– ահա՛ կատարեալ առաջնորդը:

Հայ առաջնորդը մի ձեռքն Արեւմուտքում՝ այնտեղի ճարտարուեստի նորոյթները իւրացնելու, իր միւս ձեռքում պիտի ունենայ ցեղի բարոյական օրէնագիրքը:

Ո՛չ աշխարհի իրերի ու անցքերի վրայ նիւթապաշտ փիլիսոփայութեան աչքով նայող բիրիցս զգուելի էպիկուրեանը..., այլ կեանքի լի բաժակը արհամարհել գիտցող իդէալիստը՝ վսեմախոհ:

Ո՛չ հոգով գռեհիկը, որ եսականօրէն ըմբոստանում է սրբացուցիչ տառապանքի դէմ..., այլ հոգու պայագատութեամբ շեշտուածը, որ մտովի կհամբուրէ այն խորհրդաւոր ձեռքը, որն իր հաճոյքների յորդոր բաժակը կփշրէ:

Ո՛չ հոգետր թզուկը, որ յաջողում է բարձրանալ հսկաների վրայ՝ մի

քիչ հեռուն տեսնելու համար, այլ նա, որ գիտէ նախատեսել անցքերը եւ ցանկալի ուղղութիւն տալ նրանց. նա, որ փարոսօրէն լուսատրել գիտէ իր ժամանակաշրջանը՝ նոր ուղիներ բանալով իր ժողովրդի մտքի բանուկ ճամբաներէն դուրս:

Ո՛չ այս կամ այն դասակարգի ջատագովը, ո՛չ էլ ներկայով կլանւած կարծայուշ ժողովրդասէրը, այլ ցեղամերձը, որ իր բոլոր խորհուրդները ցեղէն կառնէ:

Ո՛չ անկապաշտը՝ նուաստախոհ, վայնասողը՝ հոգեհաշմ, խուժանավարը՝ շոգմոզ, հերձուածողը՝ որոմնացան, ոչ էլ նեղհաւատ ու բաժանասէր կուսակցական ցանցարկուն, որը աստ եւ անդ կազ ու կոփ կսերմանէ՝ իր հացն ու հանգիստն ապահովելու համար...

Այլ հայը ցեղագոյնցիկ ու խորարթուն, նա, որ ունայն է հոչակել այն ամէնը – արուեստ, գրականութիւն, իմաստասիրութիւն – որոնք աճեցնելով մեր աշխարհաժանօթութիւնը, մեզ չեն դարձնէր աւելի՛ հայ, աւելի՛՛ զօրեղ:

Այսպէ՛ս պիտի լինի առաջնորդը տառապող եւ իր վերջնական ազատագրութեան սպասող հայութեան:

Մարտիրոսանալու կամքը եղել է եւ կը մնայ հայ հոգու գերագոյն հերոսականութիւնը:

Ամէն վախկոտ կենսաբանօրէն անբարոյական է:

Անհայրենիք դարձած մի ժողովրդի համար չկայ՝ աւելի բարձր եւ նուիրական նպատակ, քան իր հայրենիքի՝ իր յաւիտենական սեփականութեան վերստացումը:

Բոլշեւիզմը – կոպիտ ուժի տիրապետութիւնը սարսափի միջոցաւ – մեր ժամանակի ամենամեծ չարիքն է, որի դէմ պայքարելն աւելի դժուար է, քան մարդկային ցեղի որեւէ թշնամու: Դա մի նոր հեթանոսութիւն է, մի խելագար վերադարձ դէպի վայրենացում եւ ընկերային գայլութիւն:

Մտուն ու կեղծիքը ոչ թէ պայքարի սոսկական զէնքեր են նրա համար, այլ նրա երկրորդ բնատրութիւնը: Անմահ քարոզիչ է եւ լրտես հաւասարապէս. լրտես է ոչ թէ արհեստով, այլ հոգով: Իր անասնական

եսապաշտութիւնը նրան դարձրել է անխտորոպական: Այդ է պատճառը, որ նա լրտեսում է մօրը, հօրը, քրոջը:

Սկզբից ի վեր հայութիւնն ու իր քրիստոնէութիւնը ձուլուած են ի մի բնութիւն: Այս երկուսի ճակատագիրը նոյնացած է:

Եկեղեցին նահատակներով է եկեղեցի: Նահատակ չունեցող եկեղեցին ամեն ինչ է, բայց ոչ եկեղեցի: Հայ եկեղեցին ազգային եկեղեցի է:

Ազգային բացառիկ մի աղէտի գոհերը, որպիսիք են վերջին կոտորածների գոհերը (Մեծ եղեռնի գոհերը – Ռ.Հ.), որոնք ընկան ոչ միայն իրենց զուտ ազգային, այլև կրօնական հաւատին հաւատարիմ մնալու գաղափարականութեան հետեւանքով – եկեղեցական նահատակներ են: «Հայ քրիստոնէականներ» էին նրանք, որոնք մեռան ոչ միայն իրենց «հայութեան», այլև «քրիստոնէութեան» համար:

Եկեղեցին, որ գուրկ է մարդկայնութեան բարձր իդէալից՝ դատարկ է աստուածային շնչից:

Բաւական չէ հիացիկ վերաբերմունք, անգամ պաշտամունք ունենալ դէպի անցեալ սերունդը – պէտք է գերազանցել նրան: Հէնց սա՛ է յարգանքի այն պսակը, որ իւրաքանչիւր յետնորդ պարտատր է դնել նախնեաց յիշատակների կոթողին:

Չկայ աւելի մեծ պղծութիւն, քան սեփական ժողովրդի պատմութեան չարամիտ աղաւաղումը:

Կեղծել պատմութիւնը, ասել է՝ եղծանել պատմաստեղծ ժողովրդի կենսաբանական բարոյականը, հարուածել նրա արթուն բնագոյր, վտանգել նրա հոգետր առողջութիւնը, խեղել հոգին, ծոել նրա գարգացման ճամբան, անիրաւել նրա մեծ մեռելներին, որոնք ընկան, որ հայրենիքը սրբանայ ու ապրի, շփոթի մատնել պատմութեան ենթակայի ներկան եւ խաբել գալոց սերունդներին:

Ես տեսա հոգով ազատը ստրկութեան մէջ եւ սիրեցի մարդը:

Ես տեսա ստրուկը ազատութեան մէջ եւ զարշեցի մարդէն:

Թագ ու ձեռակա՛ն իշխանութիւն փնտռում են այն ոչնչութիւնները միայն, որոնք անթագ իշխել, թագաւորել չգիտեն:

Տարօնականութիւն – դա Մեսրոպի անմահ գործն է, որ կարելի դարձաւ, որովհետեւ հայ սուրբ պաշտպան կանգնեց նրան:

Դա հայ ռազմիկի գործն է, որ յաղթական եղաւ, որովհետեւ Հայ եկեղեցին օրհնեց նրան:

Տարօնականութիւն... դա նոր ուխտ է տարօնաշունչ Մեսրոպների, Պարթեւների, Խորենացիների շունչով օծուն իմացական նոր առիւծներ հասցնելու: Դա ձգտումն է՝ վազքը մեր ցեղի ոգու – դէպի արեւը, կեանքի աղբիւրը, լոյսը:

Դա մեր հաւատքն է, թէ մեր այնքան արգասատր ցեղը դեռ պիտի երկնէ իր գօրատր զաւակները – Վարդանները, Մուշեղները, Վահանները:

Դա ցեղի անմահ ընտրանիի գործը շարունակելու ուխտն է:

Դա ասել է՝ մտածումիդ, ապրումիդ եւ գործիդ մէջ ցեղը դիր:

Դա ե՛ւ հերոսապաշտութիւն է, ե՛ւ նոր հերոսական ծարաւ:

Տարօնականութիւնը – դա ցասնմալի մի անէծք է Հայաստանին ծառայելու պատրաստ հայու նուիրումն ու գործը դժուարացնող ներքին չարութեան դէմ:

Յաշտիշա՛տ, գոհափառ, գոհաշատ – ահա՛ այն անունը, որ կը խորհրդանշէ Տարօն աշխարհը եւ իմաստը կը կազմէ Տարօնականութեան:

Վերջապէս, Տարօնականութիւնը մի վճռական միջոց է օրուայ մեր ազգային կեանքը թունաորող հոգետր մանրուքի եւ գաղափարների քառսի դէմ: Դա մեր հասկացողութեամբ, միաժամանակ, մի բողոք է մեր հաւաքական տկարութիւնը սնուցանող պարստողական, թուլօրօք քարոզչութեան դէմ:

Ոգին է իմաստ եւ սրբազնութիւն հաղորդում երկրին: Զրկէք երկիրն իր սրբազնութիւնից, իր հոգետր նշանակութիւնից, եւ դա կը դադարէ

հայրենիք լինելուց:

Մեր երկրագնդի վրայ ուխտերից ամենասրբազանը միշտ էլ կնքու-  
ած է եղել Աստուծոյ եւ հայրենիքի համար: Deo et Patria! Նմաններից  
էր Մամիկոնէից Ուխտը:

Որպէսզի հայը իր կեանքը քաղցրօրէն պատարագէր իր Հայրենի-  
քին, նա պիտի ձգտէր բարձրանալ սովորական մարդկայնութիւնից,  
իսկ դրանում յաջողելու համար, նա պիտի զգար կարիքը՝ մի գերա-  
զոյն արժէքի, որպիսին է ցեղի յախտենականը:

Մեռնելու կամք – դա ներքին ինքնաբոլոյս այն զգացումն է, աւելի՛  
ճիշդը ներքին մղումը, որ ուխտաւածին ոյժ, արիւթիւն եւ ուրախութիւն է  
տալիս մեռնելու իր հայրենիքի եւ ցեղի համար: Կա՞ այդ կամքը – ասել  
է՛ ենթական յաջողել է հաշտեցնել իր անձը իր ցեղի յախտենականի  
հետ. ասել է՛ նա այլեւս գտած է ինքն իրեն, այլեւս ինքնաճանաչ է,  
որով եւ՝ տէր իր ցեղի թաքուն ոյժերին:

Մի օր հայութիւնը պիտի ների թրքութեան, բայց ոչ ծունկի եկած նրա  
առջեւ, պարտելուց յետոյ, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց յետոյ:

Լաւ բան է, անշուշտ, մի հատիկ զէնք աւելի ունենալ, բայց ոչինչ  
բան է հազարներով իսկ աւելի ունենալը, եթէ ռազմիկին վարողը  
մահուան գաղափարի հետ հաշտուած հերոսական ոգին չէ:

Միշտ էլ պարտուել են այն ազգերը, որոնք ունեցել են մի հատիկ  
յենարան – թիւը, քանակը: Կռուադաշտը միշտ էլ պատկանել է որա-  
կին: Նրան են եւ վաղուայ յաղթանակները:

Թող հեռու մնա իր ժողովրդի ղեկավարութիւնից նա, ով մեռնել  
չգիտէ իր հայրենիքի համար: Ամէն ղեկավար – տասնապետ, զօրա-  
կան, նախարար – ով հրաժարում է մեռնել իր հայրենիքի համար,  
յանցագործ է:

Ղարաքիլիսում եւ Սարդարաբադում քաջութեան հրաշքներ կա-  
տարած հայը չը կռուեց Ղարսում: Սակայն նոյն Ղարսի պարտեալը  
դիցազնացաւ Միւնիքում: Մէկից աւելի են ոգու անկման ու ակտիւաց-  
ման պատճառները: Գլխատրագոյնը, սակայն, կը մնա առաջնորդի  
անձը:

Ճշմարիտ առաջնորդ լինել չէ կարող եսապաշտը, ընչասէրը, հոգով  
փչացածը: Առաջնորդ լինելու համար բաւական չէ անզամ արտակարգ  
իմացականութիւնը: Քաջութիւնն էլ – որ բարձր յատկութիւն է զինորդի  
եւ քաղաքացու համար – բաւական չէ մէկին ճշմարիտ առաջնորդ  
դարձնելու... Առաջնորդ կարող է լինել միայն հերոսը: Իսկ հերոս լինել,  
ասել է՝ յախտենարժէք բաների առջեւ ոչինչ համարել իր կեանքը:

Հերոս է նա, որի հայեացքը ուղղուած է յախտենականին. նա՛, ով  
ժպտել գիտէ ճակատամարտի բոցերի մէջ. նա՛, որի հոգին վտանգի  
ժամանակ զգում է մի գերագոյն ուրախութիւն – ճակատամարտի եւ  
անձննորումի ուրախութիւն. նա՛, ով գրոհից առաջ սիրում է խօսել յա-  
խտենական բաների մասին:

Հերոս է Քեռին, որ իր վտանգուած զինորդները փրկելու համար իր  
կործրը դարձրեց կենդանի թիրախ թշնամու կրակին:

Մեծ են մեր ապրած օրերը, քանզի կեանքը հրապարակ է դրել մի  
քանի մեծ ճշմարտութիւններ: Մեծագոյնը այդ ճշմարտութիւններից  
ասում է՝ որպէսզի ցեղդ ու հայրենիքդ ապրեն, նրանց համար մեռնելու  
կամք ունեցի՛ր: Մեր քարոզած Տարօնականութիւնը այլ բան չէ, եթէ ոչ  
մեռնելու կամք մեր վտանգուած հայրենիքի եւ ցեղի համար:

Մարդկային ցեղի մեծագոյն ուսուցիչները միշտ էլ հանդիսացել են  
նրանք, որոնք մարդկանց վեհօրէն մեռնել են սովորեցրել: Այդ տեսա-  
կէտով, Մամիկոնեանները եղան եւ կը մնան հայութեան յախտենօրէն  
սրբազան ուսուցիչները:

Վերանորոգչական Տարօնականութիւնը. դա նմանուելու մի

սկզբունք է. ասել է՝ նմանուի՛ր Մամիկոնեան հային, որ զօրատր էր դէպր հայրենի երկիրն ու ցեղը տաժած սրբազնութեան զգացումով եւ նրանց համարձեռնելու իր աննահանջ կամքով:

Մեր ժողովուրդը, որ կորցրել է հայ եւ հայրենասէր մնալու իր հաստը, որ աշխարհում այլեւս ելք, կեանքում հացից զատ այլ նպատակ չի տեսնում այսօր, փրկուել կարող է միայն ճշմարիտ վերանորոգումի ճամբով: Դա Մամիկոնեաններին նմանուելու ճամբան է՝ Տարօնակա-նութիւնը:

Հոգեբանօրէն անհայրենիք է նա, ով պատրաստ չէ ամէն վայր-կեան մեռնելու իր հայրենիքի համար:

Իմ հոգին զոյգ յենարաններ ունի – Աստուած եւ հայրենիք:

Մաճիճիի հանդէպ խորագոյն յարգանք տաժելով հանդերձ՝ չեմ ըն-դունում, որ հայրենիքէն աւելի ազատութիւնն է սիրելի:

Ժաննա դ'Արկի հայրենիքը պարտուեց այն օրը, երբ մերօրեայ ֆրանսացու դեմօ-լիբերալիստական մտածողութիւնը կենդանաբանա-կան մի պարտէզի դռան վրայ գրեց. «Գիտութեան համար ո՛չ հայրե-նիք կայ, ո՛չ էլ կրօն»:

Ճշմարիտ մտատրականութիւն, ասել է՝ ազգի հոգետը ընտրանին, առաջնորդութիւնը: Ստամտատրականութիւն է դա, եթէ այդպիսին չէ:

Ազգերը չեն ունեցել եւ պիտի չունենան աւելի մեծ թշնամի, քան նիւթապաշտ առաջնորդը:

Այն մտատրականութիւնը, որը գրքի ծնունդ է եւ ոչ թէ իր ցեղի մեծութեան ու ժողովրդի տառապանքի – կեղծ եւ անպտուղ մտատրա-կանութիւն է:

Միայն մեծ առաջնորդներին է յաջողում իրենց կամքի ողջ ուժա-

կանութիւնը փոխանցել իրենց ժողովուրդներին, առաւելապէս նրանց երիտասարդ սերունդներին: Եւ հենց դրանով են վերանորոգում զան-գուածները՝ վերածուելով մի բարոյական ընդհանրութեան, միակամ եւ միուղի ազգի:

Միջազգային առաջնորդութեան մասին խօսում են անյուսօրէն տղէտները միայն: Պատմութեան դեռ անծանօթ է նմանը: Առաջնորդը – իբրեւ տուեալ ազգի կուլտուր – ընկերային գործառնութեանց կիրար-կիչը – միշտ էլ երեսան է գալիս ազգային կնիքով:

Պատմութիւնը չգիտէ աւելի մեծ, աւելի սուրբ գործ, քան ապա-գայով վտանգուած մի ժողովրդի վերանորոգումը:

Չեռքդ դի՛ր նախահայրերիդ հզօր աջի մէջ եւ դու պիտի զգաս, թէ ինչպէ՛ս ուժեղ է զարկում սիրտդ, զօրեղանում քազուկդ, պողպատա-նում կամքդ:

Օվիդիոսը մեր ցեղի ոյժը խորհրդանշած է վագրով: Իսկ «վագրը երբեք մեռեալ չէ»: Հէնց այդ չմեռեալ վագրայինն է մեր ցեղը, որի անունը, ըստ անգլիական պատմագիր Ֆինլէյնի, Բիւզանդիոնի մէջ հոմանիշ էր ազնուականութեան:

Չկան մշտական կոնսերվատորներ եւ յեղափոխականներ: Իմաս-տուն գործիչը պիտի լինի միաժամանակ թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Ես պահ-պանողական եմ, երբ վտանգ կայ փողոցային անարխիայից, յեղափո-խական՝ երբ հանրային մտածողութեան ու կեանքի քարացում կայ:

Հոգով քաքարացած ռուսը ազատութիւնը հասկացաւ այնպէս, ինչ-պէս որ հոգեհիւանդ Նիցշէն հասկանում է հզօրութիւնը՝ «Իմ մեծութե-ան արձանը պիտի ցցուի փլատակներից եւ դիակներից կազմուած մի լեռան վրայ»:

Ամէն բարեփոխում պէտք է սկսուի խղճմտանքից:

Ամենից անհաստատ դաշինքն այն է, որ կնքում ես բախտի հետ:

Պատահական երջանկությունը ե՛ն անարժեք է, ե՛ն անարդար:

Մահկանացու՛, ինչու՞ քեզանից դուրս կը փնտրես երջանկությունը, որը քո մէջ կը կրես: Մոլորանքի եւ տգիտութեան մուսլ ամպը խանգարում է քեզ՝ տեսնելու զայն:

Գերագոյն երջանկությունը այն է, որ պատճառ կը դառնա եւ այլոց երջանկութեան:

Ճշմարիտ երջանկությունը այն է, որ միաժամանակ բարի է դարձնում մարդս:

Եթէ կեանքի նպատակը հաճոյքը համարեցիր, վախճանդ կորուստն է:

Ըստ ամենայնի անբարոյական է իրեն երջանկիկ զգացող անհայրենիքը, լինի դա անհատ, թէ ժողովուրդ:

Անկարելիութեան աստիճան դժար է բառերով «ինչ է ցեղը» հարցի սիրտը շօշափել: Մարդաբանութեան ցարդ տուած սահմանումներից եւ ո՛չ մէկն է ընդունելի՝ ինձ համար:

Յեղը՝ դիմագծօրէն ազգայինն է, այն տիրապետականը, որով ժողովուրդները տարբերում են իրարից:

Մեր օրերում ոչինչ այնքան չի տկարացնում ժողովուրդների պայքարունակութեան ոգին, որքան այն աղետալի մոլորանքը, թէ իրենց ճակատագիրը բարտաբող սեփական ճիգերը չեն, այլ ինչ-որ արտաքին ուժեր:

Մի ժողովուրդ, որն իրեն պէտք եղած ուժն իրենից դուրս է փնտրում – կուրօրէն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Յեղը չի ձերանում, թիկնադարձութիւն չգիտէ եւ չի պարտում:

Երբ ժողովրդի մէջ ցեղը չի շնչում, նա ծալում է արծուի իր թևերը:

Ժողովուրդը դա հայ հոգու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական:

Ժողովուրդը ներկան է, ցեղը՝ երէկը, այսօրը եւ վաղը:

Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարէներ:

Յեղը ... այն խորախորհուրդ ուժն է, որ Նպատ լերան վրայ լարած պահեց Մեծ Պարթեւի երկնաբաղձ բազուկները, մինչեւ որ հայերը յաղթեցին:

Չէ, չէ, Մասիսը – Հայոց ցեղասպանութեան հրաբուխը – դեռ չէ շիջած. նո՛ր, մենք նո՛ր ցեղաշարժերի կը սպասենք... Եւ կը յաղթանակենք, քանզի ցեղի աստուածները – Հայկ ու Վահագն – պիտի բարձրացնեն շանթընկէց մեր բազուկը եւ վարեն մեր հարուածները:

Ուսում, կրթութիւն, գիտական պաշար – անհրաժեշտ են սրանք, բայց դեռ բաւական չեն մէկին ճշմարիտ մտատրական դարձնելու:

Ճշմարիտ մտատրականը նա՛ է, որ իր մտատր կարողութեան, ամէն բանից առաջ, միացնում է խորապէս բարոյական նկարագիր, բարձր գաղափարականութիւն, ստեղծագործելու – նոր իտէալներ, արժէքներ, կեանքի ձեւեր ստեղծելու ընդունակութիւն, սրբազանի զգացում, տեսական խղճմտանք, հոգեւոր արիութիւն, ժողովուրդն իր ամբողջութեան մէջ սիրելու. նրա համար տառապելու անսահման կարողութիւն:

Մտամտատրականութիւնը վատաբանեց. «Յեղակրօնութիւնը հիթլերութիւն կը հոտի»: Նա այսպէս չարամեկնեց, գիտնալով հանդերձ, որ ցեղակրօնութիւնը ծնունդ է առել մեր հայրենի լեռնաշխարհի գլխին կախուած մեծ փտանգի օրերին, երբ մարդկութիւնը լսած չէր հիթլերականութեան մասին:

Յանձին մեր դաւիթբէգեան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու լաղթեց ցեղակրօնութիւնը:

Ճշմարիտ մտատրականությունը... այն հոգեւոր ոյժն է, առանց որի ժողովուրդ անուան տակ ամբոխներ կապրեն...

Մտամտատրականը... Երեկ պարտադրական էր, այսօր նաեւ երկչոտութեան քարոզիչ: Նրա համար հերոսը արկածախնդիր է, իդէալիստը՝ տխմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ...

Եւ այդ է պատճառը, որ այսօր հայ իրականութեան մէջ, ամէն քայլափոխում վատութիւնն է դարանակալել, որ աղուէսները առիծ են խեղդում, սինըքորները Յիսուսներ են խաչում:

Հայոց պատմութեան փիլիսոփայութեան ծանօթ ու հայրենազգաց ամէն մտատրական հայ կը խոստովանի, որ Մամիկոնեանների Հայաստանը – քէկուզ յաճախ կիսուած, կիսանկախ, կիսակործան – ւաւիլի հայկական է, ւաւիլի հայրենիք, եւ ւաւիլի պաշտամունք պարտադրող, քան է՛ր նույնը՝ Տիգրան Աշխարհակալի կամ Արտաշէսի օրով:

Ոգու ժողովուրդ ենք եւ այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դիմագորկ ոգու ծնունդ են, օրինակ, սոցիալիզմ, բոլշեւիզմ, կոսմոպոլիտիզմ – մնում են անմարսելի եւ անհարազատ հայ հոգու համար: Ոգեշունչ էր քրիստոնէութիւնը, եւ հէնց այդ է պատճառը, որ նրա գիրկը նետողներէն առաջինը եղաւ հայը:

Տարօնականութիւնն է մեր ցեղային նկարագրի յաղթական գիծը, մեր ցեղի գերագոյն առաքինութիւնը, հայ հոգու յալիտենական խռովքը – նրա անմահութեան տենչը, նրա մեծագործութեան կարօտը, նրա հոգեւոր պայազատութիւնը:

Պարտականութեան, հզօրանքի եւ քաջութեան կրօն – ահա թէ ինչ է նշանակում տարօնականութիւն:

Հայրենիք պաշտպանել վաղը կարող են նրանք միայն, որոնք... Մամիկոնեան մեր հրաշունչ ռազմիկներէն կտոկորեն ապրել ու գործել միմիայն այն բանի համար, որի համար արժէ մեռնել, եւ մեռնել այն բանի համար, որի համար արժէր ապրել:

Միսայ է, ւաւիլին՝ ոճիր է կարծել, թէ բոլոր ճշմարտութիւնները մարդու պէս մահկանացու են, թէ նրանք էլ մեզ պէս ծնում են, ապրում, սպառում, մեռնում:

Ո՛չ, ո՛չ, ճշմարտութիւններ կան, որոնք անմեռ են, յալիտենական, ինչպէս ինքը՝ ժամանակը: Այդ ճշմարտութիւններից են նրանք, որոնք վերաբերում են հայրենիքին, մահուան, յաղթանակին, առաջնորդին, պարտականութեան եւ այլն: Այդ ճշմարտութիւնները իրենց արիւնով կնքած՝ դարերին եւ սերունդներին կտակ են բողել Մամիկոնեան ռազմիկները:

Տարօնականութիւն է Մամիկոնեան հսկաներէն ս. Վարդանի ուխտը

- Այնպիսի գործ պիտի գործես, որ ամբողջ աշխարհի[ն] պատմուի մինչեւ յալիտեան:

Դա դաւադրուած Մուշեղ զօրավարի անճառելի դառնութիւնն է.

- Ուր էր թէ ծիու վրայ հանդիպէր մահը:

Դա հայ սպարապետի լացն է, որ չէ մեռնում գոռ ճակատամարտերում՝ Հայաստանի համար:

Տարօնականութիւնը - դա Մեսրոպի անմահ գործն է, որ կարելի դարձաւ, որովհետեւ հայ սուրը պաշտպան կանգնեց նրան:

Դա հայ ռազմիկի գործն է, որ յաղթական եղաւ, որովհետեւ Հայ եկեղեցին օրհնեց նրան:

Ի՞նչ է նշանակում, երբ Հայ եկեղեցին սրբացնում է Մամիկոնեան ոգին, այդ ոգու կրողներին: Արդեօք դա միայն երախտագիտութեան տո՞րք է, թէ՞ նաեւ խորագոյն մտահոգութիւն հայրենիքի ապագայի հանդէպ: Սրբացնելով ու յաւերժացնելով Մամիկոնեանների ուխտը՝ եկեղեցին մեր ժողովրդին տուած է ինքնապաշտպանութեան զենքերից ամենահատուն ու յաղթականը – «մահ գիտեցեալը»:

Հէնց այդ է տարօնականութիւնը:

Ճշմարտութիւնը միայն ստութեան հակաթէզը չէ, այլեւ բարին, սրա կերպարանը, գիտակցութիւնը եւ յօժարութիւնը: Իմ խօսքը բարոյական ճշմարտութեան մասին է: Այդ ճշմարտութեամբ է սնում ժողովուրդները:

րի ոգին: Առանց դրան մարդը մնում է անստեղծագործ, պատեհապաշտ, խղճմտանքը՝ մեռեալ:

Եթե Մամիկոնեաններից մեզ մնացած լինէր միայն Վարդան Չորավարի ճառը Աւարայրի ճակատամարտից առաջ, ես դարձեալ կմնայի տարօնական ոգու երկրպագուն, պաշտողը:

Ոչ թէ հինգերորդ դարում, այլև մեր ժամանակներում շատ քիչ ազգերի մէջ զինուորապետը յաջողած է մշակել այն բարձր բարոյականը, որով ապրեցին ու գործեցին մեր Մամիկոնեանները – մի հերոսական, որին դժուար թէ դարերը կարողանան նոր բան աւելացնել:

Երբ մի ժողովուրդ վերելքի ու յաղթանակների փոխարէն անվերջ խօսում է վտանգի մասին – հասկացէք, որ նա ոգեբափ է եղած:

Հետեւե՛նք Մամիկոնեաններին, քանզի չկայ ցեղային աւելի մեծ առաքինութիւն, քան ընթանալ ցեղի հոգեւոր առաջնորդների ճամբով, եւ քաջութեամբ մեռնել «փ վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր» – ահա թէ ինչ ենք հասկանում Տարօնականութիւն ասելով:

– Հաշտուելով մահուան գաղափարի հետ՝ մարդս դառնում է եղբայրն ու զինակիցը այն բոլորի, որոնք մարդկային ցեղի պատմութեան բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով իբրեւ լոյսի, հաւատքի եւ սրի հերոսներ:

– Ժողովուրդ, քո պատմութեան բոլոր դարերի անունով երդուեցնում եմ սերունդներիդ՝ չներե՛լ, չներե՛լ թուրքին, անգամ եթէ մի օր նրան տեսնես անկեալի վիճակում: Այո՛, ներում են թշնամուն, բայց ո՛չ եւ իր կէ՞ծի սպանիչին, ո՛չ եւ նրան, որը մի օր փորձեց գոյութեան գրքից քո անունը սրբել:

Չար անասուն է մարդս, երբ նախանձում է: Նման չարարուեստ էակներից շողախուած մի ցածոգի ամբոխ, դարեր առաջ, արդարն Արիստիդէսին – իր ծայրայեղ ազնուութեան համար՝ հայրենի հողէն ու ջրէն օգտուելու իրաւունքից զրկեց. դա սպանեց Սոկրատէսին, եւ, աւա-

զակների հետ՝ խաչ հանեց Նազովրեցուն:

Մի ժողովուրդ, որի որդիները հաւասար չեն օրէնքի եւ մահուան առջեւ՝ յաղթական հայրենիք չի ունենայ:

Անհատ, հաւաքականութիւն – սրանք յախտենականին կապում են իրենց հայրենիքի միջոցաւ:

Հայրենիքս եւ ես – մենք լծորդուած ենք իրար՝ ինչպէս հոգի եւ մարմին, ինչպէս նպատակ եւ միջոց. նա գերագոյն նպատակ է, ես՝ միջոց:

Սրտի եւ իմաստութեան տէր դասական ժողովուրդները մահապատժի փոխարէն տարագրութեամբ կը պատժէին դժբախտ ենթակային. նրան զրկելով հայրենի հողից եւ ջրից օգտուելու իրաւունքից: Այն ժամանակ էլ, ինչպէս այսօր, սրտի աստուածութիւն էր հայրենիքը:

Բարին, գերագոյն բարին, ինձ համար եղել է, է՛ ու կը մնայ Հայաստանը:

Հայաստան, քեզ սիրող ծնաւ- դու ապրում ես սրտերի մէջ եւ ջերմաջերմ սրտերի շնորհիւ միայն: Գուցէ եղել են եւ անսիրտ խելօքներ, որ սիրել են քեզ, բայց նրանք չեն խաչել, չեն մեռել քեզ համար: Հայրենիքի համար մեռնում է, հերոսանում մեծ սրտի տէրը միայն:

Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

Ամենաբարձր իրաւունքը, որ կարող է ունենալ մի քաղաքացի – դա իր ծնող ժողովուրդը առաջնորդելն է:

Քիչերին է տրուում այդ իրաւունքը, եւ շատ քիչերն են արդարացնում դա:

Ամեն առաջնորդ ըստ իր պատկերի է դիմակերտում իր ժողովուրդը:

Առաջնո՞րդ ես, ուրեմն եղի՞ր ազնիւ, ազնիւ եղի՞ր, էլի՞ ազնիւ՝ խղճմ-  
տանքիդ հանդէպ – դա ճակատագրական նշանակութիւն ունի ժողովր-  
դի ճակատագրի համար:

Չկա՛յ արեւի մեծ շարագործ, քան առաջնորդը, որ իր ժողովուրդը  
պահում է անգիտակ իր դժբախտութեանց պատճառներին:

Նմանը, իր անձի հանդէպ մոռացում ապահովելու նպատակով,  
մութ ճամբաներով յաջողում է տարբեր ուղղութիւն տալ ժողովրդի ցա-  
տամին, մղելով նրան իր դժբախտութեան պատճառները փնտռելու  
իրենից դուրս:

Ժողովուրդները չունեն արեւի մեծ թշնամի, քան կրօնապէս պաղ  
եկեղեցականը, անոգի ուսուցիչը, կաշուապաշտ գորականը: Խորա-  
գոյն անկումի իրենց օրինակով որքան են անբարոյացնում մարդը իբ-  
րեւ անհատ եւ հաւաքականութիւն:

Փառասէ՞ր է առաջնորդը – փառասէր է ճշմարիտ ամեն առաջնորդ  
– այդ ոչինչ, բաւական է, որ նա իր ազնուական ու ստեղծագործ փա-  
ռասիրութեան միացնում է իր շարժիչ միտքն ու մեծ սիրտը, բաւական  
է, որ խաչ կայ իր ուսին... Նրա առաջին թշնամին է կազմակերպուած  
միջակութիւնը՝ յանձին զանգուածների տգիտութեան եւ տկարութեան  
քուէներով ընտրուած իշխանութեան:

Հայ մարդը, իմաստասիրական ջանքի պակասի պատճառով, «նոր  
սերունդ» հասկացողութեան մէջ դնում է միայն կենսաբանական բո-  
վանդակութիւն: Նորը, ըստ այդ վերջինի, որդիներն են, հինը՝ հայրերը:  
Տարիքի պարզ խնդիր է թէ՛ նորը, թէ՛ հինը: Սերունդները միայն հասա-  
կով են տարբերում իրարից: Ժամանակ կ'անցնի, եւ որդիները կ'այ-  
րահուսն ու կը բռնեն իրենց հայրերի տեղը: Այսքան ծիծաղելիօրէն  
պապզ եւ հեշտին է նոր սերունդի պրոբլեմը օրուայ հայ մտածողութեան  
համար:

Սերունդ – դա կենսաբանական հասկացողութիւն չէ, «կանաչ  
հասկ» չէ՛ միայն, այլ եւ՝ հոգեբանական որոշ բովանդակութիւն: Դա

էութիւն է հինէն խորապէս տարբեր:

Նոր սերունդը դա ցեղի պատմութիւնն է, ժողովրդի նոր օրը, նրա  
նոր խօսքը, նոր երգը, նոր առաջադրութիւնը, նրա նոր ճակատագիրը,  
նրա պատմութեան էջը նոր բովանդակութեամբ:

Դա ժողովրդի կենդանի ուժակնութիւնն է, նրա պայքարների ա-  
նագարդային ոյժը, որով եւ՝ նրա կեանքի զարգացման կրողը:

Հայրերի ուղիով, նշանակում է՝ արեւի մեծ թափով ու նուիրումով  
շարունակել նրանց գործը, եւ այդ դէպքում ո՛չ թէ կրկնելով նրանց  
տկարութիւնն ու սխալները, այլ՝ սրբագրելով:

Պատմութիւնը չը գիտէ մի յեղափոխութիւն, ազատագրական մի  
պայքար, մի մեծ գաղափար, որ պսակուած լինէր յաջողութեամբ՝  
առանց նոր սերունդի մասնակցութեան: Միշտ էլ արդար է, միշտ էլ  
յաղթում է նոր սերունդը:

Որակ, որակատրո՞ւմ- ահա՛ թէ ինչն է մարդկային զանգուածները  
վերածում միաշունչ ազգի, եւ ապադասակարգային կազմակերպմամբ  
ստեղծում զօրատր պետութիւնը՝ արթուն պաշտպանը հայրենի հողի,  
մշակոյթի եւ անկախութեան:

Յաւերժ պիտի մնա արդար ու խարազանող հայ մտքի առիւծի  
խօսքը. «Եթէ ընկերվարական դրախտը պէտք է հիմնուի հայութեան  
դիակի վրայ, թող էշերն ապրեն այդ դրախտում: (Խաժակ)

Մի ժողովուրդ, որի հպարտ սերունդները ժամանակին ասել են,  
«Անին չէն, աշխարհն արեւը», իրաւունք չունին՝ չը հաւատարու իր ապա-  
գային:

Պէտք չէ մոռանալ, որ հայու մայրաքաղաքը՝ Աթէնքի, Հռոմի նման  
չը փլաւ իր վատասերումի եւ զեղխութեան մէջ, այլ արեւակ դարձաւ  
բարբարոսութեան հարուածների տակ:

Առանց ցեղային պատկանելիութեան զօրատր զգացումի՝ ժողո-

վուրդները պիտի շարունակեին մնալ իբրև մարդկային դիմագուրկ զանգուածներ: Մի ժողովուրդ միայն այնքան է ակտիւ, ստեղծագործ եւ կենսաբանօրէն լաւատես, որքան կենդանի եւ արթուն է նրա ցեղային ծագման գիտակցութիւնը:

Այսօր, մասնատրապէս, երեք բան զերծ պէտք է պահել ստահայրենասիրութեան պղծանքից - հայ խաչը, մանուկը, գիրը:

Կդեր, ուսուցիչ, խմբագիր-մեծագոյն օրհնութիւն, եւ չարիք միաժամանակ: Օրհնութիւն են, երբ ցեղն է վարում սրանց խղճմտանքը, անէ՛ծք, երբ ցեղից շեն առնւմ իրենց ներշնչումները:

Նիւբապաշտի հայրենիքը մի երկրամաս է լոկ եւ ուրիշ ոչինչ: Նմանը սիրում է իրեն կերակրող ու պատսպարող երկիրը, եւ այդ սահմանափակ, գրեթէ նախնական սէրը անուանում է հայրենասիրութիւն, որն ունի կենսաբանական, բայց ոչ եւ հոգեւոր հիմքեր:

Բարոյական դեմոկրատիան, մարդկային արարածի անկատարելիութեան պատճառով, կը մնայ երազ, ինչպէս երազ մնաց ճշմարիտ քրիստոնէութիւնը:

Ամբողջ քսան տարի կրկնեցինք ու կրկնեցինք, թէ ո՛վ գիտակցաբար կամ անգիտակցօրէն հոկտեմբերեան բունտը համարում է յեղափոխութիւն, դա հայիոյում, անարգում է պատմութեան ծանօթ բոլոր յեղափոխութիւնները: Դա ամեն ինչ էր - պարտուածների բունտ, աստուածամարտութիւն, հոգեւոր վայրենացում, դարձ դէպի հեթանոսութիւն, պետական բանդիտիզմ, զանգուածային աւազակութիւն-բայց ո՛չ եւ յեղափոխութիւն՝ քաղաքական ու սոցիալական իմաստով:

Ազգերի յառաջադիմութեան զարկ տուող յեղափոխական ցնցումները միշտ էլ եղած են լաւերի յղացում, լաւագոյնների գործ, ճշմարիտ յեղափոխութիւնը ծնունդ է առնում ոգուց, ոգու մարդկանցից, ընտրանիից: Ռուսականը արդիւնք էր վատերի ու վախկոտների - պարտականութեան ճակատից փախած զինուած խուժանների եւ դիւաբախ ու տգէտ խուժանավարների:

Այն իրողութիւնը, որ բոլշեիկները հոկտեմբերեան բունտի հենց առաջին օրերին, բացելով բանտերի դռները - այդ բանտերը բաստիլի-ա չէին - իրենց շարքերին միացրին հարիւր հազարի չափ գռեհիկ յանցագործներ- այդ պատմական իրողութիւնը լրջագոյն հաստատութիւն է այն մասին, որ բոլշեիզմը ոչ թէ քաղաքական, այլ ախտաբանական երեւոյթ է:

Հաւանական ամեն հակահարուած անկարելի դարձնելու նպատակով կեանքի կոչուեց ամենակոյ Չէկան միահեծան տէրը աշխարհի մի վեցերորդ մասի վրայ ապրող ժողովուրդների հացի եւ ճակատագրի:

Բռնութիւնը հռչակուեց նորաստեղծ «պետութեան միատիկ բանականութիւնը»: Հազար շրթունքներով քարոզուեց բռնութեան պաշտամունք, մշակուեց բռնութեան կախարդանքը:

«Թող կորչի՛ ռուս ժողովրդի 9/10-ական մասը, բաւական է, որ մի տասներորդականն ապրի մինչեւ համաշխարհային յեղափոխութեան մոմենտը» (Լենին):

«Ո՛չ մի յեղափոխութիւն հնարատր չէ, քանի դեռ գոյութիւն ունի ընտանիքը, քանդեցէ՛ք, քանդեցէ՛ք դա» (Կոմիւնտէրն):

Կրօնը յայտարարուեց «գերագոյն յիմարութիւն», եւ ատէիզմ ասելով բոլշեիկները հասկացան ո՛չ միայն անաստուածութիւն, այլեւ թշնամախառն անհաւատութիւն դէպի ոչ համայնավար մարդը:

Երբ առաքինի եւ արդար է հալածուող հանրային գործիչը, հալածանքը հարիւրապատկում է նրա հոգեկան ոյժերը, նրա իմաստութիւնը, ինչպէս եւ՝ նրա բարոյական ազդեցութիւնը:

Միշտ էլ, երբ զանգուածներին պակասել է Գաղափարի մարդու կողքին վճռաբար կանգնելու բարոյական արիութիւնը՝ մեր աշխարհի սրիկայութիւնը նորանոր Յիսուսներ է խաչել:

Նախանձ, թշնամանք, չարութիւն - այդ մութ ոյժերը գործի են անցնում հենց որ բուն է մտնում Աստուածայինը հասարակութեան մէջ:

Մի ժողովուրդ, որի կեանքում աղուէսներին յաջողում է առիւծ խեղդել՝ նուազ, շատ նուազ թուով առիւծասիրտ որդիներ է ծնում:

Երբ մի ժողովրդի մէջ - ինչպէս մեզանում-որոշ տարրեր ազատօրէն ժխտում են ե՛ր սրբութիւն, ե՛ր սկզբունք, ե՛ր Հայրենիք, առանց հասարակութեան ցասումը բորբոքելու իրենց դէմ, երբ մի ժողովրդի մէջ խօսքը աւելի գրգռում է, պառակտում է, բաժանում, երբ դա (խօսքը: Ռ.Հ.) կորցնում է լոյսն ու ջերմութիւնը-դա նշան է, թէ այդ ժողովուրդը՞ նուաստացած է, ընկած՝ իր խօսքի հետ:

Հեռո՛ւ առիւծ խեղդող աղուէսներից:

Բարձրօրէն հոգեւոր կեանքի սկզբունքը հակասութեան սկզբունքն է: Պէ՛տք էր մի յուդա, մարդկային մի սեւ շարութիւն, մի ուրացում, որ-պէսզի իրենց գերագոյն ողբերգութեան մէջ յաղթանակէին Նազովրեցին ու բարութիւնը:

Չէ կարելի ներքնապէս ճանաչել կուսակցութիւնները եւ վճռապէս չժխտել կուսակցականութիւնը:

Հայոց շարժումների վարիչները, դժբախտաբար, չեղան ամեն բանից առաջ համահայկականութեան, ցեղային ամենամիութեան, քաղաքական միակրօնութեան գաղափարախօսներ: Ազգային կոռ գաղափարախոսութեան պակասի պատճառով, օտար փոխառիկ գաղափարները եկան խռովելու, շարժելու, բայց ո՛չ եւ յեղափոխելու մեր ժողովուրդը, նախ նրա մտածողութիւնը: Այդ իսկ պատճառով՝ ունեցանք շարժում, աւելի ճիշտը՝ շարժումներ, բայց ո՛չ ազգային վերանորոգիչ յեղափոխութիւն:

Այս կամ այն ժողովուրդը քաղաքականապէս ազատագրուելուց առաջ պէ՛տք է- իբրեւ նախապայման - նախ ազատագրել նրա մտածողութիւնը օտար կապանքներից: Հայոց յեղափոխութեան առաջին գործը պիտի լինէր այնպէս դաստիարակել հայութիւնը, որ նրա հասարակական խաւերը զօրութենապէս լրացնեն եւ օժանդակեն իրար, եւ

ո՛չ թէ կատաղի պայքար բանան իրար դէմ:

Մեր մտատրականութիւնը չհասկացաւ, որ ինքն- իբրեւ ազգի գիտակցութեան օրօրանը- կուսակցականանալով, դադարում է ծառայել ազգին: Այո, հատաժականացած մտատրականութիւնը ճշմարիտ մտատրականութիւն չէ. նմանը մեղանշում է իր կոչումի դէմ:

«Բուն հայկական խնդիրը» - դա օտար լծերի տակ ուծացած հայկական զանգուածները վերստին ազգի վերածելու մէջ է: Իսկ դա հնարատր է միայն քաղաքական միակրօնութեամբ:

Ազգերը դեռ չեն ճանաչել Հայր, որ իր պետութեան անկումից յետոյ իսկ մնաց արժէքաստեղծ- օտար գահերին՝ քազակիրներ, բանակներին՝ յաղթական զօրավարներ, երկրներին՝ բարեկարգիչներ, արուեստներին ու գրականութեան՝ հանճարեղ վարպետներ տալով: Իր բնաշխարհում թէ իբրեւ տարագիր՝ նա եղաւ ստեղծագործ, որով եւ յաղթական կանգնեց ժամանակների ու մահուան դէմ ու յաճախ իր հանճարի լոյսով լուսատրեց յախտեճականի բարձունքները: Նա գիտցաւ արժէքագործել եւ դրանով հաստատեց երեք բան - այն՝ որ մեծ, շատ մեծ է իր հոգեւոր զօրութեան կանոնները, որ անխաթար է իր կենսաբանական բարոյականը, եւ որ ընդունակ է՝ իր ճակատագրի հանդէպ եղած անարդարութիւնները հատուցել մարդկութեանը բերած իր ծառայութիւններով:

Չը կայ աւելի զարհուրելի բան, քան աննպատակ գոյութիւնը: Նպատակն է բարոյապէս շարժում անհատներն ու ժողովուրդները: Նա փրկում է մահացու ճահճացումից եւ բարոյական անկումից:

Անհատի եւ ազգի գոյութեան արեւն է նպատակը: Նա համախմբում է մեր ոյժերը, լարում մեր կամքը եւ անդիմադրելիօրէն քաշում մեզ դէպի յաղթանակ: Նրա ճանապարհով անցնողը դառնում է քազատր - ժողովուրդ:

Ռուսը ազատութիւնը տեսնում է ենթարկուելու մէջ: Եւ այնտեղ էր.

որ մարդը մեքենաներին Ֆորդի մեքենաների նման եւ այդ մարդամեքենաներից ստեղծեցին սովետներ:

Փառք ձեզ եւ այն բոլորին, որոնց մէջ ցեղի բարոյականն ու ոգին աւելի զօրաւոր եղան, քան ասիական բուշեիզմը: Ի զուր չէր, որ երկու տասնամեակ տարիներ հայրենիքից դուրս, Հայոց Մփիւռքի մէջ գոռում էի ես, որ հայ մարդը էաբանօրէն չի կարող բուշեիզմը հարագատել, նա չի կարող լենինահաղորդ լինել, որ Հայաստանում եկտր բուշեիզմներ կան, բայց բուշեիզմ չը կայ:

Ամէն վերածնունդ ենթադրում է անկատարութիւնից կատարելութիւն, պակասատրութիւնից լիարժեքութիւն, ոգեսպառուածութիւնից զօրութիւն, սեղմ ասած՝ մեզ տառապեցնող մի վիճակից մի երջանիկ վիճակ անցնելու անհրաժեշտութիւն: Աւելի պարզ՝ վերածնունդը ենթադրում է մի տագնապ իբրեւ արդիւնք գիտակցուած մի մոլորանքի, մի զգացուած անզօրութիւն, որից խթանուած՝ ժողովուրդները կանգ են առնում իրենց զարգացման ճամբի վրայ, վերաքննում են իրենց պակասատր աշխարհայացքը, իրենց դաւանանքը եւ վճռաբար կատարում իրենց անկիւնադարձը:

Հէնց այս անկիւնադարձով էլ սկսում է վերածնունդը:

Մեզ քշնամանեցին նրանք, որոնց մասին երկու հազարամեակ առաջ ասել է Նազովրեցին. «Միայն նա՛ կը հասկանայ, որին տրուած է հասկանալ»:

– Մեզ քշնամանեցին նրանք, որոնց համար ազգ պառակտելը համազօր չէ՝ ազգասպանութեան- կուսակցականացածները... Մենք հայօրէն ցաւում ենք Նազովրեցու կողմից աստուածօրէն արգահատուած դժբախտի համար, որին տրուած չէ մեզ հետ համազգալ ցեղը եւ հարագատել մեր քարոզած այն ճշմարտութիւնը, թէ առանց ցեղապրումի չկայ՝ վերանորոգում, չկայ՝ ճշմարիտ մշակոյթ, իսկ առանց այդ վերջինին՝ մեզ նման ոգեսպառ ժողովուրդների համար կայ ու կը մնայ ստոյգ մահը:

Կրօնականութեան պակաս, ասել է աստուածութեան, սրբութեան

զգացումի պակաս, որի պատճառով հոգեւոր շփոթի է մատնուած օրուայ մարդկութիւնը:

Մեր օրերի հակակրօն հովերը պիտի բացատրել մարդկային տիպի հոգեւոր անկատարելութեամբ: Առողջ հոգեվիճակ չէ՝ անկրօնութիւնը: Մարդ միշտ էլ նախ հեռանում է իր նմաններից եւ ապա՝ յետոյ՝ իր Աստծուց:

Ո՛վ հեռանում է կրօնից, անձնասպանօրէն կտրում է իր հոգեւոր զարկերակը:

Կոյր պատահականութեան ծնունդ չէ տիեզերքը, եւ ես միակ չեմ տիեզերական անսահմանութեան մէջ – այդ սփոփարար հաւատքն է տալիս մեզ կրօնը:

Նա, ով ընդունում է Աստուծոյ գոյութիւնը, ընդունում է նաեւ իր պարտականութիւնը հանդէպ գերագոյն իրականութեանց – ազգ, հայրենիք, պետութիւն:

Ուզո՞ւմ էք խորապէս ճանաչեք մէկին, խօսէ՛ք եւ խօսեցրէ՛ք նրան Աստուծոյ մասին, եւ նա իր պաշտանքի կամ անհաւատութեան միջոցաւ պիտի մատնէ իր հոգեւոր հասակը: Անաստուած ես, ասել է զուրկ ես սրբութեան նուիրումից, պարտականութեան զգացումից, ասել է վաղ թէ ուշ դու պիտի դաւաճանես նմաններիդ:

Կրօնապէս տկարացա՛ւ մարդկութիւնը՝ եւ ահա՛ այլեւս երկինք չունի նա, փլաւ նրա յոյսերի աշխարհը, այսօր այնտեղ է՛լ մահն է գործում իր դէմ:

Սրբագրենք այն մեծ մոլորանքը, ըստ որի գոյութիւն ունի մի ընդհանուր, միջազգային, համամարդկային մշակոյթ... Կեղծիք է նման մշակոյթը, անգոյ: Եւ մարիտ մշակոյթը միշտ էլ կրում է տուեալ ժողովրդի անհատականութեան կնիքը:

Չկայ՝ մշակոյթ առանց կրօնականութեան զգացումի: Յամաբում են նրա ստեղծագործ խանդի աղբիւրները, հենց որ դա դառնում է նիւթապաշտիկ:

Մի այլ մոլորանք: Արդեօ՞ք ամեն ժողովուրդ կուլտուրական է. բանգի լեզու եւ գրականութիւն ունի: Ոչ, իհարկէ: Եւրոպայէս կուլտուրական կոչուելու համար բաւական չեն գրողն ու գիրքը, գիտնականն ու գիտութիւնը:

Մինչեւ որ մեր գոյգ սուրբերին Մահակ-Մեսրոպին չմիանայ մտածումի, ապրումի եւ գործի ազնութիւնը՝ պիտի չկարողանամ առանց ամօթախառն ցաւի մեզ կուլտուրական անուանել:

Մարդ եւ մարդկութիւն հասկացողութիւններն, ընդհանրապէս, որոշ իմաստ են ստանում միայն այս կամ այն ազգի ոգու միջոցաւ: Ազգային հանճարն է որոշ բովանդակութիւն հաղորդում համամարդկայինին: Ազգութեանց փլատակների վրայ ճշմարիտ մշակոյթ չի կարող ծաղկել: Տուեալ ազգութիւնից դուրս՝ կեղծ են մարդն ու մարդկութիւնը:

Մարդկայինը ազգայինին ներդաշնակելով՝ շահում է թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Եւ, ընդհակառակը, ազգայինը «համամարդկայինին» զոհելով կորցնում է թե՛ ազգը, թէ՛ մարդկութիւնը:

Օրուայ մարդը, աշխարհաքաղաքացիական խորթացուցիչ վարդապետութիւնների ազդեցութեան տակ, կորցնելու վրայ է իր իրական հոգետը կերպարանքը, իր բնացեղային էութիւնը: Անհրաժեշտ է մի արմատական յեղափոխութիւն, մի դարձ անարիւն վերացական մարդկայնութիւնից՝ դէպի օրգանականը, դէպի ցեղամարդը – իրական մարդը, որն իր հողին եւ ցեղին կապուած է իր էութեան բոլոր թելերով:

«Եւրոպական մարդկութիւն (ԺԸ եւ ԺԹ դարերի), «Համաշխարհային մարդկութիւն» (Ի դարի) – ես չեմ հաւատում ո՛չ մէկին, ո՛չ էլ միւսին: Եթէ գոյութիւն ունեցած լինէր եւրոպական մարդկութիւն, տեղի պիտի չունենային եւրոպականութեան համար դարերով ասիական

խաւար ոյժերի դէմ ճակատած մեր ժողովրդի աննախընթաց ջարդերը:

Անհատ, ոյժերդ միացո՛ւր արիւնակիցներիդ ոյժերին՝ յանուն մեծ ամբողջի երջանկութեան – այս է օրուայ եւ վաղուայ ընկերային հրամայականը: Այլ խօսքով՝ անհատն իր բարիքը պիտի փնտռէ հանրութեան բարօրութեան մէջ: Ո՛վ հակադրում է անհատն ընդհանրութեան՝ մեղանշում է թէ՛ մեկի, թէ՛ միւսի դէմ: Ազգի կեանքից, բովանդակութիւնից դուրս ոչինչ է անհատը:

Ընդհանրութիւնն է կամուրջ ձգում անհատների էութեանց միջեւ: Եւ ոգեխառնուելով միայն անհատը դառնում է հոգետը անձնատրութիւնարժեքաստեղծ ոյժ: Դասակարգային վարդապետութիւնները, պարտկտելով ազգը, զայն վերածում են դիմազուրկ զանգուածների: Ահա թէ ինչո՞ւ մենք ժխտում ենք լիբերալիստօրէն խորհող եւ գործող անհատն ու դասակարգը եւ դաւանում ազգն իբրեւ արժեքային ամբողջութիւն:

Ո՛չ թէ սոցիալիստը, այլ սոցիալական մարդը: Լիբերալիզմը՝ ֆրանսական յեղափոխութեան այդ թունաւոր պտուղը պղծեց մարդկային բոլոր հոգետը հասկացողութիւնները: Դա օրինականացրեց աղքատութիւնը, որով եւ ընկերային քողարկուած անբարոյականութիւնը: Միեւնոյն ժողովրդի ծոցի մէջ մերձատրին փշրանք նետելը հոչակեց բարեգործութիւն: Անհատի իմ իրաւունքը եւ քո իրաւունքն է, ինչպէս քո պարտականութիւնը նաեւ իմ պարտականութիւնն է:

Ազգի հետ եւ ազգի առջեւ խօսողի համար ներելի չէ մտածումի ստորնութիւնը:

Սովորեցէ՛ք հայօրէն մտածել՝ դա է ազգային բարոյականի հիմքը:

Սեփական պատմութիւնն է մեր իմաստուն խորհրդականը, մեր ոգու դայեակը, մեր ազգային խղճմտանքի վարիչը:

Իր պատմութեան ծանօթը երկու բան լուսապէս գիտէ՝ նա գիտէ, թէ

ինչ կարող է անել եւ ի՞նչ պէտք է անել՝ Հայն ու Հայաստանը յաւեր-  
ժացնելու համար:

Մի ամբողջ յիսնամեակ է, ինչ հայութիւնը միջկուսակցական պայ-  
քարելով ներքին ճակատի վրայ, սպառում է իր ոյժերը եւ բաց աչքով  
ծառայում իր գոյութեան թշնամիներին:

Տուրք տալով կեղծ եւրոպականութեան՝ հայ կուսակցութիւնները  
իրենց թշնամին եւ հակառակորդը փնտռեցին իրենց ժողովրդի ծոցի  
մէջ, եւ խախտելով ազգի հոգեւոր ամբողջականութիւնը, թուլացրին  
ճակատագրի կապը արիւնակիցների միջեւ:

Շոյելով կուսակցական պատկանելիութեան զգացումը, կուսակցու-  
թիւնները իրենց հետետորդների մէջ տկարացրին ցեղազգային գիտակ-  
ցութիւնը: Տկարացաւ հայկականը ի հաշիւ խմբակցականի: Նրանք  
դարձան փակ հասարակութիւններ հասարակութեան մէջ, որով մի գա-  
տիչ պատ իրենց եւ ազգի կենդանի ոյժերի միջեւ:

Հասկանանք, որ հայը պատճառ չունի կուսակցականանալու: Իսկ  
մեր ժողովրդի թուական տկարութիւնը, մեր հայրենիքի աշխարհագրա-  
կան դիրքը եւ երէկուայ մեր Եղեռնը կը բաւեն գիտակցելու, որ հայը  
կուսակցականանալու նաեւ իրատունը չունի:

Հայրենիք - սկիզբն ու վախճանն է մեր մտածումի, ապրումի եւ գոր-  
ծի: Երբ մեր շրթունքները մրմնջում են ցեղի մասին, մեր աջը ցոյց է  
տալիս Հայաստանը: Մենք հաւատում ենք Հայաստանին - դա նշանա-  
կում է, որ կեանքում սրբազնագոյնը մեզ համար Հայրենիքն է: Մենք  
շնչում, ապրում ենք Հայաստանով, միշտ պատրաստ տառապելու,  
գործելու եւ մեռնելու նրա համար: Դա՛ է արժէքների արժէքը մեզ հա-  
մար: Դա՛ է մեր սրբազան ցաւը, կարօտը, ուրախութիւնը, մեր գոյութե-  
ան իմաստն ու իրատունքը, մեր անմահութիւնը՝ միաժամանակ:

Չկայ, կեանքն ազգին եւ հայրենիքին պատարագելու չափ մեծ եր-  
ջանկութիւն չկայ՝ աշխարհում:

Հայրենատիրութիւն - ահա վերանորոգչականի մեր դաւանանքը.

որի իրականացումը պիտի ուշանայ այնքան, որքան ուշացաւ մեր ժո-  
ղովրդի վերանորոգումը:

Մեր նորահասը պիտի իւրացնէ հայ վերանորոգչականի դաւանան-  
քը - Աստուած, ցեղ, հայրենիք, որպէսզի իր ժողովրդի անցեալը, ներ-  
կան եւ ապագան կապակցաբար, ստեղծագործօրէն ապրել կարո-  
ղանայ:

Ազգերը մի հատիկ ճշմարիտ ազնուականութիւն ունին - դա էլ ընտ-  
րանին է: Նրա միջոցաւ են բարձրանում եւ նրա հետ են ընկնում ազգե-  
րը: Հասարակութեան մէջ շատերը կարող են մեղանչել օրէնքի, բարո-  
յականի, հաւաքական շահերի դէմ, բայց այդ մեղանչումներից չի՛  
խախտուի հանրային բարոյականը, չի՛ անբարոյականանայ հասա-  
րակութիւնը: Մակայն, բաւական է, որ ընտրանիին պատկանող մէկը  
կոպտօրէն մեղանչեց իր կոչումի դէմ - այլեւս քանդուած համարէք ժո-  
ղովրդի հաւատքը, համարումը, բարոյականը: Ընտրանին իր կեանքի  
կենդանի օրինակներով է վարում ժողովուրդը:

Կրօնապէս պա՞ղ է եկեղեցականը՝ հակակրօն է ժողովուրդը:  
Հոգեպէս էսնա՞ֆ է ուսուցիչը, այլեւս կարիք չկայ՝ աւելի մեծ  
դժբախտութիւն բաղձալ նրա ազգին:

Յաւիտենականի շունչից զո՞ւրկ է գրողը՝ նա անխուսափելիօրէն  
պիտի դառնայ ստորնութեան քարոզիչը:

Եկեղեցական, ուսուցիչ, գրող, գիտնական, զօրական, գործիչ - ահա  
ընտրանին: Սրանց կոչումը հրամայողաբար պահանջում է ամբող-  
ջական եւ ներոյժ կեանք: Օրգանապէս ապաքաղաքական է ընտրա-  
նին, որով բացարձակապէս անկուսակցական պիտի լինի դա:

Արդեօք, այսօր խախտուած չէ՞ զաղոթահայու ազգային բարոյա-  
կանը: Այդ հարցին պատասխանելու համար պէտք է ճշտել, թէ իրենից  
ի՞նչ է ներկայացնում օրուայ հայն իբրեւ միտք, գգացում եւ կամք: Աւ-  
ելի պարզ՝ պէտք է ճշդել, թէ այսօր ինչպիսի՞ զգացումներ են տիրապե-  
տում նրա հոգում: Այդ իմաստով բարոյա-հասարակագիտական մի

վերլուծում տրամութեամբ պիտի համակէ ձեզ: Ի՞նչ էինք երէկ: Այդ մասին բող խօսի ինքը՝ դարերի հայր. «Մի տնից չէինք, բայց մի ձեռով էինք»: Յեղօրէն բարոյական էր հայր. «Մէջք մէջքի տանք՝ սարեր շուռ տանք»: Սոցիալապէս առողջ էր նա. «Հացն Աստծուց, ես էլ հետը, ով հասնի՝ բող ուտի»: Սոցիալապէս արդար էր. «Այն մարդը, որ Աստուած ունի՝ աղքատ չէ»: Իդէալիստ էր նա. «Հող ու մոխիր կենր, մարդէն հաց մի՛ մուրար»... Յեղօրէն հպարտ էր. «Հայր չյոզնի՛ չի՛ նստի»: Ծուլութեան հացը չսիրող է. «Ուտըք քարին գարնուի՛ խղճմտանքդ քննէ»: Բարոյապէս զգայուն էր. «Իր ծառը ծարաւ բողած ուրիշինը ջրողը ո՛չ յարութիւն ունի, ո՛չ էլ բողութիւն»: Ազգայնօրէն զգաստ էր. «Առիւծը կատուին խեղդել չեմ տայ»: Տղամարդ էր հայր:

Այս էինք երէկ- որակի ազգ:

Մէջբերածս՝ հայկական առածների այդ փոքրիկ ծաղկաքաղը, որի մէջ մեր ժողովուրդը դրած է դարերի իր բարոյա-ազգային փիլիսոփայութիւնը- կը բաւէ հաստատելու, որ ստրկութեան մէջ, օտար լուծերի տակ անգամ մենք եղել ենք ազգային բարոյականով զօրաւոր ժողովուրդ: Եւ հենց դրանում չէ՞ գաղտնիքը, որ մենք կանք ու կը մնանք, իսկ մեզ հասակակից շատ ազգերից մնացել է քարէ յիշատակ միայն:

Ազգային բարոյականը - ամեն բանից առաջ - պայմանաւորում է մի ժողովրդի ստեղծագործ համերաշխութեամբ: Դրսեցի թէ տեղացի, իմաստասէր թէ անզրագէտ, չէզոք թէ կուսակցական - հայ մարդիկ են սրանք, որոնց հանդէպ տածածդ պաղտութիւնը կայէնութեան է համագօր: Ճակատագրի եղբայր է ամեն հայ: Աւելին՝ ամեն հայ դա դու ես-ահա ազգային բարոյականի անխախտելի օրէնքը: Այդ օրէնքի դէմ մեղանշողը քանդում է իր ազգութեան հիմները, դա թշնամին է իր ազգի: Որակի ազգ էինք երէկ: Չաղէտուելու եւ չկորչելու համար վերստին պիտի դառնանք այդպիսին՝ հրամայողաբար: Անվերջ որակաւորուելու, ազգ դառնալու պրոցեսի մէջ են բոլոր ժողովուրդները:

Ազգովին խորհինք, ապրինք եւ գործենք այն, որ բարի է Հայաստանի համար:

Հասարակական խղճմտանքը արդիւնք չէ պետական օրէնքների, ընդհակառակը, պատմութիւնը հաստատում է, որ օրէնքներն են հայելին հասարակական հոգու, որ պետական ռեժիմը արտացոլում է ժողովրդական խղճմտանքը:

Երբ ժողովրդի հոգին աւելի կուլտուրական է, քան իրաւակարգը, պետական ռեժիմը փոխվում է բռնութեամբ, յեղափոխութեամբ:

Երբ հակառակն է՝ պետութեան ղեկավարութիւնը անցնում է բախտախնդիրների ձեռքը, բռնակալներ, որոնք օգտուելով զանգուսածների հոգեկան կուրտութիւնից, երկիրը դարձնում են իրենց կրքերի եւ անձն[ական] շահերի շահաստան (այդպէս են Եւրոպայի հարաւարեւելեան երկրները՝ Յունաստանը, Սերբիան, Ռումանիան, Բուլղարիան, Թուրքիան):

Ազատութեան նախապայմանը - ինքնատիրապետումն է, ինքնաւաղթահարումը, իր տկարութեանց յաղթահարումը:

Ամենաիմաստուն եւ ամենազորաւոր յեղափոխականը ժամանակն է:

Դիպլոմատական եւ լրիւ ազատագրութիւն առանց հոգեւոր վերադաստիարակութեան եւ առանց քաղաքացիական տղամարդացումի, գիտական անհէթեթութիւն է:

Ռեժիմը չի ուղղում մարդկանց, ընդհակառակը՝ մարդիկ են սրբագրում, փոխում ռեժիմը:

Չի կարելի արագօրէն հասունացնել: Արհեստականօրէն արագացւած պրոգրեսը- արհեստականօրէն արագացւած անկում է:

Գազան -անասունը մարդու մէջ աւելի է ուժեղանում, երբ ուզում ենք -մէկէն, առանց աստիճանական բարելաւումի-դարձնել կատարեալ էակ:

Պատմութիւնը մի բան գիտէ- աստիճանական տրանսֆորմացիա:

Ամեն քաղաքա-սոցիալական բռնացում խեղում է ժողովրդի հոգին:

Իր աճումի մէջ բռնացումի ենթարկող ժողովուրդը մեռնում է հոգե-  
այէս:

Ընդհանուր բարիքը դառնում է չարիք, երբ չի արտացոլում մաս-  
նատր բարիքը:

Իշխանութիւնը դառնում է օրինականացեալ անիշխանութիւն, երբ  
ընդհանուր խղճմտանքի կոնտրոլ չկա:

Քաղաքական] ազատութիւնը ծնունդ է առնում բարոյականից:

Սոցիալական խնդիրը բարոյական խնդիր է: Օրէնքը փոխելէ  
առաջ, փոխիր մարդը:

Օրէնքները լինում են երկարատեւ միայն այն ժամանակ, երբ հա-  
մապատասխանում են բարքերին:

Գրուած օրէնքի աղբիւրը չգրուած օրէնքն է:

Ամեն բարեփոխում պէտք է սկսուի խղճմտանքից:

Իդէոլոգները սխալում են կարծելով, թէ ազատութիւնը կարող է  
իմաստութիւն ծնել, ընդհակառակը՝ իմաստութիւնն է ծնում ազատու-  
թիւնը:

Քաղաքականութիւնը հավասարակշռութեան գիտութիւն է:

Ամենից անհաստատ դաշինքն այն է, որ կնքում են բախտի հետ:

Բախտը նախազգուշացնում է մեզ՝ դաւաճանելով:

Պատահական երջանկութիւնը ե՛ւ անարժէք է, ե՛ւ անարդար:

Եթէ երջանկութիւնը մեզ չի ազատում վախէն՝ անարժէք է դա:

Գերագոյն երջանկութիւնը այն է, որ պատճառ կդառնա եւ այլոց

երջանկութեան:

Միայն ազնիւն է զօրավոր:

Արատատրութիւնը տկարութիւն է, առաքինութիւնը հզօրութիւն է:

Չարերի հզօրութիւնը ցնորք է:

Մաքուր մարմինը՝ դա անսահման ոյժերի ամբար է:

Ամեն ինչ կատարիլ արթուն խղճմտանքիդ աչքի առջեւ:

Մի շարք օտար ժողովուրդների նման՝ տկարութեամբ, իմա՝ ցեղու-  
րացութեամբ, հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիքականը, բայց եօթնիցս  
փառք իրեն, նա չունեցաւ այդ տկարութիւնը գիտակցօրէն, թէկուզ շատ  
տեղերում կրաւորական հերոսացումով, նա զոհեց կէսը իր մարմինէն՝  
ցեղի էութեան դէմ չմեղանշելու համար:

Ով գիտակցաբար հոկտեմբերեան բունտը համարում է յեղափո-  
խութիւն, նա հայիոյում, անարգում է պատմութեան ծանօթ բոլոր ճշ-  
մարիտ յեղափոխութիւնները:

Յաղթանակում, հերոսանում է նա, ով իր մէջ բնութիւնը ոգուն են-  
թարկելու աստիճան զօրատր է:

Վախը դադարում է, վտանգը տեղի է տալիս, մահը մեռնում է, հէնց  
որ մարդու որդին իր գիտակցութեան ամբողջ զօրութեամբ կրկնում է –  
ես էլ Աստծու որդին եմ:

Հաշտուելով մահուան գաղափարի հետ՝ մարդս դառնում է  
եղբայրն ու զինակիցն այն բոլորի, որոնք մարդկային ցեղի պատ-  
մութեան բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով իբրեւ լոյսի,  
հաւատքի եւ սուրի հերոսները:

Տեւական սարսափով ու քաղցով ստեղծուեց արեան բեժիմը (քոլ-  
շելիզմը, Ռ.Հ.), որ մի տասնամեակի ընթացքում աւելի տառապացրեց  
մարդկութեան մի մասը, քան պատմութեան ծանօթ որեւէ մութ եւ բար-  
բարոս հարիւրամեակ:

Անկրօն էակը հրաշունչ գինոր չի դառնա:

Մեռնում է բոլշեիզմը, որովհետեւ ապրել են ուզում եւրոպական  
քաղաքակրթութիւնը, քրիստոնէութիւնը եւ մարդկային անունը:

Հայրենիքը յալիստենական արժէք է: Նրա տէրը ոչ թէ միայն այսօր  
ապրող հայերն են, այլեւ այն բոլոր սերունդները, որոնք եկել ու անցել  
են, նաեւ նրանք, որոնք դեռ պիտի գան ու անցնեն:

Հայրենասէրը մի՛ քաղաքանութիւն է ճանաչում՝ ծառայել Հայրենի-  
քին: Ես այդ ծառայութիւնից բացի ուրիշ դաւանանք չեմ ունեցել:

Մարդկային իմացականութեան դէմ խորապէս մեղանշում է նա, ով  
իրեն տրուած հրամանը չէ գործադրում ստեղծագործաբար:

Հայաստանը եւ ճշմարտութիւնը -ահա իմ աստուածութիւնները:

Պատմութիւն -դա անաւարտ վէպ չէ, այլ՝ չաւարտուած ճակատա-  
մարտ, եւ էջերը՝ ռազմադաշտեր, որոնք արիւնով են ներկում եկող -  
անցնող սերունդները:

Պատմագրել՝ նշանակում է կռուի մտնել ժամանակի հետ՝ թոյլ  
չտալու համար, որ նա մարդկային ազգի անցեալն սպանի:

Ժողովրդի անմահութեան կոթողն է պատմութիւնը:

Մասիս թէ Մեսրոպ - հաւասարապէս սրբազան կատարներ, որոնց  
տրուած է գոյութեան բարձունքներում պահել հայ միտքն ու հայացքը:

«Իմ գաւակը չէ նա, ով ինձ համար մեռնելու հրաման չի աղերսում  
ինձանից», - անխօս ասում է հրաբխի պէս արթնացած ժողովուրդը:  
Նման վայրկեաններին նա զօրաւորների մէջ փնտռում է զօրաւորա-  
գոյնին եւ նրա ափի մէջ դնում իր ճակատագիրը:

Այսպէս է աշխարհ գալիս ճշմարիտ առաջնորդը:

Կեանքում խղճմտանքէս գատ ես ճանաչեցի երկու այլ դատատը-  
ների եւս՝ Աստուած եւ ժողովուրդ: Առաջինի դէմ մեղանշեցի, երկրոր-  
դի դէմ՝ երբեք:

Երկիրը - դա հայրենիքի աշխարհագրական զրահն է: Հայրենիքը -  
այդ երկիրը մշակող ժողովրդի ոգին է, նրա մշակոյթը:

Հայաստան երկիրը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբէնը, Մա-  
միկոնեանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագոր-  
ծութիւնը:

Իբրեւ հասկացութիւն՝ հայրենիքն ընդգրկում է ոչ միայն անցեալն  
ու ներկան, այլեւ՝ գալիքը:

Աշխարհակալութիւն - ահա՛ հայրենիքների թշնամին՝ հարազատ  
թէ օտար:

Խելագար անձնասպանութիւն է աշխարհակալութիւնը, հոգեսպա-  
նութիւն:

Մարդկային գործերի մէջ հայրենիքի պաշտպանութիւնն է ամե-  
նասրբազանը:

Հայրենիքի չափ նուիրական է եւ պատերազմը հայրենական: Հա-  
ւաքական աւագակութիւն եւ սպանութիւն է այլ կարգի ամէն պատե-  
րազմ:

Մոցիալապէս որքան արդար՝ այնքան զօրաւոր է հայրենիքը:

Ներիք, Տէր, ներիք, եթէ մի օր հայրենիքիս օգտակար լինելու համար մեղանչեմ Քո դէմ: Արդար է հայրենիքին ծառայել ամէն ինչով՝ բացի ստորութիւնից:

Մեռիր այնպէ՛ս, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ -ահա՛ իմ դաւանած հայրենասիրութիւնը:

Չատեցէք նախահայրերի աճիւնը հայրենի հողից եւ դուք կունենաք երկիր մշակելի, բնակելի, բայց ոչ հայրենիք:

Ով չի գերազանցում իր նախորդներին, նա անարգում է նրանց անունը՝ մեղանչելով հոգու զարգացման օրէնքի դէմ:

Աչքը կուշտ ժողովուրդ - ահա մի ուրիշը -ամենահայկականը հայու գովելի յատկութիւններից:

Անցորդին է պատկանում թոնրից հանած հայ շինականի առաջին հացը:

Գերազանցն իր տեսակի մէջ -ահա ճշմարիտ հայն իբրեւ ոգի եւ կերպար:

Ահա մեր նախահայրերը լուսադաւան - Մեծն Ներսէս, Սահակ, Մեսրոպ, ապա՝ հերոսական փառանքը Մամիկոնեան գօրավարների - Մուշեղ, Վարդան, Վահան - կենդանի վահանը Հայաստանի պաշտպանութեան, Աշոտ՝ մարտերի բոցերում երկաթացած, իսկ նոր եւ նորագոյն ժամանակներում՝ Աբովեան, Խրիմեան, Ալիշան, Պատկանեան, Ջաւարեան... Վերջապէս, յեղափոխականն ու ռազմիկը միշտ մահապատրաստ, որոնց համար Հայաստանը աստուածութիւն էր, հայկականութիւնը՝ կրօն:

Հայն իր Վահագնը ունէր - Աստուածը քաջութեան: Քաջ եւ քաջապաշտ է նա... Քաջ են, ընդհանրապէս, ոգու ժողովուրդները: Սրանցից

է հայը՝ գերազանցօրէն: Հեթանոս հայու քաջութիւնը շտկարացաւ նաեւ քրիստոնէական Հայաստանում: Մխրագործելու իր տենչանքին զուգահեռ՝ դա ընդունեց արտայայտութեան մի նոր ձեւ եւս - նահատակութիւնը կամատր, որն իւր խորքի մէջ ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ գիտակցական մահուամբ քաջաբար անմահանալու ձգտումը:

Օտար լծերի տակ երկարօրէն ապրած ժողովուրդներին յատուկ է մի հոգեգիծ, որը հոգեգիտութիւնը անուանում է «ստրկական երկիւղ»: Այդ ամօթալից արատից, այդ չարիքից զերծ է հայ էութիւնը, որովհետեւ օտար իշխանութեանց լուծը կրելով հանդերձ, նա չէ դադարել իրեն զգալ աւելի բարձր իր երկրին բոնօրէն տիրողից:

Տրդատներից մինչեւ Մամիկոնեանները, եւ Գալիք -Բէգից մինչեւ մի բոտ յեղափոխականներով «Բանկ Օտոման»-ը զրատող Բաբկէն Միւնին՝ քաջութիւնը հայու համար եղել է այն, ինչ որ համը պտուղի համար՝ բնօրէն:

Հայու համար շինարարութիւնն է գերագոյնը պայքարներից, եւ յաւերժացողը յաղթանակներից:

Լուսաբաղձ ժողովուրդ, որն ապրել, պայքարել, շինարարել է գիրքը ձեռքին:

Մեր երկրագնդի վրայ երկու ուժեր չեն յոգնում - ժամանակն ու հայր՝ մէկը կործանելով, միւսը՝ վերաշինելով:

Յաւերժանալ շինարարելով, ստեղծագործելով - ահա՛ հայկականը, չափազանց հայկականը:

Ճշմարտօրէն ազատ է նա միայն, ով չի զգում բռնութեան առկայութիւնը:

Ազատ կարող է լինել հզօրագօր ոգու տէրը միայն:

Հոգով տկարների համար մարտելի սնունդ չէ ազատութիւնը:

Ո՞րն է պատմութեան ամենաուսանելի դասը:

– Չկորցնել չափի զգացումը, երբ դիպուածը մեր ախոյեանին մեր ձեռքն է յանձնել: Վաղը պատմութիւնը կարող է մեր ախոյեանին կարգել դատաւոր՝ մեզ դատելու համար: Եղի՛ր արդար, արդար եղի՛ր, քանզի դա՛ է լավագոյն քաղաքականութիւնը: Գիտցի՛ր, մեր արդարութիւնից մենք ենք առաջին շահողը: Մեր երկրագնդի վրայ դեռ ոչ ոք չի գղջացել արդար լինելու համար:

Ճշմարտօրէն զօրաւորն է արդար:

Եւ միայն արդարն է ճշմարտօրէն զօրաւոր:

Պատմական անձը քարեղէն արձան, քարացած էութիւն չէ, այլ՝ յաւերժաշունչ ոգի:

Երկու բան չեմ ներում մարդուն՝ իր ստորութիւնները, որոնցով սնում է իր բարոյական տկարութիւնը, ապա՝ իր տկարութիւնը, որից ծնունդ են առնում իր ստորութիւնները:

Ճշմարտօրէն ազատ է նա, ով ազատ է մահուան երկիւղից:

Թէեւ ամէն ժողովուրդ իր հայրենիքն ունի, մարդկութիւնը, սակայն, դեռ մնում է անհայրենիք: Մարդկայնութիւնն է մարդկութեան հայրենիքը, որ դեռ գոյութիւն չունի:

Ինձ տրուած չէ առանց բարոյական զարհուրանքի դիտել մարդուն իր նուաստութեան մէջ:

Ես մերժում եմ այն բարոյագուրկ հասկացողութիւնը, քէ հայրենիքի շահը սրբագործում է ամէն միջոց: Ստորութիւնը չի դադարում ստորութիւն լինելուց եւ այն դէպքում, երբ այն կատարում է անզամ հայրենիքի համար... Ստորութեամբ չեն պաշտպանում Հայրենիքը: Նրան՝ Հայրենիքին, վայել է բարձրօրէն մարդկայինը, ասպետականը, կորովին:

Մեծ պաշտօններն առանց հոգեկան մեծութեան, նման են կաւէ անդրիի՝ դրուած ոսկէ պատուանդանի վրայ:

Ես իմ կեանքով հաստատեցի Հերոդոտոսի խօսքը. «Վտանգաւոր է չափից աւելին ցանկանալ»: Ես ուզեցի, որ մեր ցեղի գոյութեան թշնամին հէնց իմ օրով նստի իր հայրենիքի փլատակների վրայ, եւ վայէ՛ նախանձելով եօթնիցս անիրաւուած իմ ժողովրդի ճակատագրին:

Երիտասարդութիւն, աշխարհի անգերազանցելի գեղեցկութիւնն ես դու, երբ բարձրանալատակ ես:

Մարդկութիւնը տատապանքին կը պարտի իր հոգետր ողջ մշակոյթը:

Անպարտելի է մնում նա, ով մահն է ընտրում իբրեւ առաջնորդ:

Կորուստ չկայ տիեզերքում - կայ անդադրում մի շարժ, որի ընթացքում կերպարանափոխուելով հոսում է ամէն ինչ...

Եթէ էապէս գոյութիւն ունենար մահը՝ յափտեճական կորուստի իմաստով, չէ՛ր ապրի մարդկութեան անցեալը, որին կոթնելու կարիք է զգում եկող ու անցնող ամէն սերունդ:

Իբրեւ անօթ՝ վաղուց է խորտակուել Բեթովէնը, չկայ նա. կան, սակայն, մնում են նրա ակորդներն աստուածային:

Մահ չկայ, կորուստ չկայ տիեզերքում, կայ աստիճանական ոգիացումը նիւթի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կայ:

Չկայ մահ, կայ անցում մի այլ ոլորտ: Անմեռ է մեզ սկզբնաւորող, մեզ շնչաւորող զօրութիւնը, բանը, ոգին:

Մահը տրուած է մարդուն՝ այն յաղթահարելու համար:

Միայն կամաւոր նահատակն է բացարձակ ազատութիւն վայելում:

Թիւն ու տեխնիկական վճռական դեր են կատարում միայն այն դէպքում, երբ նրանից օգտում ենք իբրեւ ահալարութեան միջոցներից:

Յաղթանակը օրինաչափօրէն թերւում է այն կողմը, որը յաջողում է անելի երկար ժամանակ մահուան սարսափի տակ պահել իր հակառակորդին՝ ճգնելով խորտակել նրա դիմադրական ոգին:

Այո, ըստ էութեան՝ ռազմավարութիւնն այլ բան չէ, եթէ ոչ՝ ահափարութիւն: Եւ, որովհետեւ մահն է ահացուցիչը՝ մենք բնաւ մեղանշած չենք լինի լեզուի ոգու դէմ, եթէ այսպէս բանաձեւենք ռազմավարութիւնը - հոգեբանօրէն առնուած՝ դա մահափարութիւն է:

Հանճար ու զինոր էին Կեսարը, Հաննիբալը, Նապոլեոնը: Կատարելատիպ հերոսներ էին Մամիկոնեան Մուշեղ, Վասակ, Վարդան զօրավարները:

Կարելի է ռազմական տաղանդ, հանճար լինել, բայց եւ այնպէս հերոս չլինել:

Հերոսը բարոյական հանճար է, սրտի հանճար, եւ միշտ քաջաքաջ ու մահապատրաստ:

Հանճարը դա բանակի ուղեղն է, հերոսը՝ սիրտը: Յաղթանակ կարելի է շահել նաեւ առանց հանճարի, առանց հերոսի՝ երբէք:

Ոգու մարդը - ահա՛ սխրագործելու, մեծագործելու կարող ղեկավարը: Այսպիսին էր նա, ով աշխարհակալ Հռոմի դէմ ստրուկների ատելութիւնը շղթայազերծեց - Սպարտակը:

Այսպիսին էր Կարթագենի ամեհի գաւակը: Վերջապէս նա, ով Տղմուտի արեւրում դարերին ու սերունդներին իմացեալ մահով անմահանալու ճամբան մատնանշեց՝ հրաշունչ Մամիկոնեանը, որն իր արիւնով հաստատեց, թէ չէ կարելի մարել այն, որն էութեամբ անմարելի է - հայկական ոգին:

Ռազմական փառքի կատարները՝ Ալեքսանդր, Հաննիբալ, Կեսար - այդ հրեղէն անունները գուցէ եւ մնային անձանօք աշխարհին, եթէ պարտուած լինէին իրենց առաջին ճակատամարտերում:

Արդար լինենք, զօրավար, դու՛ եթէ հանճարեղ իսկ լինես, դու միայն նախապատրաստում ես յաղթանակը. այն շահում է զինուորը:

Յաղթում եմ, նշանակում է՝ հակառակորդիս գերազանցում եմ գոհաբերութեան մէջ: Ահա՛ ռազմական դոկտրինայի այբն ու փիլիսոփայութիւնը:

Հայը միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին յաջողում է, կուի ընթացքում, հաւաքական սիրտ ստեղծել:

Ոգու մեծագործութիւններ կան, որոնց իմաստն ու արժէքը ճշտելու համար բառեր դեռ չկան:

Ոգու, հայ ոգու այդ մեծագործութիւններից էր Աւարայրը:

Ահա եւ նրանք՝ ուխտի իմ գերագոյն եղբայրները - նահատակներ ու հերոսներ, որոնք մի օր, անկարող աշխարհին իրենց անպատում ողբերգութիւնը ողբալու՝ երանեցին այսպէս. «Նրանց, որոնք գոռ մարտերի բոցերում իրենց ոգին են պողպատում, եւ զարնում իբրեւ պարտականութեան ջահել աստուածներ, երանի»:

Արծուին, բարձունքներում՝ բիրերն աստղերին, հոգեվարող արծուին էլ երանի:

Եւ առիւծին արքայական, որ մեռնելուց առաջ անապատների յաւերժութեանն իր վերջին մռնչիւնն է խառնում, երիցս երանի՞»:

Մեր հայրենիքի եւ ժողովրդի մեծութիւնը պէտք է չափել ոչ թէ Հայաստանի օրուայ անձուկ սահմաններով, այլ հայ մտքի եւ արուեստի ազդեցութեան հորիզոններով: Պատմականօրէն առնուած՝ մերն է այն ամէնը, որ հայը տուել է աշխարհին: Մեր ստեղծածը պատմութեան ո՞ր դարում էլ եւ երկրագնդի ո՞ր կէտի վրայ էլ լինի՝ կը մնա սեփականութիւնը հայ ոգու:

Հայ մտքի եւ բազկի գործերը Հայաստանից դուրս՝ կը մնան իբրեւ հոգեւոր գաղութներ:

Հայը օտար իշխանութիւնների լուծը կրելով հանդերձ չի դադարում

իրեն զգալ աւելի բարձր իր երկրին բռնօրէն տիրողից:

Կորցնելով սրբութեան զգացումը՝ մարդն անխուսափելիօրէն դառնում է շնական եւ մարդատեսաց:

Մահուան դէմ յաղթանակելով է նուաճում կեանքը, ապրեցում հայրենիքը: Այսպիսին էին իրենց կեանքն ու մահը հայրենիքին ծառայեցնող Մամիկոնեանները-իմացեալ մահուան կեսարները. նրանք, որոնց համար ռազմարուեստը մահարուեստ էր, այսինքն՝ մահուան դէմ յաղթական կանգնելիս, մահից էլ զօրաւոր հանդիսանալու արուեստ. նրանք, որոնց ճակատներից աւելի արժանաւորը մեր աշխարհում դեռ չէ շօշափել դասին...

Յոռետեսութիւն - ո՛չ, ո՛չ, անտեղի է դա մարդկութեան ապագայի նկատմամբ, քանի որ մարդը ինքնամշակմամբ կարող է Սոկրատ դառնալ:

Հաննիբալ - ոգու հսկայ, որի ռազմական հանճարը, փառքն ու անձնական դժբախտութիւնը հաւասարապէս մեծ եղան, որը, սակայն, իր մեծ հայրենասիրութեան արժանի հայրենիքը շունեցաւ - քե՛զ, հռոմասաստ հերոս, իմ սքանչացումը քե՛զ...

Հայոց պատմութեան մէջ Մամիկոնեաններին է պատկանում առաջին ուխտի պատիւը: Ուխտն է Վարդանների դիւցազնութեան աղբիւրը: Ուխտ ունէր Կարթագէնի ամեհի զաւակը, եւ նա դարձաւ Հռոմը սարսափեցնող Հաննիբալ: Ուխտուածներն են յաղթում մահուան եւ նրան ծառայեցնում կեանքին:

Ես յաճախ մտովի կայցելեմ մեր հին ու նորագոյն ռազմավայրերը, մեր պարտութեան ու յաջողութեան պատճառներն ինձ համար պարզելու ցանկութեամբ: Ես գտել եմ, որ այն բոլոր դէպքերում, երբ Ներսէս Մեծի նման մէկը «Քարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ուժերը եւ չի տկարացել հոգով, մինչեւ որ տեղի կտար թշնամին - միշտ էլ յաղթութեան դիցուհին իր ոսկէ մատներով պսակադրել է հայ զինուորի ճակատը:

Իսկ երբ չի գտնուել պարթեւասիպ առաջնորդը, որ կարողանա լաւրուած պահել ժողովրդի ուժերը, պարտութիւնն ու ամօթն են եղել հայ զօրքի բաժինը:

Կրելով կնիքը Հայաստանի բնութեան ու պատմութեան՝ հայ եմ ես: Մտածումով ու ապրումներով, սակայն ես մարդ եմ, համամարդ:

Ես ընկերն եմ անիրաւուածի, եղբայրը՝ հալածողի, եւ զինակիցը՝ բեւեռ-բեւեռ աւելի արդար աշխարհի համար մարտնչողների: Դաւանանքս է - մարդկայնութիւն՝ աւելի՛ մարդկայնութիւն:

- Ամէն մարդ իր տեսանելի կամ աներեւոյթ դաստիարակիչ ունի, որի դերն ու ազդեցութիւնն իր նկատմամբ շարունակուում է մինչեւ զերեզման:

Մէկի փոխարէն՝ ես երկուսն ունեցաւ - Մամիկոնեաններն ու Մասիսը: Առաջիններն ինձ Հայրենիքի համար մեռնելու տենչ ներշնչեցին: Երկրորդը՝ սէ՛ր դէպի հոգեւոր բարձունքները:

Դարե՛ր, դարե՛ր են անցել, եւ իմ էութեան մէջ դեռ որոտում, դղրդում է Վարդանի աւարայրեան խօսքը՝ ուղղուած հայոց բանակին. «Լախը թերահաւատութեան նշան է. Մահն ընդունենք ուրախ սրտով»:

Քո հայրենիքում ընդհանուր պիտի լինեն ոչ միայն պարտականութիւնները, այլեւ իրաւունքն ու ուրախութիւնը: Սրանում է Հայրենիքների անասանութեան գրաւականը:

Է՛լ թող չլինեն քեզանում ընչագոյրկն ու վատասիրտը: Նմանների տկարութիւնից են կործանում պետութիւնները:

Բոլոր զաւակներդ՝ անկարօտ, առաքինի եւ արի՛:  
Ընկերայնօրէն արդար, քաղաքականապէս զօրաւոր Հայրենիք:

Հայկական լաւագոյնի-բարձր մարդկութիւն արտայայտող Գողթան երգերի բովանդակած վեհ գաղափարների-վերարժարծումն, նրանց պրոպագանդը հայ մտաւորականութեան կողմից ո՛չ միայն հայկական, հայրենասիրական, այլեւ համամարդկային պարտականութիւն է:

Ժողովուրդների կուլտուրական արժեքը պետք է ճշտել համամարդկային այն գծերով, որ յատուկ են նրանց հոգետր ստեղծագործութեան: Եւ հէնց այդ համամարդկայինը, մարդկօրէն այդ օրինակելին է կազմում ամէն ազգի լաւագոյնը:

Մխալ եւ անարդար է կարծել, թե յանկարծակիի եկած արեւմտահայութիւնը Եղեռնի օրերին դրսեւորեց իր հոգու միայն մարտիրոս կողմը...

Այդ օրհասաբեր օրերին Թուրքահայաստանէն կարելի էր լսել «զացը շղթայուած հերոսութեան». իսկ որոշ վայրերում՝ մռնչիւնը դաւադրուած առիւծների:

Ամէն հայ ընդունակ է մարտիրոսանալու, իսկ ամէն մարտիրոս կարող է հերոս լինել:

Աւելի լաւ է հայ մարդը համը լինի, քան օտարախօս:

Ես անչափ զարմանում եմ, երբ հանդիպում եմ անտաղանդ հայի:

Ահա եւ իմ վերջին խօսքը.

– Կուզէի աչքերս փակել մի ահեղ ճակատամարտում, յաղթութեան թելերի վրայ, զօրքերիս գոռ աղաղակների մէջ: Մակայն ուր էլ եւ ինչպէս էլ մեռնեմ, թող սիւնեաց իմ նախկին ռազմիկները Խուստուպ լերան սրտի մէջ ամփոփեն իմ մի բուռ աճիւնը:

... Ուր եւ երբ էլ մեռնեմ, հաւատա՛, իմ ազիզ ժողովուրդ, որ արտաքին վտանգներից ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի եւ օգնութեան պիտի փութայ իր հայրենի աշխարհին եւ աներեւութաբար քո բանակները առաջնորդէ:

Զինոր գաւակղ՝ Նժդեհ, 1937թ., Սոֆիա

Մարդս այս կամ այն կողմնորոշման օտար շահերի համար իր կեանքը վտանգի չի ենթարկում: Նա գիտակցաբար համարձակում է մեռնել միայն մի դէպքում. երբ նրա համար իր պաշտամունքի առարկան աւելի թանկ է, քան իր կեանքը: Իսկ իրաւ հայրենասէրի համար

միայն Հայրենիքն ու ազգն են վեր կանգնած սեփական կեանքից:

Ով գիտակցաբար կամ անգիտակցօրէն հոկտեմբերեան բունտը համարում է յեղափոխութիւն, դա հայիոյում, անարգում է պատմութեան ծանօթ բոլոր յեղափոխութիւնները: Դա ամէն ինչ էր-պարտուածների բունտ, աստուածամարտութիւն, հոգետր վայրենացում, դարձ դէպի հեթանոսութիւն, պետական բանդիտիզմ, զանգուածային աւազակութիւն-բայց ո՛չ եւ յեղափոխութիւն՝ քաղաքական ու սոցիալական իմաստով:

Յեղն է այս կամ այն երկիրը դարձնում հայրենիք: Հողն առանց ցեղի, ասել է՝ մարմին առանց հոգու: Ահա՛ թէ ինչու՛ հայոց հայրենիք ասել է՝ հայոց ցեղաստան:

Այսօր, մասնատրապէս, երեք բան գերծ պէտք է պահել ստահայրենասիրութեան պղծանքից—հայ խաչը, մանուկը, գիրը:

Ազգերը չունեն աւելի ճակատագրական պաշտօնեաներ, քան իրենց եկեղեցին, դպրոցը եւ մամուլը վարողները:

Կղեր, ուսուցիչ. խմբագիր-մեծագոյն օրհնութիւն, եւ չարիք միաժամանակ: Օրհնութիւն են, երբ ցեղն է վարում սրանց խղճմտանքը, անէ՛ծք, երբ ցեղից չեն առնում իրենց ներշնչումները... Պղծադաւան է այն հոգետրականը-որով եւ՝ ամենավտանգատրը ազգի ներքին թշնամիներէն, եթէ իր վարած եկեղեցին նա չէ դարձնում նաեւ ցեղի տունը... Պաշտօնապղծութիւն է կատարում ուսուցիչը, որի մարգարէն ցեղամերժ Մարքսն է... Հասպ անցեղաշունչ թե՛րթք, գի՛րթք, որոնց ամբողջ հայկականութիւնը կայանում է նրանում, որ հայատատ են: Հայրենիքի եւ հայրենասիրութեան մասին աղմկում են նմաններն էլ, առանց անդրադառնալու, որ պղծութիւն է կատարում ամէն անհատ, կազմակերպութիւն, հաստատութիւն, որի մտածումի, զգացողութեան ու գործերի մէջ ցեղը տեղ չունի, բայց եւ այնպէս՝ խօսում է ազգի եւ հայրենիքի անունից: Հոգետր չարաշահութիւն եւ անբարոյակա-նութիւններից ամենազարեղին է դա: Մրանք են խաթարում մեր ազգային ոգին, մտածողութիւնը, նկարագիրը:

Հարցուպատասխան ..... 3  
 Յղումներ ..... 88  
 Կենսատարեգրություն ..... 96  
 Յաւելուած, Մեսրոպեան ուղղագրութեան համառօտ ուղեցոյց ..... 124  
 Ասոյթներ ..... 138

E-mail: hmbrafael@gmail.com

# ՆԺԴԵՀ

Հարցուպատասխան

Խմբագիր՝ Ռ. Թորոսեան

Տպարանակը՝ 1000 օրինակ:

**ԷԴԻՑ ՊՐԻՆՏ**  
 Երևան, Թումանեան 12  
 Էլ. հեռ.՝ (374 10) 520 848  
 www.editprint.am  
 info@editprint.am



**EDIT PRINT**  
 12 Tumanyan str., Yerevan  
 Tel.: (374 10) 520 848  
 www.editprint.am  
 info@editprint.am

## ՈԱՖԱՅԷԼ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱԼ



Պատմաբան, ազգային եւ հանրապետութեան շրջանակներէ մտնող ինքնուրուի մտածող հիմնադրոյթներ հեղինակ, հայոց ազատագրական պայքարի 1980-90-ական թթ. փուլի գաղափարախօս, ծն. 1948 թ., ազգային-քաղաքական գործունէութեամբ զբաղուած է 1970 թուականից: «Թուրք ընդհանրական» (1980 թ.) եւ «Յորդորակ» (1987 թ.) քաղաքագիտական մշակատուփուններում գիտականօրէն հիմնադրել ու կանխատեսել է հայոց ազատագրական պայքարի վերելքը, կոմունիստական բռնատիրութեան վերացումը եւ Հայաստանի անկախացումը: Այդ աշխատութիւնները իր խմբագրութեամբ լոյս տեսնող «Անկախութիւն», «Ազատ Հայք» թերթերում տպագրած 1988-1990 թթ. քաղաքագիտական յօդուածների հետ միասին էական ազդեցութիւն են թողել արցախեան ազատամարտի (համայնամարտը անուանադրեց Արցախական) եւ ընդհանրապէս Հայաստանի եւ Ափիւռքի քաղաքական մտքի զարգացման վրայ:

1987 թ. հոկտեմբերի 17-ին Օպերայի հրապարակում կազմակերպել է կայսրութեան սահմաններում առաջին բնապահպանական-քաղաքական ցոյց-հանրահաւաքը: 1988 թ. մայիսի 28-ին եռագոյն դրօշներով անցկացրեց ՀՀ անկախութեան 70-ամեակի՝ 1920 թ. ի վեր առաջին տօնակատարութիւնը Հայաստանում: 1988 թ. սեպտեմբերի 9-ին Օպերայի հրապարակի հանրահաւաքում արտասանած ելոյթով մօտ հարիւր հազար ներկաների վանկարկել տուեց «անկախութիւն», որը վճռական նշանակութիւն ունեցաւ ժողովրդի ինքնագիտակցութիւնը բարձրացնելու եւ Արցախականի յետագայ յաջողութիւնների համար: 1989 թ. յուլիսի 10-ին Մատենադարանի մօտ անցկացրած հանրահաւաքում Ռ. Համբարձումեանը հրապարակեց Արցախականը նոր փուլ մտցնող հետեւեալ ծրագիրը. Հայաստանի բնակչութիւնը երկիրը պէտք է անկախացնի հանրային խորհրդարանով: Այդ գաղափարը մէկ ամիս անց իրագործեց Արցախի բնակչութիւնը՝ 1989 թ. օգոստոսի 16-ին ստեղծելով կրեմլեան բռնատիրութիւնից անկախացած ԱՌԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՐԱՎԱՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ (Ազգային խորհուրդ) վարչաւեան բռնադաշնութեան ամբողջ տարածքում: Ռ. Համբարձումեանն այդ տարիներին զբաղուած էր Հայկ Նահապետի հիմնած, հայոց Ոսկեդարում մշակուած եւ Ը դարում Ուխտ մամիկոնից անուանուած, 1919-1930-ական թթ. Գարեգին Նժդեհի ու Հայկ Ասատրեանի վերականգնած-լրացրած հայոց ազգային գաղափարաբանութիւնը (Տարօնականութիւն) վերականգնելու քարոզչութեամբ եւ գործողութիւններով: Նա 2000-2011 թթ. կազմակերպեց եւ անցկացրեց նախ՝ Սեւրի դաշնագրի ստորագրման 80-ամեակին նուիրուած առաջին գիտաժողովը եւ դաշնագիրը կնքելու 70, 75, 81-83 եւ 85 ամեակների նշումը, ապա՝ Հայաստան-Թուրքիա սահմանը ճշտելու նպատակով միջազգային Իրաւարար վճիռ-քարտէզը կազմած Կուրդոյ Ռիլսըմի ծննդեան 150-ամեակը: 2007 թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ԳԱ ակադեմիայում Ռ. Համբարձումեանի անցկացրած՝ «Կուրդոյ Ռիլսըմի միջազգային Իրաւարար վճիռ-քարտէզի մասին» անդրաճիկ գիտաժողովը էական նշանակութիւն ունեցաւ հայկական հարցը ուղիւնեան Իրաւարար վճիռ-քարտէզի կենսագործումը դարձնելու համար, որը համահայկական գործելակերպի վերածուեց 2010 թ., երբ Ռ. Համբարձումեանը նախածնեմեց, Հայաստանում եւ Ափիւռքում կազմակերպեց Իրաւարար վճիռ-քարտէզի հրապարակման 90-ամեակի նշումը: